

ԽԱՐ ԾՐՈՅՆ.

Է. ՏԱՐԻ

# ՄԱԿԻԳ

ԴՐԱԿԵՆ, ՀԱՍՏԱՎԱԿԵՆ ԵՒ ՔԱՎԱՎԱԿԵՆ

Ա Մ Ա Գ Ի Բ

№ 3

Մ Ա Ր Տ

1902

ԹԻՖԼԻՍ

Տպոգրաֆія Груз. Издат. Т—са. | Տպութիւն Վրաց Հրատ. Բնակչութեան  
1902

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 3

1. ԶՀՈՒՌ-ՔՈՒՇԱՆ, վէպ Շահրիարի.	. . . . .	5
2. ՀԱՅՅԵՆԻ ՀՈՊ.Ը, վէպ Համբի Բօրդի, թարգ.		
Հ. Առաքելեանի	. . . . .	36
3. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Աւ. Խստիակեանի		58
4. ՎԵՐՃԻՆ ՀԱՄԲՈՅՑՅ, պատմուածք Լ. Բաւալեանի		60
5. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ, Ե. Ֆրանցիանի		68
6. ՀԵՆՐԻԿ ԻԲՍԵՆ, յօդ. Վ. Նալբանդեանի		76
7. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Նիկիտինից, թարգմ.		
Ալ. Ծառուեանի	. . . . .	104
8. ԿԱԽՍԴԱՆԵՆ... ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ, պատմուածք		
Առանձարի	. . . . .	106
9. ԳՈՒԹՋԱՆԻ ՇՈՒԲՁՅ, պատմուածք Ա. Արանանեանի		113
10. ՍՊԻՏԱԿ ԶԳԵՍ, բանաստեղծ. Միխայլօվի, թարգմ.		
Կ. Կրասիլնիկեանի	. . . . .	129
11. ԱՂՋԻԿ, առողջապահական և բարոյադիտական էտիւդ բժայ. Վ. Արծրունու .	. . . . .	131
12. ՄԱՏՍՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. —9) Տեմինեան ազգագր. մողովածու», Լ. Ա.—10) D-r Gogidschayschwili. „Das Gewerbe in Georgien“ Բ. Ա.—11) Ս. Վէրէր, «Թրարատը Ս. Գրոց մէջ», Սա. Ա. —12) Տէր-Պօղոսկան՝ նկատողութիւն Փաւատոսի պատմութեան վերաբերեալ, Սա. Ա. —13) Կ. Փաշալեան, «Մարդկութեան ամենամեծ թշնամին», Վ. Դ. . . . .	. . . . .	142
Նոր ստացուած գրքեր .	. . . . .	160
13. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջնակարդ դպրոցների բնչքումներից, փոխադրական քննութիւնների վերացումը և ուսուցիչների վարձատրութեան հարցը. —Հստարակութեան և դպրոցի մէջ եղած կապը. —Խնչչէս վճռեց Գինանսների մինիստրութիւնը այդ հարցը. —Խռեստրուկան դպրոցների կազմակերպութեան խելացի հիմքը. —Հոգաբարձական խորհուրդը. —Մեր „ազգային մանկավարժ-վարիչների“ մի տարօրինակ ընդունակութիւնը. —Ի՞նչ ձանապարհով պէտք էր փոփոխութիւններ մայնել մեր թեմ. դպրոցներում գոյութիմ ունեցող կանոնազրութիւնների մէջ. —Իրաւունք և քմահաճոյք. —Իրաւական կարգերի առաւելութիւնը. —Կառավարչական սենատի մի որոշումը Լ. Սաւրզուսնի . . . . .	. . . . .	161

Դար Հրշան Ա տարի

Հրատ. XIV տարի

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 3

Մ Ա Ր Տ

1902

Թ Ի Ջ Լ Ի Ռ

Տիպոգրիա Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան.  
1902

# БИБЛІЯ

Дозволено цензурою. Тифлісь, 28 марта 1902 года.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 3

1.	ԶՀՈՒՄ-ՔՈՒՇԱՆ, վեպ Շահրիարի,	.	.	.	5
2.	ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վեպ Հանրի Բօրդոի, թարգ.	.	.	.	
2.	Առաջելեանի	.	.	.	36
3.	ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Աւ. Խաճակեանի	.	.	.	58
4.	ՎԵՐՁԻՆ ՀԱՄԲՈՅՐ, պատմուածք Լ. Բաւալեանի	.	.	.	60
5.	ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ, Ե. Ֆրանզեանի	.	.	.	68
6.	ՀԵՆՐԻԿ ԻԲՍԻՆ, յօդ. Վ. Նալբանդեանի	.	.	.	76
7.	ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Նիկիտինից, թարգմ.	.	.	.	
	Ալ. Ծառուեանի	.	.	.	104
8.	ԿԱՆԱԳԱՆԵՆՔ... ԱՄՈՒՍՈՒԹԻՒՆ, պատմուածք	.	.	.	
	Առանձարի	.	.	.	106
9.	ԳՈՒԹԱՆԻ ՇՈՒՐԶԸ, պատմուածք Ա. Արանասեանի	.	.	.	113
10.	ՍՊԻՏԱԿ ԶԳԵՍՏ, բանաստեղծ. Միլոյլովի, թարգմ.	.	.	.	
	Կ. Կրասիլնիկեանի	.	.	.	129
11.	ԱՂՋԻԿ, առողջապահական և բարոյագիտական էափւդ բժպ. Վ. Արծրունու .	.	.	.	131
12.	ՄԱՏԵՆԱԽԵՍՈՍՈՒԹԻՒՆ.—9) «Եմինեան աղջազր. Ճողովածու», Լ. Ս.—10) D-r Gogidschayschwili. „Das Gewerbe in Georgien“ Բ. Ա.—11) Վէրէր, «Արարտա- տը Ս. Գրոց մէջ», Աս. Ս.—12) Տէր-Պօլսահուն՝ Նկա- տողութիւն Փաստոսի պատմութեան վերաբերեալ, Աս. Ս.—13) Կ. Փաշալեան, «Մարդկութեան ամենա- մեծ թշնամին», Ա. Ա.	.	.	.	142
	Նոր ստացուած զրքնը	.	.	.	160
13.	ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջնակարգ դպրոցների բեֆօրմ- ներից, փոխագրական քննութիւնների վերացումը և ուսուցչների վարձատրութեան հարցը. — Հասարակու- թեան և դպրոցի մէջ եղած կազը. — Ինչպէս վճռեց ֆի- նանսների մինիստրութիւնը այդ հարցը. — Առևտրական դպրոցների կազմակերպութեան խելացի հիմքը. — Հո- գարտարձական խորհուրդը. — Մեր „ազգային մանկավարժ- վարիչների“ մի տարօրինակ ընդունակութիւնը. — Ի՞նչ ճանապարհով պէտք էր փափոխութիւններ մասնել մեր թեմ. զպրոցներում գորութիւն ունեցող կանոնադրու- թիւնների մէջ. — Իրաւունք և քմահանուք. — Իրաւական կարգերի առաւելութիւնը. — Կառավարչական սենատի մի որոշումը: Լ. Սարգսեանի .	.	.	.	161

Պաշտօնական հազորդագրութիւններ. Պաւլովկի գիւղի աղանդաւորների գործը. — Յոյցեր Ֆինլանդիայում. — Կավկազъ-ի հաղորդածը. — Կիեվի պօլիտեխնիկակումբի գաղումը. — Աւանդաղական անկարգութիւններ Ասկուալում. — Թիւրքահայ փախառականների մասին կարգադրութիւն:

14. † Ալ. Երիցեան . . . . . 170  
15. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵՍՆՎԲ. Մասուր առաջադիմութեան գործը մեր գաւառներում. — Համակրելի երևութներ. — Ծողովը մըրդի անօդնականութիւնը. — Ընթերցասիրութեան պահանջ. — Խճչակէն լրացնել այդ սրահանջը. — Խնքնօդնութիւն. — Վերադարձ դէպի գաւառները. — Հողարածական ընտրութիւններ Երեւանում. — Խնքնավարութիւնը՝ ահատնելի բեռ Շուշի քաղաքի համար. — Աշխատանքի տուն Բագմատ. Ա. . . . . 191  
16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սիօնիստների 5-րդ համաժողովը. — Անգլօ-ռէկրաման հաշութեան հարցը. — Խտադական իրրիդենտիզմ. Տրիեստում. — Ցուրի համաժողովի որոշումներ. Լ. Ա. . . . . 199  
17. ԱՆԳԼ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹԻՒՆԸ Մ. Ցովնանիսեանի 202  
18. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅ, Վ. Ա. . . . . 209  
18. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 219  
19. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 223  
20. ՑԱԽԵԼՈՒՄԸ «ՕՐԱՄՈՒՏԻՆ», դէպի Ա. Սուրզենելի. 49—64

# ԶՀՈՒԴ-ՓՈՒՇԱՆ

(Հրէտապանութիւն)

Վ. Է. Պ.

ՊԱՐՄԿԱԾՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

## VI

Մերունի սադրազամը հեւալով, երենեայ գաւազանը խփելով գարիսանի սալայատակներին, հասաւ նաև հի պալատի գուռը։ Դոնապանը, խոր գլուխ տալով բարձրացրեց կարմիր մահուդէ վարագոյրը, որ ծածկում էր գուան մուտքը և թողեց անցնել սադրազամին, որին հետեւում էին Սէլիմ շամբիրը և խափշիկ սև զուլը<sup>1)</sup>։

Հաջի-Միրզա-Աղասին մտաւ պալատի բիրունի<sup>2)</sup> մասը. դա մի ընդարձակ պարտէղ էր, կամ աւելի ճիշտն ասած, մի լայնատարած այգի, շրջապատուած չորս կողմից շինութիւններով։ Լայն ծառուղիներ, դարեսր չինարի հաստաբուն ծառեր, բազմատեսակ և բազմերանգ ծաղիկներ, որոնց մշակութիւնը այնքան զարդացած է Պարսկաստանում ամենահին ժամանակներից, այգու կենտրոնում լճանման մի մեծ մարմարեայ աւազան, բազմաթիւ շատրուաններով, որի վրայ ծփում էր մի փոքրիկ նաւակ և որի վճիռ ջրի մէջ լող էին տալիս

\*.) Տե՛ս „Սուրճ“ № 2.

<sup>1)</sup> Սորուկ։ <sup>2)</sup> Պարսկաստանի բոլոր տները բաժանում են բիրունի և Էնդեռունի (զբախ և ներսի) մասերի. առաջինը յատկացրուած է տղամարդկանց, երկրորդը՝ որը կոչում է նուկ հարամիանայ—կանանց։

կարապներ, իսկ անկիւններում փոքրիկ աւազաններ, ջրի փոքր առուներ ծառաստանների երկու եղբերով, մանաւանդ կարմիր, սպիտակ և դեղին վարդերի, անուշաբոյր նարդիզների թփեր. թռչունների գայլայլիկները, առատ հոսող ջրի զովութիւնը և կարկաչիւնը՝ այդ ամենը դրախտի տեսք էր ընծայում ընդարձակ այգուն և մեղկալի հեշտասիրութիւն էր գրգում այն մահկանացուի մէջ, որ արժանանում էր գերագոյն բախտին՝ մտնելու այդ գրախտը. Այդտեղ տիրում էր լոռութիւն, խորհրդաւոր լոռութիւն. ամեն մարդ, այգեպահն, ծառայ, լընիապահն, սենեկապահն, նոյն իսկ սադրազամը քայլում էին հանդարտ, անազմուկ, որովհետև ենթագրում էր, որ Տիեզերքի Բեւեռը կարող է չորս կողմի շինութիւնների գահիճներից մինում նստած լինի՝ զեյլան ծխելիս, կամ սատրանչ խաղալիս և կամ այգում, սաղարթախտ ծառերի ստուերների տակ հանգստանալիս. Զգոյշ և խոհեմ վէզիրները, սարդարները, սպասալարները, փիշխըդմէթները հէնց մտնում են այդին թէ ոչ, հարկ են համարում խոր գլուխ իջեցնել գեպի այս և այն կողմը, ուր կարող է աներևոյթաբար բազմած լինել Շահը:

Սովորաբար, գարնան և ամառը, ցերեկները, Շահը դանում է պալատի արեմտեան կողմի բաժնում, թանդարանին կից սրահներում. այդ կողմի շինութիւնը ձըգւում է մինչև հարամիսանյի գուռը:

Սադրազամը անցաւ մեծ աւազանի կողքով, մոտւ ընդարձակ ծաղկանոցը կամ նարընջատունը, ապա բարձրացաւ սանդուխներով և մտաւ այն թալարը, ուր առաւօտեան Շահը արել էր նախաճաշը. այդտեղ սենեկապահն շահղագէն յայտնեց, որ Շահը կողքի փոքրիկ տռանձնասենեակումն է և անհամբեր սպասում է նըրան: Մի քանի րոպէ կանգ առնելով և շունչ բաշելով, մեծ վիզիրը շփեց մօրուքը, դրստեց ջուբբայի թեքերը, գլխարկը և նշան արեց փիշխըդմէթին՝ բարձրացնել առանձնասենեակի վարագոյրը: Շահը նստած էր մինդա-

քէի վրայ, իսկ առաջին՝ չոքած էր մունէջիմ-բաշին, որ մէջտեղ դրուած նարդի զառերը ձեռքին խաղացնում էր. Ականակուռ զէյլանը մի ձեռքին բռնած, միւսով սուրճի փոքրիկ սակէ ֆինջանը, Շահը հազիւ տեսաւ ծերունի սադրազամին, որ ֆինջանը գետին դնելով, ձեռքով ցոյց տուեց մունէջիմ-բաշու մօտ չորքոտանու նըման չոքած, խայտաբղէտ հագուստով մի տղամարդի, գլխին շալի փաթոթ դրած. Նրա մէջքը համետուած էր մետաքսեայ կերպասի երեսով և ծովերով մի փոքր փալանով։ Դա պալատական ծաղրածուն կամ կատակաբանն էր, որ պաշտօն ունի զուարթացնել և ուրախ տրամադրութիւն ներչչել արքաների արքային ամեն անդամ, երբ տըլսրութիւնը պատում է նրան։ Մի անդամ կատակաբանութեան համար Շահը, իբրև պատիժ, հրամայել էր միւրախօրին բերել տալ ախոռատնից՝ փոքրիկ շահզագէների հեծնելու փոքրիկ էշերի համետներից մինը և երբ համետը գրել էին «Հիւմն-ուլ-Մէմալիք»<sup>1)</sup> (այդպիսի մականուն էին տուել պալատական ծաղրածուին իր տգեղութեան համար) Մօլլա-Գասըմի մէջըին, Շահը ասել էր. «Տեսնիւմ ես, ինչ հիանալի խալաթ եմ տալիս քեզ»։ Մօլլա-Գասըմը, օդուտ քաղելով ծաղրածուի իրաւունքից<sup>2)</sup>, անմիջապէս պատասխանել էր. — Շատ շնորհակալ եմ, որ ձեր մուրարէք քէնիփոււին<sup>3)</sup> ինձ արժանացնում էք։ Շահը ստիպուած էր կլլել այդ վիրաւուրական սրախօսութիւնը և ծածկելով զայրոյթը, քահքան ծիծաղել, ասելով. «Այս անդամ կատակդ լաւ տեղին ասացիր. պէտք է կրկնես սադրազամի առաջ ես»։ Եւ հրամայել էր անմիջապէս կանչել Հաջի-Միրզա-Ազգասուն։

<sup>1)</sup> Երկրների զեղեցիութիւն։ <sup>2)</sup> Արևելան երկրներում, ծաղրածուները ամեն տեսակ հանագ և սրախօսութիւն կարող են անել, և ասնդութեան համաձայն, նրանք չեն կարող սրածի ենթարկուել նոյն խոկ, եթէ սրախօսութիւնները վիրաւորական լինին թագաւորի համար։ <sup>3)</sup> «Շնորհաւոր մարմնի ծածկոցը». չը պէտք է մոռանալ, որ Շահերը պարզի տալիս են իրանց անձնական զգեստներից, խալաթներից։

—Ա՛լս, Հաջի-Միրզա-Աղասի, շարունակ ծիծաղելով ասաց Մահմէդ Շահը, տես այս նզովից արմատը ինչ է ասում։ շատ փեղէր-սուխան է, կրկնիր ասածք։

—Աշխարհիս աղօթարանը չնորհ է արել ինձ խալթ տալով, որ ահա մէջքիս գրուած է. ես էլ արդ արի որ թէնփուշը մուբարէք է։

Սաղրազամի գէմքը մուալլուեց. մի բռպէ նրա մըտքով անցաւ օգուտ քաղել ծաղրածուի այդ անլուր յանդգնութիւնից և ֆալախիկի հարուածները զգացնել տալ նրան այն բազմաթիւ վիրաւորական կատակների համար, որոնց ենթարկուել էր և ինքն պալատականների ներկայութեամբ, բայց խոնարհուելով աւանդական սովորութեան առաջ, որ անձեռնմխելի և անպատիժ գիրքի մէջ է դնում կատակաբաններին, նա փոխեց միտքը և կամեցաւ գրաւել Մօլա-Գասըմի սիրտը։

—Ղուրբան, ասաց նա Շահին, Մօլա-Գասըմի այդ պատրաստախօսութեան համար, արժէ իսկապէս նրան խալթ տուած փալանի համար իր նման հեղ մի աւանակ ևս բաշխել, որ վրան հեծած ման գայ մայրաբաղաքի փողոցներում։

—Աֆէրիմ<sup>1)</sup>, Հաջի-Միրզա-Աղասի, վրայ բերաւ ծաղրածուն, երեսում է, որ քո գարշապարում աւելի խելք կայ, քան մեր մունէջիմբաշու գլխում. դու իսկոյն գուշակեցիր իմ իղձը, իսկ մունէջիմբաշին իր բուլոր աստղերի օգնութեամբ չը կարողացաւ գուշակել, որ այսօր ստիպուած կը լինի մուռտառ ջհուդների հետ մի ախոռում գարման ուտել։

Մօւնէջիմբաշին կաս-կարմիր կտրեց բարկութիւնից և կայծակնահար նայուածք ուղղեց կատակաբանին։

Շահը սաստիկ ծիծաղից համարեա թուլացել էր։

—Շուտ, շուտ, հրամայեց նա. գնա, Մօլա-Գասըմ, միրախօսին ասա մի լաւ էշ տայ, տար կապիր տանդ։ ծաղրածուն վեր թռաւ յանկարծ, վեր առաւ հա-

1) ԿԵՐՊԻԿ

մետը և էշի նման տուտինկ տալով, դուրս եկաւ սենեաւ կից։ Նրան հետևեց և մունէջիմ-բաշին, սադրազամի մի ակնարկի վրայ։

Փիշխըդէթները ներս բերին Էսրանէն—նախաընթրիքը, որ բազկացած է լինում բացառապէս պառղւներից և կանաչեղէնից—արծաթեայ մատուցարանների մէջ։ Այդտեղ կար—կեռաս, թութ, սալոր, վարունգ և հաղար-մեահու, որ պարսիկները մեծ հաճոյքով ուստում են գարնան, իբրև առողջարար և մաքրող բանջար իսրէնջիրի<sup>1)</sup> հետ։

Նահը սկսեց քեահու ուտել. սադրազամը չոքեց նրա առաջ և հանեց գօտուց թումարը, ասելով.

—Ղուրբան, կարեռ արզեր ունիմ անելու և շտապողական։

Նահը գլխի նշանով յայտնեց որ կարող է սկսել։ Այդ միջոցին վարագոյրը բարձրացաւ և ներս մըտաւ խափշիկ դուլը ականջից արծաթեայ օղեր—սարկութեան նշանը՝ կախած։ Հաստ, ածուխի նման սկ, դուրս ցցուած շրթունքի արանքից երեռում էին ձիւնափայլ սպիտակ ակռաները. դլխի խճճուած մազերը այնքան խիտ էին, որ աւելի նման էին մի կտոր թաղիքի, քան մարդկային մազերի։ Նա խոր գլուխ տուեց և լուռ, արձանի նման անշարժացած՝ կանգնեց։

—Ի՞նչ կայ, ասաց Նահը։

—Ներքինապետը հրաման է խնդրում ձեր արեգակնափայլ աչքերի առաջ երեալ։

—Թող երեայ։

Խափշիկը բարձրացրեց վարագոյրը և ձեռքով կանչեց ներքինապետին, որ սպասում էր թալարում։

Ներս մտաւ գիրուկ, աչքերը փոքրիկ, երեսի կաշին եփած խնձորի տեսք ստացած, անմազ և անորոշ տարիքաւոր մի մարդ. առաջին ակնարկից կարելի էր կարծել, որ նա հաղիւ 25 տարեկան մի երիտասարդ

<sup>1)</sup> Գացախի և մեղրի խառնուրդ։

լինի, մանաւանդ երբ լուսում էր նրա բարակ, սուր, կանացի ձայնը, բայց զննող աչքը խսկոյն կը նկատէր, որ նա ծերունի է, իսկ կերպարանքի անբնական յատկութիւնները կամ հակաբնական խոտորումները հետեւանք են այն անգութ և հակամարդկային գործողութեան, որին ենթարկում են ներքինիները իրանց մանկութեան ժամանակ—ներքինացման:

Եւ սակայն այդ գիրուկ, գառնացած, հակաբնականացրած հեզ ու խոնարհ ծերունին ամենահզօր պաշտօնեան էր Շահի ամբողջ պալատում և հարիւրաւոր գեղունի, գեղածիծաղ, ջահէլ աղջկերք ու կանայք, որսնց համար երիտասարդները հոգի էին տալիս, դողում էին այդ ամենազօր ծերուկի առաջ և նրանից սպասում իրանց բախտը ու երջանկութիւնը. Նա հարէմի տէրն էր ու իշխանը. նա Խօջա-բաշին էր:

Ներքինապետ Հուսէյն-աղան խոր գլուխ տալով Շահին, ձեռքերը ծալեց կրծքի վրայ և լուռ կանգնեց: —Ի՞նչ կայ, Խօջա-բաշի, հարցրեց Շահը, ամեն բան կարգին է հարէմսանում:

—Զեր շահնշական ողորմութեան հովանին քանի որ տարածուած է մեր գլխին, թռչունը իր թեսով, ջինը իր հմայքով և կախարդութեամբ մեր կողմերը մօտենալ չեն կարող. հարէմսանին ուրախ, զուարժ, առողջ, ձեր թանկագին կեանքի համար աղօթելով է զբաղուած: Այլշա-խանըմը, Էնիս-ուլ-Թօվլէն<sup>1)</sup> համբուրելով ձեր գարշապարը, աղաչում է, որ այս գիշեր ձեր արեսով լուսաւորէք նրան և իր հետ անցկացնէք. երկու նոր կաքաւող գեղեցիկ աղախիններ են ուղարկել նրան Շիրազից, կամենում է, որ տեսնէք և մի քիչ զուարճանաք:

—Շատ լաւ, շատ լաւ, բարե արա էնիս-ուլ-Թօվլէն և ասա, որ այս գիշեր իր հետն եմ: Ես վազուց ցանկանում եմ նրա մօտ լինել. ասա, որ ընթրիքն ևս իր մօտ կ'անեմ:

1) Զարդ պետութեան: Շահի կանալք ևս տիտղոսներ են կրում:

—Թող Սլլահը և նրա մարդարէն երկարացնեն ձեր  
թանկագին կեանքը:

Եւ ներքինսապետը յետ-յետ դնալով, դուրս եկաւ:

Նրա ետևից դուրս եկաւ և խափշիկ դուլը. նա  
կանգնեց վարագոյրի առաջ թալարում, թոյլ չը տալու  
համար, որ ոչ ոք մտնի, տաելով, օր խալվաք<sup>1)</sup> է. նա  
երեսում էր անտարբեր, նոյն խոկ երբեմն-երբեմն խօս-  
քեր էր առում թալարում նստած փիշալդմէթներին,  
բայց ականջը սրած՝ աշխատում էր լսել վարագոյրի ե-  
տեսից սադրազամի և Շահի խօսակցութիւնը:

Ներսում, սադրազամը սկսեց զեկուցանել Շահին  
մի առ մի իր արած կարգադրութիւնները, սաւացուած  
առաջարկութիւնները, յիշատակագրերը, սպիները, այն  
ամենը ինչ որ առաւօտեան կարգադրուել էր ֆիշքար  
Մուշիք-ուլ-Միւլքի հետ: Շահը գլխի շարժումով հաւա-  
նութիւն էր տալիս սադրազամի կարգադրութիւննե-  
րին, կամ երբեմն սահա<sup>2)</sup> էր դնում թղթերի վրայ:

—Այժմ պէտք է, արզ անեմ, զուրբան, ասաց ձայ-  
նը ցածրացնելով սադրազամը, որ Բէգլար-բէգին մի  
մեծ ծառայութիւն է մատուցել Զեր Արքայական...

—Բէգլար-բէգին, ընդհատեց Շահը, ինչու նրա  
մասին ամենից առաջ չը զեկուցեցիր, ինչու այն մար-  
դուկը սպանեց իրան. ինչ եղաւ, քանի փայտ խփեցին  
Բէգլար-բէգուն ֆալախկայի մէջ:

—Դեռ ֆալախկայի չեն կապել նրան, զուրբան:

—Ի՞նչպէս. գեռ չեն կապել. ով համարձակեց չը  
կատարել իմ հրամանը:

—Ես արդէն հարկաւոր կարգադրութիւնները ա-  
րել եմ, բայց կամենում էի առաջ մի կարեօր յայտա-  
րարութիւն անել...

—Ոչ, ոչ, առաջ ֆալախկան, այս բոպէիս:

Սադրազամը տեսնելով Շահի վճռողական հրամա-

<sup>1)</sup> Առանձնութիւն, գաղտնի նիստ: <sup>2)</sup> Սահի, ուղիղ. սահա դնել, նշա-  
նակում է վաւերացնել:

նը, որ իր համար անակնկալ էր, ծափ տուեց:

Մտաւ խափշիկ ստրուկլը:

— Ուղարկիր անմիջապէս Մուշիր-Միւլքին ասեն, որ  
Բէգլար-բէգուն բանտից հանեն և բերեն մեծ աւազա-  
նի մօտ, ֆէրրաշ-բաշուն էլ թող ասեն, որ բերել տայ  
ֆալախկէն և ճիպոտներ։ Երբ ամեն բան պատրաստ կը  
լինի, իմաց տուէք մեզ:

Եւ մոռանալով ամեն զգուշութիւն, սադրազամը  
ասաց Շահին այնքան բարձր ձայնով, որ դուրս եկող  
խափշիկը լսեց առաջին բառերը.

— Ղուրբան, Բէհմէն-Միրզան պետական դուսաճան  
է, իսկ այդ մենք իմացանք չնորհիւ Բէգլար-բէգուն...

— Ի՞նչ, ինչ ասացիր. Եղբայրս ինձ դէմ դաւա-  
դրութիւն է սարքում, մրմնջաց Մահմէդ Շահը գունատ-  
ուած, դողդոյուն ձայնով։ Երկիւզը կարգացւում էր  
նրա աչքերում և նրա հիւանդու դէմքը վշտալի ար-  
տայայտութիւն սահացաւ։

Խափշիկը շտապով հազորդելով փիշխըդէթներից  
մինին սադրազամի հրամանները, սկսեց վարադոյրի ե-  
տեւից զգուշութեամբ ականջ դնել։

— Բայց ինչ փաստեր կան, նուազած ձայնով հարց-  
րեց Շահը։

Սադրազամը պատմեց, ինչ որ Մուշիր-Միւլքը հա-  
ղորդել էր։

— Բայց շահղադէների նրա մօտ գնալը, ինչպէս և  
ոռւսաց թարգմանի նրա մօտ դալը, միթէ ապացոյց  
են, որ նա դաւադրութիւն է սարքում մեր դէմ։ Հէ որ  
կարող էին իբրև հիւրեր գնալ նրա մօտ—մի քիչ զայ-  
րացկու ձայնով հարցրեց Շահը։

— Դժբախտաբար, ես ունեմ մի ուրիշ փաստ։

— Ասա, որն է։

— Բէհմէն-Միրզան չէ որ շարունակ աշխարհի ա-  
զօթարանիդ դլխացաւ էր տալիս իր խնդրագիրներով  
թէ դրամ չունի, խնդրում էր աւելացնել ոսճիկը, և

մեծ գումար էր պահանջում վերադառնալու համար  
թաւրէղ վալիահդի հետ:

—Լաւ, յետք:

—Նա այսօր 50,000 բաճախլու է ուղարկել ինձ  
նուէր:

—50,000 բաճախլու քեզ նուէր...

—Այս, զուրբան:

—Եւ դու ընդունեցի՞ր:

—Ընդունեցի, որպէս զի նրան բոլորովին միամըտ-  
ցնեմ և դաւագրութիւնը երևան հանեմ:

—Բայց ինչի՞ համար է ուղարկել քեզ:

—Նրա փիշքարն ասել է, թէ այդ գումարը շահ-  
զադէն տալիս է ինձ, որպէս զի բարեխօսեմ աշխար-  
հիդ աղօթարանի առաջ, որ ձեր աշքը քաղցրացնէր նրա  
վրայ և ինդիրքները կատարէք: Ես, զուրբան—շարու-  
նակեց ծերունի սագրազամը, ձեր հաւատարիմ ստրուկն  
եմ, այդ 50,000 բաճախլուն արքայական գանձարանը  
պէտք է մտնի, իբրև դաւագրի փող:

—Լաւ, բայց մրտեզից է ճարել եղբայրս այդքան  
մեծ գումարը:

—Ի հարկէ, քանի որ նա ինքն չունի, ուրեմն  
նրան տուել են ոուսները, կամ ինդիզները:

Շահի գէմքը բարկութիւնից և հոգեկան յուղմուն-  
քից պղնձագոյն դարձաւ. նրա աշքերի մէջ փայլեց  
փայրագ կատազութեան կայծ:

—Ալլահ, Ալլահ, պոռաց նա, իմ հարազատ  
եղբայրս ինձ գէմ դաւագրութիւն սարքի. բայց ոչ,  
ոչ, ես չեմ հաւատում, այդ անկարելի է. նա շատ լաւ  
գիտէ, որ այդպիսի խաղով իր գլուխը կը թոցնի: Միթէ  
նա չը գիտէ Զիլա-Սուլթանի վախճանը:

—Կամք ձեր արքայական կամքն է, բայց ձեր  
հաւատարիմ ստրուկի խորհուրդն այն է, որ չարիքը իր  
սազմի մէջ խեղքենք:

—Ի՞՞չ, դու կամենում ես, որ ես նրան սպանել  
տամ, ձեռքս եղբօրս արեան մէջ թաթախեմ: Երբէք:

—Հրաման ձեր արքայական հրամանն է, ասաց խոսրամանկ ծերունին, ես իմ պարտքս կատարեցի, նախազգուշացրի:

Շահը խոր մտատանջութեան մէջ ընկաւ. գլուխը կախ դցեց. երբեմն թառանջ էր քաշում; երբեմն աղօթք էր մրմնջում, երբեմն խոշոր սաթէ համրիչն էր դցում:

Առաջին անգամն չէր, ի հարկէ, որ նա գլխատման հրաման պէտք է տար. քանիիշանի անդամ նա ստորագրել էր Փիրմաններ, շատ անգամ նոյն իսկ բերանացի հրաման էր տուել «Հանգստացնել», «խափա» անել<sup>1)</sup> այս և այն յանցաւորին, խանին, բայց հրամայել գլխատել իր սեպհական եղբօրը, հարազատ եղբօր արիւնը թափել, այդ անկարելի էր թւում նրան: Ճիշտ է, շահզագէներին, նշանաւոր պաշտօնեաներին չեն գլխատում, իբրև հասարակ ոճրագործներ, այլ կամ մի փոքրիկ Փինջան թունաւորուած ոուրծ են համեցէք անում, կամ բաղնիքի տաք աւազանի մէջ երակն են բանալ տալիս, կամ կուրացնում են և կամ ներքինացնում երկու զգացումն կատաղի կռիւ էին մղում հիւանդոտ, ի բնէ բարեհոգի Շահի սրտի մէջ. եղբայրական զգացումը թելագրում էր չը թաթախել ձեռքը հարազատ եղբօր արեան մէջ. սեպհական անձի և թագի պաշտպանութեան զգացումը ներշնչում էր արիւնէկութեան անհրաժեշտութիւնը. ինչն Աղբայիլ հրեշտակապետը թելագրում էր այդ Հաջի-Միրզա-Ազատուգէմքով. վերջապէս չէ որ իր նախորդները, իր հաւը, իր պապը այդպէս են վարուել. ով է մեղաւոր, ինչու Բէհմէն-Միրզան տեղը հանգիստ չէ նստում, ինչու ձրգտում է զրկել իր աւագ եղբօրը, իր Շահին գահից և թագից, գուցէ և կեանքից: Երևի այդպէս է գրուած նրա ճակատին. երևի աջէլը<sup>2)</sup> եկել հասել է. այդպէս է

1) Կեղդել. 2) Մահուան ժամը. ամեն մարդի աջէլը նախասահմանուած է:

նախասահմանութեան կամքը. թող կատարուի ուրեմն  
ճակատագիրը. խեղճ եղբայր:

Նահը բարձրացրեց գլուխը. դէմքը մռայլ էր, յոգ-  
նած, աչքերը նուաղած։ Արդէն երեկոյ էր. արեք բա-  
ւական թեքուել էր. առանձնասենեակի բաց փէնջա-  
րայից<sup>1)</sup> վշում էր պարտիզի զով և անուշաբոյր օդը.  
լուսում էր աւազանների մեղմ խոխոջիւնը։ Նահը վեր  
կացաւ, խփեց ձեռքերին և ներս մոտնող վիշխրդմէթին  
հրամայեց ջուր բերել նամազի համար. այս անդամ բե-  
րին յախճապակեայ կոնք կատարելով որոշած լուա-  
ցումն, նա սկսեց նամազ կատարել, առաջուց մերկա-  
նալով իր վրայ գանուած բոլոր զարդերից և գոհար-  
ներից<sup>2)</sup>

Սադրազամը նոյնալէս վեր կացաւ և լուռ կանդնած,  
մրժնջում էր զուրանից հատուածներ:

Երբ Նահը վերջացրեց նամազը, նրա դէմքի վրայ  
երեսում էր վճռականութիւն. նա արդէն վճռել էր աւ-  
նելիքը։

Մութը սկսել էր կոխել։

«Ես չեմ կարօղ խաւարացնել եղբօրս կեանքը, ա-  
ռաց նա սադրազամին, բայց թող նա կուրանայ. ահա  
մատանիս,—հ. հանելով մատից արքայական մատանին,  
տուեց սադրազամին.—վաղը յայտնիր իրան, որ իրը իր  
միջնորդութիւնները ընդունուած են և թող պատրաս-  
տութիւն տեսնի թաւրէզ գնալու. նա կը միամստուի.  
տպա մի գիշեր ուղարկիր Աբբաս-խանին, դահճապետի  
հետ, թող աչքերը հանեն. կուրացած՝ նա անդէն կը  
լինի. Ախ, Բէհմէն-Միրզա, Բէհմէն-Միրզա։»

Եւ Նահը արտասուեց։

Այդ միջոցին խափշիկ ստրուկը ներս մտաւ բազ-  
մանիւղ ոսկեայ աշտանակը ձեռքին, որ գրեց սենեա-  
կի մէջտեղ, իսկ կողքին՝ մի սոկեայ մաղալ<sup>2)</sup>. ճարպէ  
մոմի նրազները աղօտ լոյս սփռեցին սենեակի մէջ. այդ-

1) Կուսամուսու 2) Ունելիք, որով կորում են ճրագի քիթը։

աղօտ լոյսի փայլով, Շահի առանց այն էլ սաստիկ գունասուած դէմքը մեռելային գոյն էր ստացել. արտասուքը աչքերից շիթ-շիթ թափւում էին սև մօրուքի վրայ:

Խափիկը լսեց միայն Շահի արտասանած վերջին բառերը, բայց նկատեց մասանու յանձնումը սադրազամին:

Այդ միջոցին մուէզինի զիլ ձայնը Շահի մղկիթի մինարէից խզեց տիրող ճնշող լուսութիւնը:

— Ֆէրբաշ-բաշին աղաչեց արգ ահեմ, դլուխ տալով ասաց խափիկը, որ Փալախկան պատրաստ է, Բէգ-Լար-բէգուն ևս բերել են բանտից:

— Հա, շատ լաւ, բիչ էր մնացել մոռանայի. գնանք սադրազամ, բրիլիանտեայ<sup>1)</sup> դահլիճը և տեսնենք ինչպէս են դաղում Բէգլար-բէգու ոտները—ասաց Շահը, ուրախացած կարծես, որ կարող էր բարկութիւնը թափել մէկի վրայ:

— Բայց, զուրբան, համարձակեց նկատել ծերունի սագրազամը, ես կարծում էի որ Բէգլար-բէգուն ներումն կը չնորհէք, քանի որ...

— Ոչ, ոչ, իր գործած յանցանքի համար նա պէտք է պատժուի. հազրաթը Աբբասը վկայ, որ եթէ նա լիուլի բաւարարութիւն չը տայ այն խեղճ մարդուկին, նա կ'արժանանայ աւելի ծանր պատժի, իսկ խալաթնրան կարելի է տալ վաղը, այն էլ բո խամբի համար:

Իսկապէս Շահը սրտում դառնացած էր Բէգլար-բէգու դէմ. նա աւելի ուրախ կը լինէր, եթէ սստիկանապետը երեւան հանած չը լինէր Բէհմէն-Միրզայի դաւադրութիւնը. Շահի սրտի մէջ դեռ խղճի խայթը խօսում էր. դաւադրութեան ստուգութեան մասին կասկածի նշոյլը դեռ չէր անհետացել նրա մէջ:

Փիշխըդմէթը աշտանակը ձեռքին առաջնորդում էր Շահին սենեակների միջով, որոնք ամենքն էլ լուսաւոր-

<sup>1)</sup> Ադամանդեալ:

ուած լինելով ճարպէ կամ ճրագուի մոմերով, գրեթէ կիսամթութեան մէջ էին ընկղմուած. սադրազամը, ներքինապետը, ելիկ-աղասի-բաշխն հետևում էին Շահին:

Տրիլիանտեայ գահինը, ուր մտաւ Շահը, պալատի լաւագոյն գահիններից մինն է, կից թանգարանին՝ նրա առաջն է ամբողջ այդին, և հանդիսաւոր սէլամների ու ընդունելութիւնների ժամանակ Շահը սովորաբար այդ գահինը է նստում փոքրիկ գահի վրայ։ Ամբողջ առաստաղը և պատերը ագուցուած են հայելիների փոքր կտորներով, որոնք լուսաւորութեան ժամանակ ադամանդի նման չողեր են արձակում և այդպատճառով նա ստացել է «ագամանդեայ» անունը։

Դարնանային մեղմ, հովասուն երեկոյ էր. լուսինը իր ամբողջութեան մէջ գտնուելով, բարձրացած էր արդէն երկնակամարի վրայ և նրա արծաթափայլ լոյսը, տարածուելով ծառերի, ծառաստանների, վարդի թփերի ու տւաղանների վրայ, տալիս էր ամբողջ այդուն կախարդական, դիւթիչ տեսք։ Բաց փէնջէրէից, որ սենեակի մի ամբողջ պատն էր կազմում, բուրում էր ծաղիկների, վարդերի անուշահոտութիւն և փչում էր մեղմիկ զեփիւու. այդ փէնջէրէի առաջ, գահի վրայ, բազմեց Շահը։

Ուղիղ, դէմ առ դէմ ընկած է մեծ տւաղանը, նրա գլխի ծայրին, կանգնած էին մի քանի ֆէրրաշներ, որոնց մէջ գողգոջուն և գունատուած՝ Բէգլար-բէգին. մի քիչ հեռու, փէնջէրէի առաջ, կանգնած էր ֆէրրաշը շին, ակնդէտ սալասելով Շահի հրամանին։

—Սկսեցէք, հրամայեց Շահը։

Լուսնի տարածած ազօտ լոյսով կարելի էր տեսնել թէ ինչպէս ֆէրրաշները գետին գլորեցին Բէգլար-բէգուն, հանեցին ոտքից կօշիկները և գուլբանները, զերքաշեցին վարտիքները և բարձրացնելով ոտքերը, դրին. Փալախկայի մէջ։ Սէլիմ-շաթիրը սկսեց ոլորել այն պարանը, որին պնդացրուած են փալախկայի տախտակները, զգուշանալով, ի հարկէ, շատ սեղմել։ Դէմքը դէպի-

Երկինք ուղղած, ոտքերը բարձրացրած, Թէհրանի թըշ-ուառ սստիկանապետը անշուշտ չէր կարող աղատել ոտքի եղունգները թափուելուց և յետոյքի փափուկ միաը արիւնազանգ լինելուց, եթէ Մուշիր-Միւլը առաջուց հրահանգ տուած չը լինէր Փէրրաշներին ճիպոտների և խարազանների գործածութեան մասին:

— Վայ, վայ, մեռայ, հոգիս գուրս եկաւ, ինձ գըլ-խովդ պաոյտ տուր, ողորմած Շահ, բախշիր ինձ, զա-լաթ<sup>1)</sup> եմ արել, քեզ զուրբան—ահա այն աղիսղորմ ձայ-ները, որ արձակում էր Բէգլար-բէգին, ամեն անդամ երբ ճիպոտները բարձրանում էին օդում և իջնում ֆա-լախկայի վրայ: Այդ ձայնը սկսեց հետզհետէ նուազել, որից Շահը համոզուեց, որ յանցաւորը, ուժասպառ է եղել ցաւից և հարուածների սասակութիւնից:

Ճիշդ այդ միջոցին սադրազամը սկսեց միջնորդել: Շահը ձեռքով շարժումն արեց և Փէրրաշ-բաշին պոռաց. «Բաւական է. թող Ալլահը երկարացնի Շահի կեանքը»:

Շահի բարկութիւնը իջել էր արդէն. նա սկսել էր նոյն իսկ փոշմանել, որ այդպիսի խիստ պատժի ենթար-կեց սստիկանապետին: Դիմելով սադրազամին, ասաց.

«Սադրազամ, ներում եմ Բէգլար-բէգուն, ի նկա-աի ունենալով նրա նախկին ծառայութիւնները: Թող նա գոհացումն տայ, ինչպէս հրամայում է շարիաթը, իր հարստահարած մարդի ընտանիքին, և վազը վերա-հաստատիր նրան Բէգլար-բէգութեան պաշտօնում ու մեր սանդուղխանայից խալաթ թող ուղարկեն: Այժմ ամենքդ մուրախսոս<sup>2)</sup> էք: Ես գնում եմ էնդէրուն:

Անմիջապէս ներքինապետը վերցրեց աշտանակը և ընկաւ Շահի առաջը, որին այս անդամ հետեւում էին միայն խափշիկ ներքինիներ և էլիկաղասի-բաշին: Երբ հասան հարամիանայի դռան, վերջինս կանդ առեց: Շահը, ներքինապետը և ներքինիները ներս մտան հա-

1) Մեղանչել եմ: 2) Արձակուած էք:

րամիսանայի բակը, վարագոյրը ցած ընկաւ և ծածկեց  
հասարակ մահկանացուների աչքից այդ խորհրդաւոր  
աշխարհի մուտքը: Ելիկ-աղասի-բաշխն հէնց հարամիսա-  
նայի դռան առաջ նստեց, փաթաթուած իր եափունջիի  
մէջ և ամբողջովին զինաւորուած սկսեց հոկել, որ այլ  
ես ոչ մի արարած ոտքը չը կոխի դռան շէմքից. միայն  
նրա գիակի վրայով կարելի էր մտնել հարամիսանան,  
իսկ հարամիսանայում Շահի պահպանութեան պատաս-  
խանատուն ներքինապետն էր իր բազմաթիւ ներքինի-  
ներով:

Երբ Շահը հեռացաւ, սադրազամը շտապով իջաւ  
այգին, մօտեցաւ Բէդլար-բէդուն, որ իր աղիողորմ՝ «Պ-  
բերն աւելի սաստկացրեց «վայ ոտներս, վայ ոտներս»  
լացով:

—Կաց, Բէդլար-բէդի, գիշերից յետոյ ցերեկ կայ,  
խաւարից յետոյ լոյս, փոթորկից յետոյ խաղաղ օդ,  
պատժից յետոյ վարձատրութիւն:

—Շահը, թող Ալլահը պահպանէ յաւիտեան նրա տէ-  
րութիւնը և թագաւորութիւնը—իմ միջնորդութեամբ,  
հրամայեց վերահաստատել քո պաշտօնը. վազը խալաթը  
կը ստանաս. այժմ գնա տուն. հանգստացիր և աղօթք  
արա աշխարհիս ազօթարանի արևշատութեան համար:

—Մեծ Մարգարէն թող վարձատրէ քո բարերա-  
րութիւնդ. ես քո ստրուկն եմ և նուաստ սպասաւորն:

Ապա սադրազամը, դառնալով իր փիշբարին, ասաց.  
«Միւշիր-Միւլը, գնա Բէհմէն-Միւրզա շահզագայի մօտ,  
արդ արա թէ Շահը կատարում է նրա բոլոր ազերմնե-  
րը և հրամայում է պատրաստութիւն տեսնել ու մին-  
չե 4—5 օր գնալ Թաւրէղ, իր պաշտօնատեղին:

Խափշիկ զուլը, որ ներկայ էր, գլուխը թոթովեց.  
Նա արդէն գլխի էր ընկնում իր բոլոր տեսածից և լը-  
սածից, որ Բէհմէն-Միւրզային, այդ առատածեռն, զուար-  
ճասէր և գեղեցիկ երիտասարդ շահզագային վտանդ  
էր սպառնում ժլատ, չար ոգի, քաւթառ (ինչպէս նա-  
անուանում էր) սադրազամի լարած թակարդներից:

Այդ միջոցին, յանկարծ մօտակայ ծառից, գիշերային լոռւթեան մէջ լսելի եղաւ չարագուշակ բուփ անախորժ ձայնը: Ամենքը սարսեցին. «անպատճառ մեզանից մէկի օրը խաւարուելու է», մտածեց ամեն մէկը և տխուր, տրտում ամենքը հեռացան:

Մի քանի րոպէից յետոյ ամբողջ պալատում տիրում էր գրեթէ գերեզմանային լոռւթիւն:

## VII

Անցեալ դարի քառամսական թուականներին թէհանը գրեթէ ոչնչով չէր զանազանում Պարսկաստանի միւս քաղաքներից. նոյն նեղ, գարշահոտ փողոցները անանցանելի անձրեի ժամանակ, նոյն ցեխի պատերը, մութ բազարները, որոնց մէջ տիրում էր նեխուած, ապականուած օդ, նոյն բաց ջրանցքները, որոնց մէջ կանայք լուանում են իրանց լաթերը, նոյն լճացած աւազանները, որտեղից ջրկիրները լցնում են ջրով իրանց թուլուզները<sup>1)</sup> և տանում ծախում բնակիչներին: Բնական է, որ այդպիսի քաղաքում տարափոխիկ և վարկիչ հիւանդութիւնները անդադար կատարում են առատ հունձ, մանաւանդ մանկական աշխարհի մէջ:

Իամազան ամսի սկիզբն էր. երեք օր էր անցել Բէգլար-բէգու յիշողութեան մէջ անջնջելի տպաւորութիւն թողած այն նշանաւոր երեկոյից, երբ խաւարին յաշորդեց լոյսը և Բէգլար-բէգու գանահարուած մարմինը արժանացաւ արքայական խալաթի մէջ սփածանուելու: Ծոմապահութեան օրերն էին, երբ փողոցները, առաւոտից սկսած մինչև կէսօր, գրեթէ լուռ և գատարկ են լինում, որովհետև բնակիչները քնած են լինում, ամբողջ գիշերը անցկացրած լինելով կերուխումի մէջ: Միայն կէսօրից յետոյ, սկսում են երեւալ փողոցներում մարդիկ և շուտով բոլոր մզկիթները լցւում են

<sup>1)</sup> Զրի տիկ:

աղօթողներով. այդ մզկիթներում նշանաւոր քարոզիչները բացում են հաւատացողների աչքի առաջ այն երանաւէտ դրախտը, լի հուրիներով և փէրիներով, ուր մեղք և կաթ է հսում գետերի տեղ, կամ անմահական ջուր, որ վերապահուած է բոլոր մուսլիմներին։ Մըզկիթները լիքն են լինում ոչ միայն տղամարդիկներով, այլև կանանցով, որոնք կամ նստում են ծալապատիկ խորիներով ծածկուած յատակի վրայ առանձին, կամ նոյն իսկ խառն տղամարդկանց հետ, դէմքերը պինդ ծածկած իրանց ուրբանդներով և տըռզած՝ իրանց չախչուրների<sup>1)</sup> մէջ։ Այդ դրութեան մէջ կանայք կարող են խօսակցութեան մէջ մտնել տղամարդկանց հետ։

Արեւմուտին կամ էզանին երկու ժամ մնացած բազմութիւնը գուրս է խուժում մզկիթներից և այն ժամանակ փողոցները մի առանձին կենդանութիւն են ստանում. ոգեւորութիւնը տիրում է բազարներում. ամեն մարդ, նոյն իսկ ամենաաղքատը գնում է շիրինի<sup>2)</sup>. և շիրինիվաճառների տօնն է բամազան ամիսը. զանազան տեսակ փէշմակներ, բահաթ լոխումներ, զուրաբիներ, փախլաւաներ<sup>3)</sup>, նաբաղներ, այլևայլ կարկանդակներ պատրաստում են ահագին քանակութեամբ և դարձեալ սպառողներին գժուար է լինում գոհացնել։ Եւ ոչ միայն շիրինիվաճառները, այլ բոլոր վաճառողները — հացագործ, մսավաճառ, նպարավաճառ, պտղավաճառ, բոլոր բախկաները ընդարձակ և արդիւնաւոր առեւտուր ունեն բամազանի ամսին։ Եթէ ժողովրդի միջակ և զքաւոր գասակարգը, սօվորաբար, լի օրերում, բաւականանում է հացով, պանրով, կանաչեղէնով, մածունով կամ թանով, բամազանին, նոյն իսկ աղքատը, աշխատում է անպատճառ միս, պտուղ, շիրինի ունենալ իր իֆթարի<sup>4)</sup> համար։ Բարեկեցիկ և հարուստ դասա-

1) Վարտիք, վրալի փոխան։ 2) Քաղցրեղէն։ 3) Շաքարեղէն խմորի տեսակներ։ 4) Երեկոյեան ընթրիքը ծոմից լիսուր։

կարգը արդէն պէտք է զեղս, շռայլ իֆթար ունենայ. իսկ մեծամեծները, գլխաւոր պաշտօնեաները, ինչպէս սադրազամը, սպասալարը, բէգլար-բէգին և այլ վիզիրները բամազանի ամիսը ահագին ծախսեր են ստիպուած անել և հարիւրաւոր, հազարաւոր մարդկանց իֆթար տալ. այդ այն միջոցն է, որով նրանք ժողովրդականութիւն են ձեռք բերում, հոչակւում իբրև «հացով» մարդիկ և գրաւում են մանաւանդ. հոգեւորականութեան համակրութիւնը, որովհետեւ իֆթարին գալիս են, սովորաբար, աղքատ մէյիդներ, մօլլաներ, դէրվիշներ, թալաբաններ, որոնց անպատճառ փիլաւ պէտք է տրուի, իսկ այդ փիլաւը, օրինակ, սադրազամի տնում, պէտք է գոնէ հազար հոգու համար պատրաստուի, որովհետեւ առաջուց ամենեւին յայտնի չէ, թէ որքան հոգի կը գանց Շատ վատ նշան է, եթէ իֆթարի եկող բոլոր անկոչ հիւրերին չը կարողանան գոհացում տալ:

Իֆթարից բացի կայ և սըհարի—առաւոտեան ճաշը, որ ուտում են արեւածագից առաջ, որովհետեւ արեւածագից մինչև արեւամուտ այլ ևս ոչինչ չէ կարելի ուտել, ոչ խմել, ոչ ծխել. պէտք է խիստ ծոմ պահել, նոյն իսկ խօսքի ծոմ, եթէ կարելի է, չը խօսել, այլ միայն աղօթել։ Կարելի է երեւակայել, թէ որքան ահագին նեղութիւն և տանջանք է, երբ բամազանը պատահում է ամիսներին. ամբողջ օրը, այն ևս այնպիսի տաք երկրում, ինչպէս Պարսկաստանն է, մի կաթիլ ջուր անդամ չը խմել, չը զովացնել պապակուած բերանը, ի հարկէ, մեծ տանջանք է, բայց առհասարակ ժողովուրդը ստօյիկաբար կրում է այդ տանջանքը, ի փառս Ալլահի, և նրա մեծ մարդարէի ու 12 իմամների, աշխատելով նոյն իսկ արեւի կիպիչ ջերմութեան տակ, իսկ բարձր դասակարգը, սովորաբար, ընում է մինչև երեկոյ։ Իֆթարից յետոյ սովորութիւն է միմեանց այցելութեան դնալ, թէյ, սուրճ խմել, զէյլան, չիբուխ քաշել և նոյն իսկ դործով զբաղուել։ Նոյն

կերպով վարւում են և կանայք, հարամիսանաները. նրանք ևս յաճախում են մզկիթները, գնում են միմեանց այցելութեան, միմեանց մօս իֆթարի և, առհասարակ, աւելի աղատութիւն են վայելում բամազան ամսին:

Կէսօրը նոր էր անցել. մուէզինները նոր էին դաշտարել իրանց խոպոտ ձայնով հրաւիրել մուսլիմներին վեր կենալ քնից և նամազը կատարել: Խիարաներում կամաց-կամաց սկսում էր անցուղարձը, այս և այն խանութից դուրս էին գալիս քնաթաթափ մարդիկ, լուլէյինը ձեռքին և մօտենում խիարանի ծառերի տակով հոսող ջրանցքին ու պպզելով, կատարում իրանց բնական կարիքը. ապա լցնելով լուլէյինը նոյն ջրանցքի ջրով, վերադառնում խանութը և սաքուի վրայ սկսում իրանց նամազը:

Տօթը գնալով-գնալով սաստկանում էր գէպի Դարչվագէ-Ղազուին տանող խիարանի վրայ, թէև նրա երկու կողմերով տնկուած ծառերը, որոնց տակով հոսում էր առատ ջուր, բաւական զսկութիւն էին տարածում: Այդ ծառերի մինի տակ, ջրանցքի վրայ կռացած, երկու կին, չարսաւներով կիսածածկուած, առանց քօղի, լուանում էին ալտուտ լաթեր չօղանով<sup>1)</sup>. մի քիչ ներքեւ ջրիիրները լցնում էին իրանց թուլուզները ջրով և ոռոգում խիարանը՝ փոշին նստացնելու համար, կամ տանում ջուրը իրանց մուշտարիներին<sup>2)</sup>: Այդ ջրանցքից և գնում էր ջուրը մանր խոզովակների միջով խիարանի տների ջրամբարները: Մուսուլմանների կարծիքով հոսող ջուրը միշտ մաքուր և սուրբ է և նրա մէջ թափուող աղտեղութիւնները չեն կարող պղծել նրան. նոյն խոկեթէ մի լճացած աւազանի մէջ սատկած կատուկամ շուն ընկնի, նրա ջուրը պիղծ չէ կարող համարուել, եթէ այդ ջրի բանակութիւնը, կշիռը եօթը լիտր է. այդ պատճառով և տան ջրամբարները լցնում են փողոցներով բաց հոսող ջրանցքներից, որոնց մէջ լուաց-

1) Մի տեսակ բոլոս, որ դուծ է ածւում սոսպոնի տեղ: 2) Գնողներին:

ւում են աղտօտ լաթեր, լուացւում են նոյն իսկ մեռածների գիտելիք:

—Եասաման,—ասաց լուացք անող կանանցից աւելի տարիքաւորը իր կողքին լուացք անող մի խափշիկ կնոջ, որի ականջներից կախուած էին սարկութեան յատկանիշ օղերը—ասում են տիրուհիդ, Լէյլա խանըմը, Իմամ-Զումայի աչքի սիրելին է դարձել, ուզի՞ղ է:

—Այս, Սանամ; ուզիկ է. Լէյլա խանըմի գեղեցկութիւնը հւամար ասես խելքից չի հանի. Իմամ-Զուման շատ սիրում է նրան և կատարում է բոլոր նրա խընդիրները:

—Այդ էլ բախտ է. բախկալ մաշադի Քէրիմի աղջիկը Իմամ-Զումայի կինն է դարձել. մոխիր մեր գըլ-խին, որ այդպիսիներն էլ խանըմ պէտք է գառնան:

—Ի՞նչ մեծ մարդի աղջիկն է քո խանըմը. հողը նրա չէչոտ երեսին. գեռ Լէյլա խանըմին չիս հաւանում, հօ քո խանըմիդ նման անզգամ չէ:

—Անզգամը, լիրքը քո խանըմն է, մուրդաշուրը<sup>1)</sup> տանի նրան:

—Մուրդաշուրը քո խանըմին, քեզ տանի, բափթառ:

—Ե՞ս եմ բափթառ. ախ դու սե շուն, սպասիր տես քո հախից ինչպէս կը դամ: դու մոռանում ես որ իմ խանըմը Բէգլար-բէգդու կինն է:

—Բէգլար-բէգին: Ձէնդ կտրիր, թէ չէ քո ոտներն էլ այնպէս կը դադեն, ինչպէս անցեալ օր դադել են նրա ոտները: Բէգլար-բէգին ինչ շուն է Իմամ-Զումայի առաջ...

Խափշիկուհին չը վերջացրեց. Սանամը քաշելով նրա գլխից չարշաւը, կպաւ ծամերից և եասամանը վայր ընկաւ մէջքի վրայ ջրանցքի ափին, թաց փոշու մէջ, ցեխոտուած:

«Վայ, վայ», —լսուեց խափշիկուհու աղաղակը և

<sup>1)</sup> Սեռեալ լուացող:

նա ձեռները տանելով դէպի Սանամի կողմը, չանգռեց  
նրա երեսը:

«Հարայ, հուրայ»—լսուեց մի այլ գոռիւն:

Ալլահը գիտէր, ինչով կը վերջանար երկու կա-  
նանց կոփւը, եթէ այդ միջոցին մի ֆէրբաշ վրայ ըը  
համեմէր. «Հէյասըզներ<sup>1)</sup>, անզգամներ, չէք ամաչում;  
փողոցում կոփւ էք սարքում, երեսներդ բաց. դէ, հա-  
ւաքեցէք ձեր լաթերը և կորէք այստեղից»—պոռաց մեր  
վաղածանօթ Սէլիմ շաթիրը, բայց յանկարծ նկատելով  
խափշիկուհուն, փոխեց ձայնը և ասաց.

«Այդ գու ես, Եասամնն, էլի ինչ կոփւ ես սար-  
քել»:

Սակայն Սանամը հազիւ տեսաւ Սէլիմ շաթիրին,  
որ ուրախացած կանչեց.

—Հաջի Սէլիմ, տես այս անդգամը ինչ աղք է  
ուտում մեր աղայի մասին. գնա յայտնիր Իմամ Զու-  
մային, թող մի լաւ պատժի սրան, ուե շէյթանին:

—Նէյթանը դու ես,—պատասխանեց Եասամանը  
և պատրաստուեց յարձակուել Սանամի վրայ, երբ մօտի  
աներից մի քանի կանայք գուրս գալով, վրայ թափ-  
ուեցին և սկսեցին խաղաղացնել կոռուզներին:

Այդ միջոցին խիաբանի վրայ աներից մէկի գոռուը  
բացուեց և մի քանի հոգի 8—10 տարեկան մի երե-  
խայի գիտակը գրած նաջաղի<sup>2)</sup> վրայ, մօտեցան ջրանց-  
քին ու նաջաղը դնելով ափին, սկսեցին լուանալ գիտ-  
ակը. մի ջահէլ կին, չարշաւի մէջ կիսափաթաթուած,  
մի քիչ հեռու կանգնած, աղիողորմ լացում էր:

—Խեղճ Աբհայեաթ, ասաց կանանցից մինը, մի-  
նուճար զաւակին կորցրեց. ախ, այդ անիծեալ բկա-  
ցաւը. գնանք միսիթարենք:

Եասամանը և Սանամը ջահէլ մօր վշտի առաջ իս-  
կոյն մոռացան իրանց թշնամութիւնը և նոյնպէս հե-

<sup>1)</sup> Անամօթներ; <sup>2)</sup> Պատգարակ մեռածների համար:

տեւեցին միւսներին։ Սակայն Սէլիմ շաթիրը յարմար բոպէ գտաւ և ասաց խափշիկուհուն։

«Շուտով գնա տուն, ասա Լէյլա խանըմին, որ մի ժամից յետոյ կը լինեմ Զումա մզկիթում և կը սպասեմ իրան»։

Խափշիկուհին ժպտաց և գլխով համաձայնութեան նշան տուեց։

Սէլիմը մօտեցաւ մուրդաշուրներին, կանգնեց մի քանի բոպէ և սալամ ասելով նրանց, շարունակեց ճանապարհը։

Իսկ աղտոտ լաթերը և գիֆտերիտով մեռած երեխայի դիակը մաքրող ջուրը հոսում էր անդադար կարկաչնով դէպի ջրամբարները և աւազանները։

Երբ Սէլիմ շաթիրը հասաւ Զումա մզկիթը, ուր այն օր պէտք է կատարուէր ուրբաթօրեան հրապարակական աղօթքը—սէլար ուղղումէ—մզկիթը լի էր արդէն աղօթողներով և հաւատացեալները վաղուց կատարել էին իրանց երկու բօքէթը<sup>1)</sup>, ծերունի փինամէզ<sup>2)</sup> մօլլայի զեկավարութեամբ, բարձր ձայնով։ Մէմբարի<sup>3)</sup> վրայ բարձրացել էր մի երիտասարդ մօլլա և սկսել քարոզը։ Սէլիմը հանեց դռանը կօշիկները, մտաւ ներս և աչք ածեց ամեն կողմ, տնտղեց, մինչև նկատեց մի խումբ կանանց, նստոտած տղամարդկանց մէջ, փաթաթուած չարշաւներում և երեսնին ծածկած քօղով։ այդ կանանց մէջ նա նկատեց մինը, որի ուրբանդը պնդացրած էր չարշաւի վրայ ոսկեայ ճարմանդներով, որոնցից կախուած էր մի երկար, կարմիր ժապաւէն։ Սէլիմը մօտեցաւ կամաց-կամաց և նստեց այդ կնոջ կողքին։ Իր միւս կողքին նստած էր մի ուրիշ կին, որը դարձնելով երեսը նրան և կէս-բանալով քօղը, ու, լայն և թանձր շրթունքների արանքից ցոյց տուեց ձիւնափայլ ակռաները և ժպտաց, աչքով անելով։ Սէ-

<sup>1)</sup> Ուրբաթօրեան աղօթքը բարկացած է լինում երկու բօքէթից—երկրագութիւնից։ <sup>2)</sup> Նախասաղօթող։ <sup>3)</sup> Ամբիոն։

լիմը միամոռւեց, որ կողքին նստածը Լէյլա խանըն է և, ուշադրութիւն չը գրաւելու համար, սկսեց ինքն ևս միանալ այն լային և կականին, որ բարձրացրել էին հաւատացեալները, լսելով քարողիչ մօլլայի պատմութիւնը իմամ Հուսէյինի և Հասանի մարտիրոսական մոհուան մասին: Լայելով, նա գլուխը տանում բերում էր, կռացնում և բարձրացնում, ինչպէս սովորաբար անում են մուսուլմանները աղօթելիս կամ զուրան կարդալիս:

«Առիւծը—բացականչում էր ամբիոնից մօլլան—երբ իջաւ այն դաշտը, ուր ընկած էին իմամները, մարդկային լեզու ստացաւ, թնդացրեց սարերը, ձորերը, անտառները, ամբողջ օդը իր աղիողորմ ահեղ մոնչիւնով, տեսնելով իմամների արիւնաթաթախ մարմինները, գաղանը, գիշատիչը լայեց, մենք ադամորդիւներս, ի՞նչ պէտք է անենք»:

—Վայ, վայ, ողբացին կանայք, կոծեցին տղամարդիկ:

«Վայ, վայ», կոծեց Սէլիմը և խոնարհեցնելով գըլուխը դէպի գետին, ասաց Լէյլա խանըմի ականջին.

—Դու ես, Լէյլա-ջան:

—Ես եմ, Սէլիմ-ջան, զուրբան քեզ:

—Լսիր. հասել է ժամը, որ մեր մօւրազին հասնենք. հասել է ժամը, որ ազատուենք իմամ-Զումայից և իմն լինես:

—Խոչչպէս. պատմիր, պատմիր, դնւրբան:

Եւ Լէյլան բարձրաձայն ազաղակեց. «Վայ, վայ, մաջլում՝<sup>1)</sup> Հուսէյն, վայ»:

—Լսել ես ջհուդ աղջկայ, Եսթերի մասին:

—Լսել եմ, լսել. բէստ է մտել:

—Ես այնպէս կը սարքեմ բանը, որ Եսթերը ուղարկուի իմամ-Զումայի հարեմիսանէն, քեզ մօտ, և այնտեղ մնայ, մինչեւ կորոշուի թէ մուսուլման է նա կամ

1) Խեղճ:

ու և ում կինը պէտք է լինի։ Դու աշխատիր գրդռել իմամ Զումայի ցանկութիւնը, տուփանքը դէսլի Եսթերը, դովելով նրա գեղեցկութիւնը, այդ տուփոտ ծերուկին ես լաւ ճանաչում եմ, նա այդպիսի թանկագին որսը ձեռքից բաց չի թողնի...»

—Յետոյ, յետոյ։

«Վայ, վայ, մաջլում Հուսէյն, վայ», նորից ողբաց Սէլիմ շաթիլը, և կռանալով շարունակեց։

—Յետոյ, յետոյ այն էլ կը լինի, որ ես Եսթերին յափշտակող սէյխդի նախանձը կը գրդռեմ, աչքը բաց կ'անեմ, թէ ինչի համար է իմամ Զուման պաշտպանում իրան և սէյխդը նրա ճաշը լաւ կ'եփի... մենք էլ մեր մուրազին կը հասնենք։

—Բայց սէյխդը ինչպէս կարող է տեսնել այդ բուլով։

—Այդ ինձ թող, ես գիտեմ ինչպէս. դու ջհուդաղլկայ հետ լաւ բարեկամացիր, իմ ասածը կատարիր, մնացածը ես գիտեմ։

—Լաւ, զուրբան լինեմ այդ քեաքուլներիդ<sup>1)</sup>, Սէլիմ-ջան։

—Ղուրբան այդ չինարի բոյիդ, Լէյլա-ջան։ Եւ երկուսը նորից սկսեցին. «Վայ, վայ, Հուսէյն ջան»։

Քարոզիչը վերջացրեց ողբը. ապա յայտնեց, որ կարեւոր իսորհրդակցութիւն կայ և թող մուսլիմները ուշադրութեամբ լսեն։

«Դուք գիտէք, հաւատացեալներ, որ իսլամը ամեն տեղ և ամեն ժամանակ յաղթող է եզել. դուք գիտէք, որ անհաւատներից միայն երեք աղդի թոյլ է տուած մեր նուիրական շարիաթով դաւանել իրանց կրօնը, վճարելով որոշ հարկ և կատարելով որոշ պայմաններ. դրանք կոչւում են Էհլ-ուլ-զիմմեր—հարկատու անհաւատներ—և դրանք են ջհուդները, քրիստոնեաները և

<sup>1)</sup> Խոպոսպիք։

գերբները, թէե վերջիններին մի քանի օրէնսդէտներ չեն գասում Էհլ-ուլ-զիմմէրի շարքը. բայց այդ երեքին էլ թայլատրուած է իրանց կրօնի ազատ գաւանումը միայն այն պայմանով, որ հարկ վճարեն և մուսուլմանների դէմ ոչ մի յանցանք չը գործեն, նրանց տներից բարձր տներ չը կառուցանեն, փողոցով գնալիս նրանց տեղ տան, չը հայհոյեն մարդարէին և նրա սուրբ օրէնքը, չը շնանան մուսուլման կնոջ հետ, հրապարակաբար գինի չը խմեն, խոզի միս չուտեն և իրանց կանանց հետ պոռնկութիւն չը գործեն. Եթէ նրանք, անհաւատները, բռնուեն այդ յանցանքների մէջ, արժանի են մահուան:

—Այո, այդ այդպէս է շարիաթը, լսուեցին հարիւրաւոր ձայներ:

—Բայց այդ Էհլ-ուլ-զիմմէրի մէջ ամենաստոր և արհամարհելի մի ժողովուրդ, Խորայէլի որդիները, ջնուգները, յանդզնեցին այս օրերս մի անլուր յանցանք գործել. իրանց աղջիկներից մինը իր կամքով ընդունել է մեր սուրբ գենը, ամուսնացել է մեր սէյիդներից մէկի հետ, մարդարէի ճէտի հետ, բայց ջնուդները փախցրել են նրան և այժմ բէստ են մտել Շահի ախոռատան մէջ ու նրա հետ բէստ է մտել և մի ջնուդ տղայ, որ իբր թէ աղջկայ նշանածն է։ Խոլամ կինը այժմ ջնուդի հետ է, և ջնուդը, անհաւատը, նայում է իսլամ կնոջ երեսին, ու մենք ոչինչ անել չենք կարող Խոլամի սուրբ օրէնքը ոտնակոխ է լինում և ում ձեռքով, մուռտառ ջնուգների ձեռքով։

—Մահ ջնուգներին, ջնուդ-բուշան անենք, ոռնաց բազմութիւնը. մենք կը ստիպենք բէստ մտածներին դուրս գալ:

Եւ մզկիթը գլրդաց խուլ որոտմամբ, շիոթ, ժրխորային աղաղակներով։

Երիտասարդ քարոզիչը նշան արեց, որ դեռ չէ վերջացրել։

Դեռ շուտ է ջնուդ-բուշան սարբել. առաջ ա-

ուաջարկենք հրէաներին որ տան մեզ աղջկան, ինչպէս  
և երիտասարդին, որովհետեւ, եթէ յայտնուեց, որ ե-  
րիտասարդը խախտել է աղջկայ կուսութիւնը, երկուսն  
էլ, իբրև պոռնիկներ, քարկոծ պէտք է լինեն: Եթէ  
հրէաները չեն կատարի մեր պահանջը, այն ժամանակ  
կը խնդրենք աղայից, որ ջհուդ-քուշանի ֆիթվա տայ:

—Սալավաթ, սալավաթ, թնդաց մզկիթը:

—Եթէ այդ յանցանքն ևս գործած չը լինէին  
ջհուդները, նրանք արդէն շատ երես են առել. տներ  
են շինում մուսուլմանների տներից բարձր, փողոցներով  
գնալիս տեղի չեն տալիս մուսուլմանին, առաջ իրանք  
են էլ-սէլամ-ալէյնում ասում<sup>1)</sup>, նոր տաճարներ են  
շինում, ձի են նստում, մեծ լապտերներով են ման գալիս  
գիշերները, բոլոր առեւտուրը իրանց ձեռքն են ցցել:

—Ջհուդ-քուշան, ջհուդ-քուշան, նորից ոռնաց  
ամբոխը:

—Ուրեմն գնացէք, պատրաստ եղէք, յայտնեցէք  
ամենքին և երբ հրէաները մեր պահանջը չեն կատարի,  
Ալլահի օգնութեամբ մենք նրանց հախիցը կը գանք:

—Սալավաթ, սալավաթ, երգեց ամբոխը և գրոհ  
տալով, սկսեց գուրս գալ մզկիթից:

Դուրս եկաւ և Սէլիմ շաթիրը. նա ուրախ էր և  
գոհ. նրան յաջողուեց լսել իր սիրուհու ձայնը. նա մօ-  
տենում էր այն բոպէին, երբ վաղուց սրտի մէջ կու-  
տակուած վրէժխնդրութեան եռ եկող կիրքը պէտք է  
յագուրդ գտնէր. նա ներկայ եկաւ քարոզին և իմա-  
ցաւ դաւադրութիւնը, որ ուղղակի պէտք է նպաստէր  
իր ծրագրի յաջողութեան: Պէտք էր շտապել և ամեն  
բան յայտնել Բէգլար-բէգիին մզկիթում անցած-դար-  
ձածի մասին, այլապէս ոչ մի ֆէրրաշ, իբրև բարի  
մուսլիման, չէր յայտնի նրան: Բազարները, փողոցները  
արդէն կենդանութիւն էին ստացել. տօթը անցել էր.

<sup>1)</sup> Շէրիաթով ոչ-մուսուլմանները չը պէտք է առաջ ինքեանք ողջունի  
այդ խօսքերն արտասանեն, չը պէտք է նոր եկեղեցի, աղօթարան կա-  
ռուցանեն, բարձր տներ շինեն:

երեկոն մօտենում էր, ամեն մի մարդ մի բան գնած փէշի ասկին, թաշկինակի մէջ շատապում էր իր տունը. մրգավաճառը իր միրգն էր գովում, մսավաճառը խանութի առաջ մոմեր էր վառել, հասկացնելու համար, որ մսի գինը էժանացել է. քազզրավաճառը մի առ մի նկարագրում էր իր քազզրաւէնների յատկութիւնները. կանաչեղէն ծախողը գոռում էր, որ իր բանջարները թարմ են: Եւ դրանց ըոլորի ժխորի, աղմուկի մէջ դէրփիները իրանց քեսշգուլը ձեռքին բռնած, տապարը ուսին դրած, մէջը ծածկած առիւծի կամ վագրի մորթով, ոտաքրիկ, կոնածեն գլխարկով, գզգզուած մազերով, «Եա հագ», «Եա հու» աղաղակներով թընդացնում էին օդը, և անցորդի բիստիները<sup>1)</sup>, շահիները թափուում էին նրանց քեսշգուների մէջ: Մի այլ տեղ, պատի մի որեւէ սաքուի վրայ, մի կասր փոետթի վրայ նստած մի մօլա, առաջին դրած մի փոքր մնդուկ, երգելով և գլուխը տանել-բերելով, կարդում է զուրանը. նա ֆալ բացող է և թալիսման գրող. նրա առաջ չոքում են չըելք կանայք և խնդրում թալիսման անել, որ տղայ զաւակ ծնեն, կամ իրանց ամուսինները իրանց աւելի սիրեն, քան միւս կանանց, կամ ֆալ բաց անէ, արգեօք կը համնի իր մուրազին: Մօլան հանում է մնդուկից թալիսմանի թղթերը և եղեգնէ գրչով ինչ որ մի արիւնազանդ գոյնով նշաններ է խծրծում նրանց վրայ ու տալիս կնոջ, որ տանի կախի զղից կամ կարի թեւքից. ուրախացած կինը՝ կէս, մի, երկու զռան է գցում մօլայի մնդուկը: Մի այլ տեղ, մի հէքեաթաբան, գլխին ժողոված քսան-երեսուն հոգի, հէքեաթ է պատմում, կամ Թրդովսու Շահնամէից կտօրմեր է երգում: մի ուրիշը օձեր է պար ածում, թովում է նրանց այնպէս, որ փաթաթւում են շլինքին, առանց կծելու Ահա և հինգ կոյրեր, որոնց տուաշնորդում է մի վեցե-

<sup>1)</sup> Հինգ բիստին մի շահի է, իսկ շահին հաւասար է  $1\frac{1}{2}$  կոպէկի:

բորդ կոյր. առաջնորդը, գաւազանը շարժելով, առաջ է գնում, սկսում է մի ազօթք, միւսները կրկնում են. նրանց ձեռքում դնում են բխտիներ, և պարկերում դցում են հաց, պառլ:

Յանկարծ լսուեց ձայներ. «Հեռու, երեսներդ գարձրէք, կուրացէք», և վայրկենապէս փողոցով անցնողները երեսները գարձրին դէպի պատերը, իսկ խանութներում նստածները ձեռքերով փակեցին աչքերը: Անցնում էր Շահի հարէմխանայի կանանցից մինը, զարդարուած ջորու վրայ նստած, չարշաւում ծածկուած, բազմաթիւ ծառաներով, աղախիններով և ներքինիներով: Ընդունուած սովորութեան համեմատ, Շահի կանայք կամ աղջիկները անցնելիս, տղամարդիկ, ով և լինին, պէտք է երեսները դարձնեն և կամ՝ աչքերին փակեն. ով չէ կուրացնում աչքը, կամ երեսը չէ դարձնում, նրա ուսերը գաղում են ֆէրրաշների ճիպուներով:

Թէյատներում, զահվէխանաներում (սրճատուն) արդէն սկսել են զէյլանները չաղ անել, թէյը, սուրճը պատրաստել, որ երբ թնդանօթը նետուի—ծոմը բաց անելու նշանը—իսկոյն յաճախորդները կարողանան ծխել և խմել: Առդէն ժամանակն է. իսկոյն կը նետուի թնդանօթը, և փողոցները հետզհետէ դատարկւում են:

Շտապով, գեվաները<sup>1)</sup> քաշած, գնում է Սէլիմ շաթիրը. նա աշխատում է թնդանօթը դցուելուց առաջ հասնել Բէգլար-բէգի տունը. նա կարողացել էր ճանապարհին մտնել Շահի ախոռատունը և այցելել հրէմաներին ու հաղորդել նրանց մզկիթի մէջ կայացած որոշումը, որի համար ծերունի հրէման դրել էր նրա ափում մի էշրաֆի—ոսկի և այժմ նա, ուրախ-ուրախ վազում էր Բէգլար-բէգի տունը,

1) Կանեփից պատրաստած սպիտակ կոշիկներ

նրան ևս զեկուցանելու և նրանից ևս մի էնամ՝<sup>1)</sup>  
ստանալու:

«Լօթի, շատ ուրախ ես երեւում: Հը, ի՞նչ կայ—  
հնչուեց յանկարծ Սէլիմի ականջին մի ձայն և մի ձեռք  
դրուեց նրա ուսին:

«Ա՞հ, գ՞ու ես, Իբրահիմ—ասաց Սէլիմը,—գնանք  
Բէգլար-բէգի տունը իփթար անենք»:

—Ե՞ն, ի՞նչ կը տան մեզ: այնքան բազմութիւն կը  
լինի, որ մեզ, ֆէրրաշներիս, կրծելու ոսկը անդամ չի  
հասնի:

—Դու եկ, կը տեսնես թէ ի՞նչ իփթար կ'ունե-  
նանք: Բէգլար-բէգին դեռ էնամ էլ կը տայ մեզ:

Երկու շաթիրները հաղիւ ոտները դրել էին Բէգ-  
լար-բէգու դռան շէմքի վրայ, որ թնդանօթը արձա-  
կուեց:

Ծոմը բացուեց. ամեն մարդ շտապեց մի զէյլան  
ծխել, մի բաժակ թէյ խմել:

Բէգլար-բէգի տան դուռը բացւում էր մի մեծ  
պարտէղի վրայ, զարդարուած բազմերանդ, անուշա-  
բոյր ծաղիկներով, վարդի թփերով և մի գեղեցիկ մար-  
մարեաց: աւազանով: Մի լայն քարեայ սանդուխ, աւա-  
զանի դէմ առ դէմ, տանում էր դէպի պատշգամիքը,  
որից մտնում էր մի ընդարձակ թալարի մէջ, ամբող-  
ջովին հայելազարդ: Թալարի վերին մասում, մի փոքր  
մետաքսէ գորդի վրայ ծալապատիկ նստած էր Բէգլար-  
բէգին, հագած Շահի խալամթը, մարդարաեայ ծոպե-  
րով և ականակուռ ճարմանդներով, որով նա վերա-  
հաստատուել էր բէգլար-բէգութեան պաշտօնի մէջ:  
Թալարը լի էր զանազան կարդի մարդկանցով—սէյիդ,  
մօլլա, դէրվիշ, վաճառական, խան, զինուորական,  
պաշտօնեայ, ամենքն էլ ակնդէտ՝ իփթարին: Ծառա-  
ները մատուցանում էին հիւրերին զէյլան, թէյ, սուրճ:

1) Պարզէ, որ տալիս են մեծերը վտքրերին:

Բէգլար~բէգի դէմքը խրոխտ էր և սպառնալից.  
ոչ ոք չէր կարծի, թէ դեռ երեք օր առաջ այդ հպարտ,  
խրոխտ մարդը ֆալախսկայի հարուածներն էր կերել  
ամենայն հեղութեամբ։ Փիշքարը, չոքած առաջին, զե~  
կուցումն էր անում, փսփսալով ականջին։

«Մսավաճառները, ասում էր նա, պատրաստ են  
հազար թուման տալ ձեզ, եթէ թոյլ կը տաք մսի դի~  
նը լիտրում երեք շահի աւելացնել։

—Երեքը շատ է, պատասխանում էր Բէգլար~բէգին  
կամացուկ, թող աւելացնեն երկու շահի։

—Ալլաֆները<sup>1)</sup> խնդրում են թեթեւացնել տուլ  
իրանց վրայ դրուած հարկը. ձեզ թագտիմ<sup>2)</sup> են ա~  
նում 500 թուման։

—Շատ լաւ, արզ կ'անեմ սադրազամին։

Այստեղ ևս կատարում էր նոյնը, բայց մանրա~  
նկարական ձեռվ, ինչ որ երեք օր առաջ տեսանք կա~  
տարուելիս սադրազամի առանձնասենեակում։

Սէլիմ~շաթիրը պատշգամբի վրայ բացուող փէն~  
ջարէի առաջ. կանգնած, սպասում էր, երբ Բէգլար~  
բէգի աչքը ընկաւ նրան և ասաց.

—Հը, ի՞նչ կայ, Սէլիմ շաթիր։

—Կարեւոր արզ ունեմ, հրաման տուէք գամ  
յայտնեմ։

—Ե՛կ։

Մտնելով թալարը, Սէլիմը չոքեց Բէգլար~բէգի  
առաջ և պատմեց ականջին Զումա մզկիթում լսածը։

—Աֆէրիմ, Սէլիմ, գու արժանի ես վարձատրու~  
թեան, հիմա լսիր. գնա խոհանոց, ասա այնտեղ բեկ  
լաւ իֆթար տան. ապա վեր առ հետդ ընկերներիցդ  
մի քաջ տղայ, գնացէք միասին Բէհման~Միրզա շահ~  
զադէի տան փողոցը և այդտեղ լաւ հսկեցէք ու ինչ  
որ տեսնէք, եկէք պատմեցէք ինձ։ Զգ՞յշ կացէք, ձեզ  
չը նկատեն։

1) Փակտ, ածուխ, զարի ծախող։ 2) Ընծայում են։

—Աչքիս վրայ, ասաց Սէլիմը վեր կենալով և խոր  
գլուխ տալով:

Իբրահիմի հետ իֆթարն վայելելուց յետոյ, եր-  
կուսն էլ կէս ժամից յետոյ դիմեցին դէպի այն փո-  
ղոցը, ուր դանւում էր շահզադէի տունը:

ՃԱՀՐԻԱՐ

(Եթ շարունակուի)

# ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ\*

ՎԵՊ

ՀԱՆՐԻ ԲՕՐԴՈՒ

18

Բոլորաձև մի մեծ ժայռ, ծածկուած փիլիկներով և փոքր թփերով բաժանուած է Մենտոնը Տալուարից։ Այդ ժայռը հրուանդանի նման ներս է ցցուած լին մէջ և նրան յարակից է Աննէսին։ Գրեթէ ուղղահայեաց բարձրացող այդ ժայռից բացւում է մի լայն հորիզոն մերձակայ սարերի վրայ։

Ժայռի գագաթին շատ մօտ գտնուած է մի բացաստան։ Կոմսուհի Ֆերրեզին շատ սիրում էր գալ այդ առանձնացած և վայրի տեղերը կարգալու իր հայրենիքի սիրեցեալ զրոյների գրաւիչ քօմանները։ Այդտեղ յաճախ գալիս էին ժաննի և Աննի Մէրանները, որոնք տածում էին դէպի կոմսուհին այնպիսի մի ողնորուած պաշտամունք, որ յաճախ երեսում է երիտասարդ աղջկանց մէջ իրանց վրայ ուշագրութիւն դարձնող երիտասարդ կանանց վերաբերմամբ։ Նշանց հայրը սկզբում դժգոհութեամբ էր վերաբերում այդ ծանօթութեամն, որ կապել էր կինը իր սովորական անհոգութեամբ։ Նրան վրդովում էին այն անորոշ լուրերը, որ տարածուած էին գեղեցիկ իտալուհու և ժակ Ալվարի մասին, բայց սովորած լինելով չը հաւատալ գաւառական բամբասանկներին, նա կամաց-կամաց սկսեց մատերի արանքով նայել այդ նոր ծանօթութեամն վրայ։

Նստելով իստի վրայ, կոմսուհի Ֆերրեզին կազմում էր

\* ) Տե՛ս «Մուրճ» № 2.

փնջիկ ծաղիկներից, որ նա հաւաքել էր, բարձրանալով կածառով: Զոկելով և դարսելով ծաղիկները նա կիսամայն երգում էր մի թախտալից և սրտառուչ ձկնորսական երգ:

Առաւոտ էր: Կապուտակ երկինքը և ծովային թարմ քամին հաճելի և ուրախ մտքեր էին ներշնչում, բայց չը նայելով դրան, կոմսուհին շատ արտում էր: Աչքերի տակի զծերը և նրա դէմքի անհաւասար դոյնը ցոյց էին տալիս արդէն նրա մարող երիտասարդութիւնը, բայց նրա ճկուն կազմուածքը դեռ չէր կորցրել նախկին հմայքը:

Ծաղիկները և երգերը նրան շատ քիչ էին գրաւում. նա մտածում էր իր սիրոյ մտահն:

Փալով Հռոմից Սալօյի այս անկիւնը, որի թարմ օգը սնէ հրաժեշտ էր իր հիւանդու մարդին, նա շատ տիսրում էր իտաւ լիայի գեղեցիկ երկնքի և աշխարհիկ ուրախութիւնների համար, որոնք գոհացնում էին նրա բաւական թեթեամիտ բնութիւնը: Երիտասարդ կնոջ ձանձրութիւնը և ախոր կմանքը հիւանդ մալդու կողքին, վերջապէս այն երկիւլը թէ կը կորցնի իր երիտասարդութիւնը, չը փորձելով այն բոլոր ուրախութիւնները, որ նա կարող էր տալ, —այդ բոլորը միամին ձգեց նրան Փակ Ալվարի գրկի մէջ: Նա անձնատուր եղաւ, առանց սեթնելթի և առանց սակարկութեան, այդ լիրը նայուածքով և ցինիկ գեղեցիկ երիտասարդին: Այդ անազան կիրքը սորկացրեց նրան: Նրա սիրեկանը վարում էր նրա հետ կոպտութեամբ, բայց նա, կոմսուհին, արհամարանք չը զգալու համար ինքն գէպի իրան, աշխատում էր համոզել իրան, որ իր հլութիւնը և թուլութիւնը հնատիանք են իր սրտային քնքշութեան, մինչդեռ իսկապէս նրանք կրում էին աւելի զգայասիրական բնաւորութիւն:

Կոմսուհին յիշեց, թէ ինչպէս մի քանի ժամանակ առաջ Ալվարը յայանեց նրան իր ամուսնութիւնը և նա լացեց, խընդրելով նրան գետ սպասել մի քանի տարի: Նա հաւատացնում էր նրան, որ, ինքը շատառվ կը պառաւի, բայց ժակը ի պատասխան միայն ծիծաղում էր: «Այդ այնքան էլ կարենը չէ, —ասաց նա, —ես ամուսնանում եմ, որովհետեւ ինձ պէտք են միջոցներ և պատգամաւորի տեղ: Հօ չը պէտք է նախանձես գէպի այդ փոքր աղջիկը: Հարսանիքից յետոյ գու իմ ետից Պարկի կը գտա, գու կը հաւատացնես քո մարդուն, որ նա այն տեղ կը գտնի մոռաւոր զուարձութիւններ, որոնք սմնհրաժեշտ են նրա հիւանդու վիճակի մէջ: Աւրեմն, ինչզրում եմ, յիմարութիւններ մի արտօ: Նա հնաղանդեց ինչպէս միշտ, և պատ-

րաստ էր մինչև անգամ ափսոսալ խեղճ Աննիխն, որին վիճակը ուած էր առաջիկայում այնքան տաճանքներ կրել:

«Իսկ եթէ նա այդ աղջկան սիրեց, — Փայլատակնեց նրա զլիսում: — Աստուած իմ, օքքան ես դժբախտ եմ, որ պաշտում եմ այդ մարդուն»:

Նրա կողքին լսուեց տերեների շխչանց, որ ստիպեց նրան վեր թռչել: Անզլիական մի մեծ շուն, սև հրացայտ աչքերով ցայտեց բացաստանի վրայ և վազեց դէպի նրան:

— Կանգնիր — կանչեց նա և սկսեց շոյել շանը: — Այդ դժուք էք, սիրելիս, ասաց նա դարձնելով գլուխը Աննիր կռվմը, որ երեաց յետ տարած ճիւղերի ետեից:

— Ժաննին յոզնել է և այսօր ևս միայնակ եկայ, — արտասանեց երիտասարդ աղջիկը:

Երկու կանայք ըստ սովորութեան գրկախառնուեցին և համբուրուեցին: Աննին խխոտ թարմ դէմք ունէր, նրա այտերը կարմրել էին արագ գնալուց և նրա աչքերում փայլում էր երջանկութիւնը: Կոմսուհի Ֆերրեզին իրան առանձին գրաւիչ չէր զգում այդ բոպէին, ուստի և ակամայ զմայլելով աղջկայ վրայ, նա մինոյն ժամանակ նախանձում էր նրան:

— Ի՞նչ հիմնալի առաւօտ: Մի նայեցէք, Է, — կոչեց Աննին, քաշ տալով իր բարեկամուհուն մինչև բացաստանի ծայրը:

Զինջ երկինքը իրանց զլիսի վրայ մութ կապուտակ գոյն ունէր, իսկ հեռու հորիզոնում ստանում էր վարդ-մանիշակային գոյն: Լիճը ցոլացնում էր ջինջ կապուտակ երկինքը: Ժամանակ առժամանակ նրա մակերեսյթի վրայով անցնում էր մի թեթև սարսուռ, ցոյց տալով այն խորհրդաւոր կանքը, որ թագնուած էր նրա խորհրդաւոր: Կանաչների միջից բարձրանում էին Դիւէնի սպիտակ աշտարակները: Աջ կողմում երեսում էր Աննէսին և նրա վրայից բարձրանում էր Նէմուրի դղեակը, որ ընծայում էր ամբողջ տեղին միջնաղարեան ամրոցի տեսք: Ամեն բանի մէջ զգացւում էր տմարային առաւօտի հմայքը և մեղկութիւնը: Լճից փչող զեփիւը ցոյւմ էր երկու կանանց երեսը և նրանք զգում էին նրա թարմութիւնը թեթև զգեստի միջից: Աննին, երեսը դարձնելով պէյզաժից, նայեց իր բարեկամուհուն: Նա կամենում էր ամբողջ աշխարհին յայտնել իր երջանկութեան մասին, բայց զախենում էր որ այդ երջանկութիւնը շատ բացացորիկ էր և կարող էր նախանձ զրգուել աւելի սակաւ երջանիների մէջ: Նա նկատեց, որ Լէօնօրան տրտում է, ուստի և չէր վստահանում ասել նրան իր դաշտնիքը: Նրա մաքով ամեննին չէր կարող անցնել, որ այդ գաղտնիքը արդէն յայտնի

Քր կոմսուհուն իրանից տառչ և նրա տրտմութեան պատճառը հէնց այդ գաղտնիքն է:

Նրանք վերագարձան դէպի բացաստանը: Կոմսուհի Ֆերքին ծաղիկներով զարդարեց երիտասարդ աղջկայ վարսերը և զգեստը: Վերջինս միայն ժապտում էր:

—Դուք այժմ իսկական հարմն էք,—ասաց ամբողջովին գարդարելով նրան:

Անին կարմրատակեց:

—Ահ, դու փոքրիկ ծածկամիտ,—շարունակեց կոմսուհին: —Զեր մայրիկը արգէն հաղորդել է ինձ ձեր հարսանիքի մասին: —Ո՞հ, —մրմնջաց զարմացած Անին: —ուրեմն դուք արգէն դիտէք:

Եւ կրտսեր քրոջ չնորհալի շարժումով, որ ցանկանում է տեսնել իրան շոյուած, նա ձեռքերը ձղեց կոմսուհու վզով և համբուրեց նրան:

Լէօնօրայի աչքերը լցուեցին արտասուքով: Նա լացում էր այդ երեխուցի դժբախտութեան և իր դժբախտութեան վրայ, իրանց ընդհանուր ցաւի վրայ, վշտի վրայ, իրանց ընդհանուր սիրոյ վրայ: Իր մի հատ խօսքով նա կարող էր դեռ փրկել երիտասարդ աղջկան: Անին զարմացքով նկատեց նրա արտասուքը և հարցրեց.

—Ի՞ոչ ունեք: Ասացէք, ինչու էք լացում:

—Զը զիտեմ, թէ ինչ է պատահում ինձ, —պատասխանեց կոմսուհին, աշխատելով որոնել աւելի մեղմ խօսքեր այն զարհուրելի ճշմարտութեան մասին, որ նա կամենում էր հաղորդեր: —Ես յիշեցի այն ժամանակը, երբ ես ինքս հարսնացու էի: Հարսանիքին պատրաստում են սովորաբար, իբրև ամենամեծ տօնախմբութեան, իսկ յետոյ, ընկնում են երկնքից երկրի վրայ: Երջանկութեան ակնկալութիւնը աւելի դրաւիչ է, քան ինքը երջանկութիւնը: Ինձ թւում էր, որ դուք մարգի կը գնաք կիւսիէն Հալանդին: Նա այնպէս մնաց, այնպէս զգայուն է և, ինչպէս ինձ թւում է, աւելի ընդունակ է հասկանալ մեր կանացի բնութիւնը: Դուք չէք ճանաչում ժակ Ալվարին...

Ի՞նչ խօսքերով նա կարող էր բանալ այդ տնօնեղ աղջկան, որ ժակ Ալվարը իր սիրեկանն էր: Բայց այնուամենայնիւ նա կամենում էր այդ անել: Խօլական կիրքը սպանել էր նրա մէջ որ և է հզարտութիւն: Ժակի միայն տնունը գրգռեց նրա մէջ նախկին նախանձը և յայտնի ցանկութիւնը: Նրա մէջ սաստկացաւ աւելի պահանջը, յայտնել իր գտղանիքը, մանտւանդ որ նա իրան բոլորովին պարզ հաշիւ չէր տալիս իր անկեման մասին, և չէր զգում ամենափոքր զզումն, ինչպէս այդ

պատահում է սաստիկ սիրահարուած կանանց հետո Նա հասկանում էր, որ իր խոստովանութեամբ կարող է զրգոնի Աննի արհամարհանքը և սակայն, ինչ և լինի, նա կամենում էր փրկել նրան և որ գլխաւորն է, միայն իր համար պահել ժակի զգուանքը: Բաժանել ուրիշի հետ նրա սէքը, նրան թւում էր անկարելի: Շուտ թէ ուշ այդ աղջիկը, որ այդպիսի անսահման վատահութիւն ունէր զէպի իրան, միւնոյն է՝ կ'իմանայ իր մարդու գաւաճանութիւնը: Իր խոստովանութեամբ նա միանդամից կ'ազատէ և իրան և նրան:

Աննին սպասում էր յուզուած, լուրջ դէմքով՝ պատրաստ պաշտպանելու իր նշանածին: Այն խօսքը, որ պէտք է արտասանէր կոմսուհի Ֆերրեզին, արդէն պատրաստ էր նրա մօքում: Նա պէտք է պարզապէս ասէր.

—Դուք չեք կարող մարդու զնալ Ժակին: Նա իմ սիրեկանս է:

Այդ խօսքից յետոյ նա կարող էր խօսել նրա հետ, պաշտպանելով իր սէքը, որ այդ աղջիկը պէտք է հասկանար, որովհետեւ ինքն ևս սիրում է: Թող լինի այն, ինչ կը լինի, բայց ամենից առաջ անհրաժեշտ է ասել ճշմարտութիւնը: Պա վճռական խօսքն էր և նրա մէջն էր զտնւում ազատութիւնը:

Բայց թշուառ կինը չարտասանեց այդ խօսքը:

Մի խորհրդաւոր տուաքինութիւն կար Աննի աշքերում: Երիտասարդ աղջկան երբեմն անուանում էին լուակեաց, որովհետեւ նա քիչ էր խօսում և աշխատում էր միշտ աշքի չընկնել: Բայց նրա կապուտակ աչքերը ցողացնում էին մի այնպիսի մաքուր և ընտիր հոդի, որ նրան տեսնողը իսկոյն համակւում էր մեծ համակրութեամբ զէպի նա: Սէքը մի նոր կենդանարար փայլ էր տալիս նրա աշքերին: Նրա նայուածքի պայծառութիւնը հիանալի էր այն օրից, երբ նա սկսել էր սիրել, այդ նայուածքը լոյս էր սիրում:

Արդէն հայրը ընկճուել էր այդ նայուածքից, երբ պատրաստում էր փշրել այդ ամուսնութիւնը: Այս անզամ ևս այդ նայուածքը իր տպաւորութիւնը գործեց: Խօսելուց առաջ տիկին Ֆերրեզին նայել էր Աննին: Նա կարդաց նրա գեղեցիկ աչքերում այնպիսի մի քնքութիւն, այնպիսի մի անձնուիրութիւն զէպի սիրեցեալ էտել, որ նա հառաջնոց և լուեց: Նրա ամբողջ մարմինը համակուեց այն անկեղծ կարեկցութեամբ, որով տողորուում են տանջուող հասարակ կանայք, ինչպէս և վշտից վախեցող զեղին կանայք: Տիկին Ֆերրեզին նոյն իսկ ցանկութիւն զգաց ծունդ զնել իբրև մի անձանօթ Աստուծու առաջ,

այդ իդեալական անսահման քնքչութեան առաջ, որի հետ չէր համարձակւում համեմատել իր տոփական սէրը:

Նա չը մտածեց, որ ջախջախնելով այժմ Աննիի սիրաը, նա նրան ամենասարին բարեկամութիւն ցոյց տուած կը լինէր: Շատ կանանց նման նա մտածում էր միայն ներկայ բոպէի մտահին ևս տեսաւ. թէ ինչ ահազին վիշտ պէտք է պատճառի Աննիին և սիրո չունեցաւ այդ անգթութիւնը գործելու:

Տեսնելով որ կոմսուհին լուռմ է, Աննին հարցրեց.

— Ի՞նչ էիք կամենում ասել Ժակի մասին:

— Ես, ոչինչ: Ես կամենում էր ձեզ վախեցնել, որովհետեւ գուք շատ երջանիկ գէմք ունէիք: Այդպէս երջանիկ երեալը անհաւանական է: Բայց ես ինքս չը զիտեմ ինչ եմ ասում: Ես մի քիչ գժի նման եմ այս առաւօտ:

Եւ նա մի ջղային քրքիչ արձակեց:

Աննին վարձատրեց նրա այդ բնական բարութիւնը երկնային պայծառութեամբ մի նոր նայուածքով, իսկ կոմսուհին յիշեց Ժակի հետ ունեցած վերջին տեսարանը նրա ամուսնանուու ասիթով. «Եթէ որ և է բան դու անես այդ ամուսնութիւնը արգելելու համար, ասել էր նա իրան, ես այլ ևս երեք քեզ չեմ տեսնի»: Նա գետ դողում էր յիշելով արտասանած այս «երբեք» բասի Կարուկ շնչար, մինչ իւքը բոլորովին սիրաբորբոք սարսուում էր իր սիրեկանի համբոյրներից: Նոյն իսկ իր անձնական բարեկցութիւնը, ինչպէս և կարեկցութիւնը պահանջում էին լոել:

Կոմսուհին ձեսում էր յուզուած, ասելով.

— Ես ձեզ վշտացրի, ես խելագար եմ, խելագար:

Այդ ասելով նա առաջացաւ մինչի անդունդի եղը, մինչ մայսի ծայրը, որտեղից տեսնում էր լճի ականակիտ ջուրը:

— Լէնոր, կոչեց Աննին, առաջու նրան մտերմական առնունը:

Լէնորը յառել էր աչքերը խաղաղ ջրի վրայ առանց զիսի պատոյա զգալու նա յնտ դարձաւ և միևնայն ջլուտ ծիծագուլ ասաց.

— Մի պարզ սստումն բաժանում է մեզ մահից: Կարելի է գործել այդ սստումը աչքերը վակած:

Նրա ընկերուհին բոլորովին գոյնը նետել էր:

Կոմսուհին վաղեց գէպի նա և ասաց.

— Դուք դողում էլք ինձ համար, հոգեակա: Որպիսի անհեթութիւն: Եթէ դուք իմանայք...

— Ինչու այդպիսի կատակ էք անում ինձ հետ և վախեցնում, — շնչաց Աննին:

— Բայց ես կատակ չեմ անում: Միթէ կարծում էք որ եռ  
երբէք չեմ մտածում մեռնելու մասին:

Մատաղանաս աղջիկը պատասխանեց.

— Դուք զեղեցիկ էք, դուք երիտասարդ էք, դուք կարող  
էք երջանկութիւն տարածել ձեր շուրջը, իսկ ես սարսափելի  
վախում եմ մահից: Ես բոլորովին տկար եմ զգում ինձ նրա  
առաջ. ոչ, ես չեմ կամինում մեռնել մանաւանդ այժմ:

Տիկին Ֆերրեղին լսեց այս վերջին խօսքերը. նա հարցրեց.

— Ուրեմն դուք շատ էք սիրում նրան:

Աննին ժպտաց այնպէս, որ նշանակում էր. «Դեռ հար-  
ցնո՞ւմ էք, որ սիրում եմ», բայց նա ոչինչ չասաց: Նա եռում  
էր ուրախութիւնից. նրան թւում էր որ չի դիմանայ այդ երկա-  
րատն ուրախութեան:

Պայծառ օդի մէջ նրանց ականջին մի երգ հասաւ լճից:  
Աննին մօտեցաւ անդնդի եղբին զգուշութեամբ. նա նկատեց  
մի նաւակ, որ սահում էր լճի վրայ: Մի ծեր ձկնորս թիավա-  
րում էր, իսկ նրա ետև տամնուչորս կամ տամնուհինդ տարե-  
կան մի վտիտ աղջիկ, զլխաբաց, ամբողջովին հնդեղուած ա-  
րեով, լիածայն երգում էր: Այդ երգը երկու սիրահարների պատ-  
մութիւնն էր, որոնց բաժանել էին անգութ ծնողները:

Տիկին Ֆերրեղի զիտում էր անդնդի վրայ հակուած ջա-  
ճէլ աղջկայ անորոշ ուրուակիծը: Նա շատ մանրամասն ուսում-  
նասիրել էր իր զեղեցկութիւնը, ուստի և շատ լաւ ըմբռնեց  
Աննիի ամբողջ գողարիկ վայելչութիւնը, նրա սրաբանոցի և ու-  
սերի մաքուր գծերը, նրա մի քիչ նեղ և վտիտ իրանի չնորհալի-  
ճկունութիւնը: Թէ նա արհամարհում էր տհաս ձեերը, բայց  
այնուամենայնիւ չը կարողացաւ բոնել իր նախանձը, տեսնելով  
կոյսի թարմութիւնը և երիտասարդութիւնը:

Փոքրիկ ձկնորսուհու ձայնը հեռանում էր: Սիրահարը եր-  
գի մէջ պաշտպանում էր սիրոյ իրաւունքները, չը նայելով յա-  
մառ ծնողների անգութութեան:

Նայելով ջահել աղջկան, տիկին Ֆերրեղին մտածում էր.  
«Ի՞նչ եմ ես այս շքնազ երեխայի առաջ. ոչ ոք չի կարողանայ  
զիմանալ նրա հմայքին: Ժակը անպատճառ կը զրկէ նրան և  
ես ապահով եմ որ նրան կը սիրէ, իսկ ինձ նա դէ՞ն կը ձգէ  
իրու մաշած շոր»:

Նա յանկարծ վեր թռաւ, ամբողջովին դողալով նախանձի  
այդ սուր խայթից: Երգի վերջին յանգը լսուեց հեռուից: Ան-  
նին աւելի և աւելի շատ էր թեքւում հեռացող երգը լսելու  
համար: Սէր էր խօսւում այդ երգի մէջ և այդ այնքան զրաւել

էր նրան, որ նա մոռացել էր վտանգը, կանգնած լինելով անզնդի ծայրին:

Ժակի սիրուհին մտածում էր: «Նա սրան կը սիրի, ևս չեմ ուզում որ նա սրան սիրի»: Մի մոայլ կատաղութիւն յուզեց նրան, իր ցեղի մէջ սէրը և ոճիրը եղբայրներ են: Սէրը գայութիւն չունէ, եթէ նա չէ կարող պաշտպանել իրան մինչև մահը:

Նա մօտեցաւ ջահէլ աղջկան: Մի անծանօթ ոյժ մղում էր նրան: Լախն բացուած աչքերը, ծումուած բերանը ցոյց էին տալիս նրա վայրադ դիտաւորութիւնը: Խսկապէս շատ հեշտ բան էր լոկ մի շարժում և աղջիկը կը զլորուէր անգունդի մէջ...

Երբ Աննին յետ դարձաւ, ժպտուն, նա տեսաւ տիկին Ֆերրեզիին պառկած խոտի վրայ, զլուխը ձեռների մէջ և շընչապատ՝ հեծկլտանքից: Նա վազեց դէպի նա:

—Տիկին, ի՞նչ ունէք, ասացէք, ի՞նչ է ձեր ցաւը. խնդրում եմ, ազաշում եմ. ևս այնքան ձեզ սիրում եմ:

Իտալուհին վեր կացաւ, ցոյց տուեց նրան իր արտասուաթոր դէմքը և հրեց նրան, ասելով.

—Թողէք ինձ, ևս ձեզ տում եմ, որ խելագար եմ. թողէք ինձ. մնաք բարի:

Եւ այս արտասանելով նա փախաւ:

Աննին հետեւց նրան աչքերով, առանց մի բան հասկանալու. նա մտածեց:

—Երեի մի մեծ վիշտ ունի նա. ևս բարի կը լինեմ դէպի նա:

Եւ նա բռնեց Մենտօնի ճանապարհը: Նա ըմբռնել էր երգի եղանակը և մտածում էր իր սեպհական սիրոյ վրայ մտածելով.

Մարդկանց և բախտին ընդգէմ՝

Միշտ քո մասին կը խորհեռի:

Նա ուրախ էր իր սիրով և չէր կասկածում ամինեին որ հէնց այդ բողէին ազատուել էր մահից:

## V

Պարտիզի մի անկիւնում, որ վերածուած էր ամառային սրահի, տիկին Մէրան իր երկու աղջիկների և տիկին Ֆերրեզիի ներկայութեամբ դիտնական հաշիւներով էր զբաղուած:

—Այսօր կիրակի է, օկոստոսի 13-ը: Եկող կիրակի, 20-ին, ընարութիւնն է: Պէտք է թողնել որ խեղճ ժակը մի քիչ հանգստանայ: Արդեօք յարմար է քեզ համար հինգչարթի, սեպ-

տեմբերի 14-ը, Աննի: Մի շինական հարսանիք, հիանալի բան կը լինի: Ամբողջ եկեղեցին կարելի է զարդարել զիրլանդով և մամուռով: Բայց ինչու ոչինչ չես ասում, Աննի. բոլոր հոգսերը իմ վղին են ընկեր:

—Նա լրագիր է կարգում: Թողեք նրան, ասաց ժամանին ծիծաղելով:

Աննին կարդում էր «Բարձր Սալօյեայի Ապագան», իր նշանածի ընտրողական թերթը: Նա ցնծում էր կարդալով թեկնածուի ճարտարախոս կենսազրութիւնը, որ ինքն Ժակն էր խըմբագրել և նրա արաւածանած ճառերի մեծագույրդ նկարագրութիւնը: Սէրը Աննիի ացքում հերոսական սիրադործութեան էր կերպարանափառում Ժակի արտգ թոփչըր գէպի իշխանութիւն:

—Նա իրաւունք ունի, յայտարարեց մայրը, որ միշտ հաւանում էր ամեն բան: Աղջիկը ողէտք է հիանայ իր ամուսնու ամուսնութիւնից առաջ:

Եւ գաւնալով իր կրտսեր աղջկան, որ օգնում էր նրան տան հոգսերի մէջ, սիրով լրացուած Աննիի փոխարէն, նա ասաց.

—Ամեն բան պատրաստ է այս երեկոյի համար: Հայրդ հրաւիրել է զրեթէ բոլոր ընտրողական յանձնաժողովին, իսկ նրանք ամենքն էլ շատակերներ են: Ճացի ժամանակ նրանք խօսքով կասավարում են ամբողջ աշխարհը և չեն վախում ոչ մի հակառակորդից:

Ժամանին յայտնեց որ կերպակուրների ցանկը շատ լաւ է կազմուած: Տիկին Մէրանը ներողութիւն խնդրեց տիկին Ֆերրեզիից և հետացաւ: Վերջինս երկու քայլ հեռու: կանգնած, նայում էր ծառերի միջից մայր մտնող արեգակին: Նա ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում: Նա յիշում էր բոլոր այն նոււառացուները, որ կրել էր իր սիրահար, տիտոր կեանքում.

«Երէկ ես գնացել էի նրա մօտ, ես այլ ես չը զիտեմ ինչ եմ անում: Առաւօսեան էր, երբ նա պատրաստում էր գնալ հրավարակական ժողովները. նա հակնւում էր: «Դուք այստեղ, տասց նա ինձ, զու զիժ ես, զու խելազար ես, քաշուիր, կորիք անմիջապէս այստեղից»: Նա ինձ հետ «զու»ով է խօսում, երբ կոստարար է վարւում. ես փորձեցի ժպտայ. «Չ» որ երբեմն զեղեցկուհի կլինաներ են զալիս ձեզ մօտ»: Ազգ միջոցին մէկը բարձրանում էր սանդուխներով և նա ինձ մըտցրեց իր հնջարանը: Շուխարու վրայ ես տեսայ Աննիի լուսանկարը և իմ վերջին, զեռ չը բացուած նումակները: Ես կամենում էի աղերսել նրան որ նա ինձ սիրի, որքան կարող է սիրել. ես կամենում էի յայտնել, որ ցանկանում եմ մեռնել, ու

բովհետև այլ ևս ոյժ չունեմ զիմանալու և տանելու նրա նշանածի ներկայութիւնը, որի հետ իմ ամուսինը ամեն օր հանդիպել է տալիս այցելութեան գնալով Մէրաններին: Ես շատ զիմանալու խօսքեր էի արարաստել: Ես շատ լաւ զիման: որ նրա փառասիրութեան առաջ ևս ոչ մի նշանակութիւն չունեմ: Սակայն ևս ակնկալում էի նրանից մի քանի զիման խօսքեր և համբոյրներ, բայց ևս չը կարողացայ ոչինչ ասել նրան: իսկ նա նայելով ժամացոցին, կոպտութեամբ զէպ' իրան քաշեց ինձ և առա տուն սւզարկեց ինձ այս անգութ խօսքերով: «Այժմ ինձ հանդիպատ թող մինչեւ ամուսնութիւնս: հարսանեկան ճանապարհորդութիւնից երեք շաբաթ յետոյ ևս գարձեալ քոնը կը լինեմ: Նա ծիծաղում էր: Ո՛հ, այդ արհամարհական ծիծաղը: Երբ ևս սանդուինսերից վայր իջայ, ևս միայն ատելութիւն էի տածում զէպի նա: Ես կամենում էի խփել և խածնել: Ես ատում եմ նրան: Ես կամենում եմ տուել նրան...»

Սննին վայր զցեց լրազիրը, որ լնկառ գետնի վրայ այնպէս, որ աչքի էր լնկնում խոչոր տառերով տպուած յօդուածի այս վերնազիրը. «Խումիլլին չնծութեամբ ողջունում է Ալվարի թեկնածութիւնը: Նա մածածում էր ժակի մասին և զգում էր կարծես ինչ որ մի բան խամրում է նրա հոգու մէջ: Անշօշափելի, տարտամ վշտեր խայթում էին նրան իրբե մատաղ փշեր: Նրկու ամսուայ մէջ նա կարող էր մի տո մի համրել իր նշանածի արտասանած քնքոյց խօսքերը. այն էլ նա արտասանել էր օտարների ներկայութեամբ, այնպիսի ձայնով, որ ամեն մարդ կարող էր լսել, իսկ ինքն Աննին կարմրում էր: Նա ամենին չէր սիրում առանձնութիւնը, որ Աննիի աչքում սիրոյ անհրաժեշտ պայմանն էր: Ժակը միշտ խօսում էր հրապարակար. շատ անգում ևս նա խօսում էր Աննիի հետ իր ընտրողական պայքարների և քաղաքական ասպարիդի մասին: Ազգիւ զգում էր, որ այդ փառասիրութիւնը շատ վիշտ կը պատճառի իր իրան, բայց նա աշխատում էր յաղթել իր այդ ախրութիւնը: Ինչպէս կարելի է պահանջնել ժակից այդքան նուրբ քնքուշութիւններ. ինչպէս կարող է նա զանգատուել, քանի որ ժակը ամեն երեկոյ իր հասարակական պարտաւորութիւնները կատարելուց յետոյ գալիս էր զուարձացնելու նրան: Զէ, այդքան շատ պահանջներ անել չէ կարելի: Ի հարկէ երբ ժակը ընտրուի, նա անբողջովին կը նուիրուի իրան: Ութ օրից յետոյ նա այլ ևս մելամաղձաս մուածմունքներ չի ունենայ:

Ժակի նշանածը և սիրուհին իրանց մտածմունքների վերջում միմեանց երեսին նայեցին: Աննին մի ժպիս ուղղեց իր մտամոլոր բարեկամուհաւն, որի տարօրինակ շարժումներից նա

ըմբռնում էր, որ մի ներքին վիշտ կրծում է նրան, բայց չէր կարողանում հասկանալ թէ ինչ վիշտ է, իսկ տիկին Ֆերրեզին դուշակելով ջահէլ աղջկայ մատամնջութիւնը, ուրախացաւ, որ նա ապահով չէ իր երջանկութեան մասին։ Սակայն նա այնքան էլ չէր ատում իր նախանձորդին, ինչպէս երեակայում էր. նա մինչև անգամ կարողանում էր առանց ցաւ գրալու բռնել նրա ձեռքը և համբուրել նրա այտերը։ Ժակը գեռ չէր զրկել այդ դողորիկ մարմինը։ Դեռ մի ամիս կար մինչեւ որ նա իր կինը կը դառնար։ Ով գիտէ, մի ամսուայ մէջ ինչ դէպքեր կ'անցնեն։ Կոմսուհին որ սնոտիապաշտ էր և անձնատուր էր լինում ցնորական յոյսերի, հաւատում էր պատահմունքին և նոյն իսկ ջերմ ազօթք էր ուղղում Աստծուն իտալերէն, որ իր սիրեկանին միայն իր համար պահէ։

Երեկոյեան զեփիւոր սկսեց զովացնել ցերեկուայ տօթից ծանրացած օդը։ Տիկին Մէրան տեսնելով իր խօսակիցների յամառ լսութիւնը և չը կարողանալով լսել, խօսում էր իր վարդի թփերի հետ։ Ժամնին ճեմում էր ծառուղիում, զլիսաբաց, արեւպակի մայր մտնելը տեսնելու համար։ Նա վերադառն վաղելով։

— Ահա պարո՞ն Ֆերրեզիի անգլիական սայլակը։

Նա բոլորովին ուրախ էր հաղորդելով այդ լուրը. նրա կարմրատակած թշերը գեղեցիկ էին իրրեւ ծաղկաւէտ գարուն. բայց ոչ ոք չէր նայում նրան։

Կոմս Ֆերրեզին և Լուսիէն Հալանդը իջան կառքից. վերջնիս զէմքը կարմրել էր օդից և նրա անվոյթ սովորական քայլուացքը ստացել էր աւելի առնական ձև։

— Օրիորդ Աննի, ասաց կոմսը քաղաքավարի ձեռվ, մենք ծեր նշանածի կարապեաներն ենք։ Նա այստեղ կը լինի իէս ժամից յետոյ։ Այս բոպէին նա դնծում է իր յաղթութեամբ։ Նրա ճաները հիանալի են։

Ժակի ամուսնութիւնը ցըում էր իր ամուսնական երկիւղները. Երկու ամսից ի վեր նա զովաբանում էր երիտասարդին ճոռոմարան ֆրազներով և աշխատում էր մտցնել ծածուկ նրա ծրագրի մէջ մի քանի յօդուածներ իր սիրած՝ անհատական ազատութեան մոքով։

Ժամնին ասաց Լիւսիէնին։

— Դուք բարեկեցիք ամենքին բացի ինձանից, պարո՞ն Հալանդ։

Իսկ տիկին Մէրանը պահանջեց, որ իրան հաղորդեն հրապարակական ժողովի մանրամասնութիւնները։ Կոմսը, բռնուելով հաղից, ստիպուեց զիջել խօսքը Լիւսիէնին։

— Թեկնածուն ճառում է մի բարձրաւանդակ պատշգամբից.

տեղ-տեղ նրա ձայնը դոզդոզում է. կանայք լայում են, ծերու-  
նիները շարժում են գրուխները, հաւանութեամբ ծիծաղելով,  
իսկ երիտասարդները երջանիկ ժպտում են: Ազատութեան, ար-  
դարութեան և եղբայրասիրութեան խօսքերը թնդում են երե-  
կոյեան վճիռ և հնչուն օդի մէջ: Ունկնդիրները հիացած են:  
Ահա բոլորը:

—Դուք շատ կրծտում էք, ասայ տիկին Մէրանը՝ Աննիկն  
հաճոյք պատճառելու համար:

—Ուրեմն ես կը շարունակեմ: Երեակայեցէք մի ամբոխ  
հինգ հարիւր հոգուց բաղկացած, աղամարդիկ բածկոնակներով  
կամ միայն շապիկներով, կանայք տօնական զուարթ զգեստնե-  
րով, հաւաքուած մեծ չինարների հովանու տակի նրանց առջեփ  
բարձրաւանդակը, որտեղից ատենաբանը խօսում է իր ճառը,  
սմբողջովին լուսաւորուած է արեւի Կամենում էք գաղափար  
կազմել թեկնածուի հուետորութեան մասին: Շատ տաք էր և  
արել ուղղակի այրում էր ժակի զագաթը Մի քաջ գիւղացի  
նկատեց այդ, որոնեց մի աթոռ, բարձրացաւ վրան և հովանա-  
ւորեց մեր բարեկամին իր լայն կարմիր հովանոցով. բայց ժակը  
սիրում է ճառելիս ձեւները շարժել: Խելջ մարդը յուսահատ  
ջանքեր էր անում հետեւելու նրա շարժումներին և յարմարե-  
ցնելու իր անսպատառութեան վրանը նրա շարժուածքներին. նա  
կատաղաբար շարժում էր իր աթոռը. թեկնածուն մոլեկնաբար  
զոռում է, զիւղացին բազմատեսակ շարժումներ էր անում, իսկ  
հովանոցը գծագրում էր օգում կոր գծեր: Սակայն ոչ ոք չը  
նկատեց այդ տեսարանը:

Աննին յանդիմանական ակնարկ ձեց երիտասարդի վրայ:  
Ամենաթեթև ծաղը վիրաւորում էր նրան: Լուսիկնը ակնուաց  
որ զուր տեղ նրան վիշտ պատճառեց:

—Նա մի անվերջ հոեստոր է, պաթետիկ շարժումներով, ա-  
սաց կոմս Ֆերրեղին, որի հազը կտրել էր: Ոչ ոք չը հասկա-  
ցաւ թէ ինչ էր կամենում նա զրանով ասել. արդեօք ժակը  
կարող է խօսել անվերջ, թէ ճշմարիտ նա հիացած էր նրա ճառով:

—Երէկ, Դուսարում, ճերմակ զգեստ հաղած փոքրիկ աղ-  
ջիկներ նուիրեցին նրան դաշտային ծաղիկների վնջեր, որոնց  
բուրմունքը ծածկեց մեղ. նրանք մեկնեցին իրանց սիրուն ճա-  
կատները նրա հայրական համբոյրին: Տալլուարում, կորովի  
պատանիներ տարան նրան իրանց ուսերի վրայ և նա շարժում  
էր, շրջապատուած փառքով, իբրև մի աստուած:

Տիկին Մէրանը, որ չէր մոռացել մտածել ճաշի մասին,  
հարցը եց Լիւսիկնին:

—Գիտէք ով կը զայ այս երեկոյին ամուսնուս հետ:

— Փակը, նօտար Շարաւէն և Բրէնա փաստաբանը, որ թօնի քաղաքապետն է: Սա նախանձում է որ Ալվարը ժողովրդականութիւն է ձեռք բերում իր համայնքի մէջ:

— Եթէ ժողովը վերջացել է, հապա ինչու Ժակը չէ գալիս, մրմնջաց Աննին:

— Նա կոնծում է, ասաց Ֆերրեզին, բաժակը ձեռին նա նման է երիտասարդ Բաքոսի, և շրջապատուած իրան համակրող ամբոխով, ես կարծում եմ որ նա աւելի գրաւիչ է քան երբ իր ճառերն է արտասանում: Գինետունը, օրիորդ, ժողովրդական պալատն է, իսկ ժողովուրդը, ինչպէս ծաղիկը, պէտք ունի ջրուելու:

Մառուղիի աւաղը ճարճատեց ծանր քայլերից և երեսց մի բարձրահասակ ծերունի, որ քայլում էր ուղիղ: Նա մի քիչ հաստ էր և չատ կարմիր, մինչև կզակը կոճկուած իր բաճկոնակի մէջ, նու յուղուած էր և զեւ հեռուից գոռաց.

— Ալվարը, ուր է Ալվարը:

Տիկին Մէրանը գիմաւորեց նորեկին:

— Իսկոյն կը գայ, մայօր, նրան սպասում ենք:

Մայօր Բարօ, զիխաւոր խորհրդականը ֆալէրժում, Ժակի ամենահաստատ պաշտպաններից մինն էր: Նա առանց որեէ քաղաքական համոզմունքի էր և միայն ֆրոսսարի գէմ ունեցած ատելութիւնը սահման էր նրան Ալվարի դաշնակիցը դառնալ:

Նա եկել էր նաւակով և նոր լուրեր լսելու կարօն էր:

— Ուրեմն ամեն բան յաջնող է զնում, հարցրեց նա Լիւսիէնին:

Առանց սպասելու պատասխանին նա ողջունեց տիկին Ֆերբեզիին և ջանէլ աղջիկներին, հնացած կօմպլիմէնտներ ուղղելով նրանց, և կամացուկ քաշելով Աննիի ականջից, անոյշ ձայնով առաց նրան.

— Ուրեմն այդքոն փառամբ էք. կամենում էք անպատճառ մինիստրի կին լինել, — որովհետեւ նա անպատճառ կը լինի: Բայց որտեղ է այժմ ճառախօսում յաղթանակ տանող մեր պարոնը, — և զիմելով հանզիխականներին աւելացրեց:

— Այժմ ֆրոսսարը կ'իմանայ թէ ում հետ գործ ունի. իմ նահանգում նա ոչ մի ձայն չունի, և ոչ մի ձայն, լսում էք: Այդ մարդը ամօթանք է ամբողջ ազգի համար:

— Դժուար թէ նա ծանօթ լինի ամբողջ ազգին, նկատեց Լիւսիէնը:

— Պարօն, առարկեց նրան ծերունին, 1870-ին ևս ազգային մի պահակախմբի հրամանատարն էի: Պարօն ֆրոսսարը երեք անդամ հրաժարական տուեց, որպէս զի պատերազմ չը դնայ և սակայն նա այսօր նախագահում է ի պատիւ նախկին զօրա-

կանոնիրի արուող ճաշերին և բաժակներ է առաջարկում հայրենիքի բարգաւաճման համար։ Նա չքանչան ունի, իսկ ևս ոչ։

Նա յայտնեց իր սրտի զարգը. Նա միայն մի պահակախմբի հրամանատար էր եղել և այդ պահակախումբը երբէք պատերազմի մէջ չէր մտել, բայց բնականաբար, նա պատերազմասէր ողի ունէր, և մշակելով իր հոգերը, նա ծրագրներ էր կաղմում Գերմանիայի և ուրիշ ազգերի հնջման մասին։ Էստ սովորութեան և նրա ունեցած պատերազմական ձերի պատճառով ամենքը շարունակ կոչում էին նրան մայօր։ Նա մի շիտակ, պարզ և մնապարծ մարդ էր։ Նա բացարեց Լիւսիէնին, թէ մի շարադրութիւն է պատրաստում առաջին կայսրութեան ժամանակի սափօյեան զօրավարների մասին։

—Գրելու ոճը միայն նեղացնում է ինձ, եղրափակեց նաև եւ նա ցոյց տուեց իր կոպիտ ձեռքը, որ աւելի որսորդական հրացանի քան զրչի համար էր պէտքական։

—Երբ ֆրոսսարին կը վոնաեն պատպամաւորութիւնից, իմ մասին շատ կը խօսան։ Բայց անհաւտավի չէ թւում ձեզ, պարոն, որ իմ փոխարէն նա նախադահեց բանկէտին։

Այդ միջոցին, երբ խումբը դուռմ էր դէպի տուն ծառառանով, զարբառը մտաւ ընտրողական լանգօն։

—Կեցցէ մեր պատպամաւորը, դոչեց Բարօն իր թնդալից ձայնով։

Ժակը չնորհավի գլուխ տալով և ժպտալով այնպէս էր ձեւացնում թէ ողջունում է երեակայական ամբոխին։ Կառքը կանգ տաեց և գուրս հկան Մէրանը, Աղվարը, Շարավէ նօտարը և Բրէնա փաստաբանը։

—Մայօր, մեծ յաջողութիւն թօնում, ասաց Ժակը, միւսներից առաջ վագելով, լի ալինածութեամբ դէպի այդ հզօր ընդհանուր խորհրդականը։

Թափնակի արտայայտութիւն ստացաւ Աննիի դէմքը. Ժակի առաջին մտածմունքը նրա համար չէր։ Երիտասարդը միայն այժմ մօտեցաւ նրան և ողջունեց այն մի քիչ Փամիլեար քնքշութեամբ, որով վարւում էր միշտ նրա հետ նրա աչքերը փայլում էին զուարթութեամբ, նրա բերանը ծիծաղում էր. Նա զեռ լսում էր ժողովրդի ծափահարութիւնները. յաղթանակի վասահութիւնը գեղեցկացնում էր նրան և Աննին մուանալով իր ցաւը զմայլուած նայում էր նրան։ Ամենքը բարձրացան վերնազստիթը և մտան ճաշարանը, զարգարուած զեղեցիկ վարդագնջով, որ տիկին Մէրանի պարծանքն էր կաղմում։

Պ. Մէրանը, որ սիրում էր համեղ կերակուրներ, ասաց.

—Մարդուն հածելի գարձնողը միտքն է, իսկ երջանիկ գարձնողը ստամբուլ:

Լիւսիէն աչք ածելով սեղանի վրայ, տևաւ որ ընտրողական յանձնաժողովը արդէն զործի է սկսել:

—Այս գաւառացիները ամեն բան լաւ մարսում են, մտածեց նա: Դա մի մեծ առաւելութիւն է:

Սննին նստած ժակի կողքին, որին չէր տեսել մի քանի օր, բոլորովին հիասթափուել էր: Նա երեակայել էր թէ իր նշանածը բուռն խօսքերով կ'արտայայտէ նրան իր ափսոսանքը այնքան երկար բացակայութեան համար, բայց ժակը պատմում էր նրան միայն իր յաղթութիւնը:

—Իսկ թշնամին, գոչեց մայօր Բարօն, իսկ Ֆրոսսարը. ինչու նրա մասին ոչինչ չեք ասում:

Բայց ֆրոսսարը պատկանում էր Մէրանին և սա ուրախութեամբ սկսեց իր խօսակցութեան սիրելի առարկան:

—Ֆրոսսարը հրեաոր է ծնուել Դրանով ևս կամենում եմ ասել, որ նրա զլուխը մտածմունքների շատութիւնից այնպիսի հաջուն ձայներ է հանում, ինչպէս զրեակը դատարկ թմբուկի մէջ: Նա խօսելիս ականջ է զնում ինքն իրան և իր մաքերը իմանում է հանդիսականների հետ միասին, երբեմն ևս նրանցից յետոյ: Մի քանի տարի առաջ նա մի հիանալի ճառ խօսեց, մամուլի և նրա զեղծուների մասին, այնպէս որ արժէ այդ ճառը մոռացութիւնից հանել. «Ես կամենում եմ, ասաց նա հեղինակաւոր ձայնով, ես կամենում եմ մի օրէնք, որը գրչի ազատութիւնը ամենաբացարձակ կերպով յարգելով հանդերձ, այնուամենայիւ մի քանի սահմանափակումներ մտցնի մամուլի ազատութեան մէջ...»

—Իսկ այսօր, ասաց Լիւսիէնը, նու հաւատացնում է որ հոգենորականութիւնը վտանգի մէջ է և կամենում է տեսնել Ֆրանսիան յարգուած օտար երկներից:

Մայօր Բարօն յօնքերը կիաեց. նա իրան հակակղերա. կան էր համարում: Ժակը, որ կարողացել էր այդ միջոցին մի քանի քնքոյց խօսքերով գրաւել Աննիին և վշտացնել թշուառ կոմսուհի Ֆերնազին, մի բոպէ ևս չէր կորցնում ընդհանուր խօսակցութեան թելը. Նա նկատեց Բարօի գրգռումն և իսկոյն փոխել տուեց խօսակցութիւնը: Դիպլոմատիական մեծ ճարպիկութիւն պէտք էր միութիւնը ընարողական ժողովի անդամների մէջ պահպանելու համար: Երիտասարդ նօտար Շարտուին, վերին աստիճանի ճշտապահ մի մարդ, մի քանի խօսքերով նկարագրեց կուսակցութիւնների վիճակը և զուշակեց թէ ժակը կ'ընտրուի հինգ հարիւր ձայների մեծամասնութեամբ:

— Յաջողութիւնը կասկածելի է, պատասխանեց Բրէնա փաստաբանը: Նա սկսեց հերքել և նրա հերքումները պազ ջուր ածեցին ողերութած հասարակութեան գլխին: Նա խօսում էր կոստաբար, բայց կծու հեղութեամբ, նա մի հին հանրապետական էր և ծայրայեղ կերպով պաշտպանում էր ազատամիտ գաղափարները: Նա ցոյց էր տալիս թէ մինչեւ որ աստիճան ձանձրալի կարող են լինել այն մարդիկ, որոնց համոզունքը մի անգամ ընդ միշտ հաստատուել է և իրանց հայեացքների ծշտութեան մասին ոչ մի կասկած չունեն: Նա նախանձում էր Փակին, որ փաստաբանութեան մէջ խլել էր նրանից առաջին տեղը, ցանկանում էր որ նա հեռանայ, բայց միենոյն ժամանակ չէր ցանկանում, որ ընտրութիւնների մէջ նա յաղթող դուրս գայ:

Տիկին Մէրան իր սիրալիք խօսքերով պահպանում էր սկզբանակիցների մէջ հաձելի տրամադրութիւն: Նրանից խաղաղութիւն էր բուրում և նրա որոշ լաւատեսութեան առաջ թըշ նամութիւնները լուսում էին:

Սուրճը գնացին խմելու պատշգամբի վրայ: Երկրի վրայ հեղիկ-մեղմիկ իջնում էր գեղեցիկ ամարային գիշերը, մինը այն զիշերներից, երբ երկինքը այնքան պայծառ է լինում, որ աստղերը դալկանում են: Մեղմ զեփիւոր հանդարտ շարժում էր տերեները և զգւում էր նշանց՝ ծաղիկների բուրմունքով ներշնչութեան: Մարգագետնի ետեւ տեսնուում էր նիրհող լիճը. Հրշմովիկ լոյսեր ցոլանում էին նրա ոսկեզօծ և մանիշակագոյն չըերի մէջ: Սւելի հեռուն սարերի անուշ գիծը նկարուում էր ստուերի մէջ և երկրից բարձրանում էր հազարաւոր գիշերային ձայների կանոնաւոր փափուկը, իբրև մեղմ երաժշտութիւն:

Աղմկալից խօսակցութիւնը հետզհեաէ գարգարեց, որովհետեւ ամենը ակամայ ենթարկուեցին երեկոյի հմայքին: Խօսքերը մեզմացան և մտածմունքները աւելի լուրջ զարձան, մի՞ան Բարօ հրամանատարը խանգարում էր լսութիւնը:

Տիկին Ֆերրեզին սկսեց գաճամուրի վրայ նորվեպական պարեր ածել, որոնց ոգին հեռաւոր էր, տխուր և վայրենի: Այդ երաժշտութեան հաջիւնները հասնում էին պատշգամբին թմրած և չփոթ կերպով: Ժակը կանգնած կոմսուհու կողքին գիտում էր թէ ինչպէս թանկագին ակները փայլում էին նրա դալուկ մատների վրայ: Երբեմն նա հակւում էր գէպի նրան և խօսում էր նրա հետ ժաննին նայում էր նրանց բաց պատուհանից: Աննին ամբողջովին անձնատուր էր եզել գիշերուայ գեզեցկութեանը: Նրա զգացածը այնքան խորունկ և այնքան սիրազեղ էր, որ նա ամբողջովին գողզողում էր այդ զգացմունքից: Մի

հաճելի մեղկութիւն հմայում և միննոյն ժամանակ ճնշում՝ էր նրան։ Այդ բոպէին նրա սիրոյ անսահման քնքշութեան տառիկան սէրն էր։

Լիւսիէն հեռանալով ծխողների խմբից և մոռանալով նոյն իսկ զիշերուայ պայծառութիւնը, զժոտն և մտախոհ աշխատում էր դատել իր շրջապատողներին և որոշել թէ ինչ տպաւորութիւն են գործել իր վրայ ընտրազական յաճճամողովի անդամները։

«Ժակի գործունէութիւնը, սօցիալական գաղափարների մտավն ունեցած արհամարհանքը և առ ժողովուրդն տածած զգուանքը ինձ միանգամայն աղջեցնում են Երեկոները նա թրհ է դալիս այստեղ։—ոհ, տունց չափազանցութեան—և շատ ուշ վերադասնում է Աննէսի Առաւոտները, չտա կանուխ, նա կառը է նստում, զասաւորում է իր լիշտակազրերը և պատրաստում է իր ճառը, որ յարմարեցնում է տեղին և սպարազաներին, Դեռ այս օրերս նա դատարանում մի գործ պաշտպանեց, բացի դրանից, նա միշտ ինքն է զրում իր լրագրի համար, իր ինքնակովութիւնները ապահովելու համար։ Ըստրովներին նա խոստանում է ոսկէ հանքեր և վստահ իր գերազանցութեան վրայ—այդ է նրա թոյլ կողմը—նա ծազրում է նրանց ծածուկ։ Սակայն բարոյական զգացմունքից և հասարակական բարիքի ճշմարիտ սիրուց զուրկ մեր գեմօկրատիայի մէջ նա փայլուն տեղ էլ դրաւէ։

«Գալով նրա բաղմերանդ մստճամողովին, աէտք է ասել որ նրա միակ զեկավարը մասնաւոր չահերն են։ Մայօր Բարօն կամենում է իր վրէծը տանիկ ֆրոստարից, որ չէ կարողացել շշքանշան բերել տալ նրա համար։ Շարավէ նօտարը աչքը տնկել է պ. Մէրանի և պահպանողական հին կուսակցութեան գործերի վրայ։ Բրէնսա վաստարանը, որի գործերը լաւ չեն զնում դատարաններում, կամենում է տեսնել ժակին հեռացած և պ. Մէրանը, որ ընտիր մտքի, բայց ակար կամքի տէր մարդ է, հիանում է այսօր իր ապագայ վիստայի վտանգաւոր եռանդի վրայ, որովհետեւ ինքն չսւնի այդ եռանդը։ Ես ինքս, մինչեւ անզամ ես համաձայնեցի տալ այս վառասէրի օգտին ձայնս, տնունս,—որ վաստառը է եղել այս երկրում,—զրդուած այն խորին անտարբերութիւնից, որով վերաբերուում եմ իմ զուտառի բախտին։»

«Խեղճ ժողովուրդ, որ քեզ արքեցնում են խոստումներով ու քնացնում յիմարութիւններով, որ առանց հասկանալու սիրում ես անզգայ կանգիղատներին, որ կամեցար ինքդ զեկավարել քեզ, սակայն թափառում ես, աչքերով կապած, որոնելով երջանկութիւն։ Ցաւում եմ քո վրայ, բայց քեզ լուսաւորովը ես։

չեմ լինի, խնդրիր լոյս նրանից, որոնք շահագործում են քո խաւարը՝ քո կողոպուտով հարստանալու համար»...

Տիկին Ֆեռրեղին դադարեց դաշնամուր ածելուց և եկաւ միացաւ. Աննին ու Ժաննին պատշգամբի վրայ: Լուսիէն Հայանդը բարձրացրեց աչքերը զիշերային տեսարանի և երեք կանանց խմբի վրայ:

Խտալուհին, յենուելով պատշգամբին, ետել դրած ձեռներով, մէջքը դարձրել էր լճին: Նա ատում էր երեկոյի գեղեցկութիւնը, որից մարդիկ չեն կարողանում օգտուել. Նա զիտէր որ կանանց գեղեցկութիւնը տոփանք զրդուելով, աւելի տանջանք և աւելի մեղկութիւն է պատճառում: Երբ նա յետ էր դառնում, նրա մաքուր պրօֆիլը պարզ գծագրուում էր զիշերային ֆօնում և նրա այսերի ու պարանոցի գունատ մորթի վրայ կարծես մի ներքին լոյս էր արտափայլում: Վաղանցուկ բոյերը անցնում էին:

---

Աստղերի տակ, Աննին նմանում էր մի տեսիլքի. Նրա դալուկ գեղեցկութիւնը աւելի նրբանում էր և նրա գէմքը շողչողում էր խորհրդաւոր և այնպէս մաքուր, որ կարծես հրեշտակի դէմք լինէր:

Լուսիէնը զննում էր հերթով կնոջ և ջահել աղջկան և սքանչանում էր նրանց վրայ, իբրև գեղարուեստական գործերի վրայ: Նա մոռանում էր ժաննիին, որ փաթաթուել էր մի ձերմակ պլէդի մէջ. Նրա նորածին գեղեցկութիւնը աչքի էր ընկնում զիշերուայ վճիտութեան մէջ: Աղջիկը զրել էր կրծքի վրայ իր փոքրիկ ձեռքը, որով պահում էր շալը. Նա նայում էր երիտասարդին իր մանկական խորունկ աչքերով, որոնց մէջ կարելի էր կարդալ ծանր մտածմունք: Նրա չէկ մազերը, մի քիչ բաց, իբրև մի մութ ոսկեգոյն պատկ զարդարում էին նրա ճակատը:

Ամարային այդ զիշերուայ բնութեան անտիկ և տեղական հմայքին նրանք հակադրում էին իրանց վաղանցուկ երիտասարդութեան հմայքը: Նրանց տեսնելու հաճութիւնը տոգորուում էր այն նուիրական տիսրութեամբ, որով զարդարում է ամեն ինչ որ գեղեցիկ և դիւրաբեկ է:

Ծխողների խմբից, որին խառնուել էր և Ալվարը, քաղաքական խօսքեր էին լսում: Միայն կոմս Ֆերրեղին և Լիւսիէնը զմայլում էին այն բերկրանքով, որ պարունակում էր տեսարանը: Կոմսը չը համբերեց և ասաց ժակի նշանածին:

— Դիշերուայ գեղեցկութիւնը ցոլանում է ձեր նայուածքի մէջ: Եւ ցոլքը զերազանցում է պատկերից. դուք միացնում էք

նրան ձեր գեղեցկութիւնը։ Պէյզաժը այլ ևս չէ պրաւում ինձ։ ես գերադասում եմ ձեր աչքերը։

Նա շառագունեց։ ինչու Ժակը իրան այդպիսի շքեղ խօսքեր չէ ասում։

—Դէ լաւ, սիրահարներ, բայց ականչեց մայօր Բարօն, որ մտնում էր այդ բոպէին սրահը, վախտնալով զովութիւնից և յօդացաւից, և անցնում էր ջահէլ աղջկայ կողքով։ Սրդէն այրիացել էր այս գիշեր, փոքրիկ աղաւնեակս։ ինչի՞ մասին է մտածում մեր մեծ մարդը։

Այս կատակիները, որ բարի մարդը զուարձալի էր գտնում, տանջում էին Սննիին։ Լիւսիէնը հասկացաւ այդ և այդ անհաճոյութեան վերջ զնելու համար, առաջարկեց գնալ տեսնել լուսնի ծաղումը Տուրնէտի վրայ։

—Փերսի խորհրդաւոր ժամն է, մենք վեր կ'առնենք այն նաւակները, որոնք պարտնով կապած են լծի եզրին մարդագետնի ներքեւում։

Փոքրիկ ժամնին ծափ զարկեց։ Տիկին Ֆերրեզին, Սննին և Ժակը հաւանութիւն տուին։

—Խոհեմ եղէք, ասաց տիկին Մէրանը իր աղջիկներին անփոյթ կերպով և խղճմտանքը հանդստացնելու համար։

Ծառուղիների միջով երիտասարդները իջան լծի ափը։ Երկու նաւակ կապուած էին. Ժակը վերցրեց ամենափոքրը Աննիի հետ և առաջինը հեռացաւ ափից. նա կանգ առաւ լծի մէջ տեղ և լիւսիէնը թիւավարելու ուժով հասաւ նրանց։

Լուսինը շուտով պէտք է ծագէր. մի մեղմ շող տարածուել էր հորիզոնում. ապա երեսաց սպիտակ լոյսի մի ամբողջ ալիք և ճաճանչների մէջ զծագրուեցին ժայռի խորդ ու բորդ տեղերը։ Գիշերուայ հանդիսաւոր լուսութեան մէջ, լուսինը երեաց և սնջատուեց սարից. նա արագ-արագ բարձրացաւ երկնակամարի վրայ և իբրև սստղերի ցան ու ցրիւ եղած մի փունջ, նա ձգեց լծի ջրերի վրայ պայծառ լոյսի մի երերուն սիւնակ։ Այդ սիւնակը խաղ էր անում, խորտակւում էր և հասանուած մակերոյթի վճիտութեան համեմատ, երեսում էր երբեմն իբրև լուսաւոր կէտերի բոլորակ, կամ իբրև ծփուն արծաթեայ սփոռ։ Մի նուազուն երկրորդ արեգակ լուսաւորեց բնութիւնը հեռուում, նկատւում էին մեղմ փայլ արձակող խորհրդաւոր առարկաներ։

Գիշերաշրջիկները լուսում էին. բնութեան մէջ սփոռուած այդ գեղեցկութիւնը նրանք քաղում էին իբրև մի սքանչելի ծաղիկ։

Լուսութեան մէջ հնչեց կանացի մի ձայն, կրքոտ, յուզուած

և սքանչելի զեղուն ձայն նա երգում էր իտալական մի բօմանու Յըբեմն նա մի և նոյն նօտան երկար պահում էր, սաստկացնելով. նա կենդանացնում էր հորիզոնը վշտագին հեշտասիրութեամբ: Տիկին ֆերրեզին երգում էր կանոնած նաւակի մէջ, որ սլանում էր առաջ լուսնին հետեւելով. աստղի շողերը ընկնում էին նրա երեսի վրայ:

Յանկարծ, ընդհատելով իրգը, նա լոեց, ընկաւ նաւակի խորքը և հեծկլտալով, յուսահատ շարժումով, բռնից կիւսիէնի ձեւքը, որ զգաց նրա եղունդների խրուելը իր մսի մէջ: կիւսիէնը տեսել էր, որ առաջին նաւակում, մի քիչ ստուերի մէջ, ժակը զրկեց և համբուրեց Աննիին և նա ինքն իսկ յանկարծական ախրութիւն զգաց. նա մակաւերեց իտալունու նախանձը, բայց ոչ նրա նախկին կապակցութիւնը եւ նա չը տեսաւ ամենին, նաւակի ետելի մասում, ժաննիին, անշարժ փաթաթուած իր սպիտակ շալի մէջ և արտասուելիս: Պարզընկայ լուսնի լոյսով, նա կարող էր կարդալ նորատի աղջկայ նայուածքի այն գաղտնիքի անհուն անձկութիւնը, որ նախազգում էր, ինչպէս և սիրոյ ամբողջ քաղցրութիւնը:

—Վերագանանք, մրսում եմ, ասաց Լէօնօրա Ֆերրեզին, զսպելով իր վիշտը:

Ժակը նկատել էր նրա խոռվութիւնը. նա խօսում էր նըշանածի հետ քնքշաբար, բայց ամենին դիշերուայ գեղեցկութիւնը չէր, որ նրան աւելի սիրահար էր դարձնում: նա զգացել էր, ճամփը թողնելիս, որ Աննիի սրտի վրայ աւելի էր աղղում բնութեան գեղեցկութիւնը, քան իր խօսքերը. տիրապետելու տենչը թելազրում էր նրան յաղթել անակնկալ նախանձորդին: և աւելի սասափի յուղմունք պատճառել իրան ընկերացող զգացուն երեխային:

«Լէօնօրան զիժ է, մտածեց նա: նա կարող է ամեն բան այստու նշանածիւ ես վրէժս կը հանեմ նրանից»:

Աննին, որ մինչեւ անդամ չէր նկատել երգի յանկարծական ընդհատումը, հասկացաւ միայն, որ ժակի միտքը ուրիշ տեղ է: եւ որովհետեւ այդ բոպէին նաւակը մտնում էր լուսնի շողի մէջ, կիւսիէնը, որ նայում էր ջահէլ աղջկան, նկատեց նրա զէմքի վշտալի արտայայտութիւնը: նա մտածեց.

«Մեր նաւակների ամեն մինը պարունակում է մի կնոջ սէր այդ անտարբեր ժակի համար: Ամեն մինը կրում է նոյնպէս մի տամնջանքի ծանրութիւնը»:

Նա մոռանում էր. իր վիշտը, որ կամենում էր անդիտութեան տալ և քաջասիրտ ժակի վիշտը, որ այժմ աշխատում էր ժպտալ:

Նաւակները հասան ափին: Նրանք թողնում էին իրանց ևտեից մի լուսաւոր հետք, որի մէջ երևում էին ցոլքեր, նման վշրուած հայելիների, որոնք անդրադարձնում էին լուսնին նրա պատկերի կտորները: Երբ թիակները բարձրանում էին, ջրի կաթիները թափւում էին նրանցից, իբրև գոհարեղին: Զրի խորութեան մէջ անչափելի տարածութեան վրայ, աստղերը շողովում էին գունատ վայլով. կարծէք մի հին խորասուղուած երկինք լինէր:

Մտնելով սրահը, ժակը կատակաբանում էր, թմրած զգայականութիւնից: Արդէն լծում էին կառքերը և հիւրերը պատրաստուում էին մեկնել:

—Մի գրկախառնուեցէք, է, ասաց մայօր Բարօն, մղելով միմնաց գիրկը երկու նշանածներին:

Ժակը յարմար առիթ նկատեց վրէժը հանելու: Խիստ նայուածք գցելով լէօնօրի վրայ, նա մի թեթև համբոյր քաղեց Աննիի այտից: Աղջկայ դէմկը շառագունեց. այդ հրապարակական համբոյրը ամօթով էր լցնում նրան. նրա կարծիքով օտարների ներկայութիւնը ոչնչացնում էր զգուանքի ունեցած քընքոյց և մտերիմ հմայքը: Սակայն իտալուհին յուզուած, կրծում էր թաշկինակը:

Որպէս զի երկրորդ օրը առաւօտեան կանուխ կարելի լին նի գնալ ֆավերժի կանտօնը, ժակը և մայօր Բարօն պէտք է մնային Մենրօնում, ուր տիկին Մէրանը առաջարկեց նրանց գիշերել:

Ժակը կամեցաւ առաջնորդել կիւսին Հալանդին մինչև Ավիւլիի ծառաստանի մուտքը Նրանց առաջ, ճանապարհ վրայ, գծագրուում էին նրանց երկար և բարակ ստուերները:

—Էլի մի բազմազբաղ շաբաթ, ասաց ժակը: Ամեն օր հրապարակական ժողովներ, յանձնաժողովների ընդունելութիւններ, լրագրական բանակոփւներ: Հաւատս վկայ, ես ափսոսում եմ, որ ընտրողական շրջանը մօտենում է վախճանին: Այս զործունեայ և մարտնչող կեանքը ինձ շատ դուր է զափսւ Մարդ զգում է, որ ապրում է:

—Սակայն, առաջարկեց կիւսին, դու պէտք է ուրախանաս այդ մօտաւոր ազատութեան համար. դու նշանուած ես, մի մոռացիր այդ:

Ժակը շաբունակեց.

—Ինձ դատարկ և երկար պէտք է երեան այն երեք շաբաթները, որ պէտք է անցնեն ընտրութիւնիցս մինչև ամուսնութիւնս: Ես շտապում եմ ամուսնանալ և հաստատուել Պարիզում:

—Պէտք է մարդ լաւ ճանաչի նշանածին, որ կարողանայ յետոյ հանգարտութեամբ զեկավարել նրան:

—Ո՞հ, այդ բարդ բան չէ. Աննին շատ պարզ է և պաշտում է ինձ:

Պէտք էր շատ հրապուրիչ լինել այդպիսի ծաղրալի անձնագովութիւն ցոյց տալու համար: Մանրաբարոյ կիւսիէնը գիտէր այդ վերջին խօսքի ճշմարտութիւնը և նա ինքն իրան հարցրեց, թէ ինչու վշտանում է այդ խօսքից: Մառաստանը հասնելուց առաջ յանկարծ նա մնաս բարև ասաց Ժակին:

Մի քիչ յետոյ, մինչ ժակը քնած էր արդէն, վերանորոգելով իր ոյժերը երկրորդ օրուայ պայքարի համար, Աննին և կիւսիէնը, թեկին տուած իրանց պատուհաններին, զննում էին իրանց անորոշ վշտերը և կէօնօրա Ֆերրելին, նստած ամուսնու կողքին դէպի Տալուար տանող կառքի մէջ ինքն իրան ասում էր, որ լաւ բան է մեռնելը և որ այնուամենայնիւ մահը զարհուրելի է:

Ֆրանս. Թարգմ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

(Կը շարունակուի)

\* \* \*

Ժէռ, սկ' քարը սրտիս վրայ,  
Գերեզմանիս մութ խորշում;  
Դարդի սարը սրտիս վրայ —  
Քներ էի Մանթաշում<sup>\*)</sup>։

Դարունն եկաւ, Շուշանս եկաւ,  
Տատրակի հետ ձէն տուեց.  
Տատրակս եկաւ, քարիս նստաւ,  
Խնձի անուշ ձէն տուեց...

— «Ե՛լ, աղիղ ջան, գարունն եկաւ,  
Ալշալ հագան սար ու ձոր.  
Քեղի շաղաղ վարդ եմ բերեր,  
Երթանք, ման գանք սար ու ձոր։

Ե՛լ, աղիղ ջան, Արփաչայի  
Ուռիները ծաղկեր են.  
Ուռիներէն ճիւղը եմ բերեր,  
Քեղի իրենց կը կանչեն։

Ե՛լ, աղիղ ջան, հովս է փշում,  
Գառն ու ոչխար սարն ելան.  
Ալագեաղը սիրտն է բացեր,—  
Ալագեաղին տես երթանք...»

Ա՛լս, ժեռ քարը սրտիս վրայ,  
Խնձ, հին վէրքը սրտիս մէջ.  
Ու վեր ելնել ես չը կրցայ,—  
Սէրն էր մեռեր սրտիս մէջ։

Ա. ԻՍԱՀԱԿԵՍՆ.

---

\*) Մանթաշը Արագածի ամենամեծ ձորն է։

\*  
\* \*

Եւ ճամբէքի մէջ, ամայի դաշտում  
Մենակ, անընկեր ընկած եմ մոլոր.  
Չորս կողմից հողմը վերաս է շաչում  
Ու հոգիս խոժնո, ու միտքս խոժնո...

Սիրտս գթով լի մարդկանց մէջ մտայ,  
Բայց ողջոյնի տեղ կռուի կոչ տուխն,—  
Կեանքի գոռ կռիւ՝ կատաղի, դժնեայ,  
Ուր որ ամենքը ամենքի ընդդէմ  
Դաշոյն են սրում սիրոյ փոխարէն:

Եւ կեանքի կռուից վիրաւոր, յաղթուած  
Ընկած եմ հիմա ոյս ափին վայրի.  
Շուտով կը տեսնեն աչքերոս սառած,  
Բայց նրանց խիղճը երբէք չի խայթուի...

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

## ՎԵՐՋԻՆ ՀԱՄԲՈՅՐԸ

Սենեկին մէջ, ամէն բան տակնուվրայ էր։ Խառնիսուուն ցրուած թիկնաթոռներ, երկուերեք պարկ գիրք, սեղանի մը վրայ տասնեակներով մանր սրուակներ, բաց գրադարան մը, գարակներու վրայ բժշկական փայլուն գործիներ, նշարակներ, մլրատներ, և այս ընդհանուր խառնակութեան մէջ կանգուն երսունըհինգը առասուն տարեկան երիտասարդ մը, որ՝ հապճեպով պարկերուն մէջէն կ'առնէր գրքերը, կազմուած մեծագիր գրքեր և գրադարանին մէջ կը տեղաւորէր կարգաւ։

Անկիւնը, բաղմոցին վրայ, ծերունի կին մը նըստած էր, ճերմակ մազերով, ու կը մրավէր։ Գլուխը պստիկ ցնցումներով հետզհետէ խոնարհելով, ընդոստ կը բարձրանար, և փակ արտեւանունքը զարմացմամբ կը բացուէին՝ անհանդարտ ու խռովեալ նայուածք մը նետելով չորս բոլորքը։ յետոյ դարձեալ աշըերը կը գոցուէին և գլուխը կը վերսկսէր իր մեղմ վայրէջքը, մինչեւ որ կուգար ծնօտը հանգչեցնել կուրծքին վրայ։

Մայիսի գիշեր մըն էր, ժամը երեքը անցած։ Սեղանին վրայ բոցափայլ լամպար մը կը լուսաւորէր այս տեսարանը, նշարակներուն պողպատին ցուրտ շողիւնը ցոլացնելով, ստուերի մէջ թաղելով սենեկին անկիւնները. պատին վրայ, ծերունի կնոջ դլսին շուքը կը նկատուէր խօլական մեծութեամբ, անոր շարժումնեւ

րուն հետ հետզհետէ տարածուելով ու կծկելով, քթին ու ծնօտին զուգահեռական անհեթեթ գծերը երկընցնելով ու կարճեցնելով։

—Մայր, ըստ յանկարծ երիտասարդը, գնապառկէ, հանդիսադ նայէ։ Երկու օր է շատ յոդնած ըլլալու ես։

—Էյ դուն ալ քիչ մը շունչ առնես նէ աղէկ կ'ընես, Տրդատ, հերիք է աղչափը, քիչ մըն ալ վազուան ձգէ, ըստ ծերունի կինը՝ աչքերը շփելով։

—Եիտակը, իրաւունք ունիս, հիմակ սա գիրքերը մէկդի ձգեմ, թուղթերս մինակ տեղաւորեմ, շատոնց է ասանկ երեսի վրայ մնացեր են, ոլարտալ տեղը տեղ կը բռնեն կոր։

Եւ, գլքերուն կոյտին տակէն, թղթերու խոշոր ծրար մը քաշելով, բացաւ։ Մէկիկ-մէկին աչքէ կ'անցընէր զանոնք, ոմանքը կը պատռէր և ուրիշներ գրադարանին գղրոցին մէջ կը դնէր։

Երկու օրէ ի վեր, տոքթոր Տրդատ Պարգեւեան իր ընտանիքով այդ տունը փոխագրուած էր, Բանկալթիի շիտակ ճամբան։ Մինչև ան ատեն եէնի-Գաբու կը նստէր, այլ տակաւ իր գտած յաջողութիւնը և աւելի բազմաթիւ յաճախորդներ գտնելու հաւանականութիւնը իրեն թելագրեր էին այս տեղափոխութիւնը։ Արդարեւ, առանց մեծ համբաւի մը տէր ըլլալու, բաւական համարում կը վայելէր միջնակարգ ընտանիքներու մէջ։ Թշպակէն էր, Բարիկէն չէր, բայց հօն ու վիեննա գտնուած էր։ Բարձրահասակ երիտասարդ մըն էր, կապուտակ աշուըներով, որոնց հեղ ու տըրտում մնախոհութիւնը ամբողջ գէմքը կը համակէր անուշ արտայայտութեամբ մը։ Աղքատները կը սիրէին զինքը բարեհամբոյր ու մարդասէր բնաւորութեանը համար, որով տնակին դունէն դուրս կ'ելէր՝ առանց տանտիրոջ ձեռքը նայելու, և կարող ընտանիքներու

մէջ կը յարգեին զինքը իր զգուշաւոր ու փափուկ վարուզութեանը և անձնուէր եռանդին համար:

Իր ծերունի ծնողներուն և ամուրի քրոջը հետ կ'ապրէր, որոնց հանդստութիւնը եղած էր առաջուընէ ի վեր իր միակ նպատակը: Աղքատ ընտանիքի զաւակ, իր ինքնօդնութեամբ անոնց տուած էր դիւրակեցիկ վիճակ մը, ու անոնց սիրոյն ու գուրգուրանքին մէջ կը սահէին իր հանդարտ օրերը:

Ծրարին թղթերը հետզհետէ կ'անցնէին իր ձեռքէն, և գրադարանին գղրոցին խորը կ'անհետանային, կամ իրենց պատուած կտորներուն դարձ-դարձիկ անկումովը կ'երթային ստուարացնել իր ոտքերուն տակ կազմուող խառնագնդոր կոյտը: Դեղնած ու ծակծկած թղթեր կային ծրարին մէջ, հին նամակներ, այցաքարտեր: Անոնց պարունակութեանը վրայ արագ նայուածք մը՝ կը վճռէր իրենց բաղդքը:

Հիմակ իր ձեռքը առած էր գունատ թղթերու բարակ ծրար մը, որ գորչ ժապաւէնով մը կապուած էր: Անփութութեամբ ժապաւէնը քակեց, բայց հաղիւ նայուածքին հանդիպեցան այդ նամակներուն կիսովին աւրուած երկար ու բարակ գրերը, իր գիմագծերը կծկուեցան ցաւատանջ. վայրկեան մը կանդ առաւ, յետոյ մեքենաբար աչքէ անցուց այդ նամակները, անոնց արթնցուցած բազմահոյլ յիշատակներուն մէջ մտացնոր, վախնալով կարգալէ անոնց ստորագրութիւնը՝ «Վերդին Միքայէլեան», և արագ շարժումով մը գղրոցին մէջ նետելով ամբողջ ծրարը, պատուհանին քով գնաց և բացաւ զայն:

Դուրսը խաւար կը տիրէր, այլ մայիսեան աստեղազարդ երկնքի մը տարտամ ցոլացումովը մեղմացած: Թեթեւ հով մը կը փչէր, հեշտ ու խնկաբոյր, փայտայանքի մը պէս հաճոյական: Բժիշկը, գլուխը լինաց

նակին յեցած, ոկտաւ մտածել, անցեալին մէջ մուլորած:

Օ՛, այս, շատ սիրած էր այն աղջիկը: Իր չքաւոր և աշխատալի ուսանողութեան տարիներուն մէջ, ան եղած էր միայն իր յոդնութիւնը մոռցնող ու իրեն արիութիւն ներշնչող պատկերը: Կը յիշէր անոր նուրբ ու քնքոյշ դէմքը, որ իր մտքին մէջ մնացած էր անեղծ ու անջինչ, ու մանաւանդ անոր լայն ու վճիռ աչքերը, իրենց սեւորակ սպիտակուցին մէջ տարօրէն իմն մելամաղձիկ: Քսաներկու տարեկան էր ան, ու ինքը քսանը չորս կուրջ ու խորին զգացում մըն էր իր սէրը: Վկայականը առնելուն կը սպասէր, որպէս զի կնութեան խնդրէր Վերդինը իր հօրմէն, ճերմակեղէնի խանութպան մը՝ որ մեծապէս կը յարդէր զինքը իր պատկեշտ բնաւորութեանը համար: Եւ ահա օր մը մօրմէն իմացած էր թէ «Լերդինին համար շնորքով ուղող մը ելած էր», լաւ կացութեան տէր սոկերիչ մը: Տրդատ մօրը բան մը զուրցած չէր իր սիրոյն և դիտաւորութեանը մասին: Այս լուրը չվրդովեց զինքը: Վստահ էր թէ Վերդին պիտի մերժէր: Եւ սակայն քիչ օրէն անոր նշանտուքին լուրն ալ առաւ: Դիմում մը, ձեռնարկ մը չըրաւ Վերդինի ծնողքին մօտ: Կը ճանչնար ճերմակեղէնի խանութպանը, անշուշտ բժշկական ուսանողին աղքատիկ ներկայէն ու անստոյդ ապագայէն նախամեծար պիտի համարէր սոկերչին դիւրակեցութիւնը: Իր վիշտը սրտին խորը թաղեց, սիրոյ վիշտ ու արժանապատւութեան ալ վիշտ, ու զգուշացաւ կրկին անդամ տեսնելէ այդ աղջիկը: Դառն զարմանը մը ունեցաւ միայն, ու անոր այդչափ դիւրաւ հաւանելուն համար արհամարհոտ կարեկցութիւն մը: Վերջէն միայն իմացաւ թէ հօրը և աղջկանը միշեւ ծանր կուիւներ տեղի ունեցեր էին, որոնց մէջ սակայն յաղթուողը աղջիկն էր եղած: Իր սրտին բոլոր խանդաղատանքը իր գրքերուն տուաւ, և իր ուսման տաժանելի աշխա-

տութեան մէջ մոռցաւ իր ցաւը։ Տարիներով, սակայն, երջանկութեան և անդորր կեանքի այն հեռապատկերը զոր իր մտքին մէջ ծրագրած էր՝ մերթ լնդ մերթ եւ կաւ իր խորհուրդները խոռվիլց Շատ կիներ ու շատ աղջիկներ ճանչցաւ, ու ոչ մէկուն մօտ ունեցաւ իր երիտասարդութեան առաջին տարիներուն զգացման սրբութիւնը։ Մայրը միշտ հետամուտ էր զինքը ամուսնացնելու, և ինք միշտ կը յետաձգէր։ Տակաւ առ տակաւ մոռցած էր այն աղջկան վարմունքին անազնւութիւնը, ու կը յիշէր միայն անոր նուրբ ու փափուկ հոգին իր դիւրաբեկ ու դիրկ պատեանին մէջ, ու ամէն անգամ որ մայրը ամուսնութեան խնդիրը առաջ կը քշէր, մըտքով յետադարձ ակնարկ մը կը նետէր այն խուսափուկ պատկերին։ Հարցուցած փնտուած չէր թէ ինչ եղած էր Վերդին իր ամուսնութենէն ետքը. հեռաւոր թաղ մը հարս գացած էր, ինք վկայականը ստանալէն ետքը Պօլսէն հեռացած էր բաւական ժամանակ բժըշկան պաշտօնով, գարձին՝ լուր մը առած չէր անոր նկատմամբ, տարիները եկեր անցեր էին՝ իրենց հետ բերելով նոր հոգեր ու նոր մտածութիւններ, և ահա հիմակ այդ գեղնած թղթի կտորները իր մտքին մէջ կ'արթնցնէին ամբողջ անցեալ մը, հոգին պէս որ մոխրին խաւերը կը տարտղնէ՝ երեւան բերելով անոնց տակ ծածկուած կայծը։

Յանկարծ դուռը զարնուեցաւ ուժգնօրէն։ Բժիշկը ասդին դարձաւ, և ծերունի կինը, որ այս անգամ ալ խոր քնով կը քնանար, գլուխը վեր նետեց լնդոստ, մրմնջելով.

— Ո՞վ է աս ատեն։

Յաջորդ վայրկենին սենեկին դուռը բացուեցաւ և սպասուառը երեւցաւ։

— Դուռը ով է, Մինաս, հարցուց բժիշկը։

— Մէկը եկեր կը հարցնէ որ նոր եկած տոքթորին տունը մա է։ Ես ալ հա ըսի։

— Էյ ի՞նչ կ'ուզէ:

— Հիւանդի համար եկեր է, անկէ է, պիտի առ-

նէ տանի ձեղի:

Բժիշկը սրտնեղութեան շարժում մը ունեցաւ:

— Հեռո՞ւ տեղ է եղեր:

— Զէ, հոս մօտը, վարի փողոցը:

— Ելիր գնա, օդը շատ աղուոր է, խերու տէր  
կ'ըլլաս, ըսաւ ծերունի կինը, որ կը տեսնէր զաւկին  
դժկամակութիւնը: Ես հոս կը սպասեմ քեզի: Ո՛վ գիտէ  
ինչ վիճակի մէջ են որ աս ատեն փողոցները ինկեր են:

Յետոյ, սպասաւորին դառնալով՝

— Մինաս, ըսաւ, լապտերը վառէ և աղայիդ հետ  
մէկտեղ գնա:

Բժիշկը համակերպեցաւ և վերարկուն ու դլխարկը  
առնելով սանդուզներէն վար իջաւ: Դրանը առջեւ երի-  
տասարդ մը կը սպասէր, այլայլած դէմքով:

— Գործիք և այն առնելու պէտք կայ, հարցուց  
տր. Պարգեւեան երիտասարդին:

— Զէ, տոքթոր:

— Երթանք: Ի՞նչ է հիւանդութիւնը:

— Կուրծքի հիւանդութիւն, տոքթոր: Երեք ամիս  
է անկողինն է: Տոքթորը եկաւ առջի երեկուընէ, բայց  
հիմակ յանկարծ շատ աւրուեցաւ, իմացեր էինք ձեր  
հոս եկած ըլլալը, անմիջապէս խելք ըրինք ձեզի դի-  
մելու:

Եւ անխօսուկ շարունակեցին իրենց ճամբան, Մի-  
նասին լապտերին լուսովը լուսաւորուած: Յիսուն բայլ  
ետքը կանգ առին մեծ տան մը առջեւ, և երիտասար-  
դը իրարու վրայ հնչեցուց դրան զանգակը: Դուռը բաց-  
ուեցաւ, և տարիքոտ մարդ մը, աչքերը արցունքով  
լեցուն, բժիշկը առաջնորդեց մինչեւ մեծ սենեկի մը  
զուռը, կամաց մը բացաւ զայն, և խղդուկ ձայնով մը  
որ դժուարաւ կը խուսափէր կոկորդէն:

— Հոս է հիւանդը: Կինս է: Աստուծոյ սիրուն,  
բան մը ըրէ, տոքթոր, ձեռքէ կ'ելլայ կոր:

Լայն սենեակ մ'էր, լուսամփսվավ ծածկուած լամպարի մը ազօտ լուսոյն ստուերներովը լեցուն։ Վարդգոյրները խնամքով գոցուած էին։ Մէկ անկիւնը, անկողին մը կը գտնուէր, ու քովը ջահակալ մը՝ դեղի սրուակներով, դգալներով, փորը տուփերով բեռնաւորուած։ Սպիտակ ժանեակներով եղերեալ բարձին վրայ գլուխը հանգչեցուցած էր կին մը, կիսախուփ աշուըներով, անսահման յոգնութիւն նկարուած իր ներս քաշուած դիմագծերուն վրայ։ Դէմքը մեղրամոմի սպիտակութիւն ունէր, եթերային ու աննիւթ գոյն մը, որ ալ այս աշխարհէս չէր։ Իր գիշերադգեստին բացուածքէն վզին ոսկորները կ'երեւնային դուրս ցցուած ու անոնց քով խոռոչներ, ուր մորթը կը կախուէր թուլօրէն։

Տոքթոր Պարգեւեան մօտեցաւ, անկողնին վրայ ծռեցաւ և երբ իր նայուածքը յառեցաւ այդ դէմքին և այդ աչքերուն վրայ, որոնք հիմակ բացուած էին, իր բարոյական բոլոր բաջութեանը պէտք ունեցաւ, որպէս զի մորմոքի ահ մը չարձակէ։ Բայց այդ կի՞նը, կը ճանչնար, իր Վերգինն էր. այդ դիմագծերը, թէեւ ոգեշարին ճգնաժամին մէջ գերադոյն նիհարութիւն մը առած, կը պահէին միշտ իրենց նախնի գեղեցիկ անուշութիւնը, և աչքերը նոյն այն խոռվիչ ու սեւաթոյր նայուածքը ունէին որ իր մորքին ալքերուն մէջ կենդանի մնացած էր։ Ժամանակ չունեցաւ սակայն շարժում մը ընելու։

Հիւանդը, իր նայուածքը չորս կողմ պատցնելէ ետքը, անըացատրելի զարմացմամբ յառեց բժշկին վրայ։ Իր վրիպուկ իմացականութեան սլացմանը մէջ ի՞նչ յանկարծական ցնցում արթնցուց իր ուզեղին արգէն թմրած կարողութիւնները, իր կեանքին անէայմանը մէջ ի՞նչ գերբնական ոյժ գտաւ։ Իր մոտածումներն ամփոփելու և կեդրոնացնելու համար։ Բայց գլուխը ետք գնաց, աչքերը շողացին խնդալիր ճառագայթու-

մով, շրթունքը բացուեցան մանկական ժպիտ մը ուրուառքրելով, «ախ, Տրդատ» միմնջաց նուազուն ձայնով մը զոր բժիշկը աւելի գուշակեց շրթունքին շարժումէն, քան իմացաւ և որ տաք շունչով մը գգուեց իր այտերը, և հուսկ յետին ճգով մը թեւերը երկնցնելով, Պարդեւեանի վղին փաթթեց անոր գլուխը վար բաշելով, այնպէս որ բժշկին շրթունքը եկան հպիլ իր շրթունքին, իրենց տամուկ տարութեանը մէջ խառնելով իրենց վերջին համբոյրը:

Երբ Պարգեւեան իր գլուխը ազատեց այդ գերերկրային սեղմումէն, մահուան ցուրտը զգաց արդէն այդ մարմնին շօշափմանը մէջ: Ոգեգարը մեռած էր: Իր դեմքին վրայ խաղաղաւէտ անդորրութիւն մը կը տիրէր հիմակ, անճառ երանութիւն մը գերաշխարհիկ, ցաւի հետքն իսկ չմնացած այլ եւս, և իր բաց աշուշները՝ գերագոյն վայրկենին պայծառացմանը մէջ արձանացած՝ անհուն նայուածք մը ունէին, աշխարհային իրերէն վերացած, իրենց ապակենման անշարժութեանը մէջ պահած էութեանը վերջին մեծ հրճուանքը: Պարդեւեան բոլորտիքը նայեցաւ, իրմէ մէկ քանի քայլ հեռու հաւաքուած մարդերուն ու կիներուն հեկեկածայն լացը գիտեց, հազիւ խելք ըրաւ յուսահատական թոյլ շարժումով մը յայտնելու անոնց թէ ամէն բան լմնցած էր, սենեկէն դուրս ելաւ անվստահ քայլերով, սանդուղներէն վար իշաւ և դուռը բանալով փողոց նետուեցաւ առանց նայելու Մինասին, որ վերաբկուն ձեռքը կը սպասէր և որ բան մը չհասկնալով տիրոջը վարմունքէն՝ լապտերը չվառած անոր ետեւէն վազեց: Երբ տուն հասան, բժիշկը իր սենեակը ելաւ նոյն մեքենական շարժումով:

Դրանը բացուածքէն, մայրը արթնցաւ մրափէն, ոտքի ելաւ և զաւկին մօտենալով:

—Եյ, ինչ է եղեր, Տրդատ:

Մօրը ձայնը զինքը սթափեցուց: Անմիջապէս, ինք-

զինքը գտաւ։ Ի՞նչ հարկ խեղճ կինը հաղորդ ընել իր  
ցաւերուն։ Յոդնութիւն պատրուակեց, սենեակը քաշուե-  
ցաւ ու անկողնին վրայ ինկաւ, յաջորդ օրը վերսկսելու  
համար՝ անտարբերներու առջեւ՝ իր թաղուած վշտի  
սպառիչ կեանքը։

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

## ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՍՆՔԻՑ

Մեր անցեալ յօդուածից \*) արդէն զիտէ ընթերցողը, որ Պարսկաստանում չը կան կանոնադրքեր։ Գիտէ և այն, որ դրեւթէ բոլոր կարգերի օրէնքները կամայականութիւնների և քմահաճոյքի մի անվերջ և երկար շարք է։ Հինգ այդ անիշխանական դրութեան արգիշնքն է, որ օրէց օր Պարսկաստանում, մանաւանդ Ատրպատականում, կողսպուաները և հարստանարութիւնները լայն ժամանում, աւելի և տուելի ժողովրդի անտեսական վիճակը վտառթարացնում։ Կեանքի և դրաքի ապահովութիւն համարեա չը կայ։ Քուրդքէդ-խանը յարձակում է իր աւազակային խմբով այս կամ այն զիւղի վրայ, խփում, տանում է նախիրը, աւերում զիւղը և առանց պատժի մնում, շատ անդամ նոյն խոկ ընդդիմադիր ոյժ չը դժնելով։ Հաքիմը (գատաւորը), գաւառապետը, սարփարաստը միւս կողմից ևն կեղեքում ռայեա ժողովրդին...

Աւելի սարսափելի ևն պարսկառթբական սահմաններում բուն զրած մի քանի քիւրդ ցեղեր, ինչպէս Շիկակ, Բարդարի, Մամադի ևայլն, որոնց միակ զրազմունքն է թալանթրաշը։ Սալմաստը աւելի մօտիկ լինելով սահմանին, անո՞րջապէս ենթակայ է զրանց յարձակումներն, որոնք կտտարուել են և կատարուում են յաճախ ցերեկ ժամանակ, հինգ կառավարութեան պաշտօնեանների աչքի առաջ։ Ամբողջ ամառուայ ընթացքում ու աշնան սկզբներին (այդ ժամանակիններում են տեղի ունենում յարձակումները) Սալմաստի ամբողջ աղգաբնակութիւնը և՛ թուրք, և՛ հայ, և՛ այլն, ան ու սարսափի մէջ են լինում. ամեն բոլէ, ամեն ժամ՝ սպասողական ծանր դրու-

\*) «Պատիմները Պարսկաստանում», «Մուրճ» № 12, 1901.

թիւն է. ահա քրդերի հրոսական և խառնիճաղանձ խմբերը ցած կը գան սահմանակից յեռներից, կը յարձակուեն այս կամ այն գիւղի վրայ, կը սկսուեն սպանութիւններ և աւարառութիւններ։ Սարսափը ընդհանուր է. վախնենում ևն թէ ժողովուրդը և թէ պաշտօնեաները, վարչութիւնը։

Քիւրդ ցեղապետներից ամենայայտնին է Զաֆար-աղան, որ լինում է Սալմաստի հարաւարեման Կողմում զանուած ձարա կոչուող աւանում։ Իսկ սրանից ոչ միայն Սալմաստի հայ և պարսիկ բնակիչներն են սարսափում, այլ և հաքիմները։ Յարձակումները օրէցօր աւելի են սաստկանում և յանդուզն բնաւորութիւն ստանում։ Այդ մտաին դիմումն է լինում Ատլրապատականի ընդհանուր նահանգապետին. աւաղակներին զափելու համար Թաւրիզից ուզարկւում է նոր գատաւոր Բայց նոր գատաւորը հէնց առաջին օրերում բարեկամանում է Զաֆար-աղայի հետ, տեսնելով նրա ոյժը։ Նրանք փոխադարձարար իրար այցելութիւններ են տալիս...

Որ Զաֆար-աղայից և ընդհանրապէս թիւրք աւազակներից վախնում են պարսիկ պաշտօնեաները, այդ պարզ է։ Դրա մէջ համոզուելու համար առաջ բերենք հազարաւոր վաստերից մէկը, որ տեղի է ունեցել գեռ անցեալ տորի։

Նոյն Զաֆար-աղայի ընկերներից մի քանիսը բանտարկուած են լինում։ Դիլիմանում (Սալմաստի կենար, քաղաքը)։ Զաֆար-աղան իր խմբով դալիս պաշարում է քաղաքը, այն եւ ցերեկով, և յետ պահանջում բանտարկեալներին. կառավարութեան կողմից դիմադրութիւն համարեա չէ լինում և կատարում է աղայի պահանջը։ Սալմաստի թրքաբնակ զիւղերի զրութիւնը պահած յուսահատական չէ հայաբնակ զիւղերից։

Սակայն թիւրք-պարսկական սահմանազլիսից հեռու էլ պակաս չեն աւագակային ասպատակութիւնները։ Այդպէս, օրինակ, Արդաբիլն էլ իր շրջակայ զիւղերով այս տարի կոփների ասպարէզ էր։ Բայց այստեղ գերերը փոխուել են. այստեղ աւաղակը քիւրդը չէ, այլ թուրք բէգերն ու խաները, որոնց թիւր այնքան մեծ է Պարսկաստանում։ Սրանք անդադար, և՛ ցերեկով, և՛ զիշերով, յարձակւում են զիւղերի վրայ, լինի թրքաբնակ կամ հայաբնակ, զարկում, առանում են, կարում են կարաւանների առաջ, կողոպտում և սպանում։ Սրանց աներեսութիւնը անցեալ տարի այն աստիճանի էր համել, որ կառավարութիւնը ստիպուած էր զինուորական ոյժի զիմել։ Զօրքի և այդ աւաղակային խմբերի մէջ 1901 թ. օգոստոսի 13-ին կատարեալ ճակատամարտ է տեղի ունենում և աւաղակները ստիպուած են լինում անձնատուր լինել։ Խմբի

պարագլուխները 9 հոգի են և բոլորն էլ բէղեր ու խաներ, իսկ ամենազլխաւորն է Մամադ Կուլի-բէղը, որը ունի և սեփական գիւղ։ Այս ինն զլխաւորներին շղթայած տանում են Թեհրան դատելու։ Կարծւում է, որ նրանք մեծ-մեծ դումարներ կաշառք տալով կ'ազատուեն...

Մի ուրիշ կարեոր ինողիք, որ մասամբ վերև առաջ բերաւած պարագանների—կեղկումների և հարստահարութիւնների անմիջական արդինքը պէտք է համարել, դա առրպատական-ցիների պանդխատութեան խնդիրն է։ Բնդարձակ հայաբնակ դաւառները, ինչպէս Ղարադաղ, Խոյ, մանաւանդ Սալմաստը, հետքհետէ գատարկում են։ Պանդխատութիւնը, որ սկսուել է գեռ 1828 ուսու-պասկական պատերազմից յետոյ, մինչեւ այժմ էլ շարունակւում է։ Պանդխատում է ոչ միայն հայը, այլ և թուրքը, տառին և այլն, սրոնք աւագինից պահրս չեն ճնշում և հարստահարում։

Հեռանում, պանդխատում են աշխատաւոր և երիտասարդ ոյժերը, իսկ մնում են միայն ծերունիները, կանաքը և մանուկները։ Բնդարձակ բարեներ զաշտավայրերը մնում են խոպան, տառաց վար ու ցանցքի։ Անաւանապահութիւնը՝ որ շատ նպաստաւոր յարմարութիւններ ունի—ընդարձակ արօտատեղիներ և հովիաներ, չի զարդանում աւագակային խմբերի ասպատակութիւնների չորրին։

Սալմաստի պանդուխաններին կարելի է տեսնել ոչ միայն Թիֆլիս, Բաթում, Յագու, Փոթի, այլ և աւելի հետու տեղերում, ինչպէս Ռոստով, Կերչ, Եռվորոսիյսկ, Եալտա, Թէոդոսիա, Սևաստոպոլ։ 1896 թուին կազմած վիճակազրութեան համեմատ, Սալմաստը ունեցել է 1488 պանդուխու։

Պանդխատութեան կողմից Ղարադաղն էլ յետ չէ մնացել Սալմաստից։ Ղարադաղիների պանդխատավայրն է զլխաւորապէս Շուշին և նրա մօտիկ գտառները։

Պանդխատութեան խնդրում, բայցի երկրի ընդհանուր անապահովութիւններից, որոց չափով գեր են խաղում և այն, որ քանի զնում է ժողովրդի պահանջները բարդանում են, բայց նա տեղում այդ պահանջներին չի կարողանում բաւարարութիւն առաջ, ուստի պանդխատում է՝ աւելի մեծ վաստակ ձեռք բերելու համար։ Այս հանդամանքը աւելի նկատուած է Թաւրիզի վերաբերմամբ, ուր համարենա չը կան ճնշումներ և հարստահարումներ։

Պարսկահայերի մէջ ասպրուստ ձեռք բերելու միջոցներից մէկն էլ օդի և զինի վաճառելն է։ Արբեցողութիւնը, պէտք է առ սել բաւական առածուած է Պարսկաստանում։ Մեր խօսքը մամնաւորելով Թաւրիզի վրայ, պէտք է նկատել որ խմիջք գոր-

ծածելը շատ տարածուած սովորութիւն է. կամայք էլ մեծ չափով խմում են:

Թաւրիզում շատ ընտանիքներ իրանց համար գինի և օղի են պատրաստում: 1900 թուին կազմած վիճակագրութեան համաձայն կանանց, ընտանիքներն յարկի տակ, խմողների թիւը 100-ին 45 էր, այն ինչ աղատ տեղերում, օր. հարսանիքներում, հրաւէքներում և այլն, ուր ճնշում են, 100-ին 10 հազիւ ընկնի:

Պարսկաստանի հայալկօհօլական ընկերութեան կենտրոնական վարչութիւնը, որ գտնում է թաւրիզում, իր գոյութեան գեռ առաջին շրջանում, յանձնեց իր անդամներից մեկին (պ. Ռ. Սովորսեան), որ տեղացի է և լաւ ծանօթ Ատրպատականին, ոգելից խմբիցների վերաբերմամբ մանրամասն՝ ստատիստիկա կազմել, թէ նրան զինի և օղի է գործ ածւում և այլն:

Նրա կազմած ստատիստիկայից հետևեալը երեաց.

Թաւրիզի հայարնակ երկու թաղերը, որոնք ունեն մօտ 615 տուն, տարեկան 515 խալուար գինի են գնում, որից խմելու համար գործ են տօնում 56,800 շիշ (խալուարը հաշուելով 240 շիշ), գորս եկած հնացնելու և պահելու բաժինը: Այդ երկու թաղերում գինեվաճառութեամբ պարապում են 18 մարդ, որոնք տարէնը ծախում են 120 խալուար, իսկ մասնաւոր մարդիկ ծախում են՝ (աների մէջ) 50 խալուար, իսկ օղի պատրաստում են: 511 խալուար և իւրաքանչիւր խալուարին ստանում են 500 շիշ: Սրտից 80,000 շիշը ծախում է հայերին, իսկ մնացածը՝ թուրքերին: Թուրքերի թուրքերի վրայ տարեկան ծախում է թէ զինի և թէ օղի 286,300 շիշ: Թուրքերը տառաջ, ինչպէս պատմում են, սեփական արքեցնող ըմպելիներ չեին պատրաստում, միայն 20 տարի է, որ սկսել են թէ զինի և թէ օղի պատրաստել:

Ատրպատականի միւս գաւառներին գալով՝ հաշուած է, որ իւրաքանչիւր մարդ մօտ 10—50 դռան է ծախսում տարեկան ողելից խմբների համար \*): Այսպէս.

	Տուն, (տու- նը=5 անդամ):	Բնակ- չիչ:	Ծախսում են:
Սալամաստն ունի	.	1,500	7,500
Ուրմին	.	430	2,150
			32,250

\*) Սալմաստում և Սարադայում իւրաքանչիւր մարդ ալկօհօլի համար ծախսում է 50-ական դրան, Ուրմի 15 դրան, Խոյում 20 դրան, Սուլդու, Խովու-Բուլազում, Երզարիլում 10-ական դրան. Դարադազում տեղի գիշ:

Խոյ	.	.	.	350	1,750	35,000	»
Մուլգուղ,	Սօուղ-	Բուլաղ,					
Արդարիկ	.	.	.	250	1,250	12,500	»
Մարաղա	.	.	.	200	1,000	50,000	»

Ամբողջ Աստրատականում հայ բնակիչների թիւը հասնում է մոտ 22000-ի կամ 4400 տան։ Սրանք ամբողջ տարուայ ընթացքում ծախսում են ալիօնովի համար մոտ 744,400 զան։ Աստրատականում արբեցողութեան կողմից առաջին տեղը բըռնում են Սալմաստը և Աւրմին, երկրորդ տեղը՝ Մարաղան և Խոյը, երրորդ տեղը՝ Արդարիկ, չորրորդը՝ Թաւրիդ, հինգերորդը՝ Սուլդուզ, Սօուղ-Բուլաղ, վեցերորդը՝ Ղարադաղ։

Սաստիստիկա կազմով, ինչպէս վեայում է, այս բոլոր տեղեկութիւնները հաւաքել է ամենավստահելի մարդկանցից, այնպէս որ այդ թուանշանները զուրկ չեն նշանակութիւնից։

Օղին և գինի վաճառողները հայեր են, իսկ յաճախորդները մեծ մասամբ թուրքեր, որոնք սիրում են ծածուկ մեալու համար խուլ փողացներում եղած տները։ Այդ աներում թուրքերի երթիեկութիւնը տեսում է մինչև ուշ դիշեր։ Գալիս կոնծում են, աղմակ-աղաղաղակ բարձրոցնում, աղման տևակ կեղտեատ հայհոյանքներ տալիս իրար, և ամնամեծ ցաւն այն է, որ շատ անգամ այդ բոլորին ականատես են լինում փոքրիկ երեխանները։ Խոմիչքը մատակարարում է տան մայրը, այդ էլ միջոց է շատ յաճախորդներ զբաւելու համար։

Ալիօնովի չարիքների դէմ մաքանելու համար Պարսկաստանի Հակալկօնօլական Ընկերութիւնը, որ հիմնուել 1899 թ. մայիսին, կաւում է մի շարք օգտաւետ գասախօսութիւններ կազմակերպելով, որոնց միջոցով պարզում է ժողովրդի համար այդ ախտի հասցրած ահապին վնասները։

Դասախօսութիւնների մասին տւելի լրիւ զաղախար տալու համար, աւելարդ չենք համարում տառաջ բերել այսակեղ նիւթերի ցանկը։

1. Ալիօնօլականութեան վառանդը, 2. Անասունների արեցոցութիւնը, 3. Ալիօնօլի երեխայի վրայ ունեցած ազգեցութիւնը, 4. Հակալկօնօլական շարժում Խուաստանում, 5. Հակալկօնօլական շարժում ամբողջ աշխարհում, 6. Թոքախտ և ալիօնօլականութիւն, 7. Ալիօնօլականութեան մասին ստատիստիկա, 8. Պարիզի հակալկօնօլական կօնդրէսից քաղուածքներ, 9. Ալիօնօլի վնասները Փիլիկականի և բարոյականի վրայ հային հայբն։

Ընկերութիւնը, բացի հրատարակական դասախօսութիւն-

ներից, բրոշիւրների միջոցով էլ պրօպագանդա է անում ալկօհօլի դէմ, պարզելով նրա հասցրած վնասները և չարիքները: Մինչև այժմ Պարսկաստանի Հակալիօլական Ընկերութիւնը հրատարակել է միայն երկու բրոշիւր՝ առաջինը գոկ. Կ. Փաշայեանի կազմած՝ «Մարդկութիւնան ամենամեծ թշնամին» և երկրորդը բժիշկ Վահան Արծրունու՝ «Մի խմիր»: Ընկերութիւնը մտադիր է յաճախ բրոշիւրներ հրատարակել, բայց նրա նիւթական միջոցները չեն ներում: Բրոշիւրները բոլորովին ձրի է բաժանուում անդամ-անդամուհիներին, նաև կողմնակի հետաքրքրուող մարդկանց, և այդ բոլոր ծախքերը ծածկելու համար ընկերութեան վարչութիւնը չունի պարբերական և հաստատուն աղբիւրներ, նա այդ լրացնում է զանազան դրական-երաժշտական երեկոյթներ կազմակերպելով և մանր-մունք նուեկաներով:

Եթէ մէկը համոզւում է և յանկանում է անդամակցել ընկերութեանը, նրան տրւում է մի խոստմազիր, որով նա պարտաւորւում է ոչ միայն ողելից խմիչքներ չը գործածել և ուրիշներին չառաջարկել, այլ և խօսել զանազան շրջաններում զրանց վնասների մասին, աշխատել ուրիշներին համոզել և յորդուել, որպէս զի անդամակցեն ընկերութեան:

Պարսկաստանի Հակալիօլական Ընկերութիւնը շատ ուշադրութիւն է գարձնում նոր, մատաղ սերնդի վրայ, որը զեռ գերի չէ դառել այդ ախտին:

Ընկերութիւնը հետզհետէ, աւելի ու աւելի ընդարձակւում է. և պարսկահայերի բռնած համակրելի դիրքը գէպի այս հանրօգուտ ձեռարկութիւնը պարզ ցոյց է տալիս, որ հակալիօհօլական շարժումը դեռ էլի կ'ընդարձակուի և աւելի ու աւելի լայն ծաւալ կըստանայ, փրկելով անթիւ ընտանիքներ և ամբողջ սերունդներ:

Այժմ հակալիօհօլական ընկերութիւնը Ատրպատականի զանազան մասերում ունի մասնաճիւղեր, ինչպէս Սալմաստում, Խոյում, Մարաղայում և Ուրմիում, և անդամ-անդամուհիների թիւը հասնում մօտ 400-ի: Վերջին ժամանակներս հակալիօհօլական շարժում է սկսուել Նոր-Ջուղայի հայերի մէջ, որոնք դիմել էին ընկերութեան նախագահ գոկ. Կ. Փաշայանին և բրոշուրներ խնդրել:

Այս շարժումը արձականք է գտել նաև Պարսկաստանից դուրս: Պարսկաստանի «հակալիօհօլական» ընկերութիւնը ունի մասնաճիւղեր նաև կովկասում, ինչպէս Կողբում, Բագւում, Իդղդիրում և այլն:

Այս երեսյթը միանդամայն ուրախալի և օրինակելի է: Ընկերութիւնը գործում է զովելի եռանդով. և ալկօհօլի պատճա-

ուած չարիքները տւելի պարզ և հասկանալի դարձնելու համար պէտք է մողական լավագություն տալ ժողովրդին պատկերներ, որոնք պիտի պարունակեն ալիօնոլից առաջացած տւերումները:

Պարիզաբնակ իշխան Լուսինեանը, ինչպէս իմացայ, յանձըն է առել ուղարկել այդպիսի նկարներ:

Պարսկաստանի Հակալկօհօլական Ընկերութիւնը յարաբերութիւն և կազ ունի եւրոպական նժամն ձեռնարկութիւնների հետ: Սյս ընկերութիւնը մասնակցել է Վիչննայում 1901 թ. ապրիլին Լայացած «Ժուժկալական կօնզրէսին»՝ ուղարկելով իր երկամիայ դործունէութեան համառօտ տեղեկադիրը և հաշիւը:

Պարսկաստանի կեանքի ընդանուր խաւար Փօնի վրայ այդ ընկերութիւնը իր դործունէութեամբ մի փայլուն զիծ է կաղմում:

ԵՐ. ՖԲԱՆԳԵԱՆՑ

## ՀԵՆՐԻԿ ԻԲՍԵՆ<sup>\*)</sup>

(Տարունակութիւն)

Թեատր (առմեն ինչ կամ ոչինչ սկզբունքի հետևանքները, — նյանդի սեբը, «կրօնը» և «եկեղեցին», — «Սասացին» և «կեղեցու» ճանապարհին, — Պործիչը, — Deus caritatis, — Քրամայի միւս տիպերը, — Պատոր և ամենքը, — Իգեալիզմի վերլուծումը), — «Պէտք Գիւնս» (Պէր Գիւնտի հիւանդու երեակայութիւնը, — նրա ոչու անձնագիրը, — Պէր Սրարիայում և նդիպոսում, — Պէրի «կայսրութիւնը», — նրա հիւանդափութիւնը և ինքնամանաշութիւնը, — Քրանդը և Պէր Գիւնտը իրքի ամարտիրոսները, — Պէր Գիւնտը իրքի նորվեգական ազգի ներկայացուցիչը), — Խրիստարդուրեան միուրինը (Շայնհօֆի ճառը, — նրա ցինիզմը և ապարզասրութիւնը, — Յօրման, — Խարենի վերաբերները գեղի քաղաքականութիւնը, — «Աւայու և Պատիվիացին» (Ցույաննոցի ճառը, — նրա ցինիզմը և ապարզասրութիւնը, — Յալիսայու և Պատիվիացին) (Ցույաննոսը իր բարեաշաշտ քրիստոնեայ, — Յալիսաննոսը Սյէնքում, — նրա հիւանդափութիւնը, հակաքրիստոնէական արամազութիւնը և միստիկական հակութերը, — Ցույաննոսը Մաքսիմոսի մօտ, — Ենրորդ թաղառութիւնը, — «Անհրաժեշտութեան զայրութի երեք անկիւնաքարերը, — Ցույաննոս իրք զահածառանդ և կայսր, — Հեթանոսութեան վերականգնումը և հավաճանք քրիստոնեաների դէմ, — Կայսր-Խառուած և Խառուած-կայսր, — Ցույաննոս իրք գրացասական մեծութիւնը, — Անհառական ազտութիւնը և առիւզելուսկան կոմքը, — իրսէն յունակուս):

## IV

Յաւիտենական քաղաքի խորհրդաւոր, միստիկ մթնոլորտում իրսէն 1866 թուին վրեց իր նշանաւոր զրամատիկական բանաստեղծութիւնը («Երանի»): Իսկ մի տարուց յետոյ՝ «Պէտք Գիւնս»: Սյս երկու զրամաներով իրսէն ահազին հեղինակութիւն ձեռք բերեց իր հայրենիքում, որից նա համարեա իր եռեսը շուռ էր տուել:

«Սիրոյ կատակերգութեամբ» իրսէն արդէն սկսել էր իր ժամանակակից աղջային կեանքը նկարազրել: Օտարութեան մէջ նա մնչուշտ աւելի լայն հայեացքով էր վերաբերուելու գէ-

\*) Տե՛ս աՄուրճա № 2.

պի իր հայրենիքը՝ տւելի նուրբ զիտողսւթեամբ և տռանց կանխակալ կարծիքների։ Պէտք է նկատել սակայն, որ Իրունի գրամաների նիւթը թէն աղջային կեանքից է վերդուած՝ այնուամենայնիւ նրանց մէջ չօշափուած ինսդիրները կրում են ոչ միայն բուն նորվէստական, այլ և ընդհանուր, հանրամարդկային բնաւորութիւն։ Սա մինք տեսանք հէնց «Սիրոյ կատակերգութեան» մէջ, իսկ «Յրանդի», մասամբ և «Պէր Գիւնտի» մէջ ոյս գիծը աւելի որոշ կերպով կ'երիւայ։

Բրանդը ուժեղ կամքի և անբնիձելի հաւատքի տէր մի հոգերական է, որ անյողզողդ հետեղականութեամբ դէպի նպատակն է զիմոււմ։ Նա կամքի հերոս է, մի անվիճակ իդեալսա, որ ձգուում է մարքել, վերակենդանայնել ամբողջ մարդկութիւնը, մի մարդարէ, որ մեռած տասիք փոխարէն կենդանի կրօն է քարոզում։ Բայց այս «կենդանութիւնից» մահուան, տնապայման նահաւակութեան հոս է բուրում։ «Ամի՞ն ինչ կամ ոչինչ»—ահա այս չոր, խստասիրտ իդէալիստի նշանարանը։ Մասյլ է, քարքարոս, ցրաւշտնչ Բրանդի հայրենիքը, և այս խիստ բնութիւնը զրել է իր զրոշմը այս սեազգեաս իդեալիստի վրայ, որի ոզին չերմութեան ոչ մի ձաւագայթ չէ արտացոլում։ «Բոցեղին սուրը ձեռքին» նա փոթորկի և թանձր մասախուզի միջով առաջ է զնում՝ մարդկութեան համար նոր շաւով։ Եր հարթելու, նրան ողերում, մղում է տալիս մի խոր զիտակցութիւն—որ ինքը տատուածընտիր մի ողաշտօնեայ է և նոյն իսկ գործիք նախակինամութեան ձեռքին։

Թէ դպրոցում և թէ ընտանիքում Յրանդն իրան խորթ, օտար էր զգումի։ Մանուկ մամանակուսնից ընտանեկան յարկութեան ականատես է լինում մի զգուելի երեսյթի—հօր անշնչացած զիտակի մօտ նրա մայրը հիւանդութեան անկողինը թողած՝ կողովուառվ, յափշտակութեամբ է զբազւում։ Նիւթական պաշտամունքի այս գարշելի անսարանը շատ խոր և անջնջելի տպաւորութիւն պիտի թողնէր փոքրիկ մանուկի վրայ։ Նա իր ամբողջ էութեամբ, հոգեկան արամագրութեամբ գառնում է նիւթապաշտութեան ոլուերիմ։ Հակառակուրդ։ Իր պարտականութեան համար նամար նա չէ ինսայում իր կեանքը։ Նա չէ վախենում ոչ ձիւնից և ոչ մասախուզից և երբ ամննքը փոքրոզի երկչուառութեամբ հրաժարուամ են մի թշուառ կնոջ պաղատանքը լսելու։ ծովի միւս ափումը օգնութեան համելու, այն ժամանակ անվեհեր Յրանդը չը նայելով կատաղի փոթորկին։ Հրամայում է «արձակել մակոյիլ»։ Սյս քաջարատութեամբ և անձնուէր մարդաբարութեամբ նա զրաւում է Ակնէսին։ Իր ապադայ կնոջը, որին և հոգեպէս միանգամայն կերպարանավիժում է։

Երբ Բրանդի ծննդավայրը տառապում է ծանր սովի ճիրաններում՝ նա իր հոգեղջն քարոզներովն է կերակրում սովեալներին։ Բայց այս խստափրտ քահանայի նիւթական զոհաբերութիւնը յանուն իդէալի մինչի այն տատիճան է հասնում, որ նա զոհում է իր մօրը, կնոջը և երեխային։

Մայրը խորհուրդ է տալիս Բրանդին հրաժարուել իր «անմիտ» դիտաւորութիւններից և միայն ապրելու մասին մտածել—«պաշտպանիր կ'ւանքդ. ժառանդի առաջին պարտականութիւնն է ապրել». բայց Բրանդը լաւ է դիտակցում թէ այս միակ խօսքը—ապրելը—«մեղքերի ինչ վիթիարի կոյտ է ամփոփում իր մէջ»։ Նա զզուանքով երեսը շուռ է տալիս և իր մօրից և նրա թողնելիք ժառանգութիւնից—«դեռ երեխայ ժումանակ ես քեզ հակառակում էի, ես որդի չէի, ոչ էլ դու մայր. մենք երկուսս էլ դատաստանի ենք սպասում»։ Նա կծու յանդիմանութիւնը երեսովն է տալիս իր վարմունքը հօր մահուան ժամանակ և յայտնում է, որ միայն բացարձակ զզումնն կամ մահը կարող է իրանց հաշտեցնել։ Ահա մահուան անկողնում պառաւ մայրը մտածում է իր հոգու փրկութեան մասին և մարդ է ուղարկում իր որդու ետենից. բայց վերջինս մի պայման է առաջարկում—հրաժարուել իր ամբողջ հարստութիւնից։ Մի պատգամարեր իմաց է տալիս, որ նա զոհում է իր հարստութեան կէսը. բայց Բրանդը ամբողջն է պահանջում—«Յայտնեցէք նրան, որ ոսկէ հորթի ամենափոքր մասնիկըն անգամ խլում է նրա հոգու փրկութիւնը»։ Գալիս է երկրորդ պատգամարերը, յայտնելով, որ նա զոհում է իր հարստութեան  $\frac{9}{10}$  մասը.—«Ո՞չ բոլորը», հարցնում է Բրանդը; «այն ժամանակ նա չի տեսնի ոչ քահանայի և ոչ հաղորդութեան երես»։ «Ամեն ինչ կամ ոչինչ»—այս է անդրդուելի որդու պահանջը։ Նրա յանկութիւնն է, որ իր մայրը միանգամայն մերկ մտնէ գերեզման—«քանի որ նրա գրանը դեռ լիքն է, նա իզուր է Յորի նրան մոխրի վրայ նստում»։ Հետեանքն այն է լինում, որ մայրը մեսնում է առանց հաղորդուելու և իր որդու հետ հաշտուելու։

Բրանդ նոյն զոհաբերութիւնը պահանջում է նաև իր կնոջից. և Ազնէսը յիրաւի շուտով հրաժարում է աշխարհիկ ցանկութիւններից և համակւում իր ամուսնու իդէալիզմով։ Բրանդը թէն այն կարծիքի է, որ «մարդկութիւնը անհնարին է գրկել. քանի որ մեկին չես սիրել»—այնուամենայնիւ նկատում է. «այն ինչ որ մարդիկ սէր են անուանում՝ դա ես չեմ ճանաչում և չեմ կամենում ճանաչել»։ Նա Աստուծու սէրն է միայն ճանաչում և պահանջում է, որ իր կինը յանուն այդ սիրոյ զոհաբե-

բութեան նոյն պատրաստականութեամբ յափշտակուի, ինչպէս  
ինքը, նա պահանջում է կամքի ոյժ իր կնոջից— «ը կարենալը  
ներելի ե, իսկ չը կամենալը—երբէհ»։ հոգեկան ոյժ, ցանկու-  
թիւն—սա է Բրանդի կարծիքով ամենազլիստորը, որովհետեւ  
«ով որ ներքուստ կուռում է՝ նա կը յաղթէ»։ և Ազնէսը մինչեւ իր  
միքջն շունչը կուռում է՝ նրա միակ որդին՝ փոքրիկ Ալֆը ան-  
կարող է գիմանալ հիւսիսային խիստ օդին։ բժիշկը բացարձա-  
կութէ յայտարարում է, որ միայն մեղմ կլիմայում նա կարող  
է ապրել հակառակ դէպքում մահը մօտ է։ Ազնէսի մայրական  
սիրու բուռն աենչանքով ձգտում է դէպի հարաւ. իսկ Բրանդի  
պահանջն է յանուն իր պարտականութեան՝ մնալ հիւսիսում։  
Թշուառ մայրը հոգեկան ծանր մաքառումից յետոյ վճռում է  
մնալ և երեխան կարծ ժամանակից յետոյ մեռնում է։ Ազնէսն  
այժմ իր որդու յիշտակովն է ապրում, բայց խստասիրտ Բրան-  
դը ոչ միայն տրամադիր չէ ամոքել իր կնոջ վիշտը, այլ և կա-  
մենում է յիշտակի ամենաաննշան հետքն անգամ ջնջել նրա հո-  
գու խորքերում։ նա թոյլ չէ տալիս Ազնէսին արտասուել, ծնուն-  
դի երեկոյեան իր մեռած որդու մասին մտածել։ Այդ զեռ բա-  
ռական չէ երբ մի գնչուհի գալիս է հին չորեր խնդրելու։ Ազ-  
նէսը դառն սրտով տալիս է Ալֆի շորերը, բայց նրա զլիսարկը  
կը քին սեղմած պահում է իրքի թանկաղին յիշտակ—այն  
ժամանակ Բրանդն ստիպում է գրանից էլ հրաժարուել։ — «Ամեն  
ինչ կամ ոչինչ»... Ազնէսը այս կատարեալ զոհարերութիւնից  
յետոյ այլս կորցնում է իր գիմացկունութիւնը—նա էլ է զոհ-  
ում, որովհեան «ով որ Եհովային տհաւաւ՝ նա կը մեռնի»։

Ահա անյողդողդ իդէալիստը այժմ մենակ է միացել և ամ-  
բողջովին անձնատուր է եկել իր վերանորոգչական միսիային։  
«Ա՛յս, եթէ կարողանայի ձեղ վարդապետել, դէպի Ասաւուած  
բարձրացնել, թող սրտիս հիւթը ցամաքէր, երակներս արիւ-  
նաքամ լինէին»—այս հոգեբուզին խօսքերն է ուզգում նա իր  
սովուծ ժողովրդին, որը սակայն նրան քարկոծել է կամենում,  
որովհեան հացի փոխարէն նա քար էր առաջարկում։

Բայց ինչումն է կայանում Բրանդի կրօնը։ Նա խոստո-  
վանում է, որ դատարկ նորութիւնների յետեից չէ ընկել և որ  
միւս կողմից՝ եկեղեցու կանոններն ու վարդապետութիւնները  
պատշաճօրէն չէ կարող յարգել—«նրանք առաջ են եկել ժամա-  
նակի ընթացքում, ուրեմն և կարող են անհետանալ ժամանա-  
կի ընթացքում»։ Բայց բոլոր անցաւոր երեսյթների մէջ նա ճա-  
նաշում է միայն մի անանցանելի բան, դա ազատ ողին է, որ  
կենսատու է յաւիտեան։ Նա անարգում է թմրած հոգիների և  
թմրած կարողութեան «Հայր մերը», որի միակ նպատակն է՝

առանց որ և է զոհաբերութեան արժանանալ երկնային չնորհքին Նա բացարձակապէս յայտնում է. «Ես պիեղիստ չեմ. չը զիտեմ մինչև իսկ արդօք ես քրիստոնեայ եմ... իմ Սատուածը այնպէս անգոյն չէ. իմ Սատուածը փոթորիկ է, իսկ ձերը՝ քամի. իմը անընկձելի, իսկ ձերը՝ տկար. իմը ամենասէր, իսկ ձերը մեզկ»: «Ի՞նչ է ձեր եկեղեցին», հարցնում է նա մի այլ անգամ, —«Խարուսիկ մի երեսյթ, երգեհանի խաղ, երգեցողութիւն, զանգականեր—միայն զրաւիչ փայլ և շքեղութիւն»: Այն ինչ Բրանդի հայեացքն ուղղուած է գետի «ապառաժների լարիւրինթոսը». առասպելական «սաոցային եկեղեցին» է նրա տաճարը, ուր ամեն քայլափխում քարողում են ձեւն հակայական հիւմները և ջրվէժները, ուր ապառաժների և սաոցակոյաների միջից սուլում է կատաղի հողմը, ուր սրբազնն բարձունքներում սաւառնում է բազէն»:

Սյա եկեղեցին սիմբոլիկական է, և այս այլաբանական համառօտ նկարագրութեան մէջ արտափայլում է Բրանդի իգէտալիզմի ամերող ուժին. նրա սան և ցրտաշունչ բնոււրութիւնը՝ իր հօտը զէսի նոր տաճարն առաջնորդնիւն՝ նա չէ հրաժարւում «Ամեն ինչ կամ ոչինչ» նշանաբանից, ընդհակառակն պահանջում է ամբողջովին անձնառուր լինել նորին. իսկ երբ նկատում է հակառակ տրամադրութիւն իր ժողովրդի մէջ՝ նորակառոյց տաճարի գոները փակում է և բանային մօտակայ գետն է ձգում:

Այնուամենայնիւ ժողովրդի մի մասը հետեւում է նրան և բռնում է «սաոցային եկեղեցու» ճանապարհը. կանայք և երեխաներ տղամարդկանց հետ միասին քարքարոս զարիվայրներով և ապառաժներով վեր են մաղլցում զէսի անծանօթ տաճարը Բայց ճանապարհն մէկը ազաղակում է —«Սպասեցէք հայրաբոլորովին թուլացել չ»:

Միւսը՝ «Երէկուանից ոչինչ չեմ կերել»:

Շատերը՝ «Ծարաւ ենք, քաղցած»:

Եւ մինչեւ Բրանդը պատասխանում է —«յառաջ. ժամանակ չէ ուտելու մասին մատենք»—միւս կողմից մի կին մորմոքում է. «Երեխաս հիւանդ է»:

Երկրորդը՝ «Ուզքս զիրաւորուած է»:

Երրորդը՝ «Գէթ մի կաթիլ ջուր»:

Իսկ մի տիրացու՝ բուն տիրացուական տրամաբանութեամբ, կարծելով թէ այս տաժանելի չարչարանքից և զրկանքներից յետոյ Բրանդը մի հանդիսաւոր ճաշ է պատրաստելու իր հետեւորդների համար, հարցնում է՝ «Ի՞նչ է լինելու այս զոհաբերութեան վարձատրութիւնը»—«կամքի միութիւն, հաւատքի թոփչք,

հոգիների մաքրութիւն»—պատասխանում է ողեւորուած առաջ-  
նորդը:

Այս հիասթավիեցնող պատասխանից յետոյ ամբոխը կա-  
տաղի բարկութեամբ տղագակում է, — «մնաք մոլորուած ենք,  
խարուած ենք... յաղթութեան փոխարէն նա մնզանից զո՞ն է  
սրահանջում... Նո քրիստոնեայ չէ, նո խելագար է... վատ  
հայր, վատ որդի, վատ ամուսին... Հալածեցէք խոռվարարին,  
քարկոծեցէք նրան»: Եւ գոյրացած ամբոխը Բրանդին քարի  
սոսկալի տարափով հալածելուց յետոյ՝ լեռնային բարձրութիւն-  
ներից նորից իջնում է դէպի հովհոտը:

«Քիրաւորուած, արիւնաներկ նրանդը կաղ ոտներով միայ-  
նակ թափառում է ամայի լեռներում և ահա յանկարծ լուսմ է  
խմբական մի ձայն».

«Յիմանը, երբէք նրան չես նմանի, որովհետեւ դու մարմ-  
նից ևս տառջացել, հետեւս նրան թէ հեռանաս՝ կը մնաս միշտ  
նզումած»:

«Ո՞վ որդ, երբէք նրան չես հաւասարուի, որովհետեւ լեղի  
բաժակ ևս գատարկել. հետեւս նրան թէ հեռանաս՝ դործդ  
կը մնայ միշտ խափանուած»:

«Յնորամիտ, երբէք նրան չես նմանի, ամեն ինչ զոհեցիր,  
բայց ոչինչ ձեռք չը բերիր. քո վարձատրութիւնը երկրաւոր է  
միան»:

Եւ ահա փորձիչը կանացի կերպարանքով երիւում է նրան,  
նո տառջարկում է Բրանդին երկրացին ամեն տեսակ բարիք,  
նո խոստանում է վերակենդանացնել իր մօրը, կնոջը և զաւա-  
կին միայն թէ հրաժարաւի իր «Ամեն ինչ կամ ոչինչ» նշանաւ-  
բանից:

Բրանդը այս խօսքերի մէջ տեսնում է «աշխարհային ակ-  
կօրտի հնչիւնները», որի առաջ սակայն նո անդրդուելի է մը-  
նում, գերադասում է ապրել «կարօսով եւ յոյսվ»:

Վերջապէս նա մօսքերի և Svarterind-ին, ասացացին հկե-  
զեցուն», բայց նո զկում է, որ դեռ կանգնած է ամենացած  
աստիճանի վրայ... «Հազար մզոն հեռու... Ա՛խ, ինչպէս կարօ-  
տում եմ ևս Հարաւին, արեի ջերմ կառագայթներին, սրտի  
հանդարտութեան, կեռնքի բողբոջներին. ախ, ինչպէս կարօ-  
տում եմ ևս խաղաղութեան», և ահա մի ահազին ձեւան հիւս  
Բրանդին ցած է գահավիճում: Նո գառնալով դէպի երկինքը,  
այս վնրջին խօսքերն է արտասանում—«Մահուան արհութրքի  
մէջ ասա ինձ, Աստուած, գրկութեան համար բաւական չէ  
արդեօք ուժեղ կամքի quantum satis»: Մի ձայն խկոյն վերե-  
կից պատասխանում է. «Եա է Deus caritatis»—Նա, ողորմու-

թեան, սիրոյ Աստուածն է. այսինքն այն Աստուածը, որին Բրանդը երբէք չը փնտռեց, այն Աստուածը, որից մի փոքրիկ նշոյն անգամ բաւական էր իր խստարտութեան սառոյցը հալեցնելու:

Բրանդը ոչ միայն ամսողդողդ, հետեղական իդէալիստ է, այլև մի խոշոր անհատականութիւն, գոկտօր Շտոկմանի պէս նա իր առանձնութեան մէջ ամենից ուժեղն է: Նա կամքի մի հերոս է, որ չէր ցանկանում իր պարտականութիւնը կիսովին կատարել, այլ ամբողջապէս, առանց մազաչափ անգամ չնղուելու իր նպատակից: Այն ինչ դրամայի միւս դէմքերը սովորական անձնաւորութիւններ են, «պաշտօնի մարդիկ»: Այսպէս, օրինակ, մենք հանգիպում ենք անանուն բշտկի, կոռավարչի, գիւղական ուսուցչի, տիրացուի, աւագ քահանայի հայրն: Սրանք բոլորն էլ իրանց միջակութեամբ և «յարմարուելու» թուլութեամբ Բրանդի ապառաժ կամքի հակապատկերներն են: Կառավարիչը նոյնպէս կատարում է իր «պարտականութիւնը», բայց «ոչ իր սահմանից գուրս»: Մինչդեռ Բրանդի կարծիքով հաստատակամ մարդը՝ եթէ անգամ ծովերի հանդիպի՝ անշեղ կերպով պէտք է շարունակէ: իր ճանապարհը—կառավարիչն ընդհակառակը մտածում է—եթէ մարդ կոռուլ ոչինչ չէ կարող ձեռք բերել՝ պէտք է տեղի տայ և հնուանայ: Նա այն կարծիքի է, որ «այժմ հինգ ձկնով անհնար է ահազին բազմութիւն կերակրել», այն ինչ Բրանդի համազմունքով այդ տեսակ սնունդի համար տասը հազար ձուլն էլ անբաւարար է:

Միւս կողմից մինչդեռ բժիշկը մարդասիրութիւնից է խօսում՝ իրոն առաջին բարոյական պարտականութիւնից—Բրանդը մարդասէր (human) բառը համարում է մեզկութիւնը ծածկող մի զէնք, թզուկ հոգիները պաշտպանող մի վահան—«միթէ Ասուած մարդասէր էր՝ երբ Յիսուս Քրիստոսը խաչափայտի վրայ աւանդեց իր հոգին: Ա՛խ, ափսոս որ ձեր Աստուածը այն ժամանակ չէր տիրապետում, եթէ ոչ վերեից կ'աղազակէր. «Շնորհը»: Թզուկ հոգիներից մէկն է նաև աւագ քահանան. նա այն կարծիքի է, որ եթէ Բրանդը «Փուլօք է և խմատուն՝ պէտք է լինի Պետրոսի, Յովհաննէսի, Կիրակոսի քահանան»: Միջակութեան տրամաբանութեամբ՝ նա հաւասարութեան կողմանակիցն է և ոչ թէ ազատութեան: Նա գէմ է և՛ ուժեղ կամքին և՛ ա՛՛ հատականութեան—«ով որ հաւատում է մենակ նպատակին համանել—նա կորած է: Ում որ Աստուած ոչնչացնել է կամնենում՝ նրան դարձնում է անհատ, որպէս զի յետոյ նրան ծաղրի առարկայ դարձնի»: Այն ինչ Բրանդը պահանջում է—եղիք, ինչ որ կամնենում ես, մինչի իսկ սարուկ քո կրքերին, եղիք սակայն

ինքնաճանաչչ կառավարիչը նոյնպէս աւագ քահանայի նման է մտօծում—«Անհատը իզուր է միայնակ կուռում»։ Եւ մինչդեռ Բրանդը վրայ է բերում—«Լաւագոյները իմ զրօշակին ևն հետեւում»։ կառավարիչը այսպէս թէ այնպէս շատ լաւ գիտէ իրան միսիթարել—«Ամեծամասնութիւնը իմ ճանապարհովն է զնում»։ «Մեծամասնութեան» կարծիքով, ով որ կամենում է յառաջ գնալ, պէտք է յարմարուի ժամանակին և տեղական պայմաններին. պէտք է անհարթութիւնից հեռու մնայ, տարբեր ճանապարհով չը զնայ, սեփական դատողութիւնը, անհատական ձգտումները պէտք է առանց այլեայլութեան զո՞ բերէ պաշտօնին և դիրքին։

Այս է պատճառը, որ երբ այս սովորական տիպերը լսում են Բրանդի «հակաքրիստոնէական» քարոզը՝ սրանցից կառավարիչը բնորոշ կերպով նկատում է. «այլես ոչ մի չքանչան», իսկ աւագ քահանան՝ «եպիսկոպոսութեան հարցը քացախ գարձաւ»։ Եւ երբ ոգեւորուած ամբոխը Բրանդին է հետեւում՝ գէսի բարձր լեռը՝ այն ժամանակ նրանք խրատներ են կարդում «մոլորուած հօտի» հասցէին—«Մտածեցէք ձեր տան, արտերի և արքարակների մասին, անասունների, այծերի և ոչ խարիների մասին. լսեցէք՝ ձեր կանոնացն ինչպէս ազադակում են, ով պէտք է կերակրէ ձեր գաւակներին»։ Աւագ քահանան որ զրկուելու էր բազմաթիւ ծիսականներից և հարուսա եկամուտներից՝ Բրանդին հետեւող ամբոխին շատ տիպիկական կերպով անուանում է՝ «Օ՛, զաւակներս, ոչխարեներս». «զսեցէք ձեր հովուի ծայնը», ասում է նա, «գարձէք դէպի ձեր հօտը, զզման զգացմունքով լուսաւորէք ձեր աչքերը և շուտով ձեր հանդիսաբը կը գտնէք, ես զիտեմ, որ Աստուած բարի է, նա անմեղ արիւն չէ ուզում թափել: Օ՛, զաւակներս, ոչ խարիներս»։ Եւ ոչխարական երակը բռնողները, միջակութեան ներկայացուցիչները պէտք է յաղթէին։

Շատերը Բրանդի բնաւորութեան նախատիպը համարում են նորվէղացի յայտնի պաստօր Լամմէրսին, որ «Բրանդի» լոյս աեմնելուց ուղիղ տասը տարի առաջ՝ չը նայելով իր փառաւոր պաշտօնին և նախանձելի զիրքին, ընտանեկան հոգուերով ծանրաբեռնուած և առանց որեւէ նիւթական ապահովութեան—ինքնակամ թողնում է իր պաշտօնը և հիմնում առաքելակամ-քրիստոնէական մի համայնք։ Գործնական իդէալիզմի այս արտասովոր փաստը զուցէ զգալի զրդումներ է տուել Իբսէնին, այնուամենայնիւ վերջինս նկատում է մի նամակում, որ Շլուսնական տարրը «Բրանդի» մէջ մի պատահական երեւոյթ է» և որ մի քահանայի փոխարէն նա կարող էր մի արուեստաղե-

տի ընտրել իրբե հերոս, այսամբն այն՝ ինչ որ տեղի ունեցաւ իր վերջին դրամայում—«Երբ մենք մեռածներս սթափուինք»։ Իբոքն սրանով ուզում է նկատել, որ գլխաւորը ոչ թէ հերոսի աշխարհահայեցքի գոյնը, որպիսութիւնն է, այլ ընդհանրապէս դրամայի հիմնական գաղափարները—կտէրի ոյժը, անհատականութիւնը և միւս կողմից իդէալի ու կեանքի մէջ եղած յարաբերութիւնը։

Այս վերջին պրօբլեմը, որ ինչպէս կը տեսնենք, զբաղեցրել է իբոքնին իր յիտաղայ մի քանի դրամաներում, արձարծուած էր նաև «Հիւսիսային զօրաբշաւում»։

Իբոքնը մի կողմից որոշակի կերպով կանգ է ռառնում իդէալիզմի, այսպէս ասած, ոլլեցրգական եռթեան վրայ, իսկ միւս կողմից սնուղղակի կերպով մասնացոյց է անում՝ թէ ի՞նչպէս պէտք է կազմակերպուի սուող իդէալիզմի ռենքը։ Չոր, խստապիտ իդէալիզմը կեանքի, անձնական երջանկութեան բացառութիւնը է—այս է ուսուցանում Բրանդի ճակատագիրը. բայց ուա չէ նշանակում, որ իբոքն առհասարակ դէմ է իդէալիզմին, որ նա ծայրայեղ տնհատականութիւնը և իդէալիզմը դէմ առ դէմ է դնում և հակուելով դէպի առաջնորդ՝ վերջինը ժիստում է։ Կեսնքի դործնական հայեցակետից, յիրաւի, զուցէ իւրաքանչիւր իդէալը ամփոխում է իր մէջ մի մեռելաչունչ տարր, բայց որանից չի կարելի եղբակացնել, որ լոդէլը կեանքի «ուրուականն է», նրա յաւլունական ոսոխիք Բայց ամենօրեայ համոզեցուցիչ վաստերից՝ սրա ամենալաւ տպացոյցը հէնց «Բրանդի» վերջաբանն է՝ երբ նա զգում է սիրոյ Աստոծոյ նշանակութիւնը։ Մի զերմանացի քննադատ, Ռ. Վէօրնէր, իզուր է այս վերջաբանը «հարկադրեալ վերջաբան» համարում։ Այս կարելոր վերջաբանով իբոքն յայտարարում է իրան ամենաառողջ աշխարհահայեցքի՝ բեալ—իդալիզմի կողմնակից։ Աս աւելի շօշափելի կերպով կ'երեայ իբոքնի երկրորդ դրամայից—«Պէր Գիւնտ», որ նա զրից Հոսմում։

## V

«Պէր Գիւնտը» նոյնպէս դրամատիկական բանաստեղծութիւն է, բայց մասամբ առասպելախառն։ Ինչպէս Բրանդը ծայրայեղ իդէալիզմի, այնուեւ էլ Պէր Գիւնտը ծայրայեղ երեւակայութեան մարտիրում է։ Բայց այս երկու մարտիրումների ընաւորութեան առանձնայատկութիւնների և ձգտումների մէջ կայ մի ահապին անպունդ։ Բրանդի ուժնդ կամքի և հզօր անհատականութեան փոխարէն՝ Պէր Գիւնտի մէջ մենք տեսնում

ենք կամքից և նպատակից զուրկ, մնդկ, քծնող ու եսական մի անձնաւորութիւն, որ միայն երեսակայել և երազել գիտէ, մի արկածախնդիր, որ չունի սակայն գործնական ոչ մի եռանդ և որի հիմնական սկզբունքն է — «Ենդիր ինքնագոհ, արա միշտ այն, ինչ որ քեզ հաճելի է և յարմար»:

Ինչպէս զրամացի ընթացքում տեղեկանում ենք՝ Պէրի հայրը հարբեցող է եղել, իսկ մայրը՝ Օսէն, թէի բնաւորութեամբ բարի, բայց «յիմար», սահմանափակ խելքի տէր մի կին, որ կրթական ոչ մի աղղեցութիւն չէր կարող ունենալ իր հիւանդ որդու վրայ, մանաւանդ որ նրան շատ սիրելու պատճառով մինչև իսկ երես էր տուել: Այնուամենայնիւ. մայրը թէի անզիտակցարար, բայց շատ յաջող կերպով է բնորոշում իր որդուն — «սնն ես ասում, Պէր» — սա է հէնց առաջին նախազասութիւնը, որով սկսում է զրաման, և այժաք է նկատել, որ Պէր Գիւնտի ամբողջ կեանքը ըստ էութեան՝ երեւակայութեան չափանցութիւնից առաջացած կեղծիքի և ստութեան մի հիւառուածք է:

Նրա երեւակայութիւնն այնքան ծայրացել է, ոյնքան սահմարձակ, որ նա ամպի մի կառոր ծիռու անդ է զնում և նրա վրայ նոյնիսկ մի հիծեալ է նոտայնում, մի հասարակ ծառ նա համարում է սպառազինուած մի ասպետ, ցնցոտիներով ծածկուած մի գեղջկունու՝ իշխանուհի, իրան էլ՝ ի հարկէ, իշխան: Նա հրապում է, որ իբրև հնձեալ ինքն էլ կարող է սահել կապուտակ օգի մէջ... «բայց ես կարող եմ և աւելին»: Նա երեւակայում է իրան իբրեւ մի կատաղի գայլը, որ գառնալով զէպի իր նշանածը՝ Սօլվայգ՝ նկատում է — «Ես կը իսածնեմ և կը ճանկըտեմ քեզ, բայց ոչ թէ իբրև կատակ, ես կը ծծեմ սրորդ արիւնը և միանզամայն կը լավեմ փոքրիկ քրոջգա կամ թէ «մի արջ», որ ջարդում, խորտակում, քարեր է փշրում, աղմայոյզ չըրպէմը իրացնում, ծառը իր արմատով ժայռից զուրս պոկում»:

Սակայն Պէր Գիւնտի հիւթ անընդունակ է այդ ոչ միայն ձաւում, այլ և կայսր «տուբողջ աշխարհի»: Բայց նա իսկապէս «կայսր է իր եսին», իր ողորմութեան միանզամայն կը լավեմ փոքրիկ քրոջգա կամ թէ «մի արջ», որ ջարդում, խորտակում, քարեր է փշրում, աղմայոյզ չըրպէմը իրացնում, ծառը իր արմատով ժայռից զուրս պոկում»:

րիդին, որը մի ուրիշի էր պատկանում և որին նա չուտով բաց է թողնում: Ապագայում, Արաբիայի անսպասներում նա նոյն զգայուկան հաճոյքների դռն է դարձնում նաև բեդուինուն հի Անխարային:

Մօր մահուանից յետոյ Պէր Գիւնտը հեսանում է Նորվէդիայից և օտար երկներն ընկած՝ բախտ է որոնում: Նա զանազան անսներելի, ստոր միջոցներով մեծ հարստութիւն է զիզում: յունական ապստամբութեան ժամանակ մտածում է մինչև իսկ մի խոշոր փոխաւութեամբ օգնել թիւրքաց սուլթանին և այս նպատակով մի նաև թանկադին գանձերով բեռնաւորած Վոստորի ափերն է ուղարկում, բայց ճանապարհին մի անգիւացի, զերմանացի, ֆրանսիացի և չվեզացի խորամանկ հնարագիտութեամբ կողմագումար էն նրա ամբողջ հարստութիւնը—այս կողոպուտը, ինչպէս յետոյ կը տեսնենք, սիմրօլիկական մի միջադէպ է:

Սյս դժբախտութիւնից յետոյ Պէր Գիւնտը Աֆրիկայի անապատներն ընկած արկածալի: Կեանք է վարում, նա մտածում է այս չոր և աւազոտ տարածութիւնները ջրառատ օվազիսների մինչև իսկ ծովերի վերածել: Արաբիայում նա հանդիպում է մի անակընկալ բախտի—նրան ընդունում են իրեն երկնառաք մի մարզարէ, բայց նա անընդունակ է լինում իր մարգարէական արժանաւորութիւնը երկար պահպանել: Արաբիայից նա անցնում է գէպի եղիսաբուզ Գահիրէում նա մտածում է զիտնուկան դառնալ և հնապիտութեամբ պարապել: Երբ նա կանգնած է անխօս սփինքսի առաջ, յանկարծ լսում է զերմաներէն լեզուով մի հարց—«ախ, սփինքս, ոլ ես դու», և ահա անմիջապէս սփինքսի յետից գուրս է գալիս հարց տուող պարանը—պրօֆէսօր Բէգրիֆէնֆէլդ, որ Գահիրէի խելազարտան վերատեսուչն էր և ինքն էլ հոգնպէս հիւանդացած լինելով՝ այժմ պառյա էր գործում սփինքսի շուրջը, անսնելով Պէր Գիւնտին՝ նա հարցնում է—ներողութիւն պարոն, թոյլ կը տանք հարցնել՝ ինչն է ձեղ առաջնորդել այստեղ:

—Սյյելելու այս բարեկամիս—պատասխանում է Գիւնտը:  
—Սփինքսին:

—Սյն, հին օրերի բարեկամիս:

—Հիանալի... ուրիմն ճանաչում էք նրան, կարող էք տալ ցանկալի լուծումը, ունչք այդ կարողութիւնը:

—Զէք տեսնում ինչպէս նա հեղնօրէն ծիծաղում է, նա է հենց ինը:

Պէր Գիւնտի այս պատասխանը միանգամայն յամիշտակում է Բէգրիֆէնֆէլդին, նա այդ համարում է «խորիմաստ, առեղ-

ծուածային»։ նա Պէր Գիւնտին անուանում է «անծանօթը, գաւլիքը, վաղուց յայտնուածը»։ Իսկ նոր իմաստութեան հեղինակը մի կողմից չուարած, իսկ միւս կողմից չափազանց ինքնարաւական կերպով նկատում է—«իսկապէս ճանաչուած եւ»։ Ինեւ գար պլոքէսօրի կարծիքով «նա է հէնց ինքնի» հեղինակը, «մտածողութեան կայսրն է»։

Բէզրիփէնֆէլզը Պէր Գիւնտին առաջնորդում է գէպի ինելագարատան, այսուեղ նա յայտարարում է խնդօքներին՝ յիմար, իսկ յիմարներին՝ ինելզ և «վուլոզները» հաւաքուած՝ բուռն ու գնորութեամբ «ամենախնելօքին» ընարում են կայսր։

Այս նորսագիւտ կայսրութեան մէջ Պէր Գիւնտը չէ կարող երկար համրեցել։ նա հետզհետէ համոզւում է թէ ինչ էր իր մնարած կայսրութիւնը։ Հիամթափուած նա վերջ է տալիս իր արկածալի բախտախնդրութեան և նորից վերադառնում նոր վէզիս։

Հայրենիքում երկարատև ու անձանձիր համբերութեամբ նրան էր սպասում հաւատարիմ Սօլվայզը, որ արդէն բաւական պառաւել էր. տեսնելով այս վերջինին իր խաղաղ ընտանեկան յարկում՝ Պէր Գիւնտը ուշքի եկած աղազակում է. «այս տե՛ղ եր իմ կայսրութիւնը»։ Երբ մահուան ուրուականը երեսում է նրան և հաշիւ է ուղում տեսնել՝ այն ժամանակ նա սարսափած՝ Սօլվայզի օգնութեանն է ապաւինում և նրա գրկումն էլ աւանդում է իր հոգին։

Բայց Պէր Գիւնտը իր «մահուանից շատ առաջ արդէն մեռած եր»—մյս է իր սեփական զատավճիռը, որ ինչքան անողոք է, նոյնքան ծշմարիտ Անսանձ երկակայութեամբ և ցնորամիտ երազանքներով պաշարուած՝ նա չը ճանաչեց երբէք ոչ ինքն իրան և ոչ իրական կեանքը. իր ըուն կայսրութիւնը թողած՝ նա կամենում էր ցէղար գանձալ, և ահա խելազտրատան մի մնկիւնում, մարդկային թշուառութեան այս սրտաճմնիկ միջավայրումըն է միայն զգաստանում. բայց արդէն ուշ էր՝ երիտասարդութիւնն արդէն թառամիլ և ծերութեան ալիքն էր նրան պաշարել. Այս է պատճառը՝ որ ստուերախիտ անտառում ընութեան անշունչ աստրկաներն անդամ՝ խոտածաղիկը, չորացած տերեները, վազորդեան ցօղը, օդային հնչիւնները, ծառերի սօսափիւնը՝ լեզու առած բողոքում, զատապարտում են նրան, և անտառում պատոր հաւաքելիս՝ ինքնաճանաչ խոռապվանութեամբ ինքն էլ է իրան զատապարտում. «ողորմելի արարած, զուկայոր չես, այլ մի սխտոր»։ Մի այլ անդամ՝ նորիվզիս վերագառնալիս՝ Պէր Գիւնտը նաւապեաի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ ահա թէ ինչ է խոստովանում—«Ուսկու յետե-

ւից ընկայ՝ կորցրի ինչ որ դտայ. ճակատազրի աստուածուհուն միշտ անծանօթ մնացի և այն չնշին բանը, որ ազատել և հետո եմ տանում, դա մնացորդն է այն բոլորի, ինչ որ սատանայի բաժին գարձաւ»:

Բրամզի և Պէր Գիւնտի մարտիրոսութեան մէջ եղած տարրերութիւնը, կարծում ենք, այժմ բաւականաչափ պարզուած է. Մէկը իդէալի գոհն է, իսկ միւսը իր ողորմելի «եսի»: Պէր Գիւնտի ամենամնած գժբախտութիւնը կայանում էր նրանում, որ նա զուրկ էր ինքնաճանաչութիւնից. այն ինչ Բրամզը իր ծայրայեղութիւնների և բացառական յատկութիւնների հետ միասին գոնէ այն խոշոր առաւելութիւնն ունէր, որ ինքնաճանաչ էր. բայց միաժամանակ՝ կամքով ազատ և ուժեղ, հոգեկան կարողութեամբ, զիմացկանութեամբ մի հսկայ, որ աներկիւղ համարձակութեամբ և բայց ճակատով էր հանգիւպում ամեն մի զրկանքի և թշուառութեան և երբեմն նոյնիսկ ինքն էր դառնում այս զրկանքի և թշուառութեան աղբիւրը: Այն ինչ Պէր Գիւնտը թոյլ է, մնզկ, վախկոտ. նա խկապէս ոչ թէ գիտակցաբար, զղջումով, այլ միայն իր «եսի» երկիւղիցն է հրաժարում իր երազներից. կեանքի արհաւելիքների առաջ նա ոչ թէ մի բայց, անվեհներ ճակատ է ցոյց տալիս, այլ իր անկարող մէջքը... որ ձգուում է շարունակ արհաւելիքից առաջ ոլանալ: Այս տեսակէտից մենք միանգամայն համաձայն ենք այն սիրուն համեմատութեան հետ, որ անում է Ռ. Վեօրնէր այս երկու հերոսների նկատմամբ—«թէ Բրանդը և թէ Պէրը կամքի տէր են, բայց այն տարրերութեամբ, որ ասացինը շատրուանի բարձրացայտ ջրի սիւնն է ներկայացնում, որ քամու զօրեղ հոսանքի տակ ցրւում, քայքայւում է, բայց գարձեալ դէպի վեր է ցայտում—այն ինչ Պէրը հովառում հոսող առուակի է նմանում՝ առանց բարձրացայտ թոփչքների»:

Պէր Գիւնտը ոչ միայն մասնաւորապէս թոյլ բնաւորութեան և անսանձ երեակայութեան մարմնացումն է, այլ և ըստ հեղինակի խոստովանութեան՝ ընդհանրապէս նորվելզական ազգի պատկերն է ներկայացնում. այն, ինչ որ Համլէտն է գերմանական ցիզի համար, նոյնն է և Պէր Գիւնտը նորվէզական ազգի վերաբերմաբ: Իբոքն թէն մութ, քօղարկուած, բայց սրամիտ այլաբանութեամբ ծաղրում է իր հայրենակիցների բնաւորութեան թուլութիւնը, ևսականութիւնը, միւս կողմից՝ ցնորամիտ քաղաքականութիւնը—որոնք րէալիստական XIX դարում վոխանակ ողջամիտ և զործնական սկզբունքների հետեւելու՝ բօմանտիկական ձգտումներով են ոգեւորւում: Monsieur Ballon-ի հետ խօսելիս Պէր Գիւնտը ահա թէ ինչ է նկատում—«տեսակա-

նորիւնն ինձ համակել է և իմ ամբողջ էութիւնը դունաւորել բայց և այնպէս որ իմ ազատ ընտրութիւնը չէ—նախահայրերից եմ ժառանգելոց Նրբամիտ Փրանսիացին իսկոյն վրայ է բերում.

—Դուք նորվէդացի եք:

—Այն, ծնունդով, բայց կոչումով աշխարհաքաղաքացի—պատասխանում է Պէր Գիւնտը:

Իսկ վերջինիս աշխարհաքաղաքացի» լինելը կայանում է Նրբանում, որ նա փող վաստակելու չնորհը ձեռք է բերել Ամերիկայից, «լիասատ զրքակախները»՝ Գերմանիայից, «զգեստներ, որախօսութիւն, քրիստոնութիւն»՝ Ֆրանսիայից, «աշխատելու ընդունակութիւնը և մի քիչ էտոիզմ»՝ Անգլիայից, «համբերողութիւնը» հրէաներից, «մի քիչ էլ ճօլե ֆանտասիա»՝ Իտալիայից, իսկ իր արեան երկաթը առատացնելու համար՝ Շվեյցարից ձեռքիացից ձեռք է բերել պողպատ, որովհետոն սա «ամրացնում է կարողութիւնը»:

Իբսէն կծու և անիմայ կերպով հետևում է նաև իր հայրենակիցների չօվինիզմը, նեղ ազգասիրական հակումները, մերկացնում է այն անձնավառությունը, այն ըմբռու ինքնաբաւականութիւնը, որ արտաքուստ ինչքան փայլուն է և յօխորատացող, ներքուստ նոյնքան դատարկ է, անբովանդակ, առողջ կենսունակութիւնից զուրկ և որը, ինչպէս յայտնի է, առաւելաբայց փարբեր ազգերի յատկանին է կազմում։ Այսպիսի առանձնայատկութիւններով օժտուած մի ժողովաւրդ, բնական հետեւողութեամբ, ազգերի տնտեսական և քաղաքական մրցման այս վայրագ դարում տէտք է ընկճուի, կուլ զնայ։ Այս հեռանկարը նա խորիմաստ կերպով մատնանիշ է անում Պէր Գիւնտի հարստութիւնը կողովտել տալով, իսկ կողովտողներն են՝ մի անգլիացի, գերմանացի, փրանսիացի և շվեյցարի։

«Պէր Գիւնտը», ըստ Իբսէնի դիտողութեան, նորվէդական քնաւորութեան հայելին է, այսուեղ արտափայլում է իր հայրենակիցների գէմքը, էութիւնը. իսկ «Բրանդի» մէջ հեղինակը ձգտում էր, եթէ ոչ ամբողջովին՝ գէթ մասամբ, ցոյց առաջ թէ ինչպէս պէտք է լինեն նրանք։ Սակայն իբսէն ինչպէս միշտ, այնպէս էլ այս երկու զրամաներում աւելի շուտ ժիւտող, բացասող, քայլայող է՝ քան թէ առաջնորդող, ստեղծող, վերանորոգող, Առևզուածների ամենաբարդ հանգոյցների առաջ նա ընդունակ է անդուգական նկարագրութեամբ և հանճարեղ վերլուծումով զբաղուել, այն ինչ իրկարար վճիռներ նա հաղուածիւացի գէպքերումն է միայն արձակում։

Այս առասպելախառն դրամայից յետոյ իբսէն 1869-ին, Սաք-

սօնիայի մայրաքաղաքում, զրեց իր երկրորդ յայտնի կատակերպութիւնը—«Երիտասարդութեան միուրիւնը» («De Unges Forbund»), որի նիւթը ժամանակակից բնաւորութիւն էր կրում: Իբրէնի սիմբոլիկական ոճը այստեղ փոխում է բէալիգմի, այլ արանութիւնը՝ իրական նկարագրութեան:

Երիտասարդ փաստաբան Շտայնհօֆ մի փառասէր և փայլուն դիրք սիրող անձնաւորութիւն է. նրա նպատակն է մի օր «պարլամէնտի անդամ կամ մինիստր զառնալ և մի անուանի ու հարուստ աղջկայ հետ ամուսնանալ»: Ահա մօտ երկու ամիս է, որ նա հաստատուել է հարաւային նորվէդիայի առեւտրական քաղաքներից մէկում: Այսուեղ նա շուտով աչքի է ընկնում իր բեւ «տօնային ճառախոս»: Քաղաքի յայտնի կալուածատէր հրէայ Մօնզէնի կարծիքով՝ Շտայնհօֆն ունի ոչ միայն խօսելու ընդունակութիւն, այլև «հասարակական քարեկեցութեան համար բարախող մի սիրտ»: Թէ Մօնզէնի այս կարծիքը որքան ճիշտ է սա շուտով կ'երեւայ: Սակայն բանը նրանումն է, որ հրէայ կալուածատէրը նորենի փաստաբանին լաւ ընդունելութիւն է ցոյց տալիս՝ մանաւանդ որ նա աղատամիտ էր և առհասարակ գէպի երիտասարդ կուսակցութիւնն էր հակուած: այն ինչ քաղաքի միւս ազգեցիկ անձնաւորութիւնը՝ սենեկապետ և գործարանատէր Մալսրէրդ պահպանողական է և իր զիրքով Մօնզէնից ուժեղ Շտայնհօֆ՝ Մալսրէրդի հովանաւորութիւնը փաստակելու համար՝ երկու անդամ այցելութեան է զնում նրա մօտ, բայց չէ ընդունւում: Այս անպատճութեան համար «տօնային ճառախօսը» վճռում է անպատճառ վրէժիմսդիր լինել Մալսրէրդից: Եւ առիթը շուտով է ներկայանում»:

Մայիսի տասնեւոթն է՝ նորվէգական սահմանադրութեան տարեդարձի օրը, ժողովրդի խուռն բազմութիւն հաւաքուած՝ պատգամաւոր և կապալառու Դրանսսֆէլզի գլեկալարութեամբ տօնում է այդ օրը և ի միջի այլոց ոգեսրութիւն ցոյցեր է անում «տեղական թագաւորին»՝ Մալսրէրդին: Շտայնհօֆ, որ վաղուց խօսք էր ինսդրել, իսկոյն մէջ է ընկնում սպառնալով՝ «այս սենեկապետը թող ինձ այժմ ճանաչի» և սկսում է մի որոտալից ճառ:

—Լսեցէք ինձ, ազատութեան այս հանդիսաւոր օրով ողեւորուող եղբայրներ... Ես մի օտարական եմ ձեր շրջանում, բայց երդւում եմ՝ ամբողջ սրտովս մասնակից եմ ձեր ուրախութեան և տրտմութեան, ձեր կոռուին և յաղթանակին: Եթէ ես ոյժ ունենայի...

—Ոյժը ձեր ձեռին է, պարոն փաստաբան—նկատում է տպարանատէր Բօլման:

—Ոչ մի ընդհատում. խօսքը ձեզ չէ պատկանում—վրայ է բերում հանդէսի նախագահ Դրանսֆէլդ:

—Իսկ ձեզ աւելի քիչ է պատկանում, նկատում է ճառախօսը: Հանդէսի մասնաժողովը, շարունակում է նա, ևս համարում եմ գոյութիւնից զուրկ և աղատութեան օրը աղտոտութիւն եմ յացարարում (երիտասարդ ունկնդիրները աղաղակում են՝ կեցցէ աղատութիւն): Կամենում են խօսքի աղատութիւնը սահմանափակել, լսում էք, կամենում են ձեր բերանը փակել: Հեռու այսպիսի բռնակալութիւն. մի լիզուակապ ամբոխի առաջ ևս չեմ կամենում խօսել, ևս ուզում եմ տղատ, համարձակ խօսել, և դուք ել պէտք է այգապէս վարաւէք (ժողովուրդը ոգեսրուած աղաղակում է՝ կեցցէ): Սյս գատարկ, անսպառուղ տօնակատարութիւններին պէտք է վերջ առալ. մեր մայիսեան հանդէսից պէտք է այսուհետեւ մի կենդանի և ոսկեղին պառզ արգասաւորուի: Մայիս, չի որ սա բողբոջելու ժամանակաշրջանն է, տարուայ թարմ և կենսատու ամիսը... Ժողովրդի մէջ ևս լսւ յատկութիւնների հանդիպեցի, բայց տեսայ նաև ապականութեան ոգին, որ հետզհետէ կապարտանում և ճնշում է նրան: Այն, ևս հանդիպեցի երիտասարդ, ջերմ և վրանելի սրտերի, բայց միտամանակ և այնպիսիների, որոնք իրանց դռները փակեցին (սենեկապետի աղջիկը՝ Ազնես—«Աստուած իմ»). սենեկապետ Մալսբերգ—«Բնչ է ուզում զրանով ասել»): Այն, եղբայրներ, այսանդ գոյութիւն ունի մի ոյժ, օգահար օրերից մնացած մի ուրաւական, որ լոյսի և շարժման փոխարէն՝ ընդարձակացած խաւար է միայն սիսում. թող գետին մանի այս ուրաւականը (Ժողովուրդն աղաղակում է՝ կեցցէ, կեցցէ) ... Եթէ մի ուրիշը չէ կամենում վիշտապին բնաջինջ անել, այն ժամանակ ևս կ'անեմ: Բայց մենք պէտք է միանանք... մեզ երիտասարդներին է պատկանում ժամանակը, սառկայն մենք ել ժամանակին ենք պատկանում: Մեր իրաւունքը մեր պարտականութիւնն է. ասպարէզ զործունէութեան համար, ասպարէզ ամեն մի ուժեղ կամքի համար: Լսեցէք, հիմնենք մի միութիւն. փողի տոպրակը դադարել է այսաել իշխելուց... հէնց այս բռպէին հիմնենք միութիւն, երիտասարդութեան միութիւն...»: Ամբոխը մեծագորդ կեցցէներսկ ձայնակցում է օրուայ հերոսին և ձեռների վրայ բարձրացրած՝ ասացնորդում է գէպի մօտակայ դահլիճը «երիտասարդութեան միութիւնը» գլուխ բերելու:

Անկասկած է, Շտայնհօֆի շանթալից խօսքերը սենեկապետ Մալսբերգի զէմն էին ուզզուած. բայց վերջինս մի տարօրինակ թիւրիմացութեամբ չէ հասկանում այս իրազութիւնը և

ճառախօսի յարձակումները իր հակառակորդ Մօնղէնի հասցէին է ընդունում: Եւ ահա ճառախօսը հետևեալ օրը հրաւէր է ստանում սենեկապետին այցելելու: Շտայնհօֆ, առանց տատանուելու, ընդունում է խաւարածին ռուրուականի» հրաւէրը: Նա, որ մի օր առաջ Մօնղէնովն էր ոգեսրուում՝ այժմ ցենիկական կերպարանափոխութեամբ՝ ահա թէ ինչ է նկատում—«երբ ևս Մօնղէնի հարստութիւնն եմ երեսակայում, այն ժամանակ զաթւում է ինձ զանազան կերպուա ապահովագրերի և բանկային հաստ թղթերի մի ծրաբ: Այն ինչ այստեղ (խօսքը Մալսրէրդի հարստութեան մասին է), այստեղ զամի մետաղ է, վայլուն արծաթ: և մարդը հէնց ինքն էլ է այդպէս: Յիշաւի, ինչ հրաշալի ծերուել է այս սենեկապետը»:

Բայց սենակապետը երբ տեղեկանում է թէ բանն ինչումն է—որ ճառը ոչ թէ իր հակառակորդի, այլ հէնց իր դէմն է ուղղուած—այն ժամանակ երեսը չուռ է աալիս Շտայնհօֆից: Վերջինս ինչպէս լսիրշ ցինիդմով տատանուում, քամէլէօնի նման փոփոխուում է Մալսրէրդի և Մօնղէնի վերաբերութեամբ, այնպէս էլ տատանուում է աւաշջինի տղջկայ՝ Ազնէսի և երկրորդի՝ Հէրթայի նկատմամբ, չը գիտէ ում ընտրէ հարսնացու, մըկին թէ միւսին: Շատայնհօֆ 117 ձայնով արդէն պատղամաւոր է ընտրուած, բայց իր ընտրութիւնն օրինական դարձնելու համար նա պէտք է անշարժ կալուած ունենայ. իսկ սա հնարաւոր էր միայն հարստութեամբ կամ ուրիշ խօսքով՝ այս գէպքում միայն հարուստ աղջկայ հետ ամուսնանալով: Նորընախիր պատգամաւորի հարսնացուներն էին՝ Ազնէսը և Հէրթան, որոնք Շտայնհօֆին ճանաչնելուց յետոյ ձևորնթափ են լինում նրանից և ուրիշների հետ են նշանաւում: Շտայնհօֆ յուսահատուած վճռում է մինչև իսկ «հիւրանոյշատիրուհի», այրի Շունդհալմի հետ «ըրտի և դլիսի դաշն կապել»: բայց մի անակնկալ թիւրիւմացութեամբ սա էլ է ձեռքից թռչում:

Խայտառակութեամն և անարդանքի տիղմի մէջ թաթախուած՝ Շտայնհօֆին մնում էր միայն հեռանալ քաղաքից: «Խոսքարան»—աղաղակում է սենեկապետը նրա յետեից: Նա ուրախ է, որ «այժմ վերջապէս օզը մաքրուեց: Փառք Աստուծոյ... քամի բարձրացնող Շտայնհօֆից բոլորալին աղատուեցինք»:

Շատ ճիշտ է նկատում Գէտրգ Բրանդէս, որ «տօնային ճառախօսը» Փրազների գարաշրջանում զառնում է «Փրազաբանների թագաւոր»: Ինչպէս տեսանք Փրազների չնորհւ էր, որ նա ելկարականացրեց մի ահազին ամրուս, զրաւեց, յափշտակեց գիւրաբորբոք երիտասարդների մի ամբողջ խումբ: Շտայնհօֆ անշուշտ ուժեղ էր և իր հերոսական սխրագործու-

Թիւնների շրջանում եղան վայրկեաններ՝ երբ նա իր շրջապատողներից ամենակարողն էր, երբ նրա բոլոր հակառակորդներն անզօր էին նրա գէմ: Բայց սա շատ վաղանցուկ էր. նա իր փոփոխական, անհաստատ բնաւորութեամբ շուտով կորցնում է իր գիրքը: Դոկտօր մէլգէր շատ լաւ է բնորոշում նրան—«նա մի թափթփուկ է, հատ ու կտօրանք»: Ես ճանաչում եմ նրան երեխայութիւնից. տանը կոպիտ էր, գալոցում՝ իգէալական ձգտումներով ոգեւորուող. միտքը, բնաւորութիւնը, կամքը—ամեն ինչ տարբեր ուղղութեամբ: Այս բոլորի հետեանքը ինչ պէտք է լինէր, եթէ ոչ նրա ամբողջ անհատականութեան պառակառումը»: Բայց Շտայնհօֆի ոչ միայն փոփոխական է, այլ և ստոր, անպատճառ. նրա օպօրտիւնիզմը ոչ մի անկարելիութիւն չէ ճանաչում: Ոմանքը Շտայնհօֆի մէջ տեսնում են բնաւորութեան ինչ որ միամիտ, պարզասիրտ մի զիծ. բայց սա այն տեսակ պարզասրտութիւն է, որի իսկական անունն է՝ ցինիզմ: Ինչպէս նա երեկուայ «ուրուականին» այսօր «հրաշալի մարդ» է դարձնում, այնպէս ել երեկուայ բարեկամին՝ Մօնդէնին այսօր համարում է «փողատոպլակ», ուժա, «ստորաքարշ որդ» և այլն. երէկ Մալսբէրգը խաւարի և մթութեան ողին էր, իսկ այսօր Շտայնհօֆի նրա ընտանեկան շրջանում իրան այնքան բախտաւոր է զգում, որ կարծես «գարնանային անձրեւով զուգանալիս լինի»: Երբ Մալսբէրգից նրա աղջկայ ձեռքն է խընդում և չէ ստանում՝ նա նոյն «պարզասրտութեամբ» սպառնում է—«Եթէ չը տաք, ձեղ կը խայտառակեմ թերթերում»:

Յարմարուելու ընդունակութեամբ, փոփոխականաւթեամբ, բնաւորութեան ստորութեամբ, մի խօսքով լալիրշ ցինիզմով՝ Շտայնհօֆին նման է նաև տպարանատէր և քաղաքական թերթի հրատարակիչ Բոլման, որ շարունակ «տեղական պայմաններից» է խօսում: Այս «տեղական պայմաններին» հմուտ կերպով վարժուած նա զնում է շարունակ այն հոսանքով, որտեղից քամին է փչում, շապկի նման փոխում է իր թերթի ուղղութիւնը, որովհետեւ այս թերթը իր «միակ կալի է»: Երբ նա զալիս է Շտայնհօֆի մօտ իր թերթի համար «Երիտասարդութեան միութեան» մտուն խոստացուած յօդուածը խնդրելու և նկատում է, որ երեկուայ ճառախօսը այսօր ուրիշ տրամադրութեան է, որովհետեւ «գործը ուրիշ ընթացք է սոտացել»—վախուկու աղաչանքով գանգատում է—«պարզն փաստաբան, գիտէք որ իմ ունեցած չոր հացի կտօրը ձեռքիցս խլում էք»: Այնուհետև նա անամօթ «պարզասրտութեամբ» շարունակում է—«ձմուը, քանի որ դուք չէիք եկել, թերթիս գործերը լաւ էին զնում: Ես ունէի մի յայտնի սկզբունք և հետեւում էի նրան.

ևս մտածում էի—մեծ հասարակութիւնն է, որ պահպանում է թերթը, բայց մեծ հասարակութիւնը վատ հասարակութիւնն է և վատ հասարակութիւնը կամննում է մի վատ թերթ ունենալ. և այս սկզբունքի համեմատ էլ կառավարում էի թերթը: Ամսն ինչ կարգին ընթացք էր ստացել. ստիայն յանկարծ գուք երեսն եկաք ու նոր դաղափարներ բերիք մեր կողմերը և որովհետեւ իմ թերթն էլ նոր գոյն ստացաւ՝ այդ պատճառով Դրանսֆէլդի բարեկամներին կորցրի, իսկ նրանք, որոնք այժմ մնացել են՝ վատ են վճարում: —«Սակայն թերթը լաւացաւ»—վրայ է բերում Շաայնհօֆ. «Լու բերքով ես չեմ կարող ապրել»—պատասխանում է ցինիկ գաղեթաջին: Շաայնհօֆի հրաւիրուելը սենեկապետի մօտ՝ նա բացատրում է վերջինիս վախկոտութեամբ և խորհուրդ է տալիս վաստաբնին «օգաուել այս վախկոտութիւնից»—Եթէ նա երկիւոց է կրում այն բանից, ինչ որ գուք էք կամենում անել, այն ժամանակ նա անշուշտ կը վախենայ նաև այն բանից, ինչ որ ես տպել եմ ուղում. սրանից ել ես կ'օգտուեմ:

Կատակերգութեան միւս գէմքերից ուշադրութեան արժանի է Մալսբէրգի հարսը՝ Սէլման, որ նախկին գերասանունի էր, բայց ամուսնալով սենեկապետի որդու՝ էրիխսի հետ՝ դառնում է մի «արկնիլք»: Սակայն ինքնուրոյնութեան ն կանացի անհատականութեան երակը դեռ չարժուն էր նրա մէջ. նկատելով իր ամուսնու ստոր արարքները՝ նա սպառնում է բաժանուել նրանից գերադասելով «փողոցում խաղալով և երգելով ապրել»: Իր այս առանձնայատկութեամբ Սէլման որոշ չափով Նօրային է յիշեցնում: Հետաքրքիր են նաև գօկտոր Ֆէլդէր և Դանիէլ Հայրէ, առանձնապէս կալուածատէր Մօնզէն, ոսկէ հորթի այս իսկական երկրպագուն, որ խարգախութեամբ և ճարպիկ մեկենայութիւններով աղատուում է մնանկութիւնից և հարիւր հազարներ դիզում:

«Եիրոյ կատակերգութեան» մէջ, ինչպէս տեսանք, իբսէն հասարակական կեանքի զանազան բացատրական գէպքերի ծրնունդը, անուղղակի կերպով, շրջապատով հանդամանքներովն էր պայմանաւորում՝ սօցիալական անտեսական դրսւթնամբ: «Երիտասարդութեան միութեան» մէջ նա դարձեալ իր մատը այս հեռաւոր և կենտրոնական արմատի վրայ է զնում. բայց ներկայ գէպքում առանձնապէս կանգ է առնում քաղաքական կուսակցութիւնների վրայ: «Քաղաքականութիւնը մի անմաքուր արունստ է»—նկատում է նա մի տեղ. իսկ այս վերջին կատակերգութեան մէջ նա չէ զլանում անխնայ կերպով քօղագուրկ անել այս «անմաքար արունստի» երեսը: Նա մտրակում է աջ

և ձախ, թէ պահպանողականներին և թէ աղատամիտներին, բայց այն տարբերութեամբ, որ վերջիններին աւելի խիստ կերպով է հարուածում: Այս հանդամանքն էր պատճառը, որ «Երիտասարդութեան միութիւնը» ժամանակին մեծ աղմուկ հանեց Նորվէզիայի ազատամիտ շրջաններում: հեղինակը մամուլի կողմից կծու յարձակումների ևնթարկուեց. լուրջ ընդհարումներ ունեցաւ մինչի իսկ Բեօրնսօնի հետ, որի աղջիկը ամուսնացած էր իր միակ սրգի Զիգուրդի հետ: Բայց այս ընդդիմազրութիւնը և նեղսիրա յարձակումները ժամանակաւոր էին. 1891 թուին՝ երբ իրսէն վերջնականապէս վերադարձաւ Նորվէզիա՝ Քրիտիանիայում նրա ներկայութեամբ տեղի ունեցաւ «Երիտասարդութեան միութեան» հարիւրերորդ ներկայացումը: Հեղինակը այս առիթով ոգիորուած ցոյցիրի առարկայ դարձաւ:

## VII

1873-ին լրյու տեսաւ Իրսէնի նշանաւոր դրամաներից մէկը—«Կայու եւ Գալիլիային» («Kejser og Galilæer»), որ իր ծաւալի խոշորութեամբ հեղինակի ամենամեծ աշխատութիւնն է՝ բաղկացած է երկու մասից և տասը գործողութիւնից:

Այս մեծածաւալ դրամայի զլիաւոր հերոսը հոռմէական կայար Յուլիանոս ուրացողն է, որի նկատմամբ իրսէն թէն ընդհանրապէս հաւատարիմ է մնում պատմութեանը, այնուամենայնիւ երեխնակի թոյլ է տալիս իրսն, եթէ չասենք բըռնազգօսիկ, գոնէ աղատ վերաբերմունք: Ընարելով Յուլիանոսի նման մի դէմք իրրեն նիւթ՝ հեղինակը նորից լայն ասպարէզ է գտնում իր սիրած պրօբէմները—մի կողմից ազատութեան և անհրաժեշտութեան, անհատի և միջավայրի, միւս կողմից քրիստոնէութեան և հեթանոսութեան մէջ եղած յարաբերութիւնը—լուրջ և նրամիտ խորհրդածութեան ենթարկելու:

Յուլիանոսը մատաղ հասակից սկսած բարեպաշտ քրիստոնէական ողով էր մնուած. կապաղովկիայում իսկական վանական կրթութիւն էր ձեռք բերել, այնպէս որ նոյն իսկ գեռահաս տարիքում նա ազատել էր իր ընկեր Ագաթօնին «հեթանոսութեան խաւարից և առաջնորդել դէպի քրիստոնէական լոյսը»: Իբրև բարեպաշտ քրիստոնեայ՝ նա յայտնի իմաստամէր ճարտասան Լիբրիանոսին համարում էր Գալիլիայու թշնամիներից «ամենավտանգաւորը». նա դէմ էր նաև միստիկականութեամբ համակուած և զանազան կախարդանքներով պարապող հեթանոս սպիրիտիստ Մաքսիմոսին.—«Եթէ ևս կայսերական

իշխանութիւն ունենայի», ասում է նա իր ընկեր Ագաթօնին։ «այդ հեթանոսի գլուխը արծաթէ սկուտեղի վրայ զրած քեզ ընծայ կ'ուղարկէի»։

Բայց միւս կողմից Յուլիանոսը խոստովանում է, որ չէ կարող «պալատական օդը» տանել և կ. Պօլիսը նա համարում էր «ապականութեան և մոլութիւնների Բաբելոն»։ Նրա ջերմ տենչանքն էր ազատուել մայրաքաղաքի ճնշող մթնոլորտից և առժամանակ կասիկական կրթութեան հայրենիքում՝ Յունաստանում ապրել։ «Ես ներքուստ իմաստութեան բարեկամ եմ» —այսպէս է արտայայտում երիտասարդ իշխանը իր հողեկան ծարաւը։ Պատմութիւնից արդէն յայտնի է, որ Յուլիանոսը մանուկ ժամանակ՝ ներքինի Մարդոնիուսից ձեռք էր բերել կլասիկական կրթութեան և հին փիլիսոփայութեան առաջին ճաշակը։ Այս սկզբնական սաղմերը մի կողմից և խմաստասէր Լիբանիոսին հանդիպելը միւս կողմից՝ տւելի և աւելի ևն արթնայնում նրա մէջ մայրաքաղաքից հետանալու և Աթէնքում իմաստափրութեամբ պարապելու ցանկութիւնը։ Լիբանոսը պալատը և եկեղեցին համարում է «մի կրկնակի վանդակ», իսկ Յուլիանոսին՝ այս վանդակի «բանտարկեալը» — «այն ինչ իմ բուերը», ասում է հեթանոս իմաստասէրը, «չեն կարող Բիւզանդիայի եկեղեցական լոյսին դիմանալ»։ «Ասմ ինձ, սակայն, ինչ ևս փնտում դու Աթէնքում» — վրայ է բերում հարցասէր Յուլիանոսը. — «Ի՞նչ էր փնտում Պոնտոս Պիղատոսը» — պատահանում է յոյն խմաստասիրութեան աստղը։

— Ճշմարտութիւն — սա է զրաւում Յուլիանոսին։

«Դուք, գալիլիացիներդ ճշմարտութիւնը հալածել էք» — Նկատում է Լիբանիոսը։

Այս յանդիմանախատն նախատինքի առաջ Յուլիանոսը մի ցանկութեամբ է միայն պապակւում — ճշմարտութեան ճանապարհով մի նոր Պօղոս առաքեալ դառնալ «Աստուածային գործի համար»։

Լիբանիոսը իր խօսակցութեան շարունակութեան ընթացքում Յուլիանոսին անուանում է «մտքի և հոգու Աքիլլէս»։ Այս դարձուածքը Յուլիանոսին ակամայ յիշեցնում է իր մօր երազը — մայրը Յուլիանոսի ճնուելուց առաջ երազում մի Աքիլլէս էր ծնել։

Բայց Լիբանիոսը աւելի հեռու է դնում — «Կայ մի մեծ, հրաշալի աշխարհ, որի առաջ դուք, զալիլիացիներդ, կոյր էք... սակայն ևս ճանաչում եմ մէկին, որ այս մեծ, լուսաղայծառթագաւորութեան մէջ իշխան կարող էր լինել»։

—«Այն, երանութեան կորուստով միայն»—նկատում է Յուլիանոսը:

—Ի՞նչ է երանութիւնը՝ եթէ ոչ վերստին միութիւնը սկզբնականի հետ»—պատասխանում է հեթանոս իմաստասէրը:

Յուլիանոսի եղբայրը՝ Գալլոս խորհուրդ է տալիս նրան իր հետ միացած վրէժինդիր լինել Կոստանդին կայսրից—օծիրանի հազած մարդասպանից», որովհետև վառաւէր և արինսուրչու կայսրը իրանց համարեա ամբողջ ցեղը բնաշինջ էր արել: Յուլիանոսը հրաժարում է այս մաքից, որովհետև մի կողմից դա իրան հակաքրիստոնէական էր թւում, միւս կողմից՝ նա համոզուած էր, որ ինքը աւելի մեծ գործի համար է ընտրուած: Վերջը հանդամանքներն այնպէս են դասաւորւում, որ Գալլոսը կայսերական չնորհների արժանացած՝ իրեն ցէզար ուղարկուում է Ասիս՝ պարսկական պատերազմները վարելու: Իսկ Յուլիանոսը ինդրում է կայսրից թոյլ տալ իրան Պէրգամն դնալ, ուր այդ ժամանակ վարդապետում էր էլոյզիոսը:

—«Դու հեթանոսների մէջ»—զարմացած նկատում է կայսրը:

—«Ես կամենում եմ սովորել՝ առիւծների հետ կոսւելու համար—պատասխանում է «մաքի և հոգու Սքիլլէսը»:

Յուլիանոսի ինդիրքը կատարուում է, նա գնում է Պէրգամն, որտեղից, առանց կայսրին իմաց տալու, շուտով անցնում է գէսլի՝ նիկօմիդիա, այնուհետև գէպի իր իսկական նըպատակակէտը՝ Աթէնք:

Իմաստութեան և ճարտասանութեան հայրենիքում Յուլիանոսը հանդիսաւոր ընդունելութիւն է դանում: Լիրանիոսը զրկախառնուում է նրա հետ և անուանում է իր «մեծ եղբայր»: Այսաւել նա շուտով լարենկամական մտերիմ կապեր է հաստատում Գրիգոր Նավանդացու և Բաղրիմոս կեսարացու հետ:

Աթէնքում նա մի կողմից հետզետէ հեթանոսական որամադրութեամբ է համակարուում, իսկ միւս կողմից լիրանիոսին տւելի մօտիկից ճանաչելով՝ հիասթափուում է նրանից: Իր ժամանակուայ ամմնամնել իմաստասէրի վարդապետութեան և նրա սեփական կեանքի մէջ նա տեսնում է մի խոշոր անդունդ: Նա չէ կարող հաշտուել այն իրողութեան հետ, որ ճշմարտութեան անունով խօսող վիլիսոփան յանկարծ քծնում, շողոքորթում է կայսրին—«միթէ նա չէր շողոքորթում նաև ինձ՝ առաջին անգամ Պօլսում հանդիպելիս»: Նա համարում է մի մեծ ծաղր, հեգնութիւն, որ Սոկրատի և Պլատոնի ամբիոնը Լիրանիոսի պէս մարդկանց ձեռքն է ընկել: Մի խօսքով՝ նա դալիս է այն եղ-

բակացութեան, որ «Լիբանիոսի վարդապետութիւնը մեծ է, իսկ ինքը Լիբանիոսը մեծ մարդ չէ»:

Բայց Յուլիանոսը հետզհեաէ հիասթափւում է նաև քրիստոնէութիւնից: Չորրորդ դարու քրիստոնէութիւնը, յիրավի, մի շատ խառնակ և տխուր պատկեր էր ներկայացնում: Կ. Պօլսում ուսումնածարաւ իշխանը մօտիկից արդէն ականատես էր եղել պալատական և ուրիշ բարձր շրջաններում ափրող քրիստոնէութեանը». Նրան շատ լաւ ծանօթ էր նաև եկեղեցու ներկայացուցիչների՝ հոգեորականութեան և նրանց հետեւղ հօտիք քրիստոնէութիւնը, որ զանազան հերձուտծողական պառակտումների և դաւանաբանական անպէտք մարդառումների շուրջն էր միայն պատւում: Եւ երբ հազիֆիոսի քոյրը՝ բարեպաշտ Մակրինան մի նամակով յոյս է տածում, որ Յուլիանոս կը փրկէ քրիստոնէութիւնը—այն ժամանակ վերջինն Դիօկինէսի լուպտեր է պահանջում մի իսկական քրիստոնեայ սրունելու համար և լքուած սրաով հարցնում է.—«Ո՞ւր է քրիստոնէութիւնը»—«Սուրբ մարդկանց զրուածներում»—պատասխանում է Բազիլիոսը:—«Միշտ մի և նոյն յուսահատեցնող պատասխանը», շարունակում է Յուլիանոսը: «Գրքեր և միշտ գրքեր: Գնում եմ Լիբանիոսի մօտ՝ լսում եմ—գրքեր, գրքեր. ձեզ մօտ եմ զալիս՝—զրքեր, զրքեր, զրքեր: Հայի փոխարէն քարեր: Ես զրքերի պէտք չունեմ. կեանեի քազցն է ինձ ասնջում, հոգու հետ անմիջական հազորդակցութիւնը: Միթէ Սաւուղը զրքի միջով դարձաւ մարդարէ. միթէ լուսոյ ճառագայթը չէր, որ նրան հրեաց, մի տեսիլ, մի ձայն...»:

Յուլիանոս Աթէնքում չը գտաւ «առիւծը» և Սաւուղի նման խաւարում խարխափելիս՝ մի լոյս, մի տեսիլ, մի ձայն է որոնում: Այս միստիկական տրամադրութեան մէջ նվ կարող էր նրան աւելի օգտակար լինել՝ եթէ ոչ սպիրիտիստ Մաքսիմոսը, որ այդ ժամանակ Եփեսոսումն էր դանուում:

Յուլիանոսը հեռանում է Աթէնքից տանելով իր հետ միայն մի կարեր գտու. այդ այն է, որ «հին զեղեցկութիւնը այլ եւս այնեան զեղեցիկ չէ եւ նու եւմարտութիւնը այլ եւս այնեան եւելարիս չեն: «Հին զեղեցկութիւնը» հեթանոսութիւնն է, իսկ «նոր ճշմարտութիւնը» քրիստոնէութիւնը իր ընկերներից և բարեկամներից բաժանուելուց առաջ՝ նա բացարձակապէս յայտարարում է—«գուշ թերահաւաներ էք... Միշտ երկու ճառնապարհ կայ ձեր առաջ՝ գպրոցը և եկեղեցին»:—«Սական գիտես քո ճանապարհը ուր է վերջանալու»—հարցնում է Գրիգոր Նապիսանցացին:—«Ենտեղ, ուր ճանապարհը և նպատակը միանում են»—պատասխանում է սրամիա Յուլիանոս: Նա զնում

է եփրատի ափերին, թաւուտ անտառներում հոգու կայսրութիւնը՝ քարոզելու:

—«Այս իշխանական պատոնին վասնգաւոր է գիտութեան համար»—նկատում է Լիբանիոսը հրաժեշտի ժամանակ:

—«Եա շատ աւելի վատնգաւոր է, քան թէ կարծում էք»  
—վրայ է բերում Բաղիկիոսը:

Մաքսիմոսի օգնութեամբ՝ Յուլիանոսը մի ձայն է լսում լոյսի միջից, որը յայտնում է թէ նա մի նոր թագաւորութիւն պէտք է հիմնի:

—«Ինչ ճանապարհով», հարցնում է Յուլիանոս:

—«Աղատութեան ճանապարհով»—պատասխանում է ձայնը:

—«Ասմ ինձ, որն է աղատութեան ճանապարհը»:

—«Անհրաժեշտութեան ճանապարհը»:

Իսկ երբ Յուլիանոսը հարցնում է թէ՝ ինչ ոյժով ինքը պէտք է հիմնի նոր թագաւորութիւնը—ձայնը պատասխանում է.

—«Եռամբ ոյժով»:

—Ի՞նչ պէտք է կամենա՞մ,—հարցնում է Յուլիանոսը:

—«Եյս, ինչ որ պէտք է կամենա՞ս»,—պատասխանում է ձայնը:

Ստկան Յուլիանոսը այս հակասական պատգամներից ուշինչ չէ հասկանում և իրան զդում է «Պրայի և մութի մէջ»:  
Այն ժամանակ Մաքսիմոսը հետեւեալ բացատրութիւնն է տալիս. «Երեք թագաւորութիւններ կան: Առաջինն այն է, որ հիմնուած է ճանաչողութեան ծառի վրայ. երկրորդը՝ Պրիստոսի խաչափայտի վրայ. իսկ երրորդը խորհրդաւորութեան և գաղտնիքների թագաւորութիւնն է, որը հաւասարապէս թէ ճանաչողութեան ծառի և թէ խաչափայտի վրայ է հիմնուած, որովհետեւ երկուն էլ ատում է և սիրում, որավիճետն նրա կեանքի աղբիւրը և՛ Եղեմումն է և՛ Գողգոթայում»:

Սյունեհու տեղի է ունենում ամենախորհրդաւոր երեւոյթը՝ Յուլիանոսը տեսնում է «անհրաժեշտութեան զայրոյթի երեք անկիւնաքարերին»—կայէնին, Յուղային և ինքն իրան թէ ինչ է նշանակում այս երրորդութիւնը—սա մննք շուտով կը բացատրնէք:

Յուլիանոսը դեռ այս խորհրդաւոր հոգիներովն էր զբաղուած՝ երբ յանկարծ մայրաքաղաքից կայսերական պատուիրակը լուր է բերում, որ Փալլոսը մեռել է և Յուլիանոսը ցէզար է յայտարարուած: Նա թէն շատ լաւ տեղեակ էր, որ իր եղբայրը կայսրի հրամանովն է սպանուած և չը նայելով իր բարեկամների թախանճանքներին—հրաժարուել իր եղբօր արիւնով

Ներկուած ծիրանին կրելուց—այսուամենայնիւ ընդունում ցէզարական տիտղոսը, որովհետև զրա հետ կապուած էր նաև կայսեր գեղեցիկ քրոջ՝ Հէլէնայի հետ ամուսնանալու հարցը։ Յուլիանոսը սիրում էր Հէլէնային, այն ինչ խորամանկ գեղեցիկուհին միայն փառասիրական ձգտումներից դրդուած՝ ամուսնանում է նորընտիր ցէզարի հետ։ Նրա սիրաը պատկանում էր Գալլոսին և նոյն իսկ ուրիշներին, բայց ոչ Յուլիանոսին։

Ցէղար դառնալուց յետոյ Յուլիանոսը փառաւոր յաղթութիւններ է տանում Ալէմանների և Ֆրանկների դէմ։ Սակայն Յուլիանոսի յաջողութիւնները չարժում են կայսրի նախանձը։ այնպէս որ վերջինս իրեն չնորհակալական վարձատրութիւն թունաւորուած պատշներ է ուղարկում նրան։ Այս թունաւորուած պատշները պատահարար Հէլէնան է վայելում, իսկ Յուլիանոսն ազատում է Հէլէնան մահուան անկողնում զառանցելիս՝ մատնում է իր սրտի գաղանիքները։ «Բարեպաշտ» կնոջ այս վարմունքը մի կողմից և «քրիստոնեայ» կայսեր խարդաւանանքը միւս կողմից՝ ասստիկ յուղում, զայրացնում են Յուլիանոսին։ այնպէս որ վերջինս իր հաւատարիմ զօրքի զլուխն անցած՝ արշաւում է դէպի Բիւզանդիան Բայց ճանապարհին արդէն տեղեկանում է, որ ապերախտ կայսրն արդէն մեռել է։

Այդպիսով Յուլիանոսը բարձրանում է կայսերական գահը։ Ակզբում նա իրան յայտարարում է կրօնական համբերողութեան և հաւատարի անկախութեան կողմնակից։ միւս կողմից հրաժարուում է պալատական անտեղի չքեղութիւններից և աւելորդ զեղիսութիւններից։ Բայց հետզհետէ սկսում է թշնամաբար վերաբերուել դէպի քրիստոնեաները և վերջապէս նոյն իսկ հալածանքի ենթարկել։ Նա հրաժարուելով Գալիլիացուց՝ վերականգնեցնում է հելլենական աստուածների պաշտամունքը—Ապօլօնի և Վենուսի անունով տաճարներ է հիմնել տալիս։ Բայց որքան սաստկանում է կայսրի հակաբրիստոնէական ուղղութիւնը՝ այնքան տւելի ամրապնդուում է քրիստոնեաների մէջ միւսուն ողին և նահատակութեան տեսչանքը։ Իր նախինն բարեկամները՝ Գրիգոր Նազիանզային և Ագաթօն քրիստոնեաների մէջ ներանների զլուխն անցած ընդգիմազրում են «Ուրացողին», աւերում են նրա հիմնած կուսունները։ Մի անգամ երբ Յուլիանոսը իբրև քահանայապետ պատրաստուում էր զոհ անել Ապօլօնի տաճարում՝ յանկարծ տաճարը կործանում է։ Այս անախորժ երեսյթը սակայն չէ յուսահատեցնում կայսրին։ Նա իր յայտնի զօրապետներից մէկին ուղարկում է Երուսաղէմ՝ հակառակ և Գրքի տասացուածին։ Ազգումնի տաճարը վերականգնեցնել տալու։ բայց մի սոսկալի երկրաշարժ ոչ միայն խավա-

նում է վերանորոգութեան դործը, այլի տաճարի հին մնացորդ-ներից ռքար քարի վրայ չէ թողնում»:

Երբ այս խորհրդաւոր երեսյթներից յետոյ կայսրը դիմում է Մաքսիմոսի օգնութեանը՝ վերջինս հեռատես հայեացքով խորհուրդ է տալիս անցնել զալիլիացիների կողմը կամ հաշտեցնել «կայսրը և Գալիլիացին»:

—Դու շատ լաւ զիանս, որ սա անկարելի է—նկատում է Յուլիանոս—ինչպէս կարելի է հակասութիւնները հաշտեցնել։ Այն, այս Յիսուս Քրիստոսը աշխարհի ամենամեծ խոսքարանն է։ Ի՞նչ է Բրուտոսը, ինչ է Կասսիոսը Երա հետ համեմատած։ Երանք սպանեցին միայն մի Յուլիոս ցէզարի, իսկ նա սպանում է առհասարակ ցէզարին և կայսրին։ Այլ ես հնարաւոր է արդեօք կայսեր և Գալիլիացու մէջ որ և հաշտութեան մասին մասմասնել։ Միթէ երկուսի համար էլ տեղ կայ երկրիս վրայ։ Եւ նա ապրում է այս աշխարհում, Մաքսիմոս, Գալիլիացին տարրում է, պնդում եմ ես, ինչքան էլ հրէաները և հոսմէացիք երեակայեն թէ սպանել են նրան—նա ապրում է մարդկային ըմբռոս ոգու մէջ... իսկ երբ նա ցանկանում է տեղեկանալ Մաքսիմոսից թէ ինչ է լինելու այս անընդհատ մաքառման վերջը—«ո՞վ է յաղթելու—կայսր թէ Գալիլիացին»—«Երկուսն էլ կործանուելու են՝ թէ կայսր և թէ Գալիլիացին»—պատասխանում է Մաքսիմոսը—երկուսն էլ այժմ, թէ հարիւրաւոր տարիներից յետոյ, այդ ես չը դիտեմ. սակայն դա տեղի է ունենալու՝ երբ Խոկականը կը գայ»։

«Եւ ով է Խոկականը»—հարցնում է Յուլիանոսը։

—«Ես, ով որ թէ կայսրին և թէ Գալիլիացուն կուլ է տալու»—պատասխանում է Մաքսիմոսը և յետոյ աւելացնում է որ հրէաները այս զալիք «Խոկականի» մասին մի անուն ունեն—Մեսիայ։

—«Մեսիայ—ոչ կայսր և ոչ փրկիչ»—նկատում է Յուլիանոսը։

—«Երկուսը մէկի մէջ և մէկը՝ երկուսի»։

—«Կայսր=Աստուած. Աստուած=Կայսր. Կայսր հոգու թաշաւորութեան մէջ և Աստուած մարմնի թագաւորութեան մէջ»։

—Դա երրորդ թաղաւորութիւնն է, Յուլիանոս։

—Այն, Մաքսիմոս—աս է երրորդ թագաւորութիւնը։

—Այս թաղաւորութեան մէջն է իրականանալու հին խորդարի խոպը—«Տուէք կայսրին, ինչ որ կայսրին է պատկանում և Աստծուն, ինչ որ Աստծուն է պատկանում»։ այն, այն, սա է

կայսր Աստուծոյ մէջ և Աստուած կայսեր մէջ—ալս, ցնորքներ, յնորքներ. բայց ով է ջախջախելու Գալիլիացու ոյժը:

Եւ Յուլիանոսը մինչև իր վերջին շունչը համոզուեց, որ ոչ ոք ջախջախելու չէ այդ ոյժը:

Քրիստոսամարտ կայսրի վերջն այն է լինում, որ պարական արշաւանքների ժամանակ՝ Հայաստանի սահմաններում սպանուում է Ագաթօնի ձևով: Մահուանից առաջ Յուլիանոսն աղաղակում է. «Իու յաղթեցիր, Գալիլիացի!»:

Յուլիանոսը կամենում էր «անկարելին»՝ մի կործանուած թագաւորութեան—հեթանոսութեան անունով մարանչել ընդդէմ Գալիլիացու Բայց այս մաքառման ընթացքում նա ակամայ զարձաւ մի քրայտական մեծութիւն»—քայլայուած և ընկած քրիստոնէութիւնը անուղղակի կերպով վերակենդանացրեց: Այս տեսակ «քրայտական մեծութիւններ» էին նաև «անհրաժեշտութեան զայրոյթի» միւս երկու «անկիւնաքարերը»—կայէն և Յուղան, որոնք չարն էին կամենում, բայց բարիք զործեցին, որոնցից առաջինը իր եղբայրսպանութեամբ պատճառ զարձաւ «մարմնական թագաւորութեան» սկզբնաւորութեան, իսկ երկրորդը իր մատնութեամբ՝ «հոգու թագաւորութեան»: Բայց ուրանցից ոչ մէկը ինքնակամ, ազատ չէ դործել. երեկն էլ հանգէս են գալիս իրքն «ախնզերական կամքի» մեքենայ, որը կարծես հարկադրում է անհամեսրին այնպէս կամենալ՝ ինչպէս այդ անհրաժեշտ է տինզերական ընթացքի համար: Այս երեք «անկիւնաքարերը» աղատ են այն չափով, որքան դժանք անհրաժեշտութեան, այսպէս ասած, բարձր, անխորտակելի հովանաւորութիւնից չեն վրիպում. նրանք աղատ են, որովհետեւ կամենում են. բայց նրանք միաժամանակ անհրաժեշտութեանն ևն ծառայում, որովհետեւ պէտք է կամենան: Յուլիանոսի մոքովը, ի հարկէ, երբեք չէր կարող անցնել, որ Գալիլիացու գէմ սկսուած արշաւանքի հետեւանքը պէտք է լինի քրիստոնէութեան փրկութիւնը և վերակենդանութիւնը: Բայց այս հետեւանքը պէտք է տեսզի ունենար—այդպէս էր «ախնզերական կամքի» անօրինութիւնը: Եւ այս է պատճառը, որ Մաքսիմոսը քրիստոսամարտ կայսեր դիմակի մօտ կանգնած՝ խորհրդաւոր կերպով նկատում է. «Յուլիանոսի հոգու հաշիւը տինզերական կամքը պէտք է տայ»:

Հստ երեւոյթին, անշուշտ, մի փոքր տարօրինակ կարող է թուել, որ իրօէնի նման մի ինգիլիդուալիստ և կամքի աղատութեան կողմնակից՝ յանկարծ անհրաժեշտութեան և «տինզերական կամքին» այսքան վճռողական, այսքան ճակատագրական գեր է յատկացնում: Բայց անհրաժեշտութիւն բնագիտական-

տիեզերական մտքով և անհրաժեշտութիւն հասարակական-բարոյագիտական մաքով պէտք է տարբերել միմևանցից։ Առաջին առաջ իբսէն խոնարհուում է, ի հարկէ՝ իբրև XIX դարի մի լուսամիտ դաւակ, այն ինչ երկրորդի վերաբերմամբ՝ նա ուժեղ կերպով շեշտում է անհատականութեան և ազատ կամքի նշանակութիւնը։

Անհատականութեան ոչնչութիւնը, կամքի անզօրութիւնը, անհրաժեշտութեան և ֆատալիզմի բացարձակ տիրապետութիւնը արամարանորէն, անշոշտ, պէտք է առաջնորդէր զէպի մի յոռեակս աշխարհահայեացք։ Սակայն իբսէն յայտնապէս խոստովանում է. «Ես պեսսիմեսս եմ այն մտքով, որ չեմ հաւատում մարդկային իդէալների յաւիտենականութեանը. բայց ես միաժամանակ օպտիմիստ եմ, որովհետեւ կատարելապէս հաւատում եմ իդէալների զարգացմանը և բեղմնաւորութեանը»։ Իբսէնի յոռեակտեսութեան մասին մենք գեռ առիթ կ'ունենանք խօսելու. առայժմ նկատենք միայն, որ նա այն կարծիքի է, թէ մեր ժամանակուայ մահամերձ էդէալները մօտենում են հէնց այն դրութեանը, որ նա նկարագրել է «Կայսր և Գալլիացու» մէջ և որ գալու է «Երրորդ թագաւորութիւնը»։ Թէև «հոգութագաւորութիւնը» կուլ է տուել «մարմնական թագաւորութեանը»՝ այնուամենայնիւ նա վերջնական չէ—կայ և մի երրորդ թագաւորութիւն՝ հոգու և մարմնի թագաւորութեան ներդաշնակութիւնը—խաղաղութեան բազաւորութիւն։ Երբ կը սկսուի այս թագաւորութիւնը՝ այն ժամանակ՝ Մաքսիմոսի խօսքի համեմատ «մարդիկ երկրիս վրայ իբրև տատածներ ապրելու համար այլեւս կարիք չունեն մեռնելու»։

«Կայսր և Գալլիացին» իբրև մեծածաւալ մի դրամա, անշուշտ զուրկ չէ տեխնիկական և բեմական պակասութիւններից, այնուամենայնիւ դա մի հսկայական աշխատութիւն է և, կարելի է ասել, իբսէնի ամենահոյակապ գործը։

Վ. ՆԱԼԻԱՆԴԵԱՆ

(Եր շարունակութիւն)

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԵՐ

(Նիկիտինից)

1

## ԽԵՂՃՈՒԹԻՒՆ

Ե՞ն, դու խեղճութիւն, միշտ սովոր լացին,  
Տան մէջ համբերող ամեն դառնութեան.  
Դու ընտելացած կըտոր սև հացին,  
Քաշուող ու վախլուկ օտարի գըռան:

Ամենքի աչքին նայում ես երկչուտ,  
Անտէր ու անճար, ամօթից սպանուած.  
Անկիւն ես կանգնում հարուստների մօտ,  
Որպէս աչքի վուշ, մերժուած, մուացուած...

Դու լող ես տալիս—ուր ջուրն է տանում,  
Ուր ճամբայ կըտան—այնտեղ ման դալիս.  
Արև ես խընդրում—անձրեւ ըստանում,  
Բերանդ են փակում՝ շիտակ խօսելիս...

Գարունդ անկանաչ, դարունդ անծաղիկ,  
Ակրում ես՝ կարօտ խընդալից սէրին.  
Խնդում ես՝ խնդումկ անժամ ու լըռիկ,  
Վերչն էլ քաղց ու ցաւ՝ ծերութեան օրին:

Ոչ կեանքդ է կեանք, ոչ էլ օրըդ՝ օր,  
Հալումաշ եղած, սըրտում հազար դարդ.  
Մահն է վրայ համնում, թաղւում ես դու խոր,  
Վայրի ծաղիկն է գերեզմանիդ դարդ...

2

Բ Ա. Մ Բ Ա. Ս Ա. Ն Փ

Թէկուղ վարես դու սուրբի կեանք,  
Խընդաս ու լաս—ի՞նչ անես,  
Քեզ կը գտնի չար բամբասանք,  
Դուռըդ կըդայ դահճի պէս:

Թէկուղ առնես, դուռըդ կապես,  
Դըռան տակով կը մըտնի.  
Թէկուղ քարէ պարիսալ բաշես,  
Քարումն էլ անցը կը գըտնի:

Մեղք ու յանցանք ունեսչունես,  
Իմաց կըտայ աշխարհին.  
Մի՞սըդ կուտեն՝ քանի սաղ ես,  
Քարեկամն ու թշնամին...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

## ԿԱԽԱՂԱՆԻՆ... ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Գաղթականի առաջին կաղանդն ու ծնունդն էր որ կ'անցընէինք։ Տարին բացող այդ հանդիսաւոր օրերուն՝ Զմեոը զրեթէ ամէն տարի իր Էն կատաղի պահեստի մրրիկներն ու քամիները իրենց շղթաներէն կ'արձակէ, կարծես վախնալով, որ սիրոյ մեծ Աւանդութիւնը մոռցընել կուտայ մարդոց՝ խրճիթին ու պալատին տարբերութիւնը։ Եւ գեռ միամիտ բանաստեղծները՝ անշուշտ իր ճերմակ դիմակէն խաբուելով՝ ծերուկի մը կը նմանցընեն բնութեան այս անգութ հերթապահը, որուն բարձրացուցած աղմուկն ու իրարանցումը սակայն Էն հուժկու երիտասարդներու լէգէոններ իսկ պիտի չիրնային հանել։ Մանանդ այն տարին՝ անպիտանը հարկաւ զգալով Տաճկահայ գաղթականներուս ներկայութիւնը՝ արտասովոր հրահանգներ տուած էր իր մեծ ու պղտիկ զործականներուն։ Մ'զ պիտի փախցընէր խելքովը, հա՛, հա՛, հա՛, մնդ, որ Աստուծոյ ստեղծած Էն ահարկու չարիքներուն դէմ ոգորած էինք և արիւնծովերու փոթորիկներէն ճողովրած։ Խարիսուլ ապաստարաններուն մէջ, կիսամերկ և պարապ ստամոքսով՝ կուշտ կուշտ խնդացինք վրան ամբողջ երկու ամիս։ արտասահմանի այդ հիւրցնկալ անկիւնում ձեռք բերուած կեանքի ապահովութեան զգացումը այնչափ մեծ էր մեր մէջ, որ կրնար առնուակն եօթը այդպիսի ձմեռներու միահամուռ յարձակումին դիմադրել։ Վերջապէս ձրագալոյցի գիշերը յիմարը ալ թող տուաւ մեր օձիքը, լուսամուտէն կամ պատին մէկ ճեղքէն նշմարած էր անշուշտ, որ այդ գիշեր մինչև անգամ մեր օջախին մէջ կրակ կը փայլէր։

Խնչպէս տէրտէրը ժամուն մէջ ծանուց՝ «բարեպաշտուհի տիկին մը» այդ օրը ածուխ բաշխնել կուտար գաղթականներուն, «իր ննջեցելոց հոգուն համար»։ Զնմ գիտեր թէ ննջեցեալներու հոգիներուն օգուտ մը տուաւ այդ ածուխը, բայց մինչև օրս չեմ մոռցած այն մեծ օգուտն ու հաճոյքը, զոր ան մեր միններուն պարզեց։ Այդ անակնկալ գանձին վայելքը կարելի-

եղածին չափ երկարելու համար, խումբ մը երիտասարդներ ոռոշեցինք բոլորիս բաժինները միացնել և միայն մէկ սենեակի մէջ վառելով ամէնքս ալ հոն հաւաքուիլ Խնայողական այս հաշիւր սակայն ճիշդ չելաւ, ինչպէս առհասարակ ամէն աղքատի հաշիւր Միենոյն երկրի զանազան հեռաւոր անկիւններէն, իրարու բոլորովին անձանօթ և միայն օտարութեան մէջ հասարակայ տառապանքով մտերմացած երիտասարդներ վառ կրակարանի մը չուրջ երբ կը բոլորին, ցրտին ալ նոյնչափ հեշտ չի կրնար ըլլալի Ռւսաֆի նստեցմանք ու նստեցանք, մինչի որ դիմիրին հետ ածուխի ամբողջ պաշարն ալ ճերմթլյուցինք:

Խօսակցութիւնը՝ հայրենի երդիքին տակ անցուած Կաղանդ-ներու և Ծնունդներու կարօտալի վերջումներովը նախարան-ուած՝ անակինկալ զուգորդութիւններով հետզհետէ ծաւալեցաւ ու կենդանացաւ: Կրակին տաքութիւնը հալեցուցած էր ամէնքիս ալ լեզուին ու յիշողութեան կապանքները և ահա իւրաքանչիւրը իր յիշատակներէն գեռ չպատմուած գրուագներ կը հանէր, իրեն իսկ զարմանք պատճառելու աստիճան յորդ առա-տութեամբ մը ու ամբողջ խօսակցութիւնը անդգալարար կը փոխուէր աեսակ մը թաքուն մրցումի, որու միակ մրցամակը ընդհանուր հետաքրքրութիւնն էր: Ու երբ արդէն յիշեցի թէ Տաճկահայեր էինք մրցակիցներս, աւելորդ չէր ըսել թէ նիւթի նեղութիւն չէ որ կը քաշէինք: Ամէն Տաճկահայ, որ մեր սա ոչ վառելիք և ոչ ալ մարելիք հայրենի օջախէն հեռու չէ առած՝ լոկ իր վերջին տարիներու կեանքէն ինչեր ըսես չի կրնար պատմել:

Կարգով իրար յաջորդեցին մէկը միւսէն աւելի տիտուր ու տարօրինակ ինքնակենսագրական պատմութիւններ և ես ալ իմ կարգիս Բուրդի վաճառականուրիւնս պատմեցի: Աւարտելէս յետոյ արդէն սկսած էի յաղթանակս կարգալ հպարտօրէն ունկըն-զիրներուս դէմքըրուն վրայ, երբ յանկարծ լուսւթիւնը ընդհա-տեց ընկեր մը, որուն կը պատկանէր վերջին հերթը: Մեր շըր-ջանակին մէջ նորեկ մըն էր աս, միշտ տեսուի մը երազուն արամազրութեան մէջ ու սակաւախօս, իր կեանքէն այսչափը միայն զիտէինք, որ հեռու տեղերէ կուղարչ Անապատցի գրած էինք անունը:

—Պէաք է խոստովանիլ որ քու պատմութիւնդ ամենէն հետաքրքրականն էր—զարձաւ ինծի Անապատցին, իր հազուա-գէպ չոր ծիծաղը շրթունքներուն—լսայց յաղթանակը քեզի չափ-տի ծգեմ, թէն քեզի պէս վարպետ պատմող մը չնմ: Կենսա-գրութիւնս չէ որ պիտի պատմեմ, որովհետեւ աղքային տեսա-կէտով ան շատ է աղքատ ձերիններուն հետ չափուելու համար:

Ես շատ հետուէն, անսապատճերու խորերէն միայն հետինեցայ մեր հայրենի կիսաւեր բոյնը տարտղնող մրրկին և հէնց այդ պատճառով ալ իմ տանջանքս աւելի կոկծալի եղաւ թերեւ, զուր հոգեկան տանջանք մը: Ահա այդ տանջանքի օրերէն պըզ-տիկ միջադէպ մը կ'ուզեմ պատմնլ ձեզի:

Պատմէ, պատմէ—գոչեց ամբաղջ խումբը մէկ բերան, ուրախացած որ այդ չխօսը այսպէս ինքնայօժար բերանը կը բանար և ամէնքս ալ՝ ինչպէս կ'ըսեն՝ ամրող մարմնով ականջ կտրած մտիկ ընելու պատրաստուեցանք:

\*\*

Բազգադ կը գտնուէի հայկական վերջին սարսափիներու միջոցին—սկսաւ Անտապատցին—արաբական խալիֆաներու առասպելահաչակ մայրաքաղաքը, ուրիէ կը մեկնէին երբեմն այդ սարսափիներու հրահանգները: Այն օրերէն խվեր կը ջարդեն. յողնած, պարտասած զահիներուն նորեր յաջորդելով անընդհատ: Ի՞նչ հսկայաքայլ յառաջդիմութիւնն սակայն: Այն առենաները ջարդի հրամանը տանող սուրհանդադակ մը կամ պատուհասի բանակի մը առաջնորդող Ամիրան, տանուազն ամիսի մը ողէտք ունէին Տիգրիսի այդ հեռաւոր ավերէն մինչև ակունքը բարձրանալու համար: Սյդ միջոցին մէջ գումը, որ թեւեր ունի՝ սովորաբար աղէտէն առաջ կը համանէր թշուառներուն երկրը և ալուսը կրօնական մը կարսզ կ'ըլլար կոր քամակը երերցնելէն գահիներուն զէմ երթալ, թանկաղին ընծաներով ուիր ծերուկի լայովիր ողոքելու անոնց սրտերը: Եւ եթէ այսպիսի աղերս մը ապարդիւն ալ անցնէր, ժողովուրդը դէթ օր առաջ ամուր ու անասիկ տեղեր կ'առապատանէր: Խոկ հիմնա Հիման նոր խալիֆան երկու աշխարհամասներու սահմանին վրայ իր փօսքը փօսած՝ թէ այս կողմի և թէ այն կողմի գործողութիւնները մյնպիսի հրաշալի արագութեամբ մը կը վարէ, որ ոչ միայն ուրիշներուն՝ այլ պէտք եղած ժամանակ ինքզինքին իսկ կրնայ հաւտացնել թէ պատահածը ուրիշ բան չէ բայց եթէ բնական անխուսափելի աղէտ մը նոր քաղաքակրթութիւնը ուրիշ շատ մը բաներու հետ ջարդերն ալ գիւրացուց: Ելեքտրական հոսանքը՝ մահուան ձեռքին պէս աներեւոյթ՝ ուղղակի դահճապետին չորս-պատերէն ակնթարթի մը մէջ անոր կամքը կը հասցընէ ամէն կողմ: Եւ ահա զոհերը իրենց էն աներկեւան մէկ պահուն կ'իյնան արիւնլուայ, արեւծագին գեռ կանզուն գիւղեր ու աւաններ արեւու մուտքը ալ չեն տեսներ: Շնորհիւ գիտութեան՝ նորանոր գիւտեր ապագային անշուշտ աւելի պի-

տի կատարելագործեն այս սիստեմը։ Սակայն խօսքիս թելը շխճճեմ, դառնամ պատմութեանս։

Բաղդազի կողմերը կոտորած չեղաւ. հայերու թիւը այնքան նշխն էր հոն, որ սուրբ ստատեանէն հանել չեր արժեր։ Կառավարական շրջաններու հպութին վարակուած քաղաքացի ժողովուրդին մէկ մասը թէհ քիչ մը ժանիքները կրծտեց, սակայն հայաստանէն հասած լուրերը ընդհանրապէս բոլորովին հակասակ տրամադրութիւն մը զարթուցին Արաբներու մէջ։ Անապատի ըմբոստ զաւակը՝ երբ պատահմամբ ոտքը քաղաք կոփէր, հնուաւոր, անծանօթ բախտակից մը գտած ըլլալու սըրտառուչ շահագրգոռութեամբ մը հանդիպած առաջին քաղաքացին կ'ուզգուէր, սա միամիտ հարցումով. «Ի՞նչպէս վերջացաւ Երման-ներու պատերազմը Սուլթանին գէմ»։

95-ի ջարգերուն տաեն էր առաւօտ մը շուկայ ելած էի գործով, երբ ծանօթ հայ զինուորական գեղագործ մը հանդիպելով լուր տուաւ թէհ էլ-կատիֆի մէջ զինուորական բժիշկ գոկտօր Սարգիսը քաղաքական շատ ծանր ամբաստանութեամբ մը ձերբակալուած և նախորդ իրիկունը Բաղդադ բերուած էր գտառելու։ Աւելի բացատրութիւն մը չկրցաւ տալ, որովհետեւ գոկտօրին քով մարդ չէին ձգեր։ Յանկարծակիի եկայ, էլ-կատիֆ պղտիկ քաղաք մըն է Պարսից-ծոցին եղերքը. ինչ կրնար ըրած ըլլալ խեղճ մարզը հոն, ուր ապահովաբար իրմէ զատ ոչ թէ հոյ, այլ ուրիշ քրիստոնեայ մը իսկ չկար։ Մզկիթի վրայ յարձակի, զօրանոց գրաւել. մինուակը այս տեսակ բան մը վորձելու համար գոկ. Սարգիս եօթը զլխով դէ մը և կամ խենթ մը ըլլալու էր, մինչդեռ զինք լաւ ճանչնալու։ հաստատ զիտէի որ երկուքն ոչ մէկն ալ չէր։

Մեկնութիւն մը գտնելու ճիգիս մէջ խորասուզուած՝ ճռմբքաս կը շարունակէի, երբ յանկարծ անունս կանչուեցաւ բարձր ձայնով։ Շուրջս նայեցայ, հայրենակից հարիւրապետ մըն էր, որ զիս կը կանչէր սրճարանէ մը ներս մտայ. երկու ուրիշ սպաներ ալ նստած էին քովը, մէկը հեծելազօրքի երիտասարդ յիմնապետ մը, իսկ միւսը զիթխարի հասակով ու պարտապահաց փորով թնդանօթածիգ հազարակետ մը, որ սաստիկ լարկութենէն մարմինին բոլոր անդամները, պատերազմական վիճակի մէջ զրած՝ կը պուպար։

—Սպերախու շուները, փատիշահին հացը ուտեն ու դաւաճանութիւն ընեն. չէ, ալ հերիք է, բոլոր կեալուրները պէտք է քշել բանակէն։

—Նստէ, նստէ, —ըստաւ ինծի հայրենակիցս շինծու ծիծառ զով մը—լաւ լուրեր ունիմ քեզի հաղորդելիք։

—ի՞նչ լուր —հարցուցի աթոռ մը առնելով —հայրենիքէնտ  
—Զէ, չէ, տևզական լուր է. քանի մը օրէն լաւ տեսա-  
բան մը պիտի ունենանք զօրանոցի հրապարակին վրայ, քո-  
գոկտօր Սարգիսիդ չնորհիւ:

—ի՞նչ է պատահեր Աստուածդ սիրես:

—ի՞նչ պիտի պատահի. մարդը լաւ առուտուրի է ձեռք  
զարկեր, բայց չէ կրցեր զլուխ հանել: Անդիմական պետութեան  
հետ բանակցութեան է սկսեր Էլ-Կատիֆը ծափելու. 200,000  
անդիմական ոսկիի սակարկեր են, 90,000 ոսկին արդէն կան-  
խիկ ստացեր է, իսկ միուցած 110,000-ին համար ալ մուրհակ  
է առեր: Ասկէ զատ Զէյթունի ապստամբներուն օդնելու խոս-  
տում ալ առեր է Անդիմայէն: Սակայն Էլ-Կատիֆի պահակա-  
զօրքին գնդապետը իրմէն՝ վարպետ փրթելով՝ գործը հասկցեր  
է և զինք անմիջապէս ձերբակալելով հոս է դրկեր: Քանի մը  
օրէն պիտի կախեն զօրանոցի հրապարակին վրայ, քեզ ալ կը  
հրաւիրեմ հանդէսին ներկայ գանուելու:

Ապուշ կտրեցայ: Բժիշկ մը, որ երկիրներ կրնայ ծախել:  
Տէր-Աստուած, զեռ ինչեր պիտի լսէինք: Մարդը այնպիսի ձե-  
ռով մը հաղորդեց լուրը, որ կարծես այդ քամբախտ Էլ-Կատիֆը  
տուն մը կամ արտ մը ըլլար: Զարմացումն բայց ի բաց պիտի  
յայտնէի, սակայն երբ անդամ մը հետո նստողներուն երեսները  
նայեցայ, համարձակութիւնս փախաւ յանկարծ: Երեքին ալ դէմ-  
քերը դժոխային կատաղութիւն մը կ'արտայայտէին: մանաւանդ  
հազարապետին սոսկալի փորը փուքի մը պէս կ'ելեէջէր ու կը  
ֆշֆշար, մէկ վայրկեանէն միւսը զայրոյթի նոր ժայթքում մը  
սպասնալով, իսկ տակի խեղճ աթոռը սրտաճմիկ ճիշեր կ'արձա-  
կէր, մաս այդ վիթիւարի բուրզին ծանրութենէն:

—Ներողութիւն —գարձայ վերջապէս հայրենակիցիս, հար-  
ցումի անվանանդ ձե մը զանելով —բայց այդ քաղաքին բանալիները  
ինչո՞ւ էլին յանձներ գոկ: Սարգիսին:

—ի՞նչ բանսլի —շտապեց պատասխանել յիմնալեալը —Էլ-  
Կատիֆ պարսպապատ քաղաք չէ, մինչև անգամ ամրութիւններ  
ալ չունի:

—Ուրեմն գոկտօրը ինչպէս պիտի յանձնէր քաղաքը Ան-  
գլիացիներուն:

—ի՞նչ գյուտոր բան է —մանչեց հաղարապետը —զինուռ-  
բական բժիշկ է, ամբողջ պահակաղօրքը կը թունաւորէր, եր-  
կիրը կը մնար անպաշտպան և Անդիմայիները հանգիստ, հան-  
գիստ կը գրաւէին:

—Պիտի կախին, բայց ափսոս —հառաչեց յիմնալեալը —

ամի իմ ձեռքս տային, ծիուս պոչին կը կապէի և այնչափ կը քչէի մինչև ամենամեծ կտորը ականջը մնար:

—Զէ, չէ, այդ գեղ քիչ է—վրայ բերաւ սիրելի հայրենաւ-կիցս—իմ ձեռքս տային, ցիցի վրայ կը նստեցնէի, կամ աքծա-նով մը միսէն ամեն օր մէկ կտոր կը փրցնէի և կամ աւելի լաւը...

—Ո՞չ աս, ոչ ան—ընդհատեց հաղարապետը որոտածայն—մեղք չք ձեռքերուս որ շան զիակին վրայ այդչափ աշխաւ-տանք թափեմ թնդանօթը լաւ մը կը լեցնէի, այդ անպիտանն ալ «իսողի-զնդակ» մը շինելով բերանը կը կոնէի և կրակը տուածին պէս բռնմ...

Հոս՝ կատաղի ոմբածիզը բռունցքին հետ փորն ալ այն-պիսի բուռն թափով մը առաջ նետեց, որ մարմնին ալ հուասարակշութիւնը կորսնցնելով՝ կոնակի վրայ զետին վրու-ուեցաւ: Պարզուած տեսարանը ջարդի կատարեալ մանրանկար մըն էր, սա տարբերութեամբ միայն, որ հոս զոհերը ան-շունչ առարկաներ էին, իսկ կեսավուրի պիղծ արիւնին փոխա-րէն ջարդութչուր եղած նարկիլէներու գեղնած ջուրն էր որ կը հոսէր: Երկու սպաները, սրճարանին երկը սպասաւորները և եռ միացած՝ հաղիւ կրցանք ոտքի հանել ահեղ հերոսը: Նստա-րանի մը վրայ ինկաւ, աչքերը պայմելու աստիճան չնշասպառ ու երեսը խոզի ապուխտի պէս կտրմրած: Ամբողջ տասը բոսէ խեղդուելու չափ հաղաց և ոմբածկութեան այս ձախող փորձէն ծայրայնզօրէն մոլեզնած՝ հայհոյանքի տարափ մը փսիւց:

—Կեավուր չուն շանորդի, խընզիր, էշ, սրիկայ, գաւաճան, թնդանօթին մեղք չք, մեղք չք վառօղին, ոտքերը կը կապեմ, վիզը չուան մը կ'անցընեմ և հրէայի մը ձեռքը տալով՝ ամբողջ քաղաքը պտըցնել կուտամբ քաշկբստելով: Շան ծնունդ քեզի...

Երեակայուած ահոելի պատիժներու ապաւորութեան տակ՝ մազերս փուշ-փուշ եղած էին, երեսիս գոյնը նետած և զեռ շատ հաւանական էր, որ վախէս կաթուածահար ըլլայի, եթէ այս զերազանցօրէն կատակերգական տեսարանը վրայ չնաս-նէր: Հիմա ալ զերմարդկային ճիգեր կ'ընէի ծիծաղս զսպելու, ուստի փորձանք մը չհանելու համար փութացի դուրս նետուիլ այդ սարսափելի զինուորական ատեանէն:

Շաբաթ մը ետքը մէյմըն ալ խմացանք, որ զօկտօր Սար-գիսը անպարտ արձակուած է: Քանի մը ընկերներով անմիջա-պէս քովը գնացինք ամբողջ դէսքին ստուդութիւնը իմանալու:

Էլ-կատիփի պահակազօրքին զնդապետը և քանի մը ու-րիշ պաշտօնեաներ թշնամացած էին զօկտօրին և այդ հրաշա-կերտ զրպարտութիւնը յերիւրած՝ զինք մէջտեղէն վերցնելու

համար։ Սակայն Բաղդադի միւշիրը \*) ինդրին էութիւնը հասկընալէ ետքը, իր մէկ ժերեհ սահարախն \*\*)՝ խորհուրդը յդացած էր մէկ անզամէն երկու բարերարութիւն ընելու։ Տարիներէ իվեր պոլսեցի Յոյն աղջիկ մը կը պահէր քովը՝ իրո՞ն իր աղայոց դաստիարակուհի։ Արդ՝ գօկտօրին հասկցուցած էր, որ ազատումի մէկ միջոց մը միայն կայ... այդ աղջկան հետ ամուսնանալ և իրեն փեսայ դառնալ:

—Ի՞նչ ընեմ, ես ալ ընդունեցի—ըսաւ գօկտօրը խղճալի ձայնով մը։

Ըսկերներս միաբերան իրենց հաւանութեամբը վաւերացուցին այս խելացի որոշումը։

—Ի հարկէ, եղբայր, ի հարկէ լաւ էք ըրեր—ես ալ իմ կարգիս միսիթարեցի խեղճ մարդը—ամուսնութիւնը՝ եթէ մինչև խեկ բռնի ալ ըլլայ՝ կախաղանէն լաւ է վերջապէս։

Դեռ նստած էինք, երբ խումբ մը զինուորականներ եկան չնորհաւորութեան, որոնց շարքին մէջ և՛ մեր թնդանօթաձիգ հաղարապետը։ Դօկտօրը ստիպուեցաւ անզամ մըն ալ պատմել ծայրէ ծայր զլիւն անցածը, աւելորդ է ըսել՝ արձակման պատճառը միմիայն Միւշիր փաշային արդարադատութեանը վերագրելով։ Սակայն ամէն մարդ լսած էր արդէն յառաջիկայ հարսնիքին լուրը։

—Ես այդ լիրը զնդապետը վազուց կը ճանչնամ—ըսաւ մեր հազարապետը՝ պատմութիւնը լմէնալուն պէս—անձնական թշնամութիւնը յագեցնելու համար ամէն ստորնութեան կը զիջանի շանորդին, ես արդէն գէպքը լսելուս պէս ըսի թէ անպատճառ զրպարտութիւն է։

Ականջներուս հաւտալս չէր դար. հազարապետին երեսը նայեցայ շեշտակի, ինք ալ իմ երեսս կը նայէր և իվերջոյ ես էի որ ստիպուեցայ աչքերս վար առնել։

\* \*

—Բայց, տղայք, տաք երկիրները յիշեցուցիք ինծի ու ես սկսայ մրսիլ—ըսաւ Անապատցին իր տարօրինակ պատմութիւնը վերջացնելով։ Եւ ձեռքովը առկայծ կրակին վրայ նետեց ածուխին վերջին մնացորդը, Զրադաշտեան մոգպետի մը լրջութեամբ մաղթելով։

—Աստուած ողորմի բարեպաշտուհի տիկնոջ մեռելներու հոգուն և մեզ ալ օր առաջ անոնց շարքը անցընէ՝ իր անհուն ողորմութեանը արժանացնելու համար։

ԱՌԱՆՁԱՐ

\*) Միւշիր=մարշալ, բանակի հրամանատար։

\*\*) Եշէք սահաթ=բարի ժամ։

# ԳՈՒԹԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Թիւղաթնեսի յիշատակարանից)

## I

Նաւթային գործի աջողութեան հետեանքներից մէկն էլ այն եղաւ, որ վերջին տաս տարում հայ հարուստները զրամապվի այլ գործադրութեան մասին ևս մտածեցին. սկսեցին հետաքրքրուել այստեղ և այնտեղ ծախուսդ կալուածներով և, առազին դումարներ վճարելով, գնչեցին 5—10—20 և աւելի հազար գեսեատին տարածութեամբ հողեր; Ինչպէս միշտ, այս գէպօռում ևս մեր հարուստները ցոյց տառեցին իրանց կատարեալ անպատրաստութիւնը՝ մտածուած, խելացի գործի կազմակերպութեան համար; Հարիւր-հազարներ էին վճարում նրանք այնպիսի հողերի համար, որոնց տեղն անդամ չը զիտէին, և այդ անուում էր գարձեալ մակերների միջոցով: Մակերն էր կալուած առաջարկողը, գնահատող, գովող, երեակայեալ արդիւնքի և եկամուտի քանակը որոշողը, մակերն էր թղթեր բերողը, զիւղանտեսական ծրագիր, նոյն իսկ նախահաշիւ կազմողը. հարուստներին մնում էր միայն հաւատալ ամենագէտ մակերին և վճարել նրան 5—10—15 հազար ոռորլի, որպէս վարձատրութիւն նրա աշխատանքի ու զնել այս կամ այն կալուածը:

Եւ այսպէս բախտի չնորհիւ հարիւր հազարների տէր դարձած, երէկուայ համբալը, չիմանալով ինչպէս գործադրել իր ունեցած ահազին զրամազուխը—յանկարծ, մի զեղեցիկ օր դառնում է կալուածատէր—«կամեչչիկ», տասնեակ հազար գեսեատին հողերի սեփականատէր...

Այսպիսի մի կալուած կառավարելու համար հրաւիրուեցի ևս 1890. թուին:

Կալուածը ընդարձակ էր, մինչև անդամ չափազանց ընդարձակ. հաշւում էր 35000 գեսեատին. տեղադրութիւնը շատ

լաւ էր. երկաթուղին անցնում էր կալուածի միջով, ուր և գտնում էր երկաթուղու կայարանը:

Նստած սայշակի մէջ, մի թեթև ծանրոց հետս, գնում եմ դէպի կալուածական տունը—Աղալլով, ինչպէս անուանում էին այստեղ:

Զընայելով որ փետրուարի սկիզբին էր միայն, բայց ուռենի ները սկսել էին արդէն կանաչել—տերեւ տար: Առաջիս ընկած էր մի ընդարձակ գաշտավայր, որի վրայ այստեղ և անտեղ արածում էին հազարաւոր ոչխարների հօտեր: Թարմ կանաչը, խեղդելով անցեալ տարուայ չորացած, տերեւաթափ խոտին, բռնել էր նրա տեղը:

Իմ առաջին պարզուած էր անդրկովկասնան խաչնարածութեան բուն պատկերը:

Դաշտավայրի զանազան կէտերում երեսում էին երկար, սկս տաղաւարներ, հիւսուած ցածի մասում եղեգնեայ համահաւասար կապուածքներով, իսկ աւելի բարձրում ու ծածկոցը՝ անթափանցելի թաղիքներով: Ղա անամսապահ-խաչնարածի տուն ու տեղն է: Տաղաւարների կողքին, փոքր ինչ հեռու, շինուած են փշերով ցանկապատած փարախները, ուր ոչխարները պատսպարւում են բնութեան վատ եղանակներում:

Կանայք, երեխաններ գոյնզգոյն զգեստներում—կամ աւելի ճիշտ՝ ցնցոտիներում—բոկոտն ներս ու դուրս են անում: Այստեղ շինուած է մի օջախ, ուր աթարի ծանր, խեղդող ծխի և կրակի վրայ: Եփւում է մի ինչ որ բան. այնտեղ փայտէ ցիցերի վրայ կամ վրանի զանաղան կողմներում, զրսի պատերից, կախուած են կամ փոռւած այս կամ այն չորի կարոններ, փալամներ, վերմակներ եայլն, որոնց չորս կողմը, պատում են սիացած, կաշուի գոյն ու փայլ ստացած խաչնարածի կինը, հարսը, աղջիկը: Մի քանի ագատ չներ, քոթոթներ, վրանի սահմանազլիսում խաղում են, իրար ականջ քաշում, թաւալում այս ու այն կողմը և սուր ու խուլ վլնդվնդոցով փոշի բարձրացնում: Պակասում է այստեղ տղամարդ—նա իր հօտի հետ, երկար գագանակը ձեռքին, այնտեղ հեռուում, արածացնում է իր հօտը, իրան օգնական ունենալով բաղմաթիւ հաւատարիմ, չար զամինները, որոնք ամենայն աշալլջութեամբ հսկում են իրանց հաւատացած ոչխարներին:

Սա մեր խաչնարածի կեանքն է. նրա եարալլը—ձմեռանոցը. ահա նրանց կեանքը այստեղ, սկսած սեպտեմբերի սկզբներից մինչև մայիսի սկզբները. իսկ յետոյ նրանք, ժողովելով իրանց շարժական տունը, տեղը, հարստութիւնը չւում են դէպի վեր, դէ ոի հովաշունչ լեռները, խոտառաւ ելլաղները,

ցուրտ-ցուրտ աղբիւրների, մաքուր, յստակ, անուշ օղի այս  
բնաշխարհը...

—Այս կալուածը շատ եաթաղներ ունի—հարցնում եմ  
թուրք սայլապանիս:

—Շատ, անթիւ, քառասուն, հարիւր, էլ աւելի, պատաս-  
խանում է նա այնպիսի մի պարծենկոտութեամբ, կարծես, իր  
եաթաղների մասին լինէր խօսքը:

—Շատ եկամուտ են տալիս եաթաղները մուլքադարին:

—Եատ, բէդ, հա շատ, տարին 10—40 հազար մանէթից  
աւելի, նոյն պարծանքի ժպտով պատասխանում է թուրքը:

—Իսկ ինչ ես կարծում, որչափ ոչխար են արածում այս  
եաթաղներում:

—Շատ, անհաշիւ, 1000—10 հազար սուրու:

—Իսկ սուրուի մէջ քանի ոչխար է հաշւում:

—Սուրուն գիտի, 100—1000 ոչխար էլ աւելի:

Ես տեսայ որ խօսակիցս դէպի թուերը առհասարակ ոչ  
մի պատկառանք չի տածում և ակամայ լոեցի:

Մինչև այժմ մենք անցնում էինք ինձուղով: Այժմ գուրս  
գալով խճուղուց ծուռեցինք դէպի աջ և լընկանք այն բազմաթիւ  
ճանապարհներից մէկի վրայ, որը որոշում է մի կամ մի քանի  
սայլերի անիւների խորը հետքերով: Դրանք են մեր երկրի սո-  
վորական ճանապարհները,—ճանապարհներ, որոնցից ոչ մէկը  
միւսից չէ տարբերում, ճանապարհներ, որոնք ամեն՝ ամիս, ա-  
մեն շարաթ և նոյն իսկ որ փոխում են, նայելով թէ երբ է  
զարթնում սայլի վրայ քնած սայլապանը, որի եղները, գոմէշ-  
ները չեղուելով այս հեռքից, բացում են ուրիշ հեռք, ուրիշ ճա-  
նապարհ, ուստի զարմոնալի չէ, որ մեզանում մէկ կէտից  
միւս կէտը կարելի է զնալ տաս, քսան և աւելի ճանապարհ-  
ներով—նոյն տարածութիւնը անցնելու վրայ կորցնելով՝ և մի  
ժամ, և երկու, և չորս:

Սայլակի անիւները անցնելով կոչտերի վրայից այնպիսի  
մի դիւային ցնցումներ էին գործում, որ չարունակել այս կերպ  
ճանապարհը կը նշանակէր կող ու աղիքներս լուրջ վտանգի  
ենթարկել:

—Դեռ ես շատ է մնում մինչև Աղալըդ հասնենք, դիմում  
եմ ես սայլապանիս:

—Չէ, բէդ, այ հրէն, մօտ է—մի ժամից կը հասնենք,  
հանգոտացնում է նա ինձ, ձեռքի մտրակով ցոյց տալով մի ինչ  
որ անորոշ, անսահման տարածութիւն:

—Դէ որ այդքան մօտ է, կանգնիր, ևս ուզում եմ փոքր ինչ ոտով գնալ:

Սայլը կանգնում է և ես իջնում եմ:

Սոյլապանը ամենայն պարզութեամբ տեղափոխում է իմ տեղը—ձիերի սանձը կապում է սայլակի կողքից և թիկն տալով պատրաստում է հանգստանալ:

—Ի՞նչ ես անում, բարկանում եմ ես, չ՞ որ շուտով տեղ կը համենիք—իսկ դու ուզում ես քննել:

—Փհա, աղբաթլդ ինէր, բէզ, մինչև անդ համենք երեքչորս ժամ կը քաշի, իսկ մինչև այդ, ես մի կէս ժամ աչքս կը պցնեմ. ձիերը ճանապարհը զիտեն: Իսկ երբ դու կը յողնեանձ զարթեցրու—պատաստիանում է և ամենահանգիստ կերպով փափախը գնում է գլխատակին ու մեկնուում:

Ձիերը շարժուեցին—ես դուրս եկայ ճանապարհից և ընկայ հարթ, հաւասար հողի—մարգագետնի վրայ:

Ողջ գաշտավյրում բացի ոչխարներից և հովիւներից մարդ չէր երեսում: Ողջ մաքուր էր, յատակ, թափանցիկ և առնուշ, մի տուանձին բոււականութեամբ չնչում էի, քայլում նորութողբոջ խոտի վրայով: Մէկ էլ ձախ կողմում լսում եմ խուզ ձայն—գառնում եմ այն կողմը և ինձնից մի քանի հարփոր քայլի վրայ տեսնում եմ մի զոյտ սկ հզներ և նրանց յետեից մի մարդ: Վարում էին:

Քալերս ուղղեցի գէպի այն կողմը և մի հինգ բոսէից ես կանգնած եմ թուրք հողագործի առջեւը Հրացանը ուսից գըցած, վաւմիուշտամանը միւս կողքից—առջենից խենջարը, փայտեայ արօրի—աւելի ճիշտն ասած, կոճղի մաճը ձեռքին բըռնած, մեն-մենակի վարում էր իր ջուխտ, վտիտ, մանր, սովածեղներով, իսկ միւս ձեռքում բանել էր մի երկայն փայտ, որով մի կողմից քըում էր ու խոփում եղներին, իսկ միւսով արօրը մերթ հանում էր դեանից, ուղղութիւն տալիս, մերթ նորից հողը խրում, նորից հանում:

Ո՞րքան վափուկ էր հողը, ո՞րքան վիրուն. թւում էր, որ նոյն իսկ մի կտոր սրածայր վայսով կարելի էր նոյնը անել, ինչ որ անում էին մի զոյտ եղները, Սա երկրագործաթեան մի ծաղը էր, արօրի երկաթեայ վայլուն խոփը հազլւ մի վերշոկաչափ մտնում էր հողի մէջ, քանդում էր հողը, վշրում և ապա սատնում մի քանի վերշոկ առաջ, բաց թողնելով՝ միջի տարածութիւնը:

Նայում եմ վարած տեղին, մի ութերորդ գեսեատին հազիւ լինէր:

Բարե տալուց և պատասխան ստանալուց յետոյ հարցնում եմ.

—Այսքանը Երբուանից ես սկսել վարել:

—Արեց ահա այնտեղ էր՝ երբ սկսեցի, պատասխանում է թուրք երկրադործը:

Իմ հաշուով հազիւ Յ ժամուայ լինէր նրա սկսած գործը:

—Բայց չէ որ վարածդ լաւ չէ. շատ տեղ խամ է մնում, նկատում եմ ես:

—Էհ—այսքանն էլ բաւական է, մեր ուտելու հայը գուրս դայ—վերջացաւ զնայ:

—Իսկ քեզ ի՞նչքան հայ է հարկաւոր:

—Ի՞նձ ինձ ոչինչ, տանը ոււառիներ կան, նրանց գարզին եմ. Յ չուալ ցորեն բաւական է մեղ, պատասխանում է թուրքը և արօրը կանդնեցնում:

—Յ չուալ ստանալու համար քանի՞ որ պէտք է վարես:

—Քանի՞ որ. վաղը կը վերջացնեմ վարը... ասայ նա հանելով շապկի տակից երկար չիրուխը, գրավանից՝ ծխախոտի տուղրանը: Լքցնելով իր չիրուխը, նա հանեց կայծքարը, արեթը և, մի քանի անգամ իրար զարկելով ձեռքի պողապատը, պատրաստեց կրակը—զրեց չիրուխի վրայ և ադահութեամբ սկսեց քաշել:

—Մնացած ժամանակը ի՞նչ ես անելու, դիմում եմ նորից նրան. նա ինձ չը լսեց. ես կրկնում եմ հարցս: Նա ուսքից մինչեւ գլուխ նայում է ինձ:

—Ուր ես զնում:

Ես պատասխանեցի:

—Ի՞նչ դործով—հետաքրքրուեց նա:

—Ես այս մուլքը կառավարելու եմ, պատասխանեցի ես: Նա, կարծես, ինձ չը հասկացաւ:

—Այսինքն ինչպէս թէ կառավարելու ես—զարջա \*

—Ոչ, կառավարիչ եմ—վարիլ, կրկնեցի ես:

—Ուրեմն գու բէք ես, զարմացաւ նա,—բա որ բէք ես, ուր են քո մարդիկը, նօքարները, ձիւորները, ապշած ասաց նորից նայելով ինձ վրայ:

—Ի՞նչ եմ անում ես ծառաներ, նօքարներ, ասայի ես. նոր եմ զնում, առաջին անգամն եմ:

—Հա, հասկացայ—զլուխը շարժելով պատասխանեց նա,

\* Գարջա կոչում են այստեղ այն մարդկանց, որոնք կալուածառէրելի համար զիւղացիներից մաս են յողովում:

բայց նրա աչքերի մէջ ևս նկատում էի, որ նա շատ էլ չի հաւատում ինձ:

—Փեշակիդ անունը ի՞նչ է, բէգ, նորից գիմից ինձ:

Այս հարցը ինձ դժուար գրութեան մէջ զրեց. ի՞նչպէս բացատրէի ևս սրան, որ ևս զիւղանտես եմ, ի՞նչ բառերով. իսկ այս հարց ու փորձը ինձ հետաքրքրում էր. սրանով իմ առջն պարզուելու էր մեր թուրք երկրագործի ողջ հայեացքը գէպի հողը և իրան շրջապատող պայմանները:

Ես նկատել եմ, որ մեր՝ զիւղատնտեսներիս և ընդհանրապէս մեր ինսելիութէնտ տարրի տմնեամնէն պակասութիւնն այն է, որ մննք չենք կարողանում խօսել զիւղայու հետ. մենք նրանց չենք հասկանում, իսկ նրանք էլ մեզ. մեզ անծանօթ է այն պարզ լեզուն, որով խօսում է նա, մեզ մութ է նրա արտայատութիւնները, նրա մտածութեան եղանակը—ահօ թէ ինչու մննք հաւառակ մեր ցանկութեան ոչ մի ներդործութիւնն, ոչ մի ազդեցութիւն չենք կարողանում ունենալ զիւղամ, զիւղացու հետ խօսալիս: Մենք այն աստիճան խորթացել են նրանից, նրա խօսելու, միտք յայտնելու գարձուածներից, որ նա խօսյն զգում է, որ իր և մեր մէջ ոչ մի ընդհանուր կապ չը կայ: Մի քանի տարիներից յետոյ միայն, երբ ևս զանազան կալուածներում առաւօտից մինչեւ երեկոյ զանազան մշակների հետ գործ ունենալու անհրաժեշտութեան մէջ էր զրուած, սկսեցի փոքր առ փոքր սովորել նրանց լեզուն, հայեացքը, դէմքի արտայատութիւնները, շարժումները, երգիծաները և այլն և այլն:

—Ես հողագործութեան ուստայ եմ. ևս զիտեմ թէ ի՞նչ պէս պէտք է հողը վարել, ի՞նչ զութաններով, ի՞նչ մեքենաներով կարելի է ցանել, հոծել, ծեծել. ի՞նչպէս կարելի է ծառեր տնկել, պանիր, իւղ պատրաստել:

Իմ բոլոր բացատրութեան մէջ նրա վրայ ներդուեց միայն մեքենայ—«մաշին» խօսքը:

—Ռւեկնի գու հողի ինժինա՞ր ես,—հասկացոյ, ասաց նա:

—Բայց բանը նրանումն է, բէգ, որ Աղոլղում գու ոչ մշակ կը գտնես, ոչ եղ, ոչ գոմէշ. այնտեղ կան հինգ-վեց հատ գարզաներ, 40—50 նօքարներ—ձիաւորներ. էլ գու ի՞նչով ես վարեկու:

—Եղ չունենք—եղ կ'առնենք, գոմէշ, ձի, կով կ'առնենք—մշակներ կը վարձենք և ահա այսպէս գործ կը սկսենք, բացատրեցի ես:

—Ի՞նչու չէ, լաւ կը լինի. ի՞նչպէս երկում է նոր աղաների վողերը չատ են—ուզում են ծախսել, ասաց նա և նրա երեսին խաղաց մի ի՞նչ որ կիսահեգնական ժպիտ, առա աւելացրեց.

— Բայց զրանք զուր բաներ են, թէդ. մուլքաղարը, պէտք է մուլքագարը թէդ լինի—ինչպէս մեր հանգուցեալ աղաներն էին. նրանք այդպիսի բաներ չին անում, մենք վարում էինք, ցանում, ջրում, հնձում, ծեծում էինք և տանում պատրաստ նրա ամբարներն էինք ածում—այդպիսով համ մենք էինք դոհ, համ էլ մեր աղեն:

— Կաւ ևս ստում, նկատեցի ես, բայց բանը այն է որ դուք շատ քիչ էք վարում. այ, օրինակ հէնց դու, դու կարող ես այսօրուանից սկսած մի ամիս շարունակ վարել և կը վարես մօտ 10—15 չուալի տեղ. դու ինքդ ասացիր, որ վաղը վարդդ կը վերջացնես և տուն կը դաս. իսկ դա նոր աղաներին էլ վնաս է, քեզ էլ. եթէ դու 10 չուալ սերմնա՞ղու կը ստանաս 60—70 չուալ և աղայիդ կը տաս 6—7 չուալ. իսկ այժմ դու կը սերմնա մէկ երկու չուալ և մեզ կը հասնի մի քանի փութ միայն. իսկ զս մեզ վնաս է, ահա զրա համար էլ, աւելացրեցի ես, մենք ուզում ենք ինքներս մեր հողերը մշակել, որպէս զի շատ եկամուռ ստանանք:

— Հարուստ մարդը տգահ կը լինի, նկատեց նա. իրեն թէ քիչ հարստութիւն ունէք, Էլի էք ուզում ունենալ:

— Ա՛յ, աեսնում ես, հարուստ մարդը ուզում է էլ աւելի ունենալ, իսկ դու աղքատ մարդ ես և ծուլանում ես, չես աշխատում աւելի ունենալ—աւելի հարստանալ:

— Ե՞ն, թէդ, էդ բոլորը գատարկ բաներ են—մի և նոյն է, բոլորս էլ մեսնելու ենք—հարուստ աղքատ—մի և նոյն է:

Կառապանս զարթնել էր և ինձ ձայն էր տալիս. ես ընդհատեցի խօսակցութիւնս զիւղացու հետ և մնաս բարի տսելով աղզուեցի գէպի ոսլլակը:

Մի կէս ժամից մենք անցնում էինք խիտ ծառուտի միշտով, որոնց մէջ մերթ-մերթ երեսում էին զիւղական կիսատներ—կիսախրճիթներ, բաժանուած միմեսնցից անկանան, անխնամ պարտէզներով, ծառաստաններով. զրանք զիւղեր էին ընդամենը 10—15 տնից բազկացած. բայց տները այնքան բաժան-բաժան էին միմեանցից՝ այնքան անջատուած, որ աւելի փոքր կալուածների էին նման, քան այն զիւղերին, որոնց սովոր ենք մենք տեսնել մեր երկրի լեռնային մասում, ուր տները կուտակուած լինելով միմեանց կողքին, իրար վրայ, իրանց միապատազ, չոր, տխուր տեսքով աւելի գաղանների որջերի են նմանում, քան բանական մարդկանց բնակարանների: Բայց այստեղի տների այս առանձնութիւնը և զրանից առաջացած լուսթիւնը չորս կողմից, ծառերի մէջ զրանց թագնուած լինելը՝ մի տեսակ խորհրդագույր երկիւղ էր աղզում անցորդի վրայ—մանաւանդ՝ երբ

գիտես, որ սրանց մէջ ապրողները թուրքեր են: Բաւական էր այս թփերի միջից մի գնդակ ուղղեն քո կրծքիդ և քո սպանուած լինելը կը մնայ աննկատելի, ոչ ոք չի տեսնի քեզ, չի լսի քո ձայնը, ոչ մի օգնութեան յոյս չես կարող ունենալու Եւ զուցէ հէնց այս է պատճառը, որ այստեղ սպանութիւնը, թալանը, գողութիւնը այնքան սովորական եղեղյթներ են, որ ոչ ոքի չի զարժացնում, չի վրդովում, նոյն իսկ չի հետաքրքրում:

Մի ժամկից մենք անցնում էինք մի լայն և կանոնաւոր ծառողիով:

—Ահա Աղջալը, դարձաւ դէպի ինձ սայլապանս և ծառերի մէջից ցոյց տուեց կանաչազոյն մէկ մեծ կտուր:

Մի քանի բոպէից մենք անցնելով մի մեծ, բարձր դարպասով մտանք ընդարձակ բակը:

Սայլը կանգնեց երկյարկանի, հսկայ շինութեան առաջ:

Բակի այս և այն անկիւնից զուրս թափուեցին 6—7 թուրք ծառաներ, հարուստ, արծաթալատ դէնքերով, բոլորն էլ առողջ, բարձրահասակ, բոլորի դէմքերն էլ ահարկու:

Ես իջայ սայլակից:

—Ո՞վ կայ տանը—դիմնցի ես հաստաբեղ մի թուրքի:

—Աղէն տանն է, պատասխանեց նա:

Ինձ առաջնորդեցին ներս, անցնելով մի քանի ընդարձակ, բայց դատարկ սենեակների միջով, ես մտայ վերջին սենեակը:

## II

Փոքրիկ սենեակում կանդնած թանձր մուխը հազիւ թոյլ էր տալիս նշմարելու չորս հողու, որոնք, նստած թղթախաղի արդէն հին սեղանի շուրջը, շարունակում էին խաղը. սեղանի վրայ երեսում էին մի քանի թղթաղամներ և մի փոքրիկ կոյտ աբծաթի դրամների:

Այն ինչ ես չը դիտէի նստածներից որին դիմել՝ տեղիցը ծանրութեամբ բարձրացաւ միջահասակ, արդէն քառասունը անց, դժգոյն, դեղնած երեսով, երկար շատ երկար քթով մի պարոն և ձեռքը մեկնելով ինձ անուանուեց.

—Կարախանօվ:

Ես հանեցի թղթապահիս միջից յանձնարարական նամակ և մեկնեցի պարոնին:

Նա տուեց ինձ իր աթոռը և մօտենալով լուսամուտին բացեց նամակը և սկսեց կարգալ:

Ես այժմ դիտում էի միւս երեք պարոններին, որոնք շարունակում էին խաղը: Երկն էլ թուրքեր էին:

ՄԵԿԸ՝ մի քառասուն տարեկան, երեսը ստիրած, կարճ մազերով, սև, շատ սև գէմքով մի զինուորական էր պրապօրչչիկի աստիճանով. միւսը՝ հազիւ քսաներկուշսաներով տարեկան լինէր—բարձրահասակ, փոքրիկ բեղերով, գեղեցիկ, խոշոր, սև աչքերով և գեղեցիկ արտաքինով մի երիտասարդ էր, հագնուած բաւականին մաքուր չերքեսկա—արծաթեայ վազմերով, իսկ առաջից կախած ունէր փղոսկրի կոթով մի փոքրիկ խենջար. երրորդը՝ աւելի հստակաւոր էր, զեր, մեծ, սև բնեղերով, առողջ մարմնով և նոյնպէս հարուստ վազմաներով ու խենջարով. ոսկի ժամացոյցի հաստ շղթան երեսում էր չուխայի կրծքի տակից: Երեքն էլ խօսում էին ոռոսերէն, բուն թրքական արտաստանութեամբ, մերթ-մերթ նաև թուրքերէն:

Խաղաթուզթը հերթով անցնում էր մեկի ձեռքից միւսը, իսկ կանաչ սեղանի երեսը լցւում էր նոր թուանշաններով:  
—Ա՛, ուրեմն այդ գուշ էք—գարձաւ դէպի ինձ կարախաւնովը և նամակը ծալեց դրեց զրապանը:

—Շատ լաւ, շատ լաւ, կրիխեց նա.—բայց նրա երեսը նոյնը չէր ասում.

—Հա, մոռացայ ձեզ ծանօթացնել, դիմեց նա թուզթ խաղացողներին:

—Այս պարոնը գիւղատնտես է և ուղարկուած է Ա. օվի կողմից կալուածը, որպէս կառավորիչ, խնդրեմ ծանօթացէք:

—Սա, գարձաւ նա զինուորականին, մեր պօլիցիական պրիստաւն է, Հասանո-բէզը. սա, ցոյց տալով գեր թուրքին. հարեան կալւածատէր՝ Աղալար-բեղ, իսկ ոյն երիտասարդը նոյնպէս մեր հարեաններիցն է, իսմայիլ-բէդ կարաչալինսկի:

Նրանք ընդհատակիցն խաղը և մի ձեռքում բռնած խաղաթուզթը, միւսը մեկնեցին ինձ և ինչ որ մի բան ասացին քթի տակ:

—Համեցէք, ինդրեմ, գարձաւ ժպիան երեսին պրիստաւը դէպի ինձ. բակարա, է, ու մահացաւ:

Ես տեղից վեր կացայ:

—Ներողութիւն, ես թուզթ չեմ խաղում. դրսեը այնպիսի հրաշալի եղանակ է, որ ես մեծ ուրախութեամբ դուրս կը գամ բակը, այսին նայելու, ասացի ես նայելով կարախաւնովին:

—Լաւ, ինչպէս կ'ուզէք—ասաց քթի տակին կարախաւնովը:

—Մենք էլ չուտով կը վերջացնենք և ճաշի կը նստենք:

—Սարիբէդ, գարձաւ նա դուն առաջ կանգնած թուրք ծա-

ռային, տար բէզին այզին ցոյց տուր, ևս էլ շուտով կը գտմէ  
ես վերցրեցի զլխարկու և դուրս եկայ:

Նախ և առաջ ինձ հետաքրքրում էր այն շինութիւնը, որի  
մասին գեռ ևս ևս կալուած չեկած ինձ սա և նա ոլատմել էին.  
Պա մի երկյարկանի, աղիւսից շինուած, մնձ, շատ մնձ շինու-  
թիւն էր, երեք կողմից լայն, ընդարձակ պատշտամբներով:

Տունը զուրկ չէր արտաքին գեղեցիկութիւնից, մի տեսակ  
աղայութիւնից. իսկոյն երեսում էր որ այս շինութիւնը նշանակ-  
ուած է եղել աիրոջ իշխանական պահանջներին բառակմնու-  
թիւն տալու համար: Բայց շինութիւնը միայն արտաքրուած էր  
այդպէս, ներսը գիռ ևս աւտրտուած չէր, ոչ ներկ, ոչ պաստառ-  
ներ, նոյն իսկ փայտեայ մասերը չեն վերջացրուած. ամեն ինչ  
մնաց էր կիսատ, անկատար: Իսկ ինչ էլ որ շինուած էր, ա-  
ւելի կարկատանների էր նմանում, քան նտիսագծուած մակարդա-  
կի կատարման: Բայց երկյարկանի անից, ընդարձակ բակի մի  
կողմում ընկած էր մի երկար շոբք ուրիշ շինութիւնների, որոնց  
առաջին և յետեսում բլրացած ազրը իսկոյն ցոյց էր տալիս որ  
գրանքն ըստնր էին, միւս կողմում մի այլ երկյարկանի շինութիւն՝  
փոքր, նեղ պատուհաններով, որի առաջ մի երկու սայլեր էին  
կանգնած լի չուալներով. գա ցորենի և այլ արգիւնքների շուե-  
մարանն էր: Ուրիշ ոչ մի շինութիւն, ոչ մի բնակարան չէր ե-  
րևում: Բակի միւս կողմը, պատած էր բարձր աղիւսաչն պա-  
տով, գեղի ուր առաջնորդից ինձ այն թուրքը, որին Կարա-  
խանօվը Շարիբէղ անուանուց: Մէկ փոքրիկ գոնով ներս տա-  
նելով ինձ, նա բացարեց, որ գա այզին և պարտէղն է:

Ես ինպրեցի նրան ինձ մենակ թողնել և ինչս անցայ ա-  
ռաջ:

Խաղողի այզին մնձ չէր, հաղիւ. երեք գեսնատին, լայն,  
կանոնաւոր միջնակներով, որոնց վրայ նսրատի, թարմ, կանաչ  
երեզնուկները այնպիսի խտութեամբ էին բուսել, որ սոդ խըր-  
ւում էր մէջը, որովէս մի քանի միտուանց վրայ փաած խալիների  
մէջ: Մի թեթև հայեացք խաղողի վագերի վրայ իսկոյն ցոյց էր  
տալիս այն ոճներեւի, անուշաղիր հոկտավթիւնը և իննումքը,  
որի առակ եղել է այզին. մատների անկանոն կտրուածներ, բը-  
հիրի կատարեալ բացակայութիւնը, շարքերի մէջի խոտը, վա-  
զերի հիւանդու, նուազ տեսնքը տպացոյց էին որ այս այզին  
զլխովին բարձի թողի է արուած եղել և այն էլ մի երկար  
տարիների ընթացքում, երկու գոմէշներ վազերի մէջ ընկած ան-  
խնայ կոարտառում էին մատները, ոտնատակ էին տալիս և կա-  
տարեալ աւերմունք առաջացնում:

Պազատու պարտէղը աւելի ցաւալի դրութեան մէջ էր:

այստեղ կային պտղատու ծառերի ամեն տեսակները. և նշենի, և կաղին, և նուռը, և ունաբ, և խնձոր, տանձ, դեղձ, սալոր, արմաւ, ընկոյզ, ծիրան, հոն, բալ, կեռաս—ամենը, ամենը. միայն այդ բոլորը այնքան վայրենացած, այնքան ճիւղաւորուած, այնքան չորացած ոստերով, որ պարզ էր, որ վաղուց հմուտ պարտիզպանի ոստը մկրատը չէր դիտել դրանցից և ոչ մէկին, ուստի բոլորն էլ զարդացել, բուսել էին ինչպէս ցանկացել էին, ինչպէս թոյլ էր տուել նրանց հարուստ հողը, ջերմ արել և զոմէների ու եղների քմահաճոցքը:

—Քիտեմ, տեսնում եմ, զարմանում էք այս բոլորի վրայ,— լսեցի իւան Տարասիչ Կարախանօվի ձայնը. ծառերի միջից զուրս գալով նա մօտեցաւ ինձ.—ինչ արած, եղբայր, ուրիշ կերպ չի կարելի:

—Այն, իւան Տարասելին, ճիշտ որ թէ այդին և թէ պարտէզը աններելի վատ զրութեան մէջ են—նկատեցի ես:

—Ի՞նչ անեմ, առեք, ինչ անեմ. այս բոլորը կորդի բերելու համար փող է հարկաւոր, փող. իսկ ինձ փող բաց չեն թողնում ձեր միլիօնատէրերը—մի կերպ առայժմ եօլա տարել—ահա ինչ են սլատասիանում ինձ, իմ մի քանի անգամ դիմումներին. իսկ եօլա տանելու հետեանքն էլ ահա այս է:

—Բայց միթէ իրանք չեն տեսել կալուածի կարիքները, հարցրեցի ես:

—Ի՞նչ աւեմնել, ով, ահա երկրորդ ատրին է ինչ գնել են կալուածը և մինչեւ օրս ոչ ոք, ոչ մէկը ոսքը չի զրել կալուած. դա բաւական չէ, իմ գրած նամակները անզամ մնում են անպատճան:

—Ուրեմն ձեզ մնում էր միայն թողնել կալուածը և հեռանալ:

—Իսկ ինչ շահած կը լինեն զրանափ, ոչինչ. նրանք իմ տեղը մի ուրիշն կը նշանակեն և այդ ուրիշը ստիպուած կը մինէր անել նոյնը, ինչ և ես, այսինքն՝ ոչինչ։ Այ—հիմա ուղարկել են ձեղ, վառք Աստուծոյ, երիտասարդ էք, մասնադէտ, ունէք եռանդ, լաւ ցանկութիւններ—տեսնենք գուք ինչ կ'անէք, եթէ ձեզ մի կոպէկ անգամ չը տան կալուածի պէտքերի համար. ինչ կ'անէք, տեսնենք, կրկնեց նա:

—Շատ լաւ, առայեք իննդրեմ. իսկ ուր են զնում կալուածի եկամուտները, հարցրեցի ես:

—Ի՞նչ եկամուտ. երեք հազար պատզ ցորեն, այն էլ բուռը բուռը ժողոված, եօթ-ութ հարիւր պուդ գարի և այնքան էլ չալթուկ, —այդ բոլորը ձեզ երեք հազար ոսւբլի, աւելացրէք զբա վրայ մի 1000 սուբլի եաթաղներից—ահա ձեզ չորս հա-

զար ոռոքի և զրանով փակեք եկամուտի աղբիւրները, զիրքն ու հաշիւր. իսկ հողային առուրքը, իսկ Բս, մեր ուսելը, ընդունելութիւնները—երեք հազար չարժեն—որտեղից լրացնենք պակասորդը—իմ զրպանից:

Իւան Տարասիչը վրդովուած էր, որը արտայայտուեց նըրանով, որ մի նոր ծխաղան հանելով գրպանից կպցրեց և սկըսեց աղահութեամբ ներս քաշել ծուխը:

—Դուք, երեխ, զարմացաք, անսնելով որ մենք նստած թուղթ ենք խաղում. զարձաւ նա դէսի ինձ. ի՞նչ անենք. միակ ելքը թղթախաղն է այսպիսի սպայմաններում—իմ պարտնեօրներս, որոնց հետ դուք ծոնօթացաք. մեր հարեան կալուածատէրերն են, նոյն իսկ պրիսաաւը. ուսում չունեն, կրթութիւն նոյնպէս, ոչ մի ընդհանուր բան մնող չէ կապում միմեսոնց հետիւնքը յարաբներութիւնն պահպաննէ պէտք է, ի՞նչ և լինի—մենք հարեաններ ենք—միմեսոնց պէտք ենք զալիս—նու—ուրիշ կապ չը լինելով, մենք ստեղծնեցինք ոյս միջազգային կապը—թղթապաղից:

—Ես, ընդհակառակը, կարծում եմ, որ դուք, իրրի հարեան կալուածատէրեր, ընդհանուր շահեր շատ ունեք. օրինակ, հէնց կալուածական, զիւզատնուեական ինսպիրներ, ձեր և ձեր դիւզայինների յարաբերութիւնների...

—Գիտեմ, զիահմ ի՞նչ կ'տուք—ընդհատեց խօսքս Իւան Տարասիչը—նոր մեքենաններ, կատարելագործուած տնտեսութեան եղանակ, զիւզատնուեական զրքեր, ցեղական անտառներ, կուլտուրական նոր բոյսեր հայլն, եայլն. բայց... բայց, չը վերջացրեց խօսքը Իւան Տարասիչը, զնոնք առայժմ ճաշելու. տհա մեր ետեիցն է զալիս ծառան—այդ հարցերի մասին մենք յետոյ ձեզ հետ կը խօսենք:

Սյա ասելով նա առաջ ընկաւ և քայլերը ուղղեց դէպի տուն. ևս հետեւեցի նրան:

Մենք մտանք նոյն ունեակը, ուր արդէն բացած էր ճաշի սեղանը. իսկ լուսամուտի առաջ թղթախաղը շարունակում էր:

«Бито! Дальше.. давай еще! Себе возьми!.. Восемь... девять, бито... я беру.. дай карты... три рубля? Идетъ! Бито! Ахъ шельма! Вотъ гадость. Вѣдь третій разъ! Это черть знаеть что такое! կցկառուր, յուզուած ձայնով, միս մէջ կորած լսում էր մեր կողքին»:

—Բաւական է, բաւական, վերջացրէք խաղը—դարձաւ Իւան Տարասիչը:

—Սյա բոպէիս—մէկ իսազ էլ, մէկ իսազ էլ—խնդրում էր պրիսաաւ Հասան-բէզը:

—Մաշա, կարլի է նստել—դոռաց այս սենհակից իւան  
Տարասիչը:

—Կարելի է, կարելի է, լուսեց հարեան սենեակից մի կա-  
նացի ձայն և խելոյն դռան մէջ երեսցաւ մի երիտասարդ կին,  
կարմիր, թարմ երեսով, սեւ, իուզոր աչքերով, անալին հասա-  
րակ հաղուսապի, մի ձեռքին՝ մի քանի ափսէներ, միւսում՝  
շվեյցարական պանիրը, ձկնկիթը—նա դրեց ափսէները սեղանի  
վրայ և ապա մօտեցաւ ինձ:

—Իմ կինս, Մարիա Դանիլովնա, ներկայացրեց իւան  
Տարասիչը:

Մենք սեղմացինք իրար ձեռք:

—Դուք, կարահօմնիկ չք, գարձաւ ինձ աիկինը:

—Ոչ, ես թուղթ չեմ խաղում, պատասխանեցի ես:

—Շատ ուրախ եմ—ժպտաց տիկինը—եթէ ձեռքիս ձար  
լիներ սրանց բոլորին տնից գուրս կ'անէի, բարձրածայն ասաց  
տիկինը, ցայց տալով խաղացողների վրայ—հինգ կոտեկ չեն առա-  
նում կալուածներից և յիսուն ոռորիներով տարւում են—թէ  
որտեղից են գրանք փոռ գտնում, ես զորմանում եմ:

—Մարիա Դանիլովնա—գարձաւ Խոմայիլ-բէզը, 170 ձիերից  
հաղին 30 հատ մնացած լինի, 25 կովերից 6 հատը չորս օր առաջ  
ծախսեցի—ինչ է, միթէ զա եկամուտ չէ, ծիծաղելով ասաց նա:

—Շուտով զրանք էլ կը ծախէք, Խոմայիլ-բէզ, նկատեց  
տիկինը:

—Ենու, աւելի լաւ—զալմազալից զլուխս կ'ազատուի, աւե-  
լացրեց նա—մի և նոյն է, եթէ ես չը ծախւեմ, մեր պրիստաւը  
զողանալ կը տայ:

—Այս, եթէ մինչև իմ գողանալ տալը պարտքատէրերը չը  
տանեն, աւելացրեց պրիստաւ Հասան-բէզ:

—Չէ, տպահով կաց, Հասան-բէզ, բանը այդտեղը չի հաս-  
նիլ. բաւական է, որ դու քո ինձնից վերցրած պարտքերի մի  
հինգերորդը վճարեն և ես բոլոր պարագատէրերիս բերանը կը  
փակեմ, չարամիտ ժպիտով աւելացրեց Խոմայիլ-բէզը:

—Հասան-բէզը պարագ վճարող չէ—ուրիշ ազրիւր ունես,  
էն ասա, ասաց Աղալար-բէզը:

Բոլորը սեղերից վեր կացան:

—Աղալար-բէզ, քանի հազարներդ եմ կերել, չարացած  
զիմեց նրան պիստաւը:

—Քո նմաններին հազարներ չեն տալիս. 5—10 ոռորին  
էլ բաւական է, հեղնեց Խոմայիլ-բէզը:

—Որը սակայն հարիւր անզամ վերցնելով հազար է զառ-  
նում—աւելացրեց Խոմայիլ-բէզը:

—Հանագները մի կողմ թողէք թէ չէ—սպառնաց Հասան-բէզը և տեղից բարձրացաւ:

—Թէ չէ՝ հարիւր ոռւրիի կ'ուզեմ—ուզում ևս ասել—աւելացրեց Աղալար-բէզը:

—Ոչ—խենջարս փորդ կը մտնի—մոնչաց Հասան-բէզը ձեռքը դնելով խենջարին և մօտեցաւ Աղալար-բէզին:

—Հասան... գոռաց Աղալար-բէզը և դոյնը գցեց.—խեն-ջարդ տար կնոջդ ցոյց տուր, և կատաղաբար վրայ պրծաւ:

—Պարոններ—ամօթ է, բաւական է, մէջ ընկաւ տի-կինը.—հանգստացէք ի սէր Աստուծոյ... ահա և թղթախաղի վերջը. ամօթ ձեզ...

Հակառակորդները խսկոյն բաժանուեցին և ատելութեամբ լի հայեացքներ գցելով միմևանց վրայ մօտեցան սեղանին և նստեցին:

Ճաշի սեղանը ճոխ էր և բացի սե, անմաքուր հացից բոլոր եղածը օտարամուռ. զինին իր վրայ կրում էր Թիֆլիսի յայտ-նի գինևաճառի անունը, կոնսեակը և արազը Ռուսաստանի էր, պանիրը զուբչերական, կարաղը՝ Թիֆլիզից, ձկնիթը և սար-դին ձուկը զործարանական էին, նոյն խսկ թոռումած կանաչին երեռմ էր որ ուրիշ տեղից էր բերուած. կրէնում ևմ, որ հա-ցից բացի՝ կալուածական ոչ մի բան չը կար սեղանի վրայ:

Ես յայտնեցի իմ ղարևանքս:

—Ջարմանալու ոչինչ չը կայ—պատասխանեց Իւան Տա-րասիչը.—որպէս զի մեր սեղանը զարդարուի կալուածի բեր-քերով, անհրաժեշտ է, որ կալուածը ունենայ իր սեփական տըն-տեսութիւնը, խսկ սեփական տնտեսութիւն չը կայ մեր կալուած-ներում:

—Խսկ կարելի՞ է խմանալ, թէ ինչու չը կայ—հետաքրքրուե-ցի ես:

—Ինչու, որովհետեւ փող չը կայ—բացատրեց Խսմայիլ-բէկը. մենք ալպում ևնք մեր զիւղացիների տուրքերով. զրա համար էլ ունենք այն, ինչ որ նա է տալիս մեզ—խոտ, ցորեն, զարի, բրինձ. մէկ-մէկ ստանում ևնք մօթալ-պանիր, բայց այնքան ան-մաքուր, որ ուտել անկարելի է:

—Խսկ զինին—գարձոյ ես իւան Տարասիչին—ձեր այզին տարեկան կարող է մի քանի հարիւր վեղրօ զինի տալ. այն ինչ գուք խմում էք Մակարօվի զինին:

—Մեզ համար ձեռնուու չէ զինի պատրաստելը:

—Ինչու:

—Որովհետեւ զինի շինել մեզ վրայ աւելի թանգ կը նստի, քան եթէ մենք գնենք:

—Չեմ հասկանում:

—Շատ պարզ է. մի քանի հարիւր վեդրօ զինի պատրաստելու համար մնաք պէտք է ծախսենք 3—4 հարիւր ոռւբլի և գարձեալ առանց զինու կը մնանք. որովհետեւ մեր շնած զինին պէտք է բաժանենք մեր հարեաններին և մեր իշխաններին:

—Այսինքն, հարցրեցի ես:

—Այսինքն՝ մեր սրելի Հասան-բէղին, դատաւորին, հաշտարար միջնորդին, բժշկին, անտառապակնետին, միրաբին, հարկային անօչին, այս հարեանին, այն հարեանին ևայլն ևայլն:

—Չը:

—Ի հարկէ ձրի, հօ չի կարելի դատաւորին, հաշտարար միջնորդին ևայլն ևայլն զինու հաշիւ ուղարկել—պատասխանեց իւան Տարասիչը:

—Իսկ ինչու չի կարելի:

Նա և նրա հետ բոլորը ծիծաղեցին:

—Չի կարելի, երիտասարդ պարոն, ասաց ժողովով Ազարար-բէղը, չի կարելի, որովհետեւ այդ հաշիւը քեզ մի քանի անգամ աւելի թանդ կը նստի, քան այն՝ ինչ որ արժէ ուղարկածդ զինին:

Ես այդ բացատրութիւնը տարօրինակ գտայ. Խսմայիլ-բէղը նկատեց այդ:

—Այսօր մտնում է ծառադ—ասաց նա, և յայանում է որ այս ինչ եաթաղչին իր ոչխարի հօտը քշել է քո այն ինչ եաթաղը և ուտացնում է. զու իբրև աէր զուրս ես զալիս և գնալով տեղն ու տեղը տեսնում ես, որ իրաւ եաթաղչին առանց մի կուղէկ անգամ վճարելու, ունատակ է անում քո շահերը— զու հրամայում ես նրան զուրս քշել քո եաթաղից ոչխարները. —Նա չէ լում և մի լաւ հայնոյում է քեզ: Դու զիմում ես ոյժի. հանւում են խենչարները և քո ծառաներից մէկը վիրաւորւում է: Ահա այսուղ սկսում է զինեղործութիւնը: Դու յայանում ես գաւառապետին, գաւառապետը պրիստաւին, պրիստաւը բժշկին, բժիշկը քննիչին, քննիչը հաշտարար միջնորդին: Եթէ զու զինուդ համար սաւացել էլ ըստ ներկայացրած հաշուի—օգնութիւն քեզ զալիս է մի քանի օրից, նա զալիս է և զնում է առանց մի կուղէկի օդուտ բերելու քեզ, քո շահերին. իսկ եթէ զինուդ համար զու ոչ մի հաշիւ չես ներկայացրել, այն ժամանակ գործը փոխւում է. ոստիկանութիւնը, բժիշկը, դատաւորը, քննիչը, հաշտարար միջնորդը ևայլն ևայլն իսկոյն պաշտպանում են քո իրաւունքները, եաթաղզ որ 150—200 ո. փող արժէր, ազատում է ունատակ լինելուց, մեղաւոր թուրք եաթաղչին պատժում է, բանտ է նստում և այնուհետեւ ոչ ոք չի հա-

մարձակւում քո ևաթաղիդ մօտովն իսկ անցնել—այժմ հասկացնք:

—Ճիշտ է, Հասան-բէգ, դարձայ ես պրիստաւին:

—Այո, ճիշտ է, պատասխանեց նա լրջութեամբ:

—Բայց դա ապօրինութիւն, կաշառք է, վրդովուեցի ես:

—Ոչ, դա ոչ ապօրինութիւն է և ոչ էլ կաշառք—այլ դրան կ'ասեն եզամնայ յըլուգա, բայցատրեց նա:

—Բայց չ<sup>բ</sup> որ ինձ օդնելով, դուք ձեր պարագն էք կատարում, այն պարտքը, որ ձեզ վրայ դրել են օրէնքները, որին դուք ծառայում էք—տաքայցայ ես:

—Մենք դարձեալ մեր պարտքը կատարում ենք, դարձեալ ծառայում ենք սուրբ օրէնքներին, երկու դէպքերումն էլ:

—Բայց իմ վեասը:

—Բայց գինին, ծիծաղեց Աղալար-բէգը:

Բոլորը ծիծաղեցին:

—Այո, այո, պարո՞ն, դարձաւ աիկինը, դուք դարմանում էք, դուք վրդոված էք. բայց այդ բոլորը ճիշտ է. կամայ տկամայ պէտք է հաշտուել այդ սովորական երեսյթների հետ և պէտք է իմանալ հօլա գնալ...

Մենք բարձրացանք ճաշի սեղանից:

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

(Ար օարունակուի)

# Ս Պ Ի Տ Ա Կ Զ Գ Ե Ս Տ Տ

(Միայնակ)

## I

Անարդ, խայտառակ պատժի էր մատնուած  
Հունգարցի կոմսը շղթան ձեռքերին.  
Նա ուզեց օդնել խեղճուկ, հալածուած  
իր հայրենիրին. հպարտ, վեհ ոդին  
Սաստիկ յուզում էր, Սարուկ էր զդում  
Սարուկների մէջ, և մինչ անսահման  
Զարիքի ընդդէմ կռիւ էր մզում,  
Թշնամին բռնեց և մատնեց մահուան:

Հաղիւ էր քսան նա գարուն տեսնում  
Եւ արդէն պէտք է թողնէր այս աշխարհ,—  
Մահից բնաւին նա չէր վախենում; —  
Դա սփոփանք է շատերի համար:  
Բայց սոսկալի է պարանը վզին  
Կախ ընկած ճօճուել հրապարակի մէջ...  
Սոված և քաղցած կը գան խմբովին  
Ու ագռաւները և կռիւ ու վէճ  
Կըսկան իսկոյն անտէր, անտէրունչ  
Նրա գլխի շուրջ. իսկ կոմսը՝ անձուկ  
Խոնաւ բանտի մէջ անդորր, լուռ ու մունջ  
Քնած է, ինչպէս մի անհոգ մանուկ:

Առաւօտեան վաղ, մօրը փարելով  
Նա մըմնջում էր. «Մայրիկ, մնաս բարե,

Ես քո զաւակն եմ միակ, բայց չուտով  
 Կը մարի պայծառ իմ մատաղ արև  
 Ու ես կ'անջատուեմ ընդմիշտ քեզանից:  
 Կը մեռնի անհետ ինձ հետ միատեղ  
 Եւ իմ անարատ, անունը անբիծ:  
 Ա՛խ, խղճա, մայրիկ. Ես արիւնահեղ  
 Կռուի գաշտի մէջ ահ չեմ իմացել,  
 Ես չեմ սարսափել կրակի առջե.  
 Բայց վազը՝ անարդ կախաղանի մօտ  
 Ես պիտի դողամ, ինչպէս մի տերե»:

— «Օ՛, մի սարսափիր, որդեակ հարազատ,—  
 Ասում է որդուն մայրը սիրտ տալով,—  
 Ես արտասուելով կը գնամ պալատ,  
 Եւ իմ աղերսով ու արցունքներով  
 Ես դութ կը շարժեմ արքայի որտում...  
 Եւ երբ քեզ տանեն առաւոտեան դէմ  
 Դէպի կախաղան, Ես պատշգամբում՝  
 Պատժատեղին մօտ, կանգնած կը լինեմ:  
 Եթէ ու զգեստ ունենամ վրաս  
 Իմացիր, որ քեզ սպառնում է մահ,  
 Զէ որ, զաւակս, դու պիտի գնաս  
 Ընդգէմ քո բախտի քայլերով վստահ...  
 Հօ Հունդարացու արիւն կայ քո մէջ.  
 Բայց թէ ինձ տեսնես սպիտակ շորով—  
 Իմացիր, մատաղ քո կեանքի համար  
 Գութ եմ աղերսել իմ արցունքներով:  
 Թռկ լինես յանձնուած ժանտ դահիճներին,  
 Բայց դու չը դողաս, որդեակ իմ անգին»:  
 Եւ խոնաւ բանտում մինչեւ առաւօտ  
 Քնած է կոմոց հանգիստ, անխուով,  
 Եւ երաղի մէջ՝ պատշգամբի մօտ  
 Միշտ մօրն է տեսնում սպիտակ շորով:

## II

Գումարկան դանդակի ձայնը հնչում է...  
 Վազում են մարդիկ... Պահապաններով  
 Չորս կողմը պատաժ կոմսը գնում է  
 Դէպի հրապարակ հանդարտ բայլերով,  
 Եւ քանի՛ աչքեր բաց ոլատուհանից  
 Ճամբայ են գցում արտասուբով լի,  
 Քանի՛ կանացի ընթռյշ ձեռքերից  
 Ծաղկունք են թափւում վերջին բարեկի:  
 Բայց կոմսը ոչինչ չէ էլ նկատում;  
 Նայում է առաջ անթարթ աչքերով—  
 Այնուեղ, ուր մայրն է կանգնած անտրտում՝  
 Պաւաշգամբի վրայ սպիտակ շորով:  
 Եւ կոմսի սիրով բարախեց ուժգին,  
 Դէպի կախաղան նա գնաց առաջ  
 Վստահ քայլերով... Զուարթ, խնդագին  
 Մօտեցաւ գահճին համարձակ ու քաջ...  
 Եւ մինչև անգամ պարանը վզին,  
 Ժպիտն էր խաղում նրա երեսին:

Ինչու էր մայրը սպիտակ հագած...  
 Օ՛, սրբազն սուտ, այդպէս կարող էր  
 Սոսկ մայրը խաբել, երկիւղով լցուած,  
 Որ կախաղանից որդին չը վախէր:

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵՍՆ

# Ա Ղ Զ Ւ Կ<sup>\*)</sup>

(Առողջապահակուն եւ բարոյագիտական եշխոդ):

## ԳԼՈՒԽ I

Տղամարդը իրեւ կնոջ վրայ խօսող եւ իրեւ նրան հովանաւորող.—Կինը մի սուր արարած է տղամարդու աչմին.—Խնձոյին էին նայում հենցը աղջկայ ծննդիան վրայ.—Սղջիկը ամօր է թերում ծնողներին.—Հայերի վերաբերումն զեպի աղջկայ ծնունդը.—Սղջիկների կոտորածը զանազան եւկրներում.—Բաղամակրուքնան ազդեցուքիւնը:

Մարդկութեան վայրենի և կիսավայրենի շրջաններում բոխի ֆիղիկական ոյժն է եղել մարդուս դոյութեան միակ գրաւականը՝ Ուժեղը միայն կարող էր իր գոյութիւնը պահպանել այնպիսի մի ժամանակ, երբ կեանքի կոխուը լոկ և միմիայն ֆիղիկական զէնքերով էր մղւում։ Նա միայն կարող էր ապրել, ով բաւական ոյժ ունէր ուրիշին ոչնչացնելու, որպէսզի խի նրանից նրա մի կտոր հացը։

Ֆիղիկական կոխուը տեսել է բիւրաւոր դարեր և մարդը իր ոյժը ամրացնելով աւելի բարձր բանականութեամբ, կամաց-կամաց նուածեց բնութիւնը։

Ֆիղիկապէս աւելի թոյլ, դատապարտուած բնութիւնից յղութեան ծանրութեանը, ծննդաբերութեան երկունքին և ծծմայրութեան պրօցէսսին, որոնք կաշկանդում-բռնանում են նրա ֆիղիկական զարգացման և մարմնական ու հոգեկան անկախութեան վրայ, կինը իր բնութիւնով միշտ մի նուազ անհատականութիւն է։

\*) Տիկ ամուլճ Նը 1.

ցոյց տուել և միշտ պէտք է ունեցել մի առոյգ ձեռքի  
հովանաւորութեան:

Եւ տղամարդը միշտ, ամեն դարերում երկու տես-  
սակ դիրք է ըռնել դէպի կանանց սեռը—նա հանդի-  
սացել է կամ իբրև տէր, կամ իբրև հօվանաւոր, նայե-  
լով, ի հարկէ, իր քաղաքակրթութեան աստիճանին:

Վայրենի ցեղերի մէջ, տղամարդը նայել է, և նայ-  
ում է այժմն էլ, կնոջ վրայ իբրեւ մի ստոր արարածի  
վրայ, ոչ շատ աւելի բարձր, քան այն կենդանիները, ո-  
սոնց նա նուաճել է և որոնցով օգտաւում է: Կինն այս-  
տեղ մի խելացի գրաստ է և միևնոյն ժամանակ մի հա-  
ճելի զուարճակիք:

Վայրենի ու կիսավայրենի ցեղերի մէջ հովանաւո-  
րութեան գաղափարը, իբրեւ աւելի բարձր հասկացո-  
ղութիւն, բոլորովին պիտի բացակայէր, կամ չափա-  
զանց նուազ կերպով արտայայտուէր: Փոքր ի շատէ  
քաղաքակրթուած ազգերը միայն ընդունակ են ըմբռ-  
նելու թոյլին, անպաշտպանին հովանաւորելու և օգ-  
նելու հումանիտար գաղափարը: Թէ այսպէս և թէ այն-  
պէս, սարկութեան թէ հովանաւորուած դրութեան  
մէջ թոյլ սեռը ամեն երկրում և ամեն ժամանակ  
կախումն ունեցողի դիրք է ըռնել դէպի տղամարդը,  
ճանաչելով նրան կամ իբրեւ ինքնակալ տէր իր կեան-  
քին և բախտին, կամ թէ չէ իբրև խնամատար, իբրեւ  
պաշտպան և նեցուկ, առանց որի նա անկարող է իր  
գոյութիւնը պահպանել:

Պէտք է շատ բարձրանալ քաղաքակրթութեան սան-  
դուխներով, հասնել մինչեւ անգլիական էմանցիալացիային  
և ամերիկական ազատամիտ կրթութեան, որ տեսնենք  
կնոջը համարեա ազատուած այս կապանքներից և ինք-  
նուրոյն մարդ դառած: Ասում եմ «համարեա», որով-  
հետեւ այդ երկրներում անգամ գեղեցիկ սեռը դեռ  
չի հասած կատարեալ ինքնուրոյնութեան:

Այսպէս, տղամարդը թէ իր վայրենական շրջանում

և թէ քաղաքակիրթ դրութեան մէջ միշտ իրան բարձր է դասել կանացի սեռից թէ ֆիզիկապէս և թէ մոտաւորապէս։ Պահպաննելով իր ֆիզիկական առաւելութիւնները, տղամարդը նախնական դարերից ի վեր պահպանել է երկրի գերիշխանութիւնը և հողագնտի օրէնոդրի մեծ իրաւունքը։ Հպատակուել են նրան բոլոր կենդանի (և նոյնիսկ անկենդան) էակները, հպատակուել է և կինը միւս կենդանիների շարքին։

Եւ ամեն տեղ տիրում էր այն համոզմունքը, թէ կինը մի ստոր արարած է ամեն տեսակէտից. չէ որ նա տղամարդու կողից է ստեղծուած։

Տղամարդու կարծիքով, բնութիւնն անգամ, նոյնիսկ մօր արգանդի մէջ, աղջկան աւելի ստոր տեղ է յատկացրել, քան տղամարդուն։

Այսպէս, հրէաները, յոյները, նոյն իսկ հռովմայեցիք համոզուած էին, թէ աղջիկը ծնւում է ու սազմանում մօր արգանդի ձախ կողմում, իսկ տղան աջ կողմում և հետեւաբար աղջկանով յղի կնոջ ձախ ստինքը աւելի է մեծանում ու լցւում կաթով, քան աջը։ Եթէ յղի կինը ցաւեր է զգում, թոյլ է, նիհարում է, եթէ նրա երեսի վրայ պղուկներ ու չէշեր են դուրս տալիս, եթէ գէմքը թորշումած է, կամ ոտերն ու աճուկները սառչում են—այդ ապացոյց է որ արգանդի պտուղը աղջիկ է, այն ինչ զուարթ ու առողջապէմ կինը տղայ կը ծնի։ Աղջկով յղի կինը առհասարակ աւելի է տանջւում, յղութիւնն ու ծննդաբերութիւնը աւելի դժուար են լինում։

Այսպիսով, ժողովրդի հասկացողութեամբ, աղջիկը նոյնիսկ մօր արգանդի մէջ մի պատուհաս է ծնողների համար։

Բայց այս բոլորը չեն։

Շատ աղգերի մէջ տիրում էր այն համոզմունքը, թէ աղջկայ սազմը աւելի ուշ է հոգի ստանում, քան տղայինը։

Նոյնիսկ հին գիտնականները հաւատում էին, որ տղան աւելի վաղ է հոգի ստանում, քան աղջիկը:

Հիպատիկոսը կարծում էր, որ տղան մօր արգանցի մէջ հոգի է առնում 30-դ օրը, իսկ աղջիկը 40-դ։ Արիստոտելի ասելով այս տարբերութիւնը աւելի մեծ էր, այն է—տղան 40-դ օրը, իսկ աղջիկը միայն 80-դ օրը։

Մի հին գրքում (XVI դարու) ասուած է.

«Եթէ պէտք է աղջիկ ծնուի, պառզը շարժւում է իննսուներորդ օրը, իսկ եթէ պառզը տղայ է, շարժումներն զգացում են շատ աւելի վաղ, քառասունքին մէջ։ (Ուրիշ տեղերում, օր. Էստլանդիայում աղջկայ շարժումը տեղի է ունենում 4-դ ամսում, իսկ աղայինը 3-դ։)

Եւ քանի որ այն ժամանակներում կարծում էին, թէ սաղմը սկսում է խաղալ այն րոպէին, երբ հոգին մտնում է նրա մէջ, հետեւաբար ենթադրում էր, որ հոգին աւելի ուշ է իջնում աղջկայ մէջ, քան տղայի։

Մի քանի կիսավայրենի աֆրիկական ցեղերի մէջ աղջիկը որոշ գրամագլուխ է, որովհետև նրանց փեսացուն գնում է, վճարելով մի քանի տնային կենդանի, այս պատճառով աղջկայ ծնունդը նրանց մէջ աւելի մեծ հրծուանքով է տօնւում. բայց այս գէպքերը բացառութիւն են և ընդհանուր վերաբերումն գէպի աղջկայ ծընունդը ամենուրեք արհամարհական և թշնամական է եղել։

Աղջիկ ծնելը ամօթ է բերում մօրը։

Մի զարմանալի նախապաշտամունք գոյութիւն ունի Ռուսաստանում: «Եթէ հարց տաք մի յղի կնոջ, թէ ինչ կը ծնի,—տղայ թէ աղջիկ, և նա կարմրի, այդնշանակում է, որ արգանդում աղջիկ է, իսկ եթէ չը կարմրի—տղայ է»։

Տեսէք, թէ որչափ ամօթալի բան է աղջկով յղանալը, որ մայրը, նոյնիսկ չիմանալով, թէ ինչ է իր փոքրումը, ամօթից կարմրում է։

Դուրանում այսպէս է նկարագրում արաբի հո-

գեկան դրութիւնը, երբ նա լսում է, որ իրան աղջիկ է ծնուել. «Նրա դէմքը մռայլւում է և նա մեծ վշտի մէջ է ընկնում. խուսափում է մարդկանցից և հարց է տալիս իրան, պահի այդ ամօթահար երեխային, թէ թաղի նրան»:

Միւնոյնը տեսնում ենք, ըստ Շալկօվի, և հիմնարաբական ցեղերի մէջ. նոյնն է և հնդիկների, պարսկիների, նեգրերի, եազօնացիների ու չինացիների մէջ։ Ամենամեծ անպատճութիւն է մանդարինի համար, երբ հարցնես նրան թէ աղջիկ ունի նա թէ ոչ։

Պլուը իր գրքի մէջ առաջ է բերում Միջն-Ասիայի թիւրքմէն ցեղի երգը.

«Աւելի լաւ է, որ աղջիկը արեւի լոյս չը տեսնի, այլ մօր արգանդում մեռնի. իսկ եթէ ծնուել է, աւելի լաւ է, որ իսկոյն մեռնի։ Այս ժամանակ ծննդեան հետմիասին կը տօնեն և թաղումնա։

Նոյն ձեւով են վերաբերում աղջկան և բոլոր ասիական ցեղերը։ Կանայք ամաչում են աղջիկ ծնելիս, կարծես յանցանք կատարած լինէին։

Հին գարերի հասկացողութեամբ ծննդաբերութիւնը պղծում է կնոջը. մաքրուելու համար որոշ ժամանակ էր որոշուած։ Այս ժամանակամիջոցը աղջկայ ծնունդից յետոյ աւելի երկար էր, քան տղայի ծննդից, որովհետև աղջիկը աւելի է պղծում մօրը։

Մոլոկսի օրէնքով եթէ կինը աղայ է ծնել, նա անմաքուր է եօթն օր, իսկ եթէ զաւակը աղջիկ է— երկու շաբաթ։ Այդ ժամանակամիջոցին նա իրաւունք չունի տաճար մտնելու և սրբազն իրերին ձեռ տալու։

Հայերի մէջ նոյնիսկ մեր օրերը նկատում է նոյն պէս արհամարհանք դէպի աղջիկը։ Աղջիկ ծնող մայրը կարծես ամաչում է իր սկեսարի կամ տագրերի առաջ։

Գանձակի գաւառում աղջկայ ծնունդը տիրութիւն է պատճառում թէ ծնողներին և թէ ազգական-ներին։ Մայրը, կարծես մի յանցանք գործած, կուչ է գալիս, ամուսինը երբեմն բարկանում է կնոջ վրայ,

Երբեմն էլ ամենակոպիտ խօսքերով հայհոյում նրան։ Սկեսարը անիծում է նրան ասելով. «Զահէլ տղիս օրը սեւացրիր, ջինսդ (սերունդդ) կարուի»։ Ազգական կանայք գալիս են ոչ թէ աչքալուս տալու, այլ միսիթարելու. «Բան չը կայ, աղջիկ բերողը աղայ էլ կը բերի, հէրն ու մէրը սաղ ըլին»։ Անիծում են նոյնպէս տատմօրը. «Զեռքդ կոտրուի, մէկ էլ մեր տանը աղջիկ չը փաթաթես \*):

«Ի հարկէ, այս գժգոհութիւնը այնքան աւելի է լինում, որքան շատ աղջիկ երեխաներ ծնուած են այդ գերգաստանում։ Պատահել են գէպքեր, որ նորածին աղջկան տաշտակի տակին են գրել ու սպանել։

«Այսպէս վերաբերուելու պատճառն այն է, որ աղջկան «ուրիշի ապրանք, գրսի պատ են» համարում, 10—15 տարի հայրենական տան մէջ ապրելով, ծախսերի ենթարկելուց յետոյ թողնելովնալու է։ Այն ինչ արու երեխան «տան սիւն է, ծերութեան նեցուկ է, օջախը վառ պահող, ծնողաց յիշատակը պահպանող, նրանց գերեզմանը օրհնել առևող է» \*\*):

Շուշու գաւառում (Վարանդա), աղջիկ բերող հարսը նոյնպէս հալածանքի է ենթարկելում։ Սկեսարը անէծքներ ու հայհոյանքներ է թափում խեղճի դիխին։ Աղջկայ ծննդին կերուխում, աչքալուս չի լինի։ Շատ դէպքեր են պատահել, որ մի քանի աղջիկ բերող կնոջը դուրս են արել տանից \*\*\*):

Աղջիկը ծանր բեռ է համարւում ընտանիքի համար, քանի որ պահանջում է մեծ ծախս մինչև մեծանալն ու մարդու գնալը.—Նրան պէտք է լաւ հագցնել, այն ինչ իբրև բանուոր այժ, նա թոյլ է և յաճախ անպէտք իսկ որչափ մեծ ծախքեր են պահանջում նրանք ամուսնանալիս։

Կայ և մի ուրիշ երկիւղ, այն որ աղջիկը կարող է

\*) «Պանձակի գաւառ», Ե. Լալայեան։

\*\*) նոյն տեղի

\*\*\*) «Վարանդա», Ե. Լալայեան։

«պառաւել, տանը մնալ», Եթէ նա տգեղ է կամ բաժինք չունի։ Այդ արդէն մի մեծ դժբախտութիւն է ծնողների համար։

Այս պատճառով էլ մի քանի աղջիկ ունենալը Աստուծու անէծք ու պատուհաս է համարւում, և ծընողները ուրախ են, երբ աղջիկներից մէկն ու մէկը հիւանդութիւնների ու արկածների զոհ է դառնում։

Բաֆֆին նոյնպէս մատնացոյց է անում այս վերաբերումը դէպի աղջիկը։

«Եթէ ծնունդը տղայ է, նրա անկողինը շրջապատում են մի խումբ պառաւներ, որոնք գործ են դնում իրանց ամբողջ կախարդական արհեստը մօր և նորածին մանուկի կեանքը անվնաս պահելու «չարկից», «արերից», «քաշըերից», «գեւերից», «մեղնից աղէկներից», սատանաներից ևայն։ Մանուկի օրօրոցը նոյնպէս զրահաւորում են բժժանքներով, յուռութներով, մահիկներով և մինչև անգամ տէրտէրի գրած «բըթիկներով»։ Իսկ աղջիկը զուրկ է մնում այդ նախախնամութիւններից։

Տեղտեղ այս ատելութիւնը դէպի աղջիկը այն աստիճանի է հասնում, որ ծնողները սպանում են նորածին երեխային։

Աղջկայ սպանումն կատարւում է մեծ ծաւալսվ հնդկական և չինական երկրներում։ Այդ գարշելի սովորութիւնը տեղի ունի նաև Աւստրալիայում և մօտագայ կղզիների վրայ։

Որդեսպանութեան շարժառիթներից ամենագլխաւորը, անտարակոյս, աղքատութիւնն է։ Ծայրայեղ չքաւորութեան մէջ ապրող աղդերի մէջ անընդհատ տիրում է սովը։ Ուժեղ բանուոր տղամարդք հազիւ է կարողանում իր գոյութիւնը պահպանել, և մի աւելորդ որկորը ընտանիքի մէջ ահագին ծանրութիւն է։

Չինաստանում և Հնդկաստանում ապրող տասնեակ միլիոնաւոր աղդաբնակութիւնները, խոնուած լինելով

մըջնային համայքների պէս մի կտոր հողի վրայ, որ դադարել է նրան բաւարար բրինձ տալուց, ընկճուած իշխող գասերի սոսկալի կեղեքման ու ճնշման տակ, ետ մկուած առեւտրական կենտրոններից գէպի երկրի խորքերը,—այդ օգորմելիները բնականաբար պիտի ձդտէին դանդաղացնելու իրանց աճումն, և հասնէին անհրաժեշտաբար որդեսպանութեան ահօելի գաղափարին: Եւ այս «անհրաժեշտ չարիքի» զոհերը պիտի լինէին թոյլերը, որոնք անկարող են մաքառել և իրանց ապրելու միջոց հայթայթել, այսինքն—աղջիկները:

Աղջիկը մեծ խնամք ու ծախք է ոլոհանջում և մի- նոյն ժամանակ անպէտք է ծանր աշխատանքի հա- մար,—նա մի աւելորդ ուտող «բօղազ է», որը լցնել անկարող են կիսաքաղցած ծնողները:

Հնդկաստանի մի քանի տեղերում աղջիկներին սպանում են, որպէսզի ազատ մնան հարսանիքի ծախսոց, որ չափազանց մեծ է և կլանում է համարեա ծնողների ամբողջ կարողութիւնը:

**Սոսկալի է սպանութեան ձեւը:**

Յաճախ նորածին աղջկան ուղղակի գցում են աղ- բի կողովի մէջ, կամ հօր են փորում ու կենդանի-կեն- դանի թաղում, Հնդկաստանում ուղղակի գցում են Գան- գէսի և ուրիշ գետերի սրբազն համարուած ջրերը: Կամ հայրը ուսով ջնջխում է երեխային, կամ՝ դլուխը պատին է խփում և այն և այն:

Հնդկաստանում և Չինաստանում աղջիկների սպա- նութիւնը ահազին ծաւալով է կատարում և կարծես սրբագործուած է: Հայրը սպանում է իր աղջիկներին, եղբայրը քոյրերին: Զը նայելով անդլիական կառավա- րութեան խստագոյն արդելքին, հնդկական ընտանիք- ներում իդական սեռի մի սոսկալի կոտորած է կա- տարում: 1836 թուին Հնդկա-անդլիական կառավա- րութիւնը քննութիւն բացեց այդ մասին, որից գուրս եկաւ, որ Բաջպուտանի նահանգներում 10,000 մարդ- կանց մէջ ոչ մի աղջիկ չէր մնացել: Մի ուրիշ նահան-

դում՝ մարդիկ խոստովանւում էին, թէ 100 տարուց առևլի է, ինչ ոչ մի էդ երեխայ կենդանի չի թողնւում։ Վաթսունական թուականներին կատարուած քննութիւնը ցոյց տուեց, որ համարեա բոլոր հնդկական նահանգներում որդեսապանութիւնը տեղի էր ունենում, այսպէս որ աղջիկ երեխայ գրեթէ բոլորովին չէր մնացել և տասնեակ, նոյնիսկ հարիւրաւոր տարիներ շատ տեղերում հարսանիք չէ եղել, և տղամարդիկ ուրիշ երկրներից են իրանց կին բերել։

Աֆրիկական մի քանի վայրենի ցեղերի մէջ սովորութիւն կայ գրաից կին բերել, որովհետեւ իրանց մէջ աղջիկ զաւակ չի մնում։

Հայերի մէջ բրիտանէական ոկրքունքները, ի հարկէ, թոյլ չեն տալիս ոչնչացնելու էդ երեխային, սակայն կայ յիշատակութիւն, որ պատահել են սպանութեան դէպքեր։ Յամենայն դէպս «աղջկայ մահը մի ներքին բաւականութիւն է պատճառում շատ հայ ծնողի», ինչպէս նկատում է Բաֆֆին։

Մեր ժամանակներում անդամ այս որդեսապանութեան զարհուրելի սովորութիւնը թագաւորում է շատ տեղեր։ Յէլօն և Մադագասդար կղզիների վրայ, բոլոր աղջիկները կոտորուում են, բացի առջնեկից։ Մի քանի արաբական կոապաշտ ցեղերի մէջ, ըստ Շակօվի, աղջիկներին թոյլ է արտօւմ ապրել մինչեւ վեց տարեկան հասակը։ Այդ ժամանակ հայրը տանում է երեխային ջրհորի մօտ, հրամայում է կունակ և նայել, և այդ բոսպէին սւժով խփում է վզին, դլորում ջրհորի մէջ ու հորը լցնում հողով։

Հին կլասիկ երկրներում (Յունաստանում և Հռոմում) աղջկայ ծնունդը այդպէս թշնամաբար չէր ընդունում։ Այնտեղ աղջկայ վրայ նայում էին իբրև ապագայ զինուորների մօր վրայ, այդ պատճառով էլ աղջկանից պահանջւում էր գեղեցիկ և առողջ մարմին, ինչպէս և տղաներից։

Հայրը նորածին երեխային պիտի ներկայացնէր

թաղական ծերուճիներին, որոնք զննում էին նրան ու իրանց վճիռը տալիս Եթէ նա լաւ կազմուած ունէր, մտցնում էին բաղաքացիների անուան ցուցակի մէջ, իսկ Եթէ նա մի որեւէ արատ ունէր կամ թուլակադմ էր, շպրտում էին ձորը Տայգետեան կոչուած բարափից:

Նորագոյն ազգագրական տեղեկութիւններին նայելով արատաւոր երեխաններին ոնչացնելու սովորութիւրը գոյութիւն ունէր և ունի այժմս էլ զանազան աղբութիւնների մէջ:

Ահա թէ ինչպէս են նայել, ու նայում են այժմ ևս, աղջկայ ծննդի վրայ: Աղջիկը մի աւելորդ ծանրութիւն է համարում, որից վազօրօր ազատուելու փափագը մղում է ծնողին մինչև անդամ գէպի որդեսպանութեան ոճիլը:

Մուհամմէդի և ուրիշ մեծ խորհողների ու յեղափոխիչների, մանաւանդ Քրիստոսի մարդասէր ուսմունքները ձգտել են միշտ աղգերին սէր ներշնչելու դէպի կանացի սեռը, սակայն անկարող են եղել հաւասարեցնել երկու սեռերը: Անտարակոյս, քանի քաղաքակրթուում է մի ազգ, այնքան աւելի է նուազում այդտարբերութիւնը, բայց դարձեալ, նոյնիսկ քաղաքակրթուած աղգերի մէջ, աղջկայ ծնունդը չի բերում ծնողներին այն հրճուանքը, ինչ որ տղայինը, այլ ընդհակառակը գցում է նրանց սրտի մէջ մի խուլ, զսպուած անբաւականութիւն ու դժգոհութիւն:

ԲԺՊ. Վ. ԱՐԾԲՈՒԽԻ

(Կը ռարուճակուի)

## ՄԱՍԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Օ) Էմինեան տպագրական ժողովածու, հրատարակութիւնը և ազարեսն ձեմարանի Սրբելեան Նեղուաց. (Թափառ Թուուրագի ամբարներից, հաւաքեց Ա. Միթարեանց, Մոսկուա-Նլեքսանդրովու, 1901 թ., գ. 1 և.՝ Համուր Բ. Ժողովրդական վեպ և հէքէսթ. հաւաքեց Ա. Հայկունի, Մոսկուա-Վաղարշապատ. 1901 թ., գ. 1 և. 25 կ.)

Ազգագրական դիտութիւնը, ինչպէս յայտնի է, զբաղւում է առանձին ժողովրդների կետնքի բոլոր երեւոյթների նկարագրութեամբ, սկսած նրա Փիպիկական առանձնայատկութիւններից, նիստ ու կացից մինչեւ հոգեկան ամենաբարձր արտայայտութիւնները: Մի խօսքով, չը կայ այդ կեանքում ամենաչին մանրամասնութիւն սննդամ, որ նշանակութիւն չունենար մի ժողովրդի ազգային ինքնուրոյնութիւնը կատարելապէս ճանաչելու համար: Ազգագրական նիւթերի հաւաքումը սկսւում է այն օրից, երբ ինտելիգենցիայի մէջ ծաղում է ազգային ինքնաճանաչութեան գաղափարը: Այսուհետեւ այդ նիւթերի հաւաքումը և ինքնաճանաչութիւնը, կարելի է ասած, ուղիղ յարաբերութիւնով են աճում, զուգահեռաբար են զարգանում:

Գաղափար ստանալու համար ազգագրական մեխուզով ժողովրդի կեանքը ուսումնասիրելու մասին՝ կարող է ընթերցողը ծանօթանալ պ. Ե. Լալայիսանի հրատարակութեամբ լոյս տեսնող «Ազգագրական Հանդիսի» նիւթերի, օրինակ, Բենսէի «Բաւլանըխ» գեղեցիկ ուսումնասիրութեան հետ: Եթէ ապա նա համեմատի «Եմիննան ազգագրական ժողովածուի» լոյս տեսած երկու հատորների բովանդակութիւնը, ընթերցողը անշուշտ կը տեսնի, որ Լազարեան ճեմարանի այդ հրատարակութիւնները լիակատար չեն և վերաբերում են, գլխաւորապէս, ազգագրութեան միայն մի մասին, ժողովրդական բանահիւսութեան:

Ուրիշ խօսքներով «Էմինեան ազգագրական ժողովածուի» նիւթերը առաւելապէս վերաբերում են էմինօգրաֆիայի (ազգագրութեան) այն ճիւղին, որ կոչւում է ֆօլկլոր, այսինքն բանաւոր գրականութիւն:

Դա ազգագրութեան ամբնակարեւոր ճիւղն է, որովհետև բանաւոր դրականութիւնը այն անսպառ ազբիւրն է, որից դրաւոր գրականութիւնը կարող է վերցնել թարմ գոյներ, ազգային համ ու հոտ, ոճի առանձնայատուկ կորով և գեղեցկութիւն։ Պէտք է չը մոռանալ որ քաղաքակրթութեան հոսանքի հետ, երկաթուղիների զծերի անցնելով, անհետանում են նահապետական նիստ ու կացը, սովորութիւնները, հաւատալիքները և, դժբախտաբար, նաև ժողովրդական ինքնուրոյն բանահիւսութիւնը. ուստի ինչքան եռանդուն լինեն այդ սուրբծագործութիւնները ազգային մտաւոր շտեմարաններում հաւաքող կազմակերպութիւններ, այնքան չատ բան կ'ազատուի կորուստից և խեղաթիւրութիւններից։

«Էմինեան ազգագրական ժողովածուի» առաջին հատորը կազմուած է Շիրակի գաւառում Աղ. Միթթարեանցի հաւաքած նիւթերից, իսկ Արկրորդ հատորը՝ Ս. Հայկունու հաւաքածներից և պարունակում է թիւրքաց Հայաստանի Մոկայ, Արձէշի, Բուլանըսի և Կուլապի բարբառներով ժողովրդական վէպեր և զանազան բարբառներով զրած ժողովրդական հէքիաթներ։

Ի հարկէ, «Էմինեան դրամազլուխը» այնքան մեծ չէ (կարծեմ մօտ 10 հազար), որ նրա տոկոսներով կարելի լինէր կազմակերպել զանազան դաւառների ազգագրական ուսումնասիրութիւնը, ուղարկելով յատուկ բանահաւաքներ կամ հետազոտողներ, սակայն նա կարող էր տւելի սիստեմատիկաբար և ընդարձակ չափերով զլուխ բերել իր առաջ զրած նպատակը, եթէ աջողուեր զրաւել մեր հասարակութեան համակրութիւնը Այդ հասարակութիւնը այժմ իր առաջ տեսնում է զրուած «Էմինեան դրամազլուխ» գործադրութեան զեղեցիկ սկզբնաւորութիւնը։

Նրանք, որոնք ըմբռնում են ազգագրութեան կարեւորութիւնը մեղանում և ցանկանում իրանց կարողացածին չափ նպաստել այդ ուղղութեամբ գործող օրգաններին—առայժմ ունեն երկու լուրջ ձեռնարկութիւններ. Մոսկուայի «Էմինեան ազգագրական ժողովածուն» և Թիֆլիսի «Ազգագրական Հանդէսը»։ Երկուսին էլ ցանկանում ենք կատարեալ աջողութիւն։

**10) Ս. ՎԵՐԱԿՐ, «Եւարատը Սուրբ Գեղց մէջ», թարգմանեց Հ. Բ. Պիեղիկճեան, Վիեննա, 1901, էր. 77, գին 1 ֆր.: (Ազգային Մատենադարան, 1, արտասալքած «Հանդէս Ամսօրեալից»):**

Ս. Գրքի մէջ հինգ սնդամ յիշուած է Արարատ բառը՝ «լերինը Արարատայց, «Երկիր Արարատայց, «Թաղաւորութիւն Արարատայց» խօսքերում։ Մի անդամ՝ Արարատի թագաւորութեան հետ կից յիշուած են «Մեննեանց և Ասքանազի» թագաւորութիւնները։ Ինչպէս Ս. Գրքի մէջ պատահած ամեն մի անուն առարկայ է եղել բազմաթիւ հետազօտութիւնների ու մեկնութիւնների, այնպէս էլ եղել է Արարատ բառը, մանաւանդ որ Արարատի լեռների վրայ է հանդչել նոյնի ատապանը և գլխաւորապէս Արարատի թագաւորութիւնը Երեմիա մարգարէի Կողմից հրաւիրուում է Բաքելոնը կործանելու.. այնպէս որ Արարատը առանձին կարերութիւն է ստանում թէ նուիրականութեամբ, իբրև մարդկութեան երկրորդ խանձարուք, Ս. Գրքի տեսակէտով, և թէ իբրև պատմական-բազաքական դեր կատարող-պետութիւն։

Բնական է ուրեմն, որ հարիւրաւոր հեղինակներ հին և նոր ժամանակ, —մեկնիչներ, աստուածաբաններ, հնախօսներ և այլն զբաղուէին որոշելու, թէ ինչ է այս Արարատը և որ երկիրը կամ լեռն է այժմնան աշխարհագրական անունով։ Հին հեղինակներն առհասարակ և նորերից էլ շատերը Արարատը հասկացել ու մեկնել են Հայաստան Սյն աստիճան ստոյգ է համարուել այս հասկացումը, որ մինչի իսկ եբրայեցերէն բնազրիք թարգմանելիս՝ գանազան լեզուներ բնազրի Արարատ բառի փոխարէն գործ են ածել Հայաստան բառը (Արմենիա). այսպէս վարուել են յունարէն, լատիներէն, ասորերէն և հայերէն թարգմանութիւնների մէջ։

Դոկտօր Ս. Վէրէք հայազէտ աստուածաբանը իր այս աշխատութեան մէջ մի նոր փորձ է անոււմ քննելու այս բառը և բացատրելու, թէ նրբան ճիշտ է Արարատի այս աւանդական նոյնացումը Հայաստանի հետ։ Նախ մէջ բերելով նախկին մեկնիչների ու զիանականների կարծիքները այս հարցի առիթով՝ նա զիմում է ապա Հայաստանի պատմութեան և աշխարհազրութեան նորագիւտ ամենահին աղբիւրներին, այսինքն Ասուրեատանեան և Հայկական (Ուրարտեան) աւագիր արձանագրութիւններին, նրանց մէջ վնտուելով հիմքեր՝ որոշելու համար Արարատի ինչ և որտեղ լինելը։ Այս արձանագրութիւնները ներկայումս այն աստիճան ուսումնասիրուած են, որ արդէն կարող

են օժանդակ դասնալ և լրյս սիսել Առաջաւոր Ասիայի հնագոյն պատմութեան ու աշխարհազրութեան վրայ:

Մանրամասն քննելով ու համաժամանելով՝ սեպագիր արձանագրութիւնների մասին կատարուած այս ուսումնասիրութիւնները՝ հեղինակը զայիս է հետեւել եղբակացութիւններին.— Սպահանագեան թագաւորութիւնը Հայաստանի սահմաններից զուրս է (այնպէս որ մեր հին հեղինակների՝ հայերին տուած և Ասքանաղեան աղդ) կոչումը սխալ է):— Նոյնպէս Հայաստանից մեծ մասամբ զուրս է Մանը կամ Միւնի (Մաննաի) թագաւորութիւնը Սա Արարատից բոլորովին տարբեր թագաւորութիւն է եղել, որ վերջը Հայաստանի սահմանների մէջն է մտել:— Իսկ Արարատը երկրի անուն չէ և ոչ լեռան: Արարատը (սեպագիրների Ուրարտուն) քաղաքական հասկացողութիւն է, պետութեան անուն, որի կենարունական անդը եղել է Վանայ լճի հարաւարենեան կողմը. Նրա սահմանները պատմութեան ընթացքում փոփոխուել են: Երբ, զիսնականների ենթագրութեամբ, հնգիկեւրոպական հայ ցեղը զաղթեց Առաջաւոր Ասիա՝ կոռուփ բռնուեց Արարատի պետութեան հետ և հետզհետէ նրան նեղելով ու քշելով՝ նրա երկիրները գրաւեց. Նրանց մի մասը ոչնչացաւ, միւս մասը գաղթեց դէպի հիւսիս: Արարատոց վերջին ոյժերը հաւաքուեցին Արաքսի ոռողած ընդարձակ դաշտում, որ նրանց նախկին անունը իր վրայ պահելով՝ Այրարատանեան դաշտ կոչուեց: Սյստեղ էլ ոչնչացաւ նրանց տէրութիւնը՝ հայերի և վերջնականապէս մարերի ձեռքով, որոնք նուաճնեցին նաեւ հայերին: Այս կերպով՝ Ս. Գրքի Արարատը չէ կարելի հասկանալ Հայաստան, այլ Վանայ լճի շրջակայքը զըտնուող մի տէրութիւն, որ շատ ժամանակ անցնելուց յետոյ Հայաստանի մէջ մտաւ՝ իբրև նրա մի մասը: Սրանից հետեւում է նաեւ, որ Արարատի սահմաններում, գանուող լմուը, որի վրայ տապանը հանգչել է՝ չէ կարելի Մասիսը համարել: Տապանը նստել է կորդուաց լեռներից մէկի վրայ. այս են վկայում թէ պատմական հետազոտութիւնները և թէ հայող հին հեղինակները, որոնցից և ոչ մէկն անգամ չէ յիշում, որ Մասիսի վրայ նստած լինի տապանը: Հայոց մէջ աղքային հին աւանդութիւն էլ չը կայ այս մոքով: Մասիսը տապանակիր լիու է սկսուել համարուել համեմատաբար ուշ ժամանակ, 11-րդ դարից ոչ առաջ:

Հեղինակի եղբակացութիւններն ընդունելով՝ պէտք է նըկատենք, որ նրանցից վերջինը, այսինքն տապանի կորդուաց լեռներում և ոչ Մասիսի վրայ նստելը՝ նոր չէ: Այս միտքը վաղուց ապացուցուած ու հաստատուած է. սակայն հեղինակը ծա-

Նոթ չէ եղել սրան, որովհետեւ չէ դործածել աղբիւրներ նոր հայերէն և ռուսերէն լեզուներով:

ԱՏ. ՄԱԼԻԱՍՍԵԱՆՑ

11) „Das Gewerbe in Georgien“ („Արհեստը Կրաստանում“), von Dr. Philipp Gogitschayschwili. Tübingen. 1901.

Այս վերնաղիրս ունի վրացի պ. Գօղիտշայշվիլիի գօկտօրական աշխատութիւնը, որ նա տուել է վերջերս Լայզցիդի համալսարանի անտեսագիտութեան յայտնի պրօֆէսօր Բիւխերի մօտ նայն պրօֆէսօրի մօտ է քննուել նաև պ. Ս. Թառայեանը, ներկայացնելով «Das Gewerbe bei den Armeniern» («Արհեստը հայերի մօտ») գօկտօրական դիսսերտացիան:

Նախ քան այս աշխատութեան բովանդակութեան և ուսումնական արժանաւորութեան անշնչը, կարեսը ենք համարում փոքր ինչ կանգ առնել ներածութեան և զրքի զանազան ծանօթութիւնների մէջ վրացի հեղինակի յայտնած մի քանի կէտերի վրայ:

Վրաց ներկայ ինտէլլիգենտ ոյժերի և մամուլի մասին գաղափար ունեցող մարդը հազիւ թէ, ներածութեան երկու երեսը կարդալուց յետոյ, չը կարողանայ որոշել հեղինակի գոյնը յատկապէս այն դիրքի նկատմամբ, որ ունի վրաց ինտէլլիգենցիայի մի մասը դէպի կովկասեան հայերը եւ իրաւ չի սխալուիլ ընթերցողը իր ենթադրութեամբ. մի քայլ առաջ, և նա բաց է ի բաց կը նկատէ այն զայրոյթով լի ատելութիւնը, որ անիմայ թափում է գօկտօր Գօղիտշայշվիլին հայերի գլխին:

Անշուշտ, յայտնի ճշմարտութիւն է, որ իւրաքանչիւր գիտական թեմա միանգամայն հեռու պիտի լինի կանխակալ տենդենցիայից, միտումից, և գիտական տնաշառութեամբ վերաբերուի քննող հարցին, մինչդեռ վրացի հեղինակը տոգորուած է անշափ վրացամուլութեամբ և անտեղի հայատեցողութեամբ:

Վրացի հեղինակը ներածութեան մէջ նախ թւում է այն բոլոր անունները, որոնք տալիս են Վրաստանին շրջապատ ցեղերն ու եւրոպացիք: Վրացիք կոչում են իրանց երկիրը «Սաքարթվելո», գերամանացիք՝ «Georgien», ֆրանսիացիք՝ «Géorgie», անգլիացիք՝ «Georgia», պարսիկներն ու թաթարները՝ «Գիւրջիստան», թիւրքերն ու քրդերը՝ «Գիւրջ», Հապա հայերը՝ Անշուշտ կարիք չէ համարել գօկ. Գօղիտշայշվիլին հայերից «Վրաստան» կոչուող անունը տալ:

Ապա հեղինակը հումառուս նկարագրում է Վրաստանի հին պատմա-աշխարհագրական և ներկայ քաղաքական բաժանմունքները, սահմանները; Նու նկարագրում է Վրաստանի բնութիւնը հիազանչ գոյներով, նոյն իսկ «արքայութիւն է» անուանում նրան; Սակայն աւելի է հպարտանում, երբ անշունչ բնութիւնից անցնում է վրաց ժողովրդի պատմական գերը որոշելու խնդրին: «Առաջաւոր Ասիայի կուլտուրական ցեղերի մէջ վրաց ազգը ամենանշանաւոր տեղն է բնում: Զը նայելով իր աննշան քանակութեան, որ ամբողջ պատմական անցեալում չի եղել աւելի, քան մի միլլիոն, այսուամենայնիւ դարեր շարունակ այդ քաջամարտիկ ժողովուրդը ամբողջ Կովկասը նուածել և իր տիրապետութեան է հնդարկել, զիմազրելով չորս կողմից սպառնացող այնպիսի ահարկու ոյժերի, ինչպէս են պարսիկները, արաբները, թիւրքերն ու թաթարները», ասում է հեղինակը:

Բայց աւելի հետաքրքիր է հայերին ուղղած նրա անէծքները: Գրքի վերջին զինում, երբ անային բոլոր աշխատանքների, արհեստների մասին իր առելիքը վերջացնում է, հեղինակը անցնում է կազիտալիստական արտադրութիւններին («Կարիեթիստիկա Produktion»). 19-րդ դարու սկզբներում և մասնաւոր երկրորդ կիսում, վրաց ժողովուրդը, առօսել քաղաքներում, գուրս է գալիս իր զբաղմունքի շրջափակ սահմաններից և մտնում առնորի լոյն ու կենդանի ասպարէզ, բուն տալիս մեծամեծ ձեռնարկութիւնների, ուր բնականարար նա պիտի զործ ունենար ոչ թէ փոքրիկ և մեծ մասամբ նոյնացեղ համայնքի հետ, այլ իր անտեսական յարաբերութիւններով նապիտի շփուէր շրջապատող զանազան ազգերի հետ: Նրջապատ ազգերից հէնց միայն հայն է, որ, ըստ գոկտոր Գօդիտշայշվիլիի, ամենավեսակար տարրն է հանդիսանում վրաց ժողովրդի ինքնուրովն զարգացման և տնտեսական բարելաւութեան խնդրում: Հէնց միայն հայն է, որ այնքան խայթող փուշ է դարձել հեղինակի աչքում, և որի գէմ ուղղել է նա իր սլաքները: Նա իր ասածների վկայութիւն է ծառայեցնում նաև զանազան անմիտ տեղեկութիւններ, քաղած մի ճանապարհորդի գրաւածքից («Georgien. Natur, Sitten und Bewohners». A. Leist): «Հայերը գալիս են իրանց հայրենիքից, որպէս փախստականներ—զրում է դոկ. Գօդիտշայշվիլին, քաղելով Leist-ի զրուածքից—գէպի Վրաստան, յատկապէս թիֆլիս և նրա շրջակայ գտւառներն ու գիւղերը, ուր նրանք սիրալիր ընդունելութիւն են ունենում աեղական բնակիչներից: Փոքր ժամանակից յետոյ, հայերը ի չարն են զործ զնում իրանց ցոյց առւած բարեկամական յարաբերութիւնները, և Վրաստանում կատարում են հրէայի գեր... Հայը

ստիպուած է տրհեստներով և առետրով իր հայը վաստակել, որովհետեւ զուրկ է երկրագործութիւնից և նրա հարստութիւնից: Եւ չնորհիւ այն հանգամանքին, որ հայերը դարեր շարունակ ենթակայ են եղել պարսիկ և թիւրքաց իշխանութեան, մեռել է նրանց մէջ անկեղծութեան և ազնութեան զգացումը, և խորապէս տեղի առեւլ ճարապիկութեան, կեղծաւրութեան, կծիրութեան և անյափ զգացման: Իսկ սոքա յատկութիւններ են՝ միանգամայն յատուկ հայրենաղուրկ ժողովրդին որ իր անդաստական գոյութիւնը պատսպարում է այս կամ այն երկի ծոցում: Այդ է պատճառը, որ մի հաւատով լի, բարեսիրտ և հիւրընկալ ժողովուրդ, ինչպէս վրացիք են, մեծապէս վիասուում են հայերի հարեանութիւնից: Գերմանացու այս դիւտողութիւններին յարակցում է վրացի հեղինակը իր կողմից մի յաւելուած. «Հայերի Վրաստանում կատարած վաշխառութեան և անինայ հարստահարութեան մեծապէս նպաստում է այն հանգամանքը, որ նրանք քրիստոնեայ են: Այդ հանգամանքը շուտ է ընտելացնում և բարեկամական յարաբերութիւն ստեղծում երկու ցեղերի մէջ: Հայերը մօտենում են վրացի թէ քաղաքացուն և թէ գիւղացուն սկզբում որպէս պատենտ, և յետոյ օգտուելով այդ վստահութիւնից, նոքա ձկդում են իրանց ընչափազ նպատակների իրազորդման: Ի միջի այլոց նկատելու է, որ արդէն իսկ յայտնի ճշմարտութիւն է, որ հայերը ճանաչուած են արեներան երկրներում իրբեն վաշխառուներ»...

Այդ վկայութիւններից պարզ երեւում է, թէ զերմանացի ճսնապարհորդն ու վրացի հեղինակը ինչպիսի կուրացած աչքերով են նայում իրականութեան, որքան են խեղաթիւրում ճշմարտութիւնը<sup>\*)</sup>:

\*.) Աշագրութեան արժանի է նորերս պատահած մի դէպք, որ ցոյց է տալիս շատ զերմանացիների վերաբերմունքը դէպի հայերը: Հայ ուսանողութեան «Ծիութեան» Լայպցիգի ճիւղի պատգամաւորը զիմում է տեղուս համալսարանի համաշխարհային հռչակ վայելող աշխարհագրագէտ պրօֆէսօր Բատցելին և խնդրում, որ ինքը ևս, ինչպէս երոպական յայտնի մարդիկ խոստացել են, բարեհաճէ հայերի մասին իր մասնագիտութեան վերաբերեալ մի յօդուած զրել՝ ժողովածում մէջ գետիղելու համար: Պրօֆէսօրը առանց այլալլութեան պատասխանում է: «Նո իրբեն զերմանացի և զերմանական պրօֆէսօր, երբէք չեմ կարող մի այդպիսի բան յանձն առնել, քանի որ հայերի աղատութիւնը Թիւրքիայում միանգամայն հակառակ է զերմանացի շահերին բացի զրանից, չարժէ ծառայութիւն անել մի այնպիսի անընդունակ ազգի համար, ինչպէս հայն է, որից թիւրքը անհամեմատ ընդունակ ու ճարապիկ է: Թէև, աւելացնում եմ, ես իրբեն սոսկ անձնաւորութիւն, հայերի դէմ ոչինչ չունեմ. ես ունեցել եմ հայերից աշխատասէր և եռանդուն ուսանողներ»:

Անցնենք զրբի բովանդակութեան:

Դոկտոր Գօգիտաշայշվիլին տուել է անթերի ամբողջութեամբ և սիստեմատիկ դասաւորութեամբ այն բոլորը, ինչ որ խոստացել է ներածութեան մէջ: Եւ դուք տեսնում էք այդ աշխատութեան մէջ վրաց ժողովրդի՝ արական թէ իգական սեռի, քաղաքացիների թէ զիւղացիների՝ զործ զրած արհեստների և տնային աշխատութիւնների մի լիակատար պատկեր: Հեղինակը ունեցել է իր ձեռքի տակ շատ հարուստ նիւթեր, գրուած վրացերէն, ոռւսերէն, գերմաներէն և մասամբ ֆրանսերէն լեզուներով: Մի րոպէ համեմատութիւն դնել վրացու և պ. Ս. Թառայեանի դօկտորական աշխատութիւնների մէջ, ուրիշ խօսքով «Արհեստը Վրաստանում» (121 եր.) և «Արհեստը հայերի մօտ» (63 եր.) գրուածքների մէջ, անկարելի է: Ցաւակցաբար պիտի ասել, որ պ. Թառայեանի աշխատութիւնը խիստ թոյլ գրուածք է, զրեթէ կմախք այն արհեստների, որոնք հայերի մէջ գոյութիւն ունեն: Եւ դրա ամենամեծ պատճառը ձեռքի տակ ունեցան նիւթերի սակաւութիւնն է եղել «Արհեստը հայերի մօտ» գրուածքը զուրկ է նաև բուն նիւթին չը վերաբերող, սակայն անհրաժեշտ այն մի հատիկ առաւելութիւնից, որի կողմից վրացու գրուածքը դարձեալ փայլում է: Այդ վրացի հեղինակի, ինչպէս սկզբում յիշեցինք, ներածութեան մէջ ամիսոված Վրաստանի հին ու նոր պատմական տեղեկութիւններն են, որ օտար ընթերցողին համառօտ կերպով ծանօթացնում են երկրի ընդհանուր դիրքի և ժողովրդի ընդհանուր վիճակի հետ, նախ քան երկրում գոյութիւն ունեցող մասնաւոր զբաղմունքներին անցնելը: Իսկ այդ կողմից, կարծում ենք, որ պ. Թառայեանը աւելի շատ բան կ'ունենար ասելու, մանաւանդ ամբողջ Հայաստանի արդի քաղաքական բաժանմունքների նկատմամբ: Կարծէք բնաբանի համապատասխան բուն ուսումնասիրութեան արժանի նիւթերի բացակայութիւնը ստիպել է պ. Թառայեանին գրքի մէջ երկար ու բարակ կանգ առնել և աւելորդ նկարագրութիւններ անել զուտ էանօգրափիական նիւթերի վրայ: Օրինակ, ինչ կարէք կայ զիւղերում մեծ «օջախի», հարուստ մարդկանց վայելած յարդանքի, ընտանեկան նահապետական վարք ու բարքի, ընտանիքի անդամների փոխադարձ յարաբերութեան, զիւղացիների բարեպաշտութեան և պարկեշտութեան, մեռելի, հարսանիքի և այլ հագար ու մի նիւթի հետ կապ չունեցող ինդիրների մասին այնքան երկար խօսել:

Դօկտոր Գօգիտաշայշվիլին արհեստի ամբողջ ճիւղը, սկսած տնային երկսեռեան ամինամանը աշխատութիւններից մինչև

Ներկայ բարդ ինդուստրիան, բաժանում է 3 զլիսաւոր կարգի, իրանց երկրորդական ստորաբաժանումներով հանդերձ.

1) Տնաշխատութիւն.

2) Վարձաշխատութիւն և դնաշխատութիւն.

3) Կապիտալիստական արտադրութիւն:

Բայ դօկտօր Գօղիտշայշվիլի վկայութեան, մինչև 18-րդ դարի վերջերը տնային փակ տնտեսութիւնը կամ աշխատութիւնը զրեթէ իր ամբողջ հարազատութեամբ գոյութիւն ունէր Վրաստանում: «Գիւղացիք մեծ մասամբ իրանք էին իրանց սեփական ոյժերի արտադրութեամբ հոգում իրանց կարիքները: Նրանք մշակում էին հողը, զբաղում զինեգործութեամբ և անսանապահութեամբ, պատրաստում բրդից, բամբակից և մետաքսից իրանց համար հաղուստեղէն և փայտից չինում զանազան կահճարասիք: Նոյն իսկ այսօր Վրաստանում կան այնպիսի կողմներ, ուր մարդիկ մեծ մասամբ արտադրում են իրանք՝ առանց օտար ոյժերի կամ փոխառութեան կարիք զգալու այն բոլորը, ինչ որ իրանց կենաքը մէջ գործ են ածում, այդպէս է, օրինակ, ամբողջ Սվանին»: 19-րդ դարի սկզբներում Գամբան Վրաստանում արած ճանապարհորդութեան ժամանակ ասում է ի միջի այլոց: «Կոլխիսում ամբողջ ինդուստրիան կենտրոնացած է ընտանիքներում: Այդ երկրը զեռ ևս անկարող է իր մէջ ֆաբրիկաներ հիմնելու, կամ մանուֆակտուրա զարգացնելու»: «Եյդաէս էր—աւելացնում է վրացի հեղինակը —ոչ միայն կոլխիսը, այլ և ամբողջ արհմտեան Վրաստանը: Արեւելեան Վրաստանում միայն Թիֆլիսն էր, որ իսկապէս աշքի ընկնող տեղ էր բռնում, ուր դեռ ևս 17-րդ դարում առեստուն ու իսկական արհեստը անհամեմատ բարձր էին կանգնած. մի քաղաք, որ դեռ 18-րդ դարի 60-ական թուականներին 20,000 բնակիչ ունէր: Սակայն տիրող վիճակը շուտով տեղի է տալիս այն բարերար հոսանքին, որ ունենում է ոռուսական կառավարութիւնը Վրաստանում: Այդ ժամանակունից սկսած արդէն արագ քայլերով ծաղկում է առեստուրը, բարգաւաճում արհեստները. և 19-րդ դարից սկսած տնտեսութեան եղանակը տեղի է տալիս այլ շրջանի: Բնական իրերի տնտեսութեան փոխարէն, մուտք է գործում փողի տնտեսութիւնը, այսինքն իւրաքանչիւր իրի հանդէպ դրւում է փողի արժէքը, իբրև մի ընդհարուր մասշտաբ բոլոր իրերի գնահատութեան:

Առաջին կարգի տակ դօկտօր Գօղիտշայշվիլին առաջ է բերում այն բոլոր տնային աշխատանքների, գործողութիւնների ցանկը, որոնք գոյութիւն ունեն Վրաստանում, որոնցով

զբագւում ևն վրացի քաղաքացին ու գիւղացին, տղամարդն ու կինը:

Երկրորդ կարգի տակ, ուր նա խօսում է սովորական հառկացողութեամբ իսկական արհեստների մասին, անտեսագիտական ընդհանուր դիտողութիւններով համառօտ կանգ է առնում այն հանդամանքի վրայ, թէ ինչպէս հետզհետէ վրաց ժողովուրդը տնաշխատութեան կամ տնաշխին փակ տնտեսութեան շրջանից անցնում է քաղաքացին տնտեսութեան սահմանը, որ անտեսադիտութեան մէջ մարդկացին ցեղի տնտեսութեան երկրորդ շրջանն է համարւում: Հեղինակը ցաւում է, որ դեռ ևս ուսումնասիրուած չէ իրանց մէջ այս երեւոյթը, թէ ուզիղ որ ժամանակ՝ որքան արագ և ինչ յատուկ մօտիւներով վրացիք անցան տնտեսութեան առաջին շրջանից երկրորդը: Սակայն և այնպէս, եղած նիւթերի հիման վրայ, ինքը հնարաւորին չափ ցոյց է տալիս այդ անկման զգալի ընթացքը. մի բան, որի մասին պ. Թատայեանը նոյն խոկ յիշատակութիւն չի արել իր աշխատութեան մէջ: Այդուն նա խօսում է և համբարների հին ու նոր կազմակերպութեան մասին:

Խօսելով համբարների Վրաստանում ունեցած ծաղրան և զարգացման մասին, հեղինակը, Հաքստհառուղինի կարծիքի հիման վրայ, այդ դասակարգը ծագած է համարում պարսիկ ժողովրդի ազգեցութիւնից, ինչպէս «համբար» պարսկական բառն էլ ցոյց է տալիս: Նոյն բանը հայերի նկատմամբ աւելացնում է և պ. Թատայեանը, հիմնուելով պրօֆեսոր Ս. Եղիազարեանցի կարծիքի վրայ: Վրացի հեղինակը, համբարութեան գոյութեան ամենահին ժամանակը արենլ, Վրաստանում, համարում է 17-րդ դարը, այն էլ բահառարէս Թիֆլիսում Մինչեւ հայերի մէջ նոյն դարում համբարութիւնը զարգացել, բաւական առաջ էր գնացել, ուրեմն ոքտր է նիւթազրել այդ դասակարգի զոյութիւնը Հայաստանում աւելի վաղ, չնորհիւ մասնաւանդ այն հանգամանքի, որ պարաց յարարերութիւնը մեղ հետ և նրանց ազգեցութիւնը մեղ վրայ, աւելի սերտ և մեծ չափով է եղել:

Դոկտոր Գօգիտացչվիլին առաջ է բերում և ստափառիկական մի մանրամասն ցուցակ, որ ոչոց է տալիս, թէ Թիֆլիս և Քութայիս նուհանգներում 1893 և 1896 թուականներին վրաց ժողովուրդը ինչ կարդի արհեստներ էր վարում և իւրաքանչիւր արհեստ որքան վարպետ, օգնական և աշակերտ էր պարփակում իր մէջ: Տերած ցուցակից երեսում է, որ այդ թուականներին մետաղի և փայտի ինգուստրիալին նույիրուած արհեստաւորներ անհամնմատ շատ են եղել, քան ինքուստրիալի միւս ձիւղերի: Մետաղի ինդուստրիալ զբագւում էին վարողետ:

օգնական և աշակերտ միասին առած՝ 5117 հոգի, իսկ փայտի ինդուստրիայով՝ 2483 հոգի։ Հստ քաղաքների և գիւղերի աղցարնակութեան, բոլոր ճիւղերի արհեստաւորների քանակը, դարձեալ նոյն նահանգներում, կազմում էր քաղաքներում ընդհանուր գումարը՝ 13159 հոգի, իսկ գիւղերում՝ 14,536, բոլորը միասին առած՝ 27,695 հոգի։

Երրորդ կարգի տակ, երբ արդէն հեղինակը խօսում է կապիտալիստական արտադրութիւնների մասին, դարձեալ արհեստների սահմանում, նոյնպէս ստատիստիկական մանրամասն տեղեկութիւններով ցոյց է տալիս, թէ ինչպէս հետզհետէ ձեռագործութիւնը տեղի է տալիս տեխնիկային, հսկայ գործարանների վիթխարի մեքենաներին, և թէ ինչպէս փոքրամասն օգնականների (քարգահ) և աշակերտների կողքին մեծ քայլերով աճում է բանուորական դասը, պրօլետարիատը, խմբուելով մասնաւոր կամ ընկերական մեծ ձեռնարկութիւնների շուրջը։ Այդ ստատիստիկան վերաբերում է մօտիկ անցեալին՝ 1900-թուին, որից երեսում է, որ ինդուստրիայի ամենամեծ ճիւղը Վրաստանում, որ գրաւել է անհամեմատ ձեռնարկողների և բանուորների խոշոր քանակութիւն, եղել են առաջին՝ ուտելեղէնի և խմիչքի ինդուստրիան. դա ունեցել է ընդամենը 932 ձեռնարկուղ զեկավարներ (տէրեր) և 4175 բանուորներ, որ միջին թուով իւրաքանչիւրին՝ գալիս է 4,5 բանուոր։ Երկրորդ՝ հաշուեղէնի և փայտեղէնի ինդուստրիան ունեցել է 181 ձեռնարկողներ և 3808 բանուոր, իւրաքանչիւրին՝ 21 բանուոր։ Այդ թուականին Վրաստանում գործարանական ամեն կարգի ինդուստրիայով զրադուել են 1782 ձեռնարկողներ կամ տէրեր և 18,006 բանուորներ, իւրաքանչիւրին՝ 7,3 բանուոր։

Նոյն ստատիստիկան ցոյց է տալիս, թէ որքան կարճ ժամանակի ընթացքում բարձրացել է վրաց գործարանական բանուորների թիւը։ Սակայն, այնուամենայնիւ, եթէ համեմատենք այդ քանակը ձեռագործ բանուորական ոյժերի հետ, կը տեսնենք որ վերջինս գեր ես մեծ չափով գերազանցում է առաջինից, չը նայելով որ նրա պրօցեսաը խիստ դանդաղ քայլերով է առաջ ընթանում։ 1900 թուականին ամբողջ Վրաստանի ձեռագործ բանուորների թիւը համաստ էր ընդամենը 27,685 հոգու, իսկ գործարանական բանուորների թիւը՝ 15,087 հոգու, միասին առած 42,782 բանուոր։ այդ քանակը գուրս գալով վրաց ազգաբնակութեան ամբողջ գումարից՝ 2,054,636, կը մնայ ընդամենը 2,011,854 վրացի բնակիչներ թէ քաղաքներում և թէ գիւղերում, որոնք զբաղւում են այլ կարգի գործերով։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, պ. Գօգիտայշվիլիի դիսեր-

ցիւն լուրջ և օգտակար մի աշխատութիւն է։ Միայն ափսոս, որ նա անտեղի կերպով գիտական աշխատանքի մէջ ազգային նեղ հաշիւներ է խառնել:

## Բ. ԽՇԽԱՆԵԱՆ

12) ԳՐ. ՏԵՐ-ՊՕՂՈՍՅԱՆ, Նկատողութիւններ՝ Փաւառոսի պատմութեան վերաբերեալ, Վիեննա, 1901, եր. Է+ 110, գինը 1,50 ֆր.։

Այս գրքոյկը կազմում է Վիեննայի Միիթարեանների Ազգային մատենագրարանի Լի հատորը և նախ մաս-մաս տպուեց «Հանդէս ամսօրիայում»։

Առաջաբանի մէջ հեղինակը յիշում է, որ մինչև այժմ բազմաթիւ հետազօտութիւններ են կատարուած Փաւառոսի պատմութեան մասին, որոշելու համար, թէ երբ է գրուած այդ պատմութիւնը և ինչ լեզուով և ով է նրա հեղինակը։ Իսկ ուշադրութիւնը չէ դարձուած ամենազլիսաւորի վրայ—նրչափ հարազատ, է այն բնագիրը, որ հասել է մեզ Փաւառոսի անունով։ Ինքը ուզում է հետազօտել Փաւառոսը այս տեսակէտից։ Նրա ուսումնասիրութիւնը բաղկացած պէտք է լինի երեք մասից։ Ներկայ գրքոյկը կազմում է առաջին մասը։

Փաւառոսի պատմութիւնը, որ աւանդում է հայոց քաղաքական և եկեղեցական անցքերը Տրդատի մահից մինչև Արշակունեաց թագաւորութեան երկու ճիւղի բաժանուելը՝ բաղկացած է չորս գրքից, որնք կոչում են Գ. Դ. Ե. Զ. գպրութիւններ։ Զանազան քննութիւններ ու կարծիքներ են եղել այն մասին, թէ ինչնու չը կան Ա. և Բ. գպրութիւնները. արդեօք դրանք գրուած և այժմ անհետացած են, թէ սկզբից սեթ Փաւառոսը հէնց 4 գպրութիւն էլ ունեցել է, ինչպէս յիշուած է նրա առաջաբանի մէջ, միայն թէ նրանց անունները, վորսանակ Ա. Բ. Գ. Դ. Կոչուելու մի որ և պատճառով փոխուել դարձել են Գ.—Զ.—Վերջին կարծիքն այժմ աւելի ընդունելի է համարւում։

Երդ մեր հեղինակը զբաղուած է յատկապէս Փաւառոսի վերջին, այսինքն վեցերորդ (Զ) գպրութեամբ։ Պէտք է ասել, որ այս գպրութեան միայն առաջին գլուխը վերաբերում է քաղաքական պատմութեան, Արշակունի թագաւորութեան երկու մասի բաժանուելուն։ միւս 15 մանր գլուխները պարունակում են կենսագրական տեղեկութիւններ մի քանի աննշան։ Կաթողիկոսների և նշանաւոր հոգեւորականների մասին։ Երկար քըն-

Նութիւններից յետոյ նա դալիս է այն եղբակացութեան, որ Փաւստոսի պատմութիւնը մեղ չէ հասել սկզբնական ձեւով, այլ ենթարկուել է խմբագրութեան աւելի ուշ ժամանակ (թէ երբ—հեղինակը չէ որոշում)։ Խմբագրողը եղել է ասրբեր աշխարհայեացքի ու հետագրքութեան աէր՝ քան բուն Փաւստոսի հեղինակը. վեցերորդ կոչուած գպրութիւնը, որ բաղկացած է 16 գլուխներից՝ այս անձանօթ խմբագրողի աւելցրածն է (գուցէ բացի Ը—Ժ գլուխներից)։ Նա չէ եղել սկզբնական Փաւստոսի պատմութեան մէջ; Նոյն խմբագրողի աւելցրածն են նաև հինգերորդ գպրութեան 12 գլուխները (Ը—ԺԹ), որոնք մատենագրելու մի և նոյն ոգին ու սովորութիւնն են արտայայտում, ինչ որ հեղինակը նկատել է Զ. գպրութեան մէջ։

Այս եղբակացութեան հասել է հեղինակը, որչափ կարելի է հասկանալ՝ հետեւեալ երեւոյթների հիման վրայ։—1. Պատմութեան առաջաբանի մէջ հակասական ցուցմունքներ կան դպրութիւնների թուի և բովանդակութեան մասին. ցուցմունքներից մէկը ենթադրել է տալիս Զ. գպրութեան գոյութիւնը, իսկ միւսը՝ նրա չը գոյութիւնը։ 2. Զ. գպրութիւնը բաղկացած է 16 մանր գլուխներից, այն-ինչ պարունակում է 4 զիսի նիւթ։—3. Շատ զլուխների բովանդակութիւնը միւնոյն է. միայն տարբեր են նրանց մէջ յատուկ անունները։—4. Այս գպրութեան մէջ դրուած են եկեղեցականների ցանկեր, այն-ինչ բուն Փաւստոսի մէջ բերուում են նախարարների ցանկեր։—5. Զ. գպրութեան մէջ յատուկ անունները հայացրած ձեւով են, այն-ինչ բուն Փաւստոսի մէջ ոչ միայն օտարազգի, այլ և հայացած անունները գործ են ածւում յունական ու, ևս վերջաւորութիւններով։—6. Զ. գպրութեան մէջ կայ ժամանակագրութիւն, այն-ինչ բուն Փաւստոսի մէջ ժամանակագրութիւնը բացակայում է։—7. Զ. գպրութեան մէջ յիշատակուում են մի քանի անձնաւորութիւններ, որոնց մասին խօսք է եղել և նախընթաց գպրութիւնների մէջ. բայց այստեղ նրանք բերուած են իբրև նոր անձնաւորութիւններ և ոչ թէ իբրև արդէն ծանօթ։—8. Ղազար Փարակեցին Փաւստոսի բովանդակութիւնը այն ձեւով է բերում, որ կարելի է եղբակացնել, թէ Զ. գպրութիւնը նորան յայտնի չէր։—Կարծեմ բոլորը բերինք։

Այս հիմքերից մի քանիսը (ինչպէս 2, 3, 4, 7) աննշան երեւոյթներ են և ոչ մի կերպով չեն կարող արդարացնել հեղինակի եղբակացութիւնը՝ Զ. գպրութեան անհարազատութեան մասին. երկուսը (1, 8) կ'ունենային նշանակութիւնը, եթէ բռնազրու և կամայաբար մեկնուած չը լինէին. Ամենից կարեւոր են 5 և 6 հիմքերը—անունների հայացումը և ժամանակագրութեան

գոյութիւնը Զ. դպրութեան մէջ, որոնց հակառակ՝ միւս գըպ-  
րութիւնների մէջ անունները յունացրած են և ժամանակագրու-  
թիւն չը կայ առհասարակ։ Բայց հէնց այս երկու կէտերում էլ  
ամենամեծ սիրան է գործում հեղինակը։ Մի կողմից՝ նա չէ  
նկատում Գ—Ե դպրութիւնների մէջ բազմաթիւ անուններ, ոչ  
միայն հայերէն, այլ և յունարէն, որոնք յունական վերջաւորու-  
թիւններ չունեն \*). իսկ միւս կողմից չէ նկատում, որ Զ. գըպ-  
րութիւնը նմանապէս զուրկ է որևէ ժամանակագրութիւնից՝  
ինչպէս և նախորդ դպրութիւնները։ Եթէ երկու կաթողիկոսի  
մասին յիշուած է այնտեղ, թէ մէկը երեք և միւսը երկու տա-  
րի կաթողիկոսութիւն արին՝ սա զեռ ժամանակագրութիւն չէ։  
սրանք նոյնչափ կախուած են օդում, առանց հողի, որչափ  
և միւս եպիսկոպոսները, որոնք «այն ժամանակ», «մի անգամ»,  
«նոյն ժամանակները» ապրել են և որոնք պիրանց բոլոր կեան-  
քում առաքինի են եղել։ Ողորմնի է մանտւանդ Զ. դպրու-  
թեան առաջին, միակ պատմական զլուխը (Արշակունի թագա-  
ւորութեան երկու մասի բաժանուելու կարեւոր տեղեկութիւ-  
նը), որտեղ ամեն ինչ կատարում է «ապա» և «այնուհետեւ»,  
և որտեղ «թագաւորն յունաց» և «թագաւորն պարսից» (առանց  
անուններն իսկ յիշելու) որոշում են Հայաստանը երկու մասի  
բաժանել իրանց մէջ՝ և երկու Արշակունի թագաւորների կա-  
ռավագրութեան յանձնելու—Ահա այս դպրութեան մէջ հեղինակը  
նկատում է ժամանակագրութեան գոյութիւն։

Այնպէս որ պ. Գր. Տէր-Պօղոսեանի «Եկատողութիւննե-  
րից յետոյ էլ, հակառակ բոլոր նրա ջանքին, Փաւստոսի Զ. գըպ-  
րութիւնը շարունակում է մնալ, զոնէ մեր աչքում, միանգա-  
մայն հարազատ եթէ հեղինակը տարբեր եղբակացութեան է  
եկել և սրա համար բաւական թուով հիմքեր է դտել՝ պատ-  
ճառը նրա ընդհանուր կանխակալ հայեացքն է մեր հին մատե-  
նագիրների վրայ և, իրեւ սրա հետեւանք՝ զործ զրած մէթօ-  
գը, Պ. Գր. Տէր-Պօղոսեանը, ինչպէս այս գրուածքում, այնպէս  
էլ առաջ եղիչի քննութեան մէջ, առհասարակ այնպէս է տրա-  
մագրուած իրեւ թէ գործ ունի մի խոշոր, խորհրդաւոր, սիս

\*) Օրինակի համար՝ Անակ, Արշակ, Բարսեղ (7 անգամ), Դրիգոր, Խաղիսան, Խփրատ, Յակոր, Մերին, Նպատ, Շահակ, Տերենտ, Տիգրան, Տըր-  
դատ ևալլն, որոնք կարող էին, և մի քանիսը նոյն-իսկ պարտաւոր էին,  
յունական վերջաւորութիւններ ունենալ՝ եթէ ճիշտ լինէր հեղինակի տե-  
սակէտը։ Եթէ Զ. դպրութեան մէջ կան Ասպուրակ, Ցոհան, Արտիթ (առ-  
անց յունական վերջաւորութիւնների)՝ միւս դպրութիւնների մէջ կան  
Խղիսան, Յակոր, Տերենտ—նոյնպէս առանց յունական վերջաւորութիւն-  
ների։

տեմական զեղծումի հետ, որով վարակուած են մեր հին հեղինակները. իբր թէ Եղիշէն, Փաւատոսը, Ղաղարը ևայլն ենթարկուել են ինչ-որ գաղտնի անձնաւորութիւնների ձեռնմը-խութեան, որոնք փոփոխել, այլայլել ու նոր խմբագրել են այս հեղինակները: Այս կանխակալ համոզումն ունենալով՝ նա արդէն ամեն բանի վրայ սկսում է լարուած ուշագրութեամբ նայել. ամեն մի բառ կամ անուն, նոյն-իսկ քերականական ձև՝ նրա կասկածն են շարժում. նա միշտ փնտում է այդ խորհրդաւոր զեղծումի, այդ անծանօթ խմբագրի հետքերը, նա դառնում է խուզարկող,—և ահա չնշին, ըստ ինքեան ոչ մի նշանակութիւն չունեցող երեւոյթները նրա աչքում դառնում են կասկած զարթեցնող նշաններ (ՅԼԱԲ), և որքան այս նշանները շատանում են, այնքան մնջանում է և խորհրդաւոր զեղծումը, այնքան նա լարում է ուշագրութիւնը մանր հետքերի վրայ, մինչեւ որ վերջապէս համում է խոչոր եղբակացութեան, որի անունն է խոչոր սխալ կամ խոչոր թիւրիմացութիւն:

Այս խոսքերով մենք նպատակ չունենք համոզելու հեղինակին, որ յետ կենայ իր կանխակալ կարծիքից ու մէթօդից—մինոյն է, նա չի համոզուի.—այլ կամեցանք ներկայ առիթով բնորոշել մեր բանասիրական քննադատութեան մէջ նկատուող այն ցաւալի երեսոյթը, որ ներկայումս հայ բանասէրներից ոմանք հետազոտութիւնը դարձել են խուզարկութիւն և կեղծիքներ որոնելը՝ քննադատութեան միակ նպատակը: Այս միակողմանի և սխալ հետեանքների հասցնող ուղղութեան պատկանողներից մէկն է և այս գրքոյկի հեղինակը:

Մի քանի խօսք էլ ստիպուած ենք ասել պ. Գր. Տէր-Պօղոսեանի լեզուի մասին: Ուղղակի տաժանելի աշխատութիւն է նրա գրուածքը կարդալը. մթութիւն, մանուածապատ դարձուածներ, անսովոր ասացուածքներ, գրաբարի խառնուրդներ—այս յատկութիւնները գժուար հասկանալի, անմարսելի են դարձնում նրան: Կարծես նա նպատակ ունի անպատճառ գժուարացնել, խորհրդաւոր դարձնել նաև իր ասելիքը, կարծես խուսափում է պարզ կերպով ասելուց՝ ինչ որ ունի ասելիք: Ահա մի քանի նմուշներ. «բայց այս անդամ եւս Զ. դպրութեան մէջ հայացած վիճակ ունի անունս Առուստոմ, բացի այն որ տարբեր ձեւի մէջ է նա նախորդ դպրութեան համեմատութեամբ» (57):—«Նախագիտելուց յետոյ, առաջինը Զ. դպրութիւնն ինքն է, որ իր գոյութիւն ստանալու հարցը թէ ժամանակի և թէ եղանակի նկատմամբ՝ հիմներ է ներկայացնում վճռելու այնպէս, թէ այն կարկատան է» (8):—«Էմբագիրը ինքնախարութեան մէջ է լուկել 117 տարուայ պատմութիւնը ամբողջապէս միակ և

ժամանակակից կամ ականատես հեղինակինը հասկանալ թոյլ տալով, ըստ յառաջաբանին և վերջաբանին» (92): «Այս վերջինիս համեմատութիւնը աւելի նիւթ է չնորհում անհնարաւորութիւն նկատելու փոխառութեան վերաբերմամբ» (94):

Այս նմուշները բացառիկ չեն. գրքի լեզուն ընդհանրապէս այս ոգին ունի: Սրա վրայ աւելացնենք արամաբանական մթութիւնը, որ միանգամայն համապատասխանում է լեզուի մթութեան: Ընթերցողը չէ կարող հետեւել, թէ հրտեղ է մի հարց դրում և հրտեղ վերջանում, երբ է վճռում և ինչպէս է վծըռում. ինչու է մէջ ընկնում մի հարց, որ բուն խնդրի հետ անմիջական կապ չունի նայն հայն: Այս տեսակին վերաբերեալ օրինակները շատ տեղ պէտք է բռնէին, ուստի սախազուած ենք բայց թողնել:

## ԱՏ. ՄԱԼԻԱՍԵԱՆ

**13) Գոկոր Ա. Յ. Փառայեան.—Մարդկուրեան ամենամեծ քընակին. Կղմիր, 1901, ձրի:**

Ալկոհոլը «մարդկութեան ամենամեծ թշնամին է», կեանքեր ու սերունդներ այլանդակող բազմակողմանի և հսկայական չարիքների մի արմատ. «Ալկոհոլը մեր օրերում», ասում է Գլադստոն, «աւելի աւերումներ է գործում, քան թէ այս երեք պատմական աղէտները՝ սովը, ժանտախտը և սլատերազմը: Ալկոհոլը սովից և ժանտախտից աւելի է կոտորում, պատերազմից աւելի է սպանում. սպանելուց աւելին է անում, անպատութիւն է բերում»: Մի ուրիշ աշխարհահոչակ անձնաւորութիւն՝ կ. Տօլստոյ այն կարծիքի է, որ «ալկոհոլը ոչ առողջութիւն է տալիս, ոչ ոյժ, ոչ տաքութիւն, ոչ ուրախութիւն, այլ միայն չարիք է պատճառում: Ամեն խելացի և բարեկիրթ մարդ պարտաւոր է ոչ միայն ինքը չը գործածել ոգելից ըմպելիքներ, այլ և իր բոլոր ոյժովը ուրիշներին հեռացնել այս թոյնից»: Այս վտանգաւոր թշնամու ճիրանները սփռուած են աշխարհիս համարեա բոլոր ծայրերում. զրան անխտիր ենթակայ են և՛ քաղաքակիրթը և վայրենին, և՛ կինը և տղամարդը, և՛ հարուստը և ազգատը, և՛ մեծը և փոքրը:

Ալկոհոլականութեան արհաւերքներից իրրե մի բնորոշ փաստ աւելորդ չենք համարում առաջ բերել հետեւեալը. Բօնի համալսարանի պրօֆէսօր Բէլման՝ 1740-ին ծնուած և 1800-ին

մեռած մի իսկական ալկոհոլամոլ կնոջ՝ իդա իւրկէի 709 սերունդները ուսումնասիրել է և եկել է այն եղբակացութեան, որ սրանցից 7 մարդասպաններ են եղել, 76 ուրիշ զանազան սճրագործներ, 144 արհեստով մուրացիկներ, 61 հասարակաց զժութեան կարօտ և 181 պոռնիկներ։ Հսկողութեան, զատավարութեան և բանտարկութեան համար այս ընտանիքը զերմանական կառավարութեան վրայ և միլիօն ֆրանկ է նստել:

Քաղաքակիրթ երկրներում վաղուց են սկսել այս սոսկախի չարիքի դէմ մաքառել. հակառակոհոլական շարժում XIX դարու առաջին քառորդից սկսած լայնածաւալ չափեր ընդունեց մասնաւանդ Հիւսիսային Ամերիկայում և Անգլիայում։ Բայց այս շարժումը այն դէպքում միայն կարող է բարերար հետեանքների հասցնել՝ երբ դա ընդհանուր, համայնական բնաւորութիւն ունի, և որ զլսաւորն է՝ երբ դա ոչ թէ ստիպողական է, հարկադրեալ, այլ բղխում է դէպի չարիքը տածուած զիտակական վերաբերմունքից։ Հազիւ թէ կարելի լինի հերքել այն փաստը, որ այսպէս կոչուած «ժուժկալութեան» ու «չափաւորութեան» ընկերութիւններ և ուրիշ նման հիմնարկութիւններ (զգաստարաններ գինումունքների համար և այլն) անհամեսմատ աւելի օդտակար են և գրական, քան թէ կառավարական խիստ միջոցները—ալկոհոլ գործածելու արդեքը, հարկերի բազմապատկումը և այլն։

Շատ ուրախալի մի երեսից է, որ հայ շրջաններում ալկոհոլականութեան դէմ մաքառելու առաջին համայնական փորձը տեղի է ունենում Պարսկաստանում, ուր ալկոհոլիզմը, ինչպէս երեսում է, իմաստ տարածուած է \*): Ինչպէս յայտնի է 1899 թուին մայիսի 1-ին Թաւրիկում կազուեց «Հակառակոհոլական ընկերութիւն», որի նպատակն է «հասարակութիւնը՝ ալկոհոլի պատճառած անհաստական, ընտանեկան և ընկերական չարիքներից փրկել»։

Վերոյիշեալ զրքոյկն ահա այս ընկերութեան առաջին հրատարակութիւնն է։ Գրքոյի իսկական բովանդակութիւնը 1899-ի ապրիլին Պարիզում տեղի ունեցած հակառակոհոլական միջազգային VII կօնգրէսի համառօտ տեղեկագիրն է ներկայացնում, որից ուշադրութեան արժանի են մանաւանդ հետեւալ հատուածները—«ալկոհոլի գործածութեան զիտական հերքումը», «ալկոհոլականութիւն և ոճրագործութեան առնչութիւնը», «ալկոլականութիւն և աշխատութիւն», «կատարեալ ժուժկալութիւն

\*) Համեմատէք «Ամրագատականի կերանքից» լողուածը ալս №-ում։  
Ե. թ.

թէ չափաւորութիւն», «հակաալկոհոլական կոիւը դպրոցներում» ևայլն:

Այս հատուածներից առաջինում բէլգիացի բժիշկ Բիէնֆէն ալկոհոլի գործածութեանը հետեւել դիտական հերքումն է տալիս.

I. Ալկոհոլը մարսողակա՞ն է:—Ո՞չ, նրա մարսողութիւնից յառաջ է գալիս ստամոքսային մկանունքների վաղանցուկ և աղէտալի մի գրգռում, որովհետեւ ալկոհոլը ստամոքսը գրգռելուց յեռոյ անզգայացնում է, որովհետեւ արիւնը դէպի մորթն է քաշում և ստամոքսային նիւթի ներգործութիւնը արգելում է:

II. Ալկոհոլը ախորժատօն է:—Ո՞չ, բայց ստամոքսային մի գրգռութիւն է պատճառում, որը առաջ է բերում մի զգայութիւն, քաղցածութեան պատրանքը:

III. Ալկոհոլը սննօւնի է:—Ո՞չ, նա չի համապատասխանում այս սահմանումին և արտազրած ջերմութիւնը չի ծառայում ոչ իրական ջերմութեան և ոչ մկանային գործունէութեան:

IV. Ալկոհոլը տաքացնում է:—Ո՞չ, միայն դէպի մորթը մի արեսմ խուժում տեղի է ունենում և ընդհանուր սառչում:

V. Ալկոհոլը ոգեւորո՞ղ է:—Ո՞չ, մի պարագայում, ոչ ֆիզիքական, ոչ մտաւորական:

VI. Ալկոհոլը վարակումից պատճանում է:—Ո՞չ, մարմինը ևնթակայ է անում փոխանցող հիւանդութիւններ ստանալու:

VII. Առանց ալկոհոլի չի կարելի ապրել.—Այս մի սխալ կարծիք ու նախապաշարում է, որ բազմաթիւ դէպքերով ջըրում են:

VIII. Ալկոհոլը երեխաներին օգուտ տալի՞ս է:—Ո՞չ, երեխաներին բնաւ ալկոհոլ տալու չէ:

IX. Ալկոհոլը չի արգելում երկայնակեցութիւնը.—Անպին ձեւի գիճակազրութիւնների համեմատ կհանքը կարճեցնում է:

Հետաքրքրական և շատ օգտակար տեղեկութիւններ ևն ամփոփում նաև միւս հատուածները. ինչ ասել Կ'ուզի որ ցանկալի է տեսնել բժ. Վ. Արծրունու «Մի խմիր» բրօշիւրի հետ միասին և այս գրքոյկը տարածուած մեր ժողովրդի լայն խաւերում: «Մարդկութեան ամենամեծ թշնամին» կարելի է ձրիաբար ձեռք բերել «Պարսկաստանի հակաալկոհոլական ընկերութեան» վարչութիւնից (Հասցէն<sup>1</sup> Monsieur Le Président de la Société Antialcoolique de Perse; à TAURIS):

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Խ Ա Ծ Գ Ր Ք Ե Բ

- 1) Յ. Մալիսասեան. Հայ գեղջուկի ալբոմը, թ. մ., արտատպած «Ազգագր. հանդիսից»; Թիֆլիս, 1901 թ.:
- 2) Ե. Հիրճարտ. Յուղայի վերջին գիշերը, թարգմ. Խ. ք. Փանեանց:
- 3) ? Փարփառա. թարգմ. Խ. ք. Փանեանց, Թիֆլիս, 1901 թ., գինն է 15 կ.:
- 4) Խ. ք. Փանեանց. Բարեպաշտները (արեւելեան զրոյց), Թիֆլիս, 1901 թ., գինն է 10 կ.:
- 5) Անշ. Կալանտար. Միկրոսկոպիչ. աչք. մածոնա, Տիֆլիսъ, 1901 г.
- 6) Վ. Փափազեան. Էմմա, վէպ ժամանակակից բարքերից, Թիֆլիս, 1901 թ., գինն է 1 ռ.:
- 7) Le Droit arménien depuis l'origine jusqu'à nos joures, par K.—J. Basmadjian.
- 8) Նար-Դոս, Սպանուած Աղաւնին, վիպակ. հրատարակութիւն Գողթնի, Բագու, գինն է 30 կուշ.:
- 9) Снтр. вр. инспекторъ Г. Н. Степановъ. Краткий исторический очеркъ возникновенія и развитія санитарного дѣла и врачебныхъ учрежденій въ г. Тифлисъ. Тифлисъ, 1901 г.
- 10) Մ. Լումօնտօվ, Դև, թարգմ. Յ. Զ. Միրզայեանց, Թիֆլիս, 1901 թ., գինն է 10 կ.:

## ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Միջնակարգ դպրոցների բեֆօրմներից. վոխաղրական քննութիւնների վերացումը և ուսուցիչների վարձատրութեան հարցը.—Հասարակութեան և դպրոցի մէջ եղած կապը.—Ի՞նչպէս վճռեց փինանսների մինիստրութիւնը այդ հարցը.—Առևտրական դպրոցների կազմակերպութեան խելացի հիմքը.—Հոգաբարձական խորհուրդը.—Մեր ազգային մանկավարժ-վարիչների մի տարօրինակ ընդունակութիւնը.—Ի՞նչ ճանապարհով պէտք էր փոփոխութիւններ մտցնել մեր թեմ. դպրոցներում զայութիւն ունեցող կանոնագրութիւնների մէջ.—Իրաւունք և քմահաճոյք.—Իրաւական կարգերի առաւելութիւնը.—Կառավարչական սենատի մի որոշում:

Պաշտօնական ականական հանձնութեան մէջ (№ 7) առիթ ունեցանք խօսել լուսաւորութեան մինիստրութեան միջնակարգ դպրոցների համար ծրագրուած բեֆօրմների մասին: Այս 1901—1902 ուսումնական տարին առաջինն էր, որի ընթացքում սկըսել էին գործադրել նոր ծրագիրը ստորին դասարաններում: Բայց ծրագրի փոփոխութիւնից այժմ զանազան մասնաժողովներում պատրաստուում են և այլ բեֆօրմների ուրուագծեր: Իրականացած քարենորդումներից մէկն էլ զասարանից դասարան փոխադրուելու համար քննութիւնների վերացումն է: Հինգ այս ուսումնական տարրուայ վերջում պէտք է գործադրուեն դպրոցական կեանքի այդ կարևոր մասում նոր կանոններ, որոնց հետ աւելորդ չենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին, օգտուելով մայրաքաղաքների լրագրների տուած տեղեկութիւններից \*):

\*) Ներուի լիշել որ Շուշուակ թեմ. դպրոցում 1892—1894 ու. տ.տ. ընթացքում մտցրուած էին վոխաղրական քննութիւնների տեղ նման կանոններ:

Գիմնազիաների, պրօդիմնազիաների, բէալական և իգական դպրոցների այն աշակերտները, որոնց ընդհանուր տարեկան թուանշանը իւրաքանչիւր առարկայից երեքից (3) պահաս չէ, փոխադրւում են յաջորդ դասարան առանց քննութեան։ Այն աշակերտները, որոնք ստացել են անբաւարար թուանշաններ (2 կամ 1) տարեկանում մէկ կամ երկու զիտական առարկաներից, իսկ բէալական դպրոցներում նաև գծագրութիւնից և նկարչութիւնից, կարող են քննութիւն տալ միայն այդ առարկաներից։ Միայն բացառիկ դէպքերում մանկավարժական խորհուրդը, այն էլ ուսումնարանական շրջանի հոգաբարձուի առանձին թոյլտւութեամբ, իրաւունք ունի այդպիսի աշակերտներին պահել դասարանում առանց վերաստուզողական հարցաքննութեան։ Այն աշակերտները, որմնք անբաւարար թուանշաններ ունեն աւելի զան երկու զիտական առարկաներից՝ առանց քննութեան պահելում են դասարանում։ Մակայն բացառիկ դէպքերում մանկավարժական խորհուրդը, ուսումնարանական շրջանի հոգաբարձուի թոյլտւութեամբ, կարող է այդպիսի աշակերտներին էլ փոխադրական հարցաքննութեան ենթարկել (միայն անբաւարար թուանշաններ ստացած առարկաներից)։ Այդ բոլոր քննութիւնները կատարւում են արձակուրդից յետոյ, աշնանը, իսկ զարնանը՝ փոխադրական քննութիւններ, գպրոցական պարապմունքները վերջացնելուց յետոյ, թոյլատրւում են միայն առանձին յարգելի պատճառներով, բայցառիկ դէպքերում, այն էլ միայն մի անբաւարար թուանշան ունեցող աշակերտների համար։ Այդ փոփոխութիւնները չեն վերաբերում ընդունելութեան, աւարտին և վերջնական քննութիւններին։

Յիշած բեֆօրմը անշուշտ մի առաջադէմ քայլ է զպրոցական կեանքում, որովհետև բոլորովին աւելորդ, ձեական և մեասակար ժամավաճառութիւն էր՝ ամբողջ տարրուայ ընթացքում ուսուցչից բաւարար զնահատուած աշակերտին ստիպել նորից քննուել նրա առարկայից և մի քանի բոսէ տեսող հարցուութերից, երբեմն պատահական պատճառներով անբաւարար պատասխանների հիման վրայ, փոխել ամբողջ տարրուայ եղբակացութիւնը աշակերտի առաջադէմ կամ թոյլ լինելու մասին։

Ինչպէս յայտնի է միջնակարդ գպրոցների կեանքում բեֆօրմ է մտցնուելու և ուսուցչական աշխատանքի վարձատրութեան մէջ։ Այդ հարցը քննուող մասնաժողովը, ինչպէս յայտնում են լրագրները, արդէն վերջացրել է իր պարապմունքները և մշակել է հետեւետ պրօէկտը։

Այժմ դասավճարի գոյութիւն ունեցող սիստեմը, — 60 ուուրլի տարեկան մի դասի համար ծառայութեան սկզբում և

75 ոռորի հինգ տարուց յետոյ,—փոխարինուում է տարեկան ոռնկով. 900 ոռորի ծառայութեան սկզբում, շարաթական 12 դաս տալու պարտաւորութեամբ, դասերի այդ թուից աւելի ուսուցիչը կարող է տալ ևս 6 լրացուցիչ դաս, իւրաքանչիւրի համար տարեկան 75 ո., վարձատրութեամբ; իւրաքանչիւր հինգամեակից յետոյ ոռնիկը բարձրանում է, ասացին և երկրորդ հինգամեակից յետոյ աւելանում է 200-ական ո., իսկ երրորդ և չորրորդ հինգամեակից յետոյ 300-ական ո.: Քսան և հինգ տարուայ ծառայութիւնից յետոյ, եթէ ուսուցիչը մնայ ծառայութեան մէջ, բացի ոռնիկց այժմեան նման նաև կենսաթոշակ չի ստանալ: Այդ գուցէ ստիպի գառամեալներից շատեւրին հեռանալ ծառայութիւնից և տեղ բացել աւելի թարմ ոյժերի համար: Իսկ 25-ամենայ ծառայութիւնից յետոյ ասպարէզից հեռացած ուսուցիչը կը ստանայ կենսաթոշակ 1800 ոռորի: Բացի գասատութեան համար նշանակած վարձատրութիւնը, իւրաքանչիւր նօրմալ եօթդասարանեան միջնակարդ գպրոցում ուսուցիչներից 6-ը նշանակուում են իրեն գասարանական գաստիարակներ (եօթերորդը ինքը վերատեսուչն է), որոնք նոյն պարտաւորութիւններն են կրելու, ինչ և այժմ և, բացի այդ, նրանց վրայ է գնուելու այժմեան վերակացուների պարտաւորութիւնները, իսկ առանձին վերակացուների պաշտօնը վերացուելու է,—և այդ գասարանական գաստիարակութեան համար իւրաքանչիւրը ստանալու է 650 ոռորի: Գիշերօթիկներ պահող գպրոցներում իւրաքանչիւր 15 դիշերօթիկ աշակերտի համար նշանակուելու է 1 դաստիարակ. դրանց պարտաւորութիւնները, ինչպէս և վարձատրութեան չափը, մնալու են առաջուանը: Ասածներից պարզ է որ 12 դաս, 6 լրացուցիչ դասեր և գասարանական դաստիարակութիւն ունեցող ամեն մի ուսուցիչ ստանալու է ծառայութեան առաջին հինգամեակում  $900 + 450 + 650 = 2000$  ո., երկրորդում՝ 2200, երրորդում՝ 2400, չորրորդում՝ 2700 և հինգերորդում 3000 ո.: Առանձին վարձատրութիւն սահմանում է և զրադարանապետութեան, մանկ. ժողովի քարտուղարութեան և աշակերտների գրաւոր աշխատանքները ուղղելու համար:

Այդպիսով ուսուցիչների նիւթական կացութիւնը բաւականաչափ բարերգւում է և, որքան դէպի մանկավարժական գործունէութիւնը ընդունակ ու արժանաւոր մարդիկ գրաւելու հարցը կախուած է տնտեսականից՝ այդ պայմանը ստեղծուած է: Մնում է մանկավարժական գործունէութեան ընդհանուր, ոչ-նիւթական, պայմաններն ևս այնպէս փոխել, որ նա աւելի

գրաւիչ, աւելի կենդանի դառնայ և ուսուցչի անձնական նախաձեռնութիւնը ու ոդեորութիւնը գտնեն ազատ գործադրութիւն:

Մենք մի անգամ արդէն առիթ ենք ունեցել (1901 թ. № 1) յիշատակել, որ լուսաւորութեան մինիստրութիւնը ինքը շեշտում է միջնակարգ դպրոցների մանկավարժական և տնտեսական խորհուրդների մէջ կօլլեգիալ սկզբունքների գործադրութեան բացակայութիւնը, որի չնորհիւ վերատեսչի միահեծան կամքն է գերիշխողը այդ կրթական հիմնարկութիւնների մէջ։ Այժմ էլ միջնակարգ դպրոցի բարենորոգման առիթով եղած խորհրդածութիւնների մէջ չի մոռացւում որ մինիստրական դըպրոցները այժմ հասարակութիւնից բռլորովմն կղզիացած կեանքով են ապրում և ծնողները ոչ մի միջոց չունեն ազգելու և իրանց լաւագոյն տենչանքները հոգորդելու՝ իրանց զաւակների միտքը և բնաւորութիւնը կազմակերպող այդ հիմնարկութիւնների վրայ։

Այդպէս ահա մինչ հարցի այդ կողմ դեռ քննութեան առարկայ է և pia desideria հասարակութեան համար—առեւտրական դպրոցներում, որնք յանձնուած են ֆինանսների մինիստրութեան կառավարութեամբ արդէն աջող կերպով լուծուած կարող է համարուել։ Յայտնի է որ, այդ կանոնների համաձայն, առևտրական դպրոցների հիմնադիրները իրաւունք ունեն իրանց միջից ընտրել հոգաբարձական խորհուրդ, որը ոչ միայն դպրոցի տնտեսական, այլ և մանկավարժական-վարչական հարցերում ունի ձայն։ այդ խորհրդի իրաւունքն է՝ վերատեսչութեան պաշտոնի համար թեկնածու ընտրել իսկ այդ գեկավարից չը որ մեծ բան է կախուած դպրոցում։ Բացի այդ, հոգաբարձական խորհրդի հաւանութեամբ են զուգընթաց դասարաններ բացւում, նա ունի իրաւունք մասնակցել մանկավարժական խորհրդներում ևայլն։ Այդպիսով դպրոցի և հասարակութեան մէջ մի սերտ կապ է հասաւատուամ, դրանց մէջ փոխադարձ շփում է առաջանում, որի չնորհիւ դպրոցը չի կտրւում շրջապատող կեանքից, չի քարանում մեռած ձեւականութեան և բիւրօկրատիական բուտինայի մէջ, այլ պահպանում է միշտ կենսաթրթիո թարմութիւն և շարունակ առաջադիմնելու, կատարելագործուելու ընդունակութիւն։

Կայս կերպով ըմբռնելով իր դերը ֆինանսների մինիստրութիւնը չուզեց նեղ, մանրակրկիտ բեգլամենտացիայի ենթարկել և առևտրական դպրոցների ծրագիրը։ Երբ առևտրական դպրոցները, և տարի առաջ, անցան ֆինանսների մինիստրութեան տնօրին

նութեան, սրա ուսումնական բաժինը, իրեն գլխաւոր, զեկավար մարմին, չուզեց ամեն բան կենտրոնացնել իր ձեռքում և մշտական ու անպատեհ միջամտութիւններով վնասել գործին, այլ միայն ընդհանուր ձեռվ գծեց առևտրական գալրոցների կազմակերպութիւնը և ծրագիրը, թողնելով տեղական գործիչներին, այդ գալրոցների հոգաբարձական և մանկավարժական խորհրդի նախաձեռնութեան, մանրամասնութիւնների մշտկութիւնը։ Այդ որոշ ապակենարոնացումը, տեղական որոշ ինքնավարութիւնը գալրոցական հարցում, ուզզակի վերակենդանացնող գեր կատարեց առեւտրական կրթութեան մէջ։ 1896 թուից յետոյ, նոր կանոնների ողու չնորհիւ, առեւտրական գալրոցների թիւը Ռուսաստանում աւելի քան տասնապատկուեց, 10-ից հասաւ 120-ի։ Առեւտրական գալրոցների գործիչները առանձին ողնորութիւն և եռանդ զգացին իրանց մէջ նուիրուելով նոր գործին։ Անցեալ տարուայ յունիս ամսում և այս տարուայ յունուարի կիսում առեւտրական կրթութեան ներկայացուցչները գումարուեցին Պետերբուրգում և մի շաբթ խորհրդածութիւններ ունեցան իրանց գործունէութեան հետ կապ ունեցող բազմաթիւ հարցերի մասին որոշումներ կայացրին և, հոգեսէս թարմացած, բարոյապէս գոհացած իրանց նախաձեռնութեան, ինիցիատիվ արդիւնքներով, վերագրածան՝ աւելի ես մեծ սիրով և աշխայժով շարունակելու համար ստանձնած պարագմոննենքները։

Ահա ինչ է նշանակում հասարակութիւնը մասնակից անել գալրոցական գործին և որոշ ուղարկութիւն տալ այդ ասպարէզում գործելու կոչում ունեցող ոյժերին։

Մեր վերև ասածներից գիտուար չէ համոզուել որ Ռուսաստանի միջնակարգ գալրոցները ունեն և լաւ և վաստ կողմեր, այս վերջնները բարւոքելու համար բարձր իշխանութիւնից զանազան մասնաժողովներ են նշանակուած, որոնք բազմակողմանի քննութեան են ևնթարկում բոլոր մացուելիք փոփոխութիւնները։

Այդպէս ահա էջմիածնի միր «ազգային մանկավարժավարիչները» իրանց աչքի առաջ կարող էին ունենալ ոչ միայն գալրոցական լաւ կարգեր, այլ և պէտք է տեսնեն թէ ինչ ճանապարհով է կատարւում եղած կանոնների մէջ հիմնաւոր փոփոխութիւններ։

Բայց արի տես որ մեր վարիչները մի առանձին ընդունակութիւն ունեն ընդօրինակելու գրսից միայն թոյլ, վնասակար և վատթար կողմերը։ Մեր գալրոցական կեանքում հոչակուած Երանութեանը, որոնցից այժմ միայն մէկն է մնացել այդ ասպա-

բէզում, գործում էր բանականութեան հակառակ ուղղութեամբ. նա աշխատում էր ծայրագոյն այլանդակութեան հասցնել մեր դպրոցական կեմքի պակասաւոր, վատթար կողմնը և միաժամանակ խեղդել նրա մէջ եղած լաւադոյն տրադիցիաները, առաջադիմնու ընդունակ սաղմնը ։ Ծնորհիւ այդ վարիչների առօրինակօրէն բութ և նեղ հասկացողութիւններին կարգ կանոնի մասին, Հնորհիւ նրանց մշտափոխուս, անսկզբունք, երերուն, հակասական ու քմահաճ վնրաբերմունքին և դպրոցական ներքին կեանքի ամեն մի չնչին հարցի մէջ քիթ խծկելու, լրտեսելու սովորութեան՝ մեր դպրոցները առաջադիմնելու փոխարէն յետազիւմնեցին. Մեր թեմական դպրոցները այժմ նման են ծովի քմահաճ ալիքներին մասնուած՝ անդեկ, վաս կազմակերպուած և պարիանաւաստիներով կրցուած ողորմելի նաւերի... .

Մեր կղերականները չեն ուզում ըմբռնել այն տարրական ճշմարտութիւնը որ այլ է իրաւական, օրինական կարգ, այլ է անձնագաստան քմահաճոյք, նրանք մոռանում են որ ոչ մի հասարակական կնանք չի կարող առաջադիմնել, եթէ առանձին անհամանների կամքը, քմահաճոյքը, չննթարկուի հաստատ, պարտաւորիչ կանոնների, իրաւական չափերի. Այդ է պահանջում հասարակական ամբողջութեան շահը, նրա առաջադիմութիւնը: Եւ այդ չափերը սահմանող իշխանութիւնը պարտաւոր է ինքը հսկել նրանց ուղիղ, անշեղ գործադրութեան վրայ և ոչ թէ երեակայել որ այդ չափերը իր, իշխանութեան, համար նշանակութիւն չունեն և ինքը, երբ ուղեց, կարող է ուսնակոխ անել նրանց:

Մենք քանից ասել ենք, գարձեալ կրկնում ենք, որ մեր թեմական դպրոցները ունեն հոգեսր ծայրագոյն իշխանութիւնից (Մինօդ, Կաթողիկոսի նախագահութեամբ), համաձայն Պօլօժէնիայի 1004 յօդուածի, հաստատուած կանոնադրութիւններ, մենք ասել ենք որ ծայրագոյն իշխանութիւնը պէտք է հսկի որ զանազան ստորագրեալ պաշտօնեաններ, առաջնորդներ, յաջորդներ, չը չեղուեն այդ իրաւական չափերից: Եթէ այդ կանոնները հարկաւոր են գատում փոփոխել՝ պէտք է այդ անել նոյն իրաւական կարգով, ինչ կարգով որ նրանք կազմուել են և հաստատուել. իսկ մինչ այդ, դպրոցների կհանքի խաղաղ ընթացքը չը վրդովելու և կրթութեան տաճարը վայրագ կրքերի կրկէս չը դարձնելու համար, պէտք է զեկավարուել միայն և միայն եղած կանոնադրութեամբ, ուր բաւականաչափ որոշ են թէ ծխականների, թէ հոգաբարձութեան և թէ մանկավարժական խորհրդի իրաւոնքները: Այդ կանոնադրութեան մէջ գործի աշողութեան համար անհրաժեշտ ազատութիւն և ինիցիատիւ է

տուած տեսչին, մանկավարժական խորհրդի հետ, և հոգաբարք ձութեան:

Անշուշտ, լրացնել, կատարելազործել գոյութիւն ունեցող կանոնները միշտ կարելի է, բայց այդ պէտք է լինի ոչ այս կամ այն անհատի անձնական, փաշայական հրամաններով, այլ խորհրդակցութեամբ դպրոցական գործիչների. հոգաբարձուներից և մանկավարժական խորհուրդներից ընտրած մասնաժողովների կողմից՝ հարցը նախօրօք պէտք է ենթարկուի լուրջ, բազմակողմանի ուսումնասիրութեան և պարզաբանութեան:

Այդ կանոնները սկզբում մշակուել են հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ, ուստի փոփոխելն էլ չը պէտք է լինի առանց նրա ձայնը լսելու:

Թող օրինակ լինի էջմիածնի վարիչների համար հէնց այն կարգը, այն ճանապարհը, որին հետեւում է լուսաւորութեան մինհստրութիւնը իր միջնակարգ դպրոցների մէջ փոփոխութիւն մտցնելիս. քանի՞ քանի յանձնաժողովների, մասնագէտ անձանց կարծիքների բովից է անցնում առնն մի հարց, նախ քան բարձրագոյն, զեկավար մարմնի հաւանութիւնը կամ որոշումը ստանալու: Խոկ մեր վարչապետերը կարծում են որ իրանք ամենազէտ են, ի վերուստ օժտուած են առանձին, չնաշխարհիկ ամենազիտութեամբ և կարող են զիշերը քնել և առաւողը վեր կենալ պատրաստ ծրագրներով, նախադեմով և որոշումներով...

Ոչ, հայր սուրբեր և սրբազններ, դեռ ևս իրաւական, օրինական ճանապարհից աւելի ուղիղ միջոց մարդկութիւնը չի գտել առաջադիմութեամբ: Թէ ինչ առաւելութիւն ունի այդ ճանապարհը ընդհանրապէս, այդ ապացուցում է կտուավարչական Սենատի հէնց այն որոշումով, որ զետեղում ենք ներեւում, քաղելով «Մշակի» № 63-ից: Ահա այդ նշանաւոր իրողութիւնը.

«Երգուեալ հաւատարմատար Սոկրատ Մելիք-Աղամեան, որպէս Վրաստանի և Խմբէթի հայլուսաւորչական թեմի կօնսիստորիայի հաւատարմատար, գանգատ ներկայացրից թիֆլիսի նահանգական գտարանին ժողովրդական լուսաւորութեան մինհստրութեան դէմ, յանձին կովկասեան ուսումնարանական շըրջանի հոգաբարձուի, պահանջելով, որ ճանաչուի Ախալցխա քաղաքի ո. Փրկիչ եկեղեցու սեփականութեան իրաւունքը անշարժ կալուածի վրայ, որ բազկացած է ութը գիւղերից Ախալքալաքի գաւառում: Խչափէս յայտնի է, այդ կալուածները կովկասեան ուսումնարանական իշխանութիւնը իր իրաւասութեան ենթարկեց 1898 թուի մարտի 26-ին Մինհստրների Կօմիտէտի Բարձրագոյն

հաստատուած կանոնադրութեան հիման վրայ, որպէս հայոց եկեղեցական դպրոցներին պատկանող կալուածքներ:

Այդ պահանջի դէմ, որ գնահատուած էր 400,000 ռուբլի, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն ներկայացրեց պատասխան, որի մէջ ասում էր, թէ այդ գործը ենթակայ չէ դատաստանական հիմնարկութիւնների քննութեանը, ապացուցանելով, թէ որովհետեւ հայոց եկեղեցու վարչութիւնը չէ առանձնացած որպէս առանձին հոգեւոր հաստատութիւն և մըտնում է ներքին գործերի մինիստրութեան կազմի մէջ, այդ պատճառով կալուածքներին վերաբերեալ ներկայ վէճը, որ ծագել է ներքին գործերի մինիստրութեան և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան միջեւ, Քաղաքացիական Դատավարութեան կանոնադրութեան 1297-րդ յօդուածի հիման վրայ, պէտք է լուծումն ստանայ վարչական (աղմինիստրատիվ) կարգով:

Սակայն այդպիսի կարծէքի հետ չը համաձայնուեցին ոչ նահանգական դատարանը, ոչ էլ դատաստանական պալատը, որոնցից նահանգական դատարանը բաւարարութիւն տուեց ըստ էութեան, իսկ դատաստանական պալատը զադարեցրեց գործի քննութիւնը ըստ էութեան, ի նկատի ունենալով, որ կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն վճռաբեկ զանգատ է ներկայացրել Սենատին պալատի որոշման դէմ, որով հոգաբարձուի մասնաւոր գանգատը այն բանի մասին՝ թէ ներկայ գործը ենթակայ չէ դատաստանական հիմնարկութիւնների քննութեանը, անհետեւանք թողնուեց:

Հոգաբարձուի վճռաբեկ գմնգատի դէմ երդուեալ հաւատարմատար Ս. Մելիք-Աղամեան ուղարկեց Սենատ մի գրաւոր բացարութիւն, որի մէջ նա ապացուցանում էր, որ ներկայ գործի քննութեան ժամանակ նշանակութիւն ունի ոչ թէ այն՝ թէ հայլուսաւորչական եկեղեցին արդեօք առանձին վարչութիւն է կազմում պետական կառավարչութեան կարգի մէջ, այլ այն, որ հայլուսաւորչական եկեղեցին արդեօք իրաւունք ունի սեփական եկեղեցական կալուածքներ ունենալ, թէ այդպիսինները պէտք է պատկանեն գանձարանին:

Այդ հարցը լուծում է Օտար Դաւանութիւնների Կանոնադրութեան 1213 և 1214 յօդուածների հիման վրա, որոնց զօրութեամբ հայոց եկեղեցինների, վանքերի և նրանց պատկանող աստուածահածոյ հիմնարկութիւնների պահպանութեան համար նշանակուած բոլոր կալուածքները մնում են հայլուսաւորչական եկեղեցու և ոչ թէ գանձարանի սեփականութիւն, որից պէտք է հետեւդնել, որ հայոց եկեղեցու սեփականութեան իրաւունքին վերաբերեալ ներկայ վէճը չէ կարող այլապէս վճռուել, եթէ ոչ

դատաստանական կարգով, որ մատնացոյց է արուած Քաղաքացիական Դատավարութեան Կանոնադրութեան 1298-դ յօդուածում:—Այդ եզրակացութեան ճշմարտութիւնը հաստատում է և 1898 թ. մարտի 26-ին Մինիստրների Կոմիտէտի Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեամբ, որով պատուիրում է Կովկասի ուսումնարանական իշխանութեանը իր իրաւասութեան տակ առնել այն գոյքերը, որոնք պատկանում են հայոց եկեղեցական դպրոցներին, որպէս իրաւարանական անձանց, որովհետև վերոյիշեալ կանոնադրութեամբ հայ-լուսաւորչական հոգևորականութեան ներկայացուցիչներին իրաւունք է արւում վէճեր սկսել իրանց վերոյիշեալ գոյքերի մասին սովորական դատաստանական կարգով:

Մարտի 20-ին, չորեքշաբթի օրը, այդ գործը բննւում էր Կառավարչական Սենատի քաղաքացիական վճռարեկ դեպարտամէնտում: ուր կօնսիստօրիայի շահերը պաշտպանում էր և երդուեալ հաւատարմատար Ս. Միլիբ-Ազամեանի բացատրութիւնները ապացուցանում էր յայտնի երդուեալ հաւատարմատար Պ. Գ. Միլոսօվ:

Սենատը, լսելով ներկայ գործը և օրէրպրօկուրօրի եզրակացութիւնը, որոշեց:—Թի Փլիսի գատասստանական պալատի վճիռը վերոյիշեալ հարցի վերաբերմամբ հաստատել, անհետեւանք թողնելով Կովկասանու ուսումնարանումն արանական շրջանի հոգաբարձութիւնը վճռական գաղափար կանուն է կանգանալ գաղափարը:

Այդպիսով, սրանից յետոյ հայոց կօնսիստօրիաների կողմից սկսած բոլոր վէճերը կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան դէմ վերջական լուծումն կը ստանան սովորական դատաստանական կան կարգով, որոնց մէջ գործերի մեծամանութիւնը արդէն լուծուած է ի նպաստ հայոց եկեղեցու, բայց միայն դատարանի առաջին ինստանցիայում և ներկայում այդ գործերը գտնուում են դատաստանական պալատում կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձութիւնը բողոքարկու դանդատաներով:

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պավլովկի գիւղի աղանդաւորների գործը. «ՊրաՎԻՏ. ՅԵՍ-  
ԹԱՔԵ»-ում, փետր. 16-ին, տպուած էր հետեւեալ պաշտօնա-  
կան հաղորդագրութիւնը.

«1901 թ. յուլիս ամսում բաղմամարդ Պավլովկի գիւղում,  
(Սումսկի գաւառ, Խարկովի նահանգ), որի բնակչութեան մի  
մասը մօտ քսան տարի առաջ ուղղափառութիւնից (պրավօ-  
սլավութիւնից) անջատուել է, երեւաց այդ տեղում մինչեւ այդ  
անյայտ աղքատ հազնուած մի մարդ, որ իրան անուանում էր  
«Խարայէլի մարգարէ Մովսէս»: Այդ մարդը, ինչպէս յետոյ ի-  
մացուեց, կիեվի նահանգի, Վասիլկովեան գաւառի, Եախնա գիւ-  
ղի շինական Մօյէյ Նաումօվ Տօդոսիենկօն՝ «Մալեվանցը» ա-  
ղանդի հետեւող էր և Պավլովկի գիւղում կարճ ժամանակ մնա-  
լով կարողացաւ այդ գիւղի մի քանի բնակիչներին ծանօթա-  
ցնել այդ աղանդի մոլար վարդապետութեան հետ:

«Ապա անցեալ տարուայ սեպտեմբերի սկզբում, Տօդօ-  
սիէնկօն երկրորդ անգամ եկաւ Պավլովկի գիւղը և, ժողովելով  
տեղական աղանդաւորներին զրուցատրութեան, սկսեց նորից  
քարոզել նրանց իր վարդապետութիւնը, ընդ ամին պատմելով  
որ չուտով տեղի կ'ունենայ փոփոխութիւն գիւղացիական  
կեանքի պայմաններում. չնեւ լինի ոչ եկեղեցիներ, ոչ հոգեւո-  
րականութիւն, իսկ հողը հաւասսը կը բաժանուի բոլոր մարդ-  
կանց մէջ: Ներկայացնելով իրան իբրև գերբնական ոյժով օժըտ-  
ուած և արդարութեան յաղթանակին նպաստելու համար Սուլը  
Հոգուց կոչուած մի անձնաւորութիւն, Տօդոսիենկօն, ի միջի  
այլոց, համոզում էր աղանդաւորներին թէ Երկնային Արքայու-  
թեան համնելու համար անհրաժեշտ է ուղղափառ եկեղեցինե-  
րը քանդել, որպէս զի աղատել նրանց մէջ թազնուած արդա-  
րութիւնը:

«Պավլովկի գիւղի մինչեւ այդ խաղաղ աղանդաւորների  
մէջ Տօդոսիենկօյի քարոզը նկատելի յուղում առաջացրեց:

«Պավլովկի գիւղից նրա հեռանալու օրից յետոյ առաջին  
երկու օրուայ ընթացքում, սեպտեմբերի 14-ին և 15-ին, գիւ-  
ղի փողոցներում շրջում էին աղանդաւորների խմբեր երգելով  
և բացականչութիւններով. «Յրիստոս Յարեաւ»: Բացի այդ,  
նոյն օրերում գիշերները գիւղացի Տիմօֆէյ Նիկիտենկօյի անում  
տեղի էին ունենում աղանդաւորների բազմամարդ ժողովներ,  
որոնց մէջ զեկավարող և քարոզիչ էր հանդիսանում տեղացի  
գիւղացի Գրիգորիյ Պավլենկօ: Այդ վերջինը, որ Պավլովկի գիւ-

դում Տօդոսինկօյի գտնուած ժամանակ մօտ ծանօթանալով նրա հետ, իւրացրել էր նրա մոլար վարդապետութիւնը, սկսեց աղանդաւորներին ուսուցանել, ասելով նրանց թէ մօտ է կորուսը, թէ չը պէտք է պահել «ոչ ոսկի, ոչ արծաթ» և թէ իր՝ Պավլենկօյի վրայ, որ ոյժ էր ստացել «Մովսէս մարդարէից» (Տօդոսինենկօյից), իջել է Հոգին Սուրբը Աղանդաւորների յուղուածութիւնը ծայրայեղ լարուածութեան հասաւ, երբ սեպտեմբերի 15-ին, զիշերը, Նիկիտենկօյի տան մէջ եղած ժողովում, Գրիգորի Պավլենկօն, կրինելով իր ուսուցիչ Տօդոսինենկօյի խօսքերը, յայտնեց, թէ ինքը, Պավլենկօն, որ օժտուած է աստուածային գօրութեամբ, պէտք է եկեղեցում բազմի սեղանի վրայ, որի տակ քահանաները թագցրել են արդարութիւնը, և թէ Պավլովի գիւղում եղած երկու ուղղափառ եկեղեցիները պէտք է քանդուեն, անարդարութիւնը յաղթահարելու համար Միաժամանակ Գրիգորի Պավլենկօն բացատրեց, թէ վերջին ժամերը համուռմ են և թէ նրանք, որոնք ցանկանում են ընդունել Հոգին Սուրբը՝ թողհետեւ են իրան։ Այդ քարոզը լսեիս աղանդաւորներից շատերը այնպիսի սքանչացած տրամադրութեան հասան, որ փողոց էին շպրտում փող և Գրիգորի Պավլենկօյի առաջ խոստովանում էին իրանց մնջքերը։

«Սեպտեմբերի 16-ին, կիրակի օրը, տուաւօտեան մօտ ժամի 6-ին, ամբողջ գիշերը Տիմօֆէյ Նիկիտենկօյի տանը անցկացրած աղանդաւորները խմբովին, աւելի քան 100 մարդ, ուղեկցուելով կանանցով և երեխաներով, դիմեցին ճանապարհին գտնուող մերձաւոր եկեղեցի-դպրոցին։ Ամբոխի առջիկ սայլի վրայ գնում էր գիւղացի կին ելիզավետա Պավլենկօն մանուկը ձեռքին և, բարձրացնելով նրան, բղաւում էր. «Հաւատացէք այս մանուկ Յիսուսին, որ ծնուել է ոչ մարմնից»։ Այդ սայլի յետեւից գնում էին Գրիգորի Պավլենկօ, նրա հայր Ավրաամ Պավլենկօ և այլ աղանդաւորներ ձայնելով։ Հաւատում ենք, Քրիստոս Յարեաւ, արդարութիւնը գալիս է»։

«Ո նկատի ունենալով արդէն տեղական պօլիցիային հասած լուրերը, որ Պավլովի աղանդաւորները պատրաստւում են յարձակուել և քանդել ուղղափառ եկեղեցիները, Սումսկի գաւառի 2-րդ ստանի պրիստաւը կարգադրեց որ Տիմօֆէյ Նիկիտենկօյի տնից աւելի մօտ գտնուող եկեղեցի-դպրոցը, կիրակի օրը, սեպտեմբերի 16-ին, փակուած լինի և տեղական հոգեւորականութիւնից նշանակուած ժամասացութիւնը յետաձզուի։ Յիշուած եկեղեցին պահպանելու համար նրա շրջապատի մօտ նշանակուած էին տեղական պօլիցիական ուրեաղնիկը, մի քանի հարիւրապետներ (սօսակիյ), տասնապետներ (գեսեատսկիյ)։

և քաղաքապահներ, որոնք ուղարկուած էին Պավլօվկի գիւղը հարևան Բէլօպօր գիւղաքաղաքից: Խոկ ինքը սահանի պրիստաւը ներկայ էր նոյն օրը նոյն գիւղի միւս՝ Միքայէլ Հրեշտակապետի եկեղեցում, որ աւելի քան երկու վերստ հեռու է եկեղեցի-դպրոցից: Խօտենալով այս վերջինին, աղանդաւորները եկեղեցի-դպրոցի շրջապատից դէն հրեցին պօլիցիական պաշտօնեաններին, հարուածներ հասցրին նրանց, աղաղակով յարձակուեցին եկեղեցու գրւերի վրայ և, կոտրելով կողաքէքը, ներս խուժեցին եկեղեցին, ուր կատարեցին անտանելի անկարգութիւններ միացրած սրբազդութեան հետ: Կոտրանլով եկեղեցու պատուհանները և ապակինները, աղանդաւորները, որոնց պարագլուխ էին գիւղացի Գրիգորից և Ավրաամ Պավլենկո, Պետր Խարախօնով, Պետր, Անտօն, Խվան և Կօբըչենկի, Մաքսիմ և Ստեփան Բերեստիկի, Խվան Լիւրիչ և ուրիշները, յարձակուեցին սուրբ սեղանի վրայ. Գրիգորից Պավլենկոն նըստեց նրայ վրա, նրան հետեւեցին և ուրիշները: Դրանցից յետոյ սեղանը շուր էր տուած և ջախջախուած, արքայական գոները միասուած էին, վարազոյրը պակուած էր, սուրբ պատկերները իրանց շրջանակներից հանուած էին և գետին գցած, սեղանի և միւս խաչերը, մատունքի բաժակը, խաչվառները և այլ սըրբազան իրերը մասամբ ծուցրուած էին, մասամբ կոպրուած: Բացի այդ, սուրբ աւետարանը պատուած էր և գետին գցած, ինչպէս և սեղանի սրբազն ծածկոցը:

«Եկեղեցի-դպրոցում կատարելով նկարագրած աւերմունքը և ծեծ տալով եկեղեցին մտած ուղղափառ հարիւրապետ Անտօն Ֆեդորչենկօին, աղանդաւորները՝ «մնաք յաղթեցինք, արդարութիւնը գալիս է, Քրիստոս Յարեաւ, ուուա» ճիշերով գիմեցին դէսի Միքայէլ Հրեշտակապետի եկեղեցին: Տեղական քահանան, իմանալով աղանդաւորների մօտենալը, խկոյն, պատարագի խորհուրդը վերջացնելուց յետոյ, դադարեցրեց ժումայցութիւնը, ժամաւորները գուրս եկան եկեղեցուց, կողպեցին նրա գմները և սկսեցին զանգահարել: Ստանի պրիստաւն էլ, ժողովելով իր տրամադրութեան տակ գմնուած հարիւրապետներին, տաճապետներին և քաղաքապահն ոստիկաններին, որոնց միացան աղանդաւորների ամբոխին և առաջարկեց նրանց՝ դադարեցնել անկարգութիւնները: Բայց նրա յորդորները անհետեւանք մնացին: Աղանդաւորները կատարութեամբ յարձակուեցին պրիստաւի և նրան ուղեկցող մարդկանց վրայ, ծեծեցին նրանց և ապա, ներս խուժելով եկեղեցու ցանկապատից, սկսեցին փորձել ոյժով ներս մոնել եկեղեցին, բայց չը

կարողացան, որովհետեւ այդ ժամանակ Պավլօվիկի գիւղի ուղղափառ գիւղացիներից շատերը վրայ հասան և զինունլով փայտերով յարձակուեցին աղանդաւորների վրայ: Վերջիններս, չը նայած յամառ ընդգիմադրութեան, չը կարողացան յետ հրել ուղղափառներին և ստիպուած էին, ընդհանուր ծեծ ու կռուց, ցրուել: Ընդ ամին ուղղափառներից մի քանիսը ջարդուած էին, իսկ քսան ու երկու աղօթողները մնեծ մասամբ թեթև էին պրծել, բացի աղանդաւոր նաև կովուենիօն, որ այնպէս սաստիկ ջարդ էր ստացել, որ միւս օրը մնաւաւ:

«Անմիջապէս անկարգութիւնները վերջացնելուց և բոլոր վիասուածներին բժշկական օգնութիւնն հասցնելուց յետոյ, Սուսմէի շրջանային գատարանի ամենակարենոր գործերի դատաստանական քննիչը, նայն գատարանի գատախաղի անմիջական հսկողութեամբ, օկսեց կատարել նախնական քննութիւնն նկարագրած անցքերի»:

«Նախնական քննութիւնը վերջացնելուց յետոյ, Խարկօվի գատաստանական պալատի 1901 թ. գեկտ. 5-ի որոշմամբ 68 մեղադրեալներ, որոնց թւում և Մօյսէ Տօդոսինկօ, գատի էին ենթարկուած մեղադրուելով. Տօդոսինկօ—սրբապղծութեան մէջ գրդուելում և Պավլօվիկի գիւղի բնակիչների մէջ յուղիչ լուրեր տարածելում. (յօդ. 13, 210 և 938 պատժ. կան.), իսկ բոլոր միւս մեղադրեալները—գործով սրբադան իրեւր սրբապղծելու, Պավլօվիկի գիւղի ուղղափառ քնակիչների վրայ յարձակուելու և պօլիցիական պաշտօնեաններին ընդգիմադրութիւն ցոյց տալու մէջ (յօդ. 13, 210, 269<sup>1</sup> և 27 պատժ. կան.):

Ապա այս գործը քննուած էր Խարկօվի նահանգի Սուսմէկ քաղաքում, փակ դռներով, այս թուականի յունուարի 28-ից մինչև փեարտուարի 4-ը Խարկօվի գատաստանական պալատի առանձին ատեանի գատաստանական նիստում, գատակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ: Դատաստանական պալատի վճռով 66 մեղադրեալներից 17 հոգի արդարացրուած էին, իսկ մնացած 49 հոգին յանշաւոր էին ճանաչուած և գատապարտուած էին, 45 հոգի—կարողութեան բոլոր իրաւունքներից դրկում և աքսորում տաժանակիր աշխատանքի: Մօյսէ Տօդոսինկօ և Գրիգորի Պավլինկօ 15 տարով, Ավրամ Պավլինկօ, Պետր Խարախոնօվ, Անտոն, Պետր և Իվան Կօբըլչենկի և միւսները, թուով 37 մեղադրուածներ—12 տարով իւրաքանչիւրը, հինգ մեղադրուածներ 8 տարով և մէկը 4 տարով, 3-ը —բոլոր առանձին իրաւունքներից և արտօնութիւններից վըրկուում և բանտարկութեան 8 ամսով իւրաքանչիւրը և, վերջապէս, մի անչափահաս մեղադրուած—ըանտարկութեան 3 ամ-

սով, առանց իրաւունքների սահմանափակումների։ Միևնույն ժամանակ դատաստանական պալատը որոշեց տաժանակիր աշխատանքի դատապարտուած 30 մեղագրուածների նկատմամբ, քր. դատ. 775 յօդ. հիման վրայ, միջնորդել արդարագատութեան մինիստրի միջոցով Նորին Կայսերական Մեծութեան տուաջ օրէնքով նշանակուած տաժանակիր աշխատանքը փոխարինել աքսորով՝ ի բնակութիւն։

Ցոյցեր Ֆինլանդիայում. «Финляндская Газета»-ի մէջ տպուած է. «1901 թուի յունիսի 29-ի Բարձրագոյն մանիֆինստ Հելսինգֆորսի լուտերական երկու եկեղեցեցների փետրուարի 3-ին և 10-ին յայտարարուելու միջոցին եղած անցքերը յարուցցին չատ զանազան հակասական խօսակցութիւններ։ Այս բանը ի նկատի ունենալով խմբուղութիւնը զետեղում է ինչպէս բուն անցքերի, այնպէս և այդ անցքերը նախապատրաստող ագիտացիայի յաջորդական նկարագիրը։

1901 թ. յունիսի 29-ի (յուլիսի 12-ի) Բարձրագոյն մանիֆինստով յայտարարուած էր Ֆինլանդական Մեծ Խմբանութեան համար Բարձրագոյն հաստատուած զինուորագրութեան վերաբերեալ նոր կանոնադրութեան հրատարակումը։ Շուտով սրանից յետոյ սկսեցին Հելսինգֆորս քաղաքը հաւաքուել 1899 թուի արտակարգ սէյմի չատ պատգամաւորներ և իրանց քաղաքական գործունէութեամբ յայտնի այլ անձեր։

Մի քանի մումաւոր ժողովներից յետոյ, որ տեղի էին ունենում զինաւորապէս քաղաքական յայտնի գործիչ Մեխսելինի բնակարանում, բոլոր վերոյիշեալ անձերը և ուրիշ շատերը օգոստոսի 4-ին (17-ին) հաւաքուեցին Տուրհօլմ կղզում (Հելսինգֆորսի մօտ), որտեղ և մշակեցին պատորներին ուղղելիք մի կոչ, որով դիմում էին ժողովրդի հոգենոր հովիւններին, որ յիշեալ Բարձրագոյն հրամանին չը հնազանդուելով՝ անձնական օրինակով նոյնը անել տային իրանց ծուխերին և ամեննեին չը յայտարարէին եկեղեցու բևմից, ինչպէս այդ պահսնչւում է օրէնքով, Բարձրագոյն հրամանը զինուորագրութեամն մասին, «որպէս զի դրանով նոր որոշմանը» \*) օրէնքի նշոյլ անգամ չը տան։

\*) Եկեղեցիներում յայտարարումը կատարում է մասամբ ընդունուած սովորաւթեամբ և կամովին։ Առաջին կարգի յայտարարումներին վերաբերում են այն որոշումները, որոնք զետեղուած են լինում «Որոշումների ժողովածուի» մէջ գլաւարարել եկեղեցիներում։ մակագրութեամբ, սակայն սոյն «ժողովածուի» մէջ զետեղուած չատ որոշումներ այդպիսի մա-

Այս կոչից յետոյ, ազգաբնակչութեան մէջ սկսնց տարածուել մի ուրիշը հետեւեալ վերնագրով՝ «Խնչպէս պէտք է վարուել զինուորագրութեան գործում», ստորագրուած «Սէյմի մի քանի պատգամաւորներ» խօսքերով։

Այս վերջին կոչի մէջ, որը ուղղուած էր «պատուաւոր քաղաքացիներին», յանձնարարում է ծիսականներին պատգամաւորութիւնների միջոցով դիմել պաստորներին, խնդրելով որ չը յայտարարեն Բարձրագոյն մանիֆեստը, իսկ եթէ պաստորները վճռական պատասխան չը տան, այն ժամանակ՝ եկեղեցում, միահամուռ բողոք յայտնել հէնց որ պաստորը կը սկսի ընթերցումը, և նոյն իսկ ամենաեռանդուն միջոցների առաջ կանգ չառնել նիստն ընդհատելու համար, որից յետոյ անյապազ գուրս գալ եկեղեցուց։

Բայց այս կոչերից, երկրիս մէջ երեւան եկան «ահագին քանակութեամբ բրոշիւրներ ու թերթիկներ, նշանագրուած զըլիսաւորապէս Ստակահօլմում և Շատեինում, որոնց մէջ ժողովը գինուորագրութեան նոր կանոնագրութիւնը ներկայացնում էր ամենախեղաթիւրուած ձեռվի։ Հետեւելով վերոյիշեալ կոչերում նշանակուած ծրագրին, պաստորները շատ տեղերում, ինչպէս յայտնի է, հրաժարուեցին Բարձրագոյն մանիֆեստը յայտարարելուց, —մի քանիսը խնդրումատոյց լինելով Ֆինլանդական Կայսերական սենատին իրանց ազատել այդ պարտականութիւնից, իսկ միւսները տալով շատ իխստ կարծիքներ, որոնց մէջ յայտարարում էին, թէ «չեն կարող Բարձրագոյն մանիֆեստին օրէնքի ոյժ և նշանակութիւն տալ», ուստի և ըստ խղճի պարտականութեան, նաև չեն կարող այդ մանիֆեստը յայտարարել ժողովրդին իբրև օրէնք, առանց որ դրանով խախտած լինեն իրաւունքը և զրժած իրանց տուած երդումը»։ Սակայն, Ֆինլանդական Կայսերական սենատը մերժեց պաստորների բոլոր խնդիրները և կոնսիստորիաներին պատուիրեց ձեռք առնել հարկաւոր միջոցները շուտափոյթ յայտարարելու նոր օրէնքը։

Այն ժամանակից, որ հարկաւոր էր ամբողջ Ֆինլանդիայում յրելու զինուորագրութեան վերաբերեալ Բարձրագոյն մանիֆեստը պարունակող «Որոշումների ժողովածուն», և յիշեալ «Որոշումների ժողովածուն» պատշաճաւոր պաստորական վարչութիւններին յանձնել գործը մի քանի մագիստրատների կողմից ուշացնուելուց, —ընդ սմին Նիւստագի մագիստրատը մինչև

կագրութիւն չունեն, բայց առաջինների հետ միասին օրէնքի ոյժ են ստանում։

անգամ սմինսին չէր յանձնել այն, հիմունկով այն բանի վրայ, թէ «նոր կանոնադրութիւնը չի կարող ֆինլանդիայում օրէնքի ոյժ ունենալ», այս բոլորից եռանդով օգտուեց յանցապարտ ազիտացիան, դիմադրութեան նախապատրաստելով ազգեցիկ ինտելիգէնցիային, իսկ մի քանի սակաւաթիւ համայնքներում նաև ժողովրդին:

Բարձրագոյն մանիքնեստի ընթերցման սկզբում եկեղեցիներից ոմանց մէջ մի քանի անհատներ, զիտաւորապէս ինտելիգէնտներից, զիմում էին պատորին, յայտարարելով՝ իբր թէ ծխականների կողմից, չը կարդալ հիմնական օրէնքների կարգով չը կազմուած գոկումենաներ, ուրիշ եկեղեցիների մէջ ընդհատում էին ընթերցումն երգելով «Տէրն մեր հզօր պաշտպան» սաղմուսը կամ թէ ազմկալի կերպով գուրս էին գալիս եկեղեցուց:

Իսկ Սիբրոյի եկեղեցում (Նիւլանդի նահանդ) մի քանի ինտելիգէնտ անձեր թոյլ էին տուել իրանց բոնութեամբ հեռացնելու Բարձրագոյն մանիքնեստը լսել ցանկացողներին, իսկ պատորի եկեղեցուց գուրս դալու միջոցին խլել նրա ձեռքից գոկումենաները, բոթել և հարուածներ հասցնել:

Պատարներից յիշեալ պահանջներն անող և ժամաւորներին ազգմոս երգել հրաւերողները (սազմոս, որ, ինչպէս պահանջւում է Եկեղեցական Կանոնադրութեան § 24-ով), չէր նշանակել պատորն այդ օրը գատակուն պատասխանատւութեան էին կանչուել, բայց տեղական գատարաններից արդարացրուած էին:

Չը նայենով սենատի և եպիսկոպոսների կտրական պատուէրից, պատարներից ոմանք այնուամենայնիւ չը կարդացին Բարձրագոյն մանիքնեստը զինուորագրութեան մասին, ուստի և պատշաճ պատասխանատւութեան ենթարկուելին. իսկ եկեղեցական բնմերից նոր օրէնքը յայտարարելու համար նրանց տեղ ուղարկուեցին ծուխ չունեցող պատորներ, որոնցից պատոր Խալմէ սկսեց կարդալ Բարձրագոյն մանիքնեստը Հելսինդֆորսի եկեղեցիներում—փետրուարի 3-ին (16-ին) Եկեղեցեան և 10-ին (23-ին) Նոր եկեղեցում:

Հէնց որ յիշեալ պատարն սկսեց կարդալ Բարձրագոյն մանիքնեստը Նիւլայեան եկեղեցում, իսկոյն եկեղեցին մօտ հաւաքուեցին մի խումբ անձեր, առաջնորդութեամբ «Päivälehti» լրագրի նախկին խմբակիր Էրո Էրկոզի, որը յայտնեց թէ՝ «Ֆինժողովրդի կողմից մենք ինքում ենք ձեզ գադարեցնել զինուուրագրութեան վերաբերեալ որոշման ընթերցումն և իջնել բեմից». ընդ սմին չուրջը լսուեցին ձայներ. «Մենք միանում ենք»:

Սրանից յետոյ սկսեցին երգել՝ «Տէրն մեր հզօր պաշտպան» սաղմոսը, ուստի պաստորն ստիպուած էր դադարեցնել ընթերւ յումը:

Ցոյցին մասնակցողներին ոստիկանական կոմիսարը հրաւիրեց թաղային ոստիկանատուն՝ արձանագրութիւն կազմելու համար. ակզբում նրանք ուզում էին խոյս տակ կոժիսարի պահանջը կատարելուց, բայց երբ մի քանի կոնստաբլներ մօտեցան՝ հնազանդուեցին:

Հարցուվորձի ժամանակ բոլոր ձերբակալուածները, որոնց թւում կար ի միջի այլոց, վերջերս սենատի որոշմամբ պաշտօնից հեռացրած\*) չուեղական տարրական լիցէօնի ռեկտօր ֆօն-Բօնսդորֆ, որը այժմ նոյն տեղում ուսուցիչ է, փաստաբաններ, փոխհերթականութիւններ ֆօն-Հարտման և էմիլ Վալլին և ուրիշները—ուզում էին պատասխանել տմիկնը միաժամանակ, իսկ միւս սենատակը հեռացուածները փորձեցին փախչել, բայց բռնուեցին:

Արձանագրութիւնը կազմուելուց յետոյ ձերբակալուածներն ազատ արձակուեցին:

Հետեւել կիրակի, փետրուարի 10 (23-ին), ժամասացութիւնը վերջանալուց յետոյ, երբ պաստոր Խալմէն նոր եկեղեցում սկսեց կարդալ Բարձրադոյն մանիֆեստը, նրան ընդհատեց վերայիշեալ պ. ֆօն-Բօնսդորֆը բարձրաձայն կանչելով. «Պատորին պատշաճ չէ կարդալ զինուորակրութեան վերաբերեալ որոշումը, որովհետեւ այդ որոշումն ապօրինի է և երեան է եկել ապօրինի ճանապարհով, և մենք բողոքում ենք ընթերցման դէմ»:

Սրանից յետոյ գօլաօր Խօհան Վիլհէլմ Յիլֆիտելու և ուրիշները, որոնք չըջապատում էին պ. ֆօն-Բօնսդորֆին, նմանապէս և շատ ծխականներ աղաղակում էին՝ «Այդպիսի բան չի կարելի կարդալ»—և իսկոյն սկսեցին երգել՝ «Տէրն մեր հզօր պաշտպան» սաղմոսը. այս երգեցողութեանը միացան եկեղեցում բոլոր գտնուածները, որով և պաստոր Խալմէն ստիպեցին դադարեցնել Բարձրագոյն մանիֆեստի ընթերցումը:

Եկեղեցուց դուրս գալիս, նախագաւթեամ, անկարգութեանը մասնակցող անձերին ոստիկանութիւնը հրաւիրեց թաղային ոստիկանատուն արձանագրութիւն կազմելու համար. Զը նայելով ոստիկանութեան յաճախսակի խնդրանքներին ցրուել, ահազին ամբոխը հետեւում էր բռնուածներին մինչեւ թաղային ոստի-

\*) Իր իրաւասութեան տակ գտնուած դպրոցում ոռասաց լեզով դաստութեան դործին անհամապատասխան վերաբերուելուն համար:

կանատուն, որի առաջ և մնաց սպասելու լցնելով մերձակայ փողոցները:

Ամսն անգամ, երբ ստորիկականութիւնն ամբոխին հրաւիրում էր, որ ցրուի, ամբոխը պատասխանում էր աղաղակելով՝ «ուռա», ուստի կանչուեցին հեծիալ պօլիցիականները, որոնք և ցրեցին ամբոխը, որի ժամանակ մի քանի դիմադրողներ բռնուեցին:

Արձանագրութիւն կազմելու համար ստորիկանատուն հրաւիրուածների թւում կային պաշտօնից արձակուած\*) Նիւլանդի նահանգական վարչութեան փոխ-լանդսկամերիք Վերներ Հօլմբերգ, նախկին ուեկտօր Փօն Բօնսդօրֆ, փիլիսոփայութեան մագիստրոսներ Հուգո Վիլհելմ Բլումկվիստ և Հայներիխ Ստոլ, սենատի արձանագրութիւնները կազմող քարառուզար Էլմի Յուն բուրուելմ, որը թոյլ էր առուել իրան ճեռափայտով խփելու ստորիկանական կոմիսարին, մի քանի հոգի ուսանող երիտասարդութիւնից և այլք:

Այս գործին վերաբերեալ բոլոր արձանագրութիւնները յանձնուած են քաղաքակին Փիսկալին՝ մեղաւորներին դատական պատասխանատութեան ենթարկելու համար»:

«Կաեւած», լրագրում կարդում ենք. «Բաթումից սաացուած տեղեկութիւններով, մարդի 4-ին Բօտչիլիի գործարանի բանուորները դադարեցրին աշխատանքը՝ մերժումն սաանալով այնպիսի պահանջների կատարման մէջ, որոնք ոչ մի օրինաւոր հիմք չունեին. այս պատճառով էլ գործարանը փակուեց: Ապա, մարտի 8-ին, այդ գործարանի բանուորներից բազիացած մի խումբ, —մօտ 300 հոգի, —հաւաքուեց Բաթումի ստորիկանական վարչատան առաջ և պահանջնեց արձակել նախընթաց օրը ձերբակալուած բանուորներին, որոնք գործարանում աշխատանքները զադարեցնելու նախաձեռնողներն էին: Տեղական ստորիկանութեան առաջարկութեանը՝ ցրուել և հեռանալ ստորիկանութեան առաջից՝ բանուորները պատասխաննեցին մերժումով, ուստի և ձերբակալուելով ուզարկուեցին բանու: Հետեւեալ օրը, մարտի 8-ին, հաւաքուած փողոցային ամբոխը փորձ արեց ազատելու կալանաւորուածներին բանտից, և, ականջ չը դնելով համոզումներին, յարձակուեց տեղական զօրքի բօտայի վրայ, որ գտնւում էր այնտեղ՝ անկարգութիւնների առաջ առնելու համար: Բօտայի վրայ, ամբոխի կողմից աեղաց քարերի մի ամ-

\*) Նիւլանդի նահանգապալետին պարզուպէս դիմադրելու և նրա հետ բանդաբար վարուելու համար:

բողջ տարափ, զրա հետ միասին արձակուեցին գնդակներ։ Անհրաժեշտ հարկից ստիպուած՝ բօտան պատասխանեց հրացան արձակելով ամբոխի վրայ։ Բօտայի զինուորներից վիրաւորուած է մի հոգի, իսկ ամբոխից սպանուած են 13 հոգի։

Կիեվի պօլիտեխնիկումի փակումը. «ՊրաՎԻ.»-ում տպուած է. «Անցեալ յունուարի 16-ին Փինանսների մինիստրը համաձայն պ. պ. մինիստրների յունուարի 10-ի խորհրդակցութեան որոշման, առաջարկեց կայսր Ալեքսանդր II-ի կիեվի պօլիտեխնիկական ինստիտուտի խորհրդին յայտնել ուսանողներին, որ եթէ անկարգութիւնների առաջն առնելու կամ դադարեցնելու համար անհրաժեշտ համարուի ժամանակաւորապէս փակել ինստիտուտը, ուսումնարանական զբաղմունքների և քննութիւնների համար կորած ժամանակը կը փոխարինուի ամառուայ մօտակայ արձակուրդների հաշուլին, իսկ ուսումնարանական զբաղմունքները ընդհանուր առմամբ դադարեցնելու դէպքում մինչև երեք չարաթ, քննութիւնները ամսնեւին չեն կատարուի և II ու բարձր կուրսերի ուսանողները կը թողնուեն հետեւեալ տարին նոյն կուրսերում, իսկ առաջին կուրսի ուսանողները կ'արձակուեն և նորից կ'ընդունուեն՝ նորից մանող ուսանողների ընդունելութեան ընդհանուր կանոնները ճիշտ պահպանելով միայն։

Ապա ֆինանսների մինիստրը, իրանից կախուած բոլոր միջոցներով աշխատելով ուսանողների համար պօլիտեխնիկումը փակելու աննպաստ հետեւանքների առաջն առնել, յունուարի 26-ից առաջարկեց ինստիտուտի դիրեկտորին յայտնել ուսանողներին, որ նրանց բարիքը ցանկանալով և թանգ զնահատելով դպրոցական հաստատութեան վարկը, որի հիմնադրութեան և բարգաւաճման համար կառավարութիւնը անքան չանքեր է գործ դրել, նա, մինիստրը, հրաւիրում է նրանց ինստիտուտի արժանապատութեան համապատասխան խոհեմ ընթացք ունենալ, և որ նրա և պրօֆէսօրների համար չատ ցաւալի և վիրաւորական կը լինի, եթէ ուսանողները մասնակցեն անկարգութիւններին։ Մի և նոյն ժամանակ, լիակատար վստահութիւն յայտնելով դիրեկտորին և պրօֆէսօրների ամբողջ կազմին, մինիստրը ինդրում էր ինստիտուտի իշխանութիւնից աղջել երիտասարդութեան վրայ և նախազգուշացնել նրան, որ անկարգութիւնների դէպքում նա հարկադրուած կը լինի ու. պ. մինիստրների խորհրդակցութեան մատնացոյց արած միջոցը գործադրել։

Փետրուարի 12-ին, զեկուցումն ստանակով այն մասին,

որ պարապմունքը ինստիտուտում չեն վերսկսուել երեք շաբթուայ ժամանակամիջոցը լրանալուց յիտոյ, ֆինանսների մինիստրը կրկին անդամ հեռազրեց ինստիտուտի գիրեկտօրին, խընդրելով նրան համոզել ուսանդներին անյապաղ սկսել պարապմունքները և մատացոյց անել նրանց, որ ինստիտուտը իր հիմնուելու օրից եղել է առանձնապէս նպաստաւոր պայմաններում, և որ ուսանողները ոչինչ առիթներ չունեն գժգոհ լինելու ոչ իրանց գպրոցի ներքին կեանքից, ոչ պրօֆէսօրների և ոչ էլ իր, մինիստրի, վերսբերմունքից դէպի նրանց:

Այդ յորդորները աջողութիւն չունեցան և ինստիտուտը փակելու մասին յայտարարուած միջոցը վետրուարի երկրորդ կէսից պէտք է գործադրուէր իր բոլոր հետեւանքներով. բայց, ի նկատի ունենալով ինսափտուաթի խորհրդի առանձին միջնորդութիւնը, որը յոյս էր յայտնում, թէ ուսանողները կը սկսեն դասախոսութիւնները լսել Մեծ պասի առաջին շաբաթը անցնելուց յիտոյ, որի ժամանակ կինվի բոլոր գպրոցներում պարապմունքներ չեն լինում, ֆինանսների մինիստրը, ժողովը դաշտան լուսաւորութեան մինիստրի համաձայնութեամբ, հնարաւոր համարեց պարապմունքիր սկսելու վերջնական ժամանակմիջոցը նշանակել մարտի 5-ը:

Այժմ ստացուած տեղեկութիւնների հիման վրայ, պարապմունքները կինվի պօլիտեխնիկական ինստիտուտում մարտի 5-ին չը վերսկսուեցին, և այդ պատճառով ֆինանսների մինիստրը կարգադրեց փակել ինստիտուտը մինչեւ ուսումնական տարուայ վերջը. II և բարձր կուրսերի ուսանողներին թողնել հետեւեալ ակադէմիական տարում մի և նոյն կուրսերում, ուր նրանք գտնուում էին այդ տարի. իսկ առաջին կուրսի ուսանողներին արձակել՝ իրաւունք տալով ինստիտուտին թոյլ տալ մրցակտն քննութիւններ բռնել, նոր մանուղների հետ հուսարապէս, դրանցից այսպիսիներին, որնույ յետ ընդունելը ինստիտուտի իշխանութիւնը հնարաւոր էր համարէ:

Ի պատի կինվի պօլիտեխնիկական ինստիտուտի պէտք է ասել որ պարտապմունքները գաղարեցնելու ամբողջ ժամանակը նրանք կարգը չը խանգորեցին գպրոցի պատերում և պատշաճաւոր յարգանքով էին վերաբերում պրօֆէսօրներին, որոնք իրանց կողմից ամեն միջոցներ գործ էին գնում բարերար աղդեցութիւն գործելու համար ուսանող երիտասարդութեան վրայ: Ուսուցչների և ուսանողների այդպիսի փոխադարձ յարաբերութիւնների ժամանակ և աչքի առաջ ունենալով իշխանութեան կատարեալ հոգածութիւնը նրանց մասին, պարապմունքները դադարեցնելու ներքին ոչինչ պատճառներ չը

կային Այդ պատճառները պէտք է դրսից ներշնչուած համարել։  
Որոշելով ժամանակաւորապէս փակել ինսախտուաը, Գի-  
նանների մինիստրը նկատում է, թէ բարձրագոյն դպրոցը  
պարտաւոր է բացասապէս ուսումնական նպատակներին հետա-  
մոււա լինել, այսինքն հաղորդելի իր օաններին գիանական տեղեկու-  
թիւններ և ամեն միջոցները տալ այդ տեղեկութիւնները լիա-  
կատար կերպով իւրացնելու համար։ Այդ նպատակներին չէր  
կարելի համնել վերջացող ուսումնական տարում, պարագմունք-  
ների երկարատև ընդհատման և ուսանող երիտասարդութեան  
անհանդիստ զրութեան պատճառով, և մինիստրը իրան համար  
իրաւունք չէ համարում թոյլ տալ գուրս թողնելու ինստիտու-  
տից այնպիսի անձանց, որոնք իրանց գիտութեամբ անարժան  
են ինժեներների կոչումը կրելու։

Խորին կերպով ցաւելով, որ աւագների յորդորները, որոնք  
երիտասարդութեանը բարիք և օգուտն էին ցանկանում միայն,  
իրանց նպատակին չը հասան, մինիստրը յոյս ուսի, որ ապա-  
դայում ինստիտուտի փակումը, որի պատճառը իրանք ուսա-  
նողները են եղել, կը զգուշացնէ ամենից շատ ողեւորող երի-  
տասարդներին այն ընթացքից, որ առաջ է բերում այդքան ոչ  
ցանկալի զործադրութիւնը։

Փետր. 9-ին Մուկուայում եղած անկարգութիւնները. «Պրա-  
վիտելյանի ՅԵՍՏԻԿԵ»-ում տպուած է։

«Կայսրութեան բարձրագոյն դպրոցների մի մասի մէջ վեր-  
ջին տարիներս տեղի ունեցող յուզմունքները անցեալ 1901 թուի  
վերջում ընդունեցին ակնյայտնի հակակառավարչական բնաւո-  
րութիւն։ Զը բաւականանալով, առաջուան նման, ակադէմիական  
կազմի փոփոխութեան զանազան պահանջներ անելով, ուսանո-  
ղական շարժումների զեկավարները դպրոցների պատերի մէջ չը  
թոյլատրուած ժողովներում թէ իրանց ասած ճառերով և թէ  
բազմաթիւ գաղտնի կոչերով ու պրոկամացիաններով աշխատում  
էին զրաւել ուսանող երիտասարդութիւնը դէպի քաղաքական  
շարժման ճանապարհը, աշկարայ յայտարարելով գոյութիւն ունե-  
ցող վարչութեան ձեւը փոփոխելու անհրաժեշտութեան մասին։  
Մի և նոյն ժամանակ խոստովանելով ուսանող երիտասարդու-  
թեան անզօրութիւնը այդպիսի ձգումները անմիջապէս իրա-  
գործելու համար, այդ շարժման զեկավարները, սերտ յարաքե-  
րութիւններ պահպանելով գոյութիւն ունեցող յեղափոխական  
իմբերի և շրջանների հետ, շարունակում էին նոյն ոգւով յան-  
ցաւոր պրօվագանդան հասարակութեան եւ մեծ քաղաքների

բանուորների միջեւ թէ բերանացի և թէ տարածելով յանցաւոր հրատարակութիւններ։ Իրանց ձգտումներն արտայայտելու մերձագոյն եղանակներից մէկը ազիտատօրները համարում էին փողոցային ցոյցերի կազմելը, որի համար և փորձեր են արուած զանազան քաղաքներում։ Նոյնպիսի ցոյց կազմելու համար Մոսկուայում ընտրուած էր ներկայ տարուայ փետրուարի 9-ը։ Տեղական իշխանութիւնների կարգադրութեամբ, որոնք տեղեկութիւններ էին ստացել այդ բանի մասին, կալանաւորուեցին մինչև մատնացոյց արուած օրը ենթագրուած ցոյց կազմակերպողների ամենաեռանդուն դրդիչները և նրա հնարաւոր ղեկավարները, թուով 47, որոնք մշակել էին ի միջի այլոց և նրա մանրամասն ծրագիրը գաղտնի ժողովներից մէկի մէջ։ Այդ միջոցը, որ անկասկած ազդեցութիւն ունեցաւ յետոյ տեղի ունեցած անկարգութիւնների վրայ, սակայն կատարելապէս նրանց առաջն առնելու համար ոյժը անբաւարար եղաւ, որովհետեւ փետրուարի 9-ին Մոսկուայի համալսարանում, որը ենթագրուելիք ցոյցերի համար վերջնակէտ էր ընդունուած, տեղի ունեցաւ այն անցքը, որ պատմուած է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հրամանի մէջ 1902 թուի փետրուարի 14-ին, № 1-ում։ Այդ կոչից յետոյ ներկայ տարուայ փետրուարի 15-ից Մոսկուայի տեխնիական գպրոցի ուսանողների մի խումբ, որ իրան սեփականացրել էր այդ գպրոցի «գործադիր մասնաժողով» անունը, գիմնեց հրաւէրով բողոք յայտնել բոլոր ցանկացողներին գալ փետրուարի 17-ին, ցերեկուայ մօտ 2 ժամին դէպի Պուչկինի արձանը փողոցային ցոյցեր կազմելու համար։ Նշանակուած օրը մատնացոյց արուած տեղը հաւաքուեցին այդ գպրոցի մի քանի ուսանողներ եւ, խումբ կազմելով, սկսեցին խորհրդակցել ընթացքը սկսելու համար։ Դէպի Նիկիտսկայա Վօրօստա փողոցը տանող բուլուարով ցոյցեր անելով անցնելու հէնց առաջին փորձերի ժամանակ նրանց խսկոյն և եթ շրջապատեց ոստիկանութիւնը։ բռնուեցին նրանցից 11 մարդիկ, որոնց մօտ գտնուեց դրօշակ յանցաւոր մակագրութեամբ։

Անկարգութիւններին մասնակցածների մեղաւորութեան հարցը քննելիս ի նկատի առնուեցան ինչպէս նկարագրուած դէպրէերի ընաւորութիւնը, այնպէս էլ անհրաժեշտութիւնը գնելու գլխաւոր յանցաւորներին, որպէս զի նրանք այլ ևս չը շարունակեն ազդեցութիւն ունենալ շրջապատող շրջանների վրայ, այնպիսի պայմանների մէջ, որոնք աւելի քիչ նպաստաւոր լինէին յեղափոխական գործունէկութիւն ցոյց տալու համար և այս պատճառով բոլոր մեղաւորներին ենթագրուած էր բնակեցնել պօլիցիայի հսկողութեան տակ կայսրութեան զանազան հեռաւոր

տեղերում շատ թէ քիչ ժամանակով։ Այս ենթադրութիւնը Բարձրագոյն զիտութեան հասցնելուց յետոյ, Թագաւոր Կայսրը բարեհաճեց Ամենաողորմածաբար հրամայել պահպանել Իրկուտսկի ընդհանուր նահանգապետութեան սահմանները ուղարկելու միջոցը՝ միայն գլխաւոր մեղաւորների վերաբերմամբ։ իսկ միւս մասնակիցներին ենթարկել բանտարկութեան Յ-ից մինչեւ 6 ամիս ժամանակով։

Համաձայն այս բոլորի, ներքին գործերի մինիստրը մարտի 7-ին հաստատեց այն առանձին խորհրդակցութեան արձանադրութիւնը, որ կազմուած էր պետական պաշտպանութեան կանոնադրութեան 34 յօդուածի հիման վրայ և որ քննել էր Մոսկուայում փետրուարի 9-ին և 17-ին ունեցած անկարգութիւններին 682 մամնակցողների գործը. այդ որոշմամբ այն մարդիկ, թուով 95 հոգի, որոնք յայտնի կերպով երեան են եկած քաղաքական անբարեյուսութեան մէջ, ցոյցերը պատրաստելու և նրա մէջ գիտակցաբար մասնակցելու մէջ, ուղարկուում են Իրկուտսկի ընդհանուր նահանգապետութեան սահմանները պօլիցիայի հսկողութեան տակ ապրելու 2-ից մինչեւ 5 տարի ժամանակով։ 567 հոգի ենթարկուում են բանտարկութեան Յ-6 ամիս ժամանակով և 6 հոգի ենթարկուում են պօլիցիայի հսկողութեան 1 տարի ժամանակով այն տեղերում, ուր ապրում են նրանց ծնողները կամ ազգականները. 14 անձերի վերաբերմամբ գործը դադարեցրած է։

Այդ անձինք ըստ գպրոցական հիմնարկութիւնների բաժանւում են այսպէս. Մոսկուայի համալսարանի ուսանողներ 537, Մոսկուայի տեխնիկական ուսումնարանի—32, Մոսկուայի Գիւղատնտեսական ինստիտուտի—13, Մոսկուայի ինժենէրական ուսումնարանի—3, Լազարեան ճեմարանի ուսանողներ—1, սահմանաչափական ինստիտուտի ուսանողներ—7, զանազան կուրսերի ունկնդիր կանայք—55, ուրիշ զանազան մարդիկ, այր թէ կին—34։

Բանտարկութեան պատիժը կրելու գլխաւոր տեղը նշանակուած է Արխանգելսկի ժամանակաւոր բանտը։

Պատօնական կարգադրութիւն հայ փախստականների վերաբերմամբ. Հայ-փախստականների վերաբերմամբ եղած Բարձրագոյն հրամանի հիման վրայ Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը առաջարկել է Թիֆլիսի ոստիկանսապետին և զաւապեաններին։

1) Մարտի 12-ին կանչել բոլոր հայ փախստականներին ոստիկանական վարչատները։

2) Յուցակագրել նրանց ու առաջարկել, որ կամ ոռուսահաղատակութիւն ընդունեն կամ վերագառնան Թիւրքիա, որի համար տալ նրանց երկու շաբաթ ժամանակ:

3) Մինչև մարտի 26-ը կազմել այն բոլոր հայ փախստականների ցուցակները, որոնք կը ցանկան Ռուսաստանի հպատակ դառնալ:

4) Ապրիլի 2-ին երդուեցնել այն բոլոր փախստականներին, որոնք ցանկութիւն կը լինեն յայտնած ոռուսահպատակութիւն ընդունելու ժիֆլիսում նրանք պիտի երդուեցնուեն Վանքի աւագ եկեղեցում:

5) Մինչև յուլիսի 1-ը բոլոր փախստականներին իրաւունք է տրուած անդամ գրուելու այն հարկատու հասարակութիւնների, որ կը ցանկանան իրանք. քաղաքային հասարակութիւնների անդամ գրուելը կատարւում է իշխանութեան միջոցով, իսկ զիւղական հասարակութիւնների անդամ գրուելիս անհրաժեշտ է նոյն այդ գիւղական հասարակութիւնների համաձայնութիւնը:

6) Այն փախստականներին, որոնք ցանկութիւն կը յայտնեն բնակութիւն հաստատել Ռուսիայի ներքին նահանգներում, իրաւունք կը տրուի ձրիաբար ուղիորդելու իրանց նոր բնակավայրերը:

7) Մարտի 26-ից սկսած բոլոր փախստականները կը մոցուեն առանձին ցուցակներ (ընտանիկան) և այդ ցուցակների կտրոնները կը յանձնուեն նրանց ձեռքը:

Հարկատու հասարակութիւնների նոր անդամ գրուած հայ փախստականները կ'ենթարկուեն ընդհանուր կանոնների և 1902 թուականից նրանցից ևս զի՞նուոր կ'առնուի ընդհանուր հիմունքներով:

## † ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆ

Անցեալ փետրուարի 21-ին, երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ, Թիֆլիսում վախճանուեց յայտնի հնագէտ Ալէքսանդր Երիցեանը: Կովկասաղիտութիւնը և մասնաւորապէս հայագիտութիւնը այդ մահով զրկուեց մի շատ բեղմնաւոր և անխօնջ աշխատաւորից: որ, չը նայած իր ծեր հասակին (մեռաւ 60 տարեկան), որ ու գիշեր նուերուած էր իր գործին: Ամիու փոււած իր սեննակում, իր ձեռքով ժողոված զրքերի և պատմական յիշատակարանների հարուստ հաւաքածուի մէջ, նա անդադար քրքրում էր, ուսումնասիրում էր: Մահը վրայ հասաւ հէնց այդ մանրակրկիտ տքնութիւնների մէջ, հեռացրեց նրան այն պարապմունքներից, որոնք մի քանի տասնեակ տարիներ նրա կեանքի մխիթարութիւնն են կազմել:

Ալէքսանդր Երիցեանը ինքնուս աշխատաւորի մի շատ հետաքրքրական տիպ էր: Կանոնաւոր, մեծ կրթութիւն նա չէ ստացել Եղել է Ներսիսեան դպրոցում, ուր մնացել է մի քանի ամիս, ապա մտել է Թիֆլիսի գիմնազիան, բայց այնտեղ էլ չէ վերջացրել ուսումը: Կիսատ թողնելով կրթութիւնը, նա մտել է պետական ծառայութեան մէջ, որից հրաժարուել է միայն ութուննական թուականների կէսում:

Սակայն նրա մէջ շատ վաղուց է զարթել սէր դէպի հայրենի զրականութիւնը: Այն ժամանակ նա զեռ գիմնազիայի աշակերտ էր: Մի ժամանակ էր զա, երբ մեզանում նորնոր էր զարթնում ազգային գիտակցութիւնը: Բնական է որ շարժումը ամենից առաջ և ամենից շատ ոգեսրէր երիտասարդ ոյժերը: Գործելու ձգտումը թափանցում է և զիմնազիստների աշխարհը: Այդտեղ գտնում են պատանիներ, որոնք զգում են թէ պարտաւոր են պատրաստուել՝ իրանց ժողովրդին ծառայելու համար: Կազմուում է մի փոքրիկ խումբ, որ սկսում է եռանդով պարապել հայերէնի ընթերցանութեամբ, դասեր է տալիս, մասնակցում է հայերէն ներկայացումներին: Գրականութիւնն էլ

գրաւում է այդ պատանիներին և նրանք, չը նայած որ դեռ պատրաստութիւն չունէին, սկսում են զրել «Մեղուի», ապա և «Կոռունկի» մէջ և նոյն իսկ սեփական հրատարակութիւնների միացն են յղանում: 1860 թուականին Թիֆլիսում տպւում և լոյս է տեսնում մի փոքրիկ տետրակ հետեւեալ վերնագրով. «Բարոյական պատմութիւնք երեխայից համար. աշխատասիրութիւն հայ աշակերտաց գիմնազիային Թիֆլիզոյ, նուիրեալ այժմեան հայկազուն մանկանց. Տետրակ Ա.»:

Աշակերտական խակ ու միամիտ գրուածքների մի ժողովածու է զա, որ սկսում է «Առ հայկազուն մանկունս» անունով մի ոտանաւորով և որի տակ դրուած է. «Ի բերանոյ Գէորգայ Տ. Աղէքսանդրեանց, Գէորգայ Բարեան, Սմբատայ Կարինեան, Աղէքսանդրի Երիցեան, Միքայէլի Քոչարեան, Զաքարեայի Գրիգորեան, Սարգսի Եղիգարեան և Գէորգայ Ներսիսեանց: Սա էր ահա այդ գիմնազիստների զրական-կրթական ընկերակցութեան կազմը: Երիցեանին այդ ժողովածուի մէջ պատկանում է մի երեխայական գրուածք «Բարի խորհուրդներ» անունով:

Այս խմբից, գպրոցից գուրս զալուց յետոյ, գրական աշխատաւորներ հանդիսացան Երկուսը—Գէորգ Տէր-Աղէքսանդրեան և Աղէքսանդր Երիցեան: Երկուն էլ շարունակեցին աշխատել գրականութեան մէջ, դեռ չունենալով մի յայտնի մասնածիւզ: Երիցեանին էլ գրաւում է այն ժամանակուայ ընդհանուր ոգեսրութիւնը թատրոնով և նա մինչև իսկ 1866 թուին գրում է «Արուսեակ Լօռըցի» անունով մի պիէս:

1866-ին Գէորգ Տէր-Աղէքսանդրեանը սկսում է հրատարակել «Վաճառական» անունով շաբաթաթերթը կամ «Թիֆլիսի առևտրական գաղէթը»: Թէի խմբագիր-հրատարակիչը նա է, բայց թերթի գլխաւոր և կարելի է ասել՝ միակ աշխատակիցը Աղէքսանդր Երիցեանն է, որի յօդուածներով էլ լցուում է այդ վահա ու փոքրիկ լրագիրը: Այստեղ արդէն Երիցեանը հանդէս է գալիս իբրև «հազար փէշակի» տէր մարդ: Ամեն ինչ նա է գրում. և՛ առաջնորդողներ առևտրի, տնտեսութեան մասին, և՛ գրական քննադատութիւններ, և՛ բժշկական յօդուածներ, և՛ պատկերներ Թիֆլիսի կեսանքից:

«Վաճառականը», ինչպէս ցոյց է տալիս և անունը, հրատարակւում էր զլիսաւորապէս առևտրական հայերի համար. այդ պատճառով նա ընտրել էր մի իտանափնտոր լեզու, որ կարող էր հասկանալի լինել վաճառականներին \*): Առհասարակ այդ

\*) Ահա մի նմուշ այդ լեզուից «Գոսուղարստվեննի նմուշնետով Դեպարտամենտումը նշանակած է էս մարտի 20-ին Թէլաւի ուեզդի Օժի

«Թիֆլիսի առեւտրական գաղէթը» մի շատ խեղճ բան էր և դրական երեսոյթ չէր կազմում Բայց արդարութիւնը պահանջում է խոստովանել որ «Վաճառականը» աւելի համապատասխանում էր մի լրագրի կոչմանը, քան, օրինակ, «Մեղուն». Նա քննում էր կեանքի գործնական պահանջները, անտեսական պայմանները, արձարծում էր արհեստների, վաճառքների արտահանութեան, հաղորդակցութեան ճանապարհների հարցերը, — մի բան, որ չէր երեսում ոչ «Մեղուն» և ոչ իսկ «Հայկական Աշխարհի» մէջ, թէեւ սրանց խմբագիրները բարձր ուսում ստացած մարդիկ էին և հէնց այդ պատճառով էլ վերեւից, արհամարհանքով էին նայում «Վաճառականի» խմբագիրներին:

«Թիֆլիսի առեւտրական գաղէթը» հաղիւ երկու տարուայ կեանք ունեցաւ Յիշենք և այն, որ նոյն Տէր-Աղէքսանդրեանցի հետ միասին Երիցեանը կազմեց և «Ընթերցարան» անունով գասագիրքը, որ մի ժամանակ շատ տարածուած էր մեր գպրոցներում և արժանացաւ երեք տպագրութեան:

Բայց Երիցեանը շատ երկար ժամանակ չը մնաց ամենինչի մասին զրողի դիրքում: Նա մտնում է Կովկասի Հնագիտական Յանձնաժողովի մէջ, որի նախագահն էր Ադոլֆ Բերժէ և այդտեղ գտնում է իր իսկական կոչման համապատասխանող պարապմունքներ. սկսում է ուսումնասիրել հնութիւնները, գրլիսաւրապէս, ի հարկէ, հայկական աղբիւրներից: 1870-ական թուականների սկզբում նա արդէն այնքան հմուտթիւն էր ձեռք բերել, որ սկսում է տպագրել հնագիտական մանր մունք ուսումնասիրութիւններ ուսուերէն լեզուով: Այսպէս, 1871-ին հրատարակուած «Սբորնիկ Սբենդինի օ Կավказք» ժողածուի մէջ տպւում է նրա աշխատութիւնը «Հին Անդրկովկասի առեւտրական ճանապարհների պատմական տեսութիւն» յօդուածը, «որ ցոյց է տալիս թէ Երիցեանը որքան մանրակրկիտ ուսումնասիրութիւններ կարող է կատարել»:

Հնագիտական ճետազօտութիւններ Երիցեանը միայն զրքերի մէջ չէր կատարում: 1871 թուին նա Կովկասեան Փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչի բարեհաճութեամբ ստանալով գանձարանից 400 ոռուբլի նպաստ, գնաց Լոռու հնութիւնները տեղն ու տեղը ուսումնասիրելու համար: Այդպիսի ճանապարհորդութիւններ նա կատարեց և յետոյ, զանազան ժամանակներում: 1872 թուականից նա սկսեց հրատարակել Թիֆլիսում յատկապէս Կովկասեան հնագիտութեան նուիրուած մի ամսագիր ուսուերէն լեզուով, որի անունն էր «Կավկազская Стა-

և Խորխելի, անունով գեղերի մէջը գտն է ծ Երկու եկեղեցու բաղի իշարով տալու տորգը»:

րահա»։ Այդ պարբերական հրատարակութիւնն էլ երկար կեանք չունեցաւ (հրատարակուեց ընդամենը 8 համար)։ Երիցեանը նրա մէջ զետեղնց բազմաթիւ մանր հետաքրքրական ուսումնասիրութիւններ։ Մենք չենք կարող այստեղ մի առ մի թուել այդ աշխատութիւնները։ Սևիական օրգանի դադարելուց յետոյ Երիցեանը սկսեց զետեղնել իր հնագիտական գրուածքները տեղական ոռւս հրատարակութիւնների, զլխաւորապէս «Կավազ» լրագրի մէջ։ Բաւական է թերթել այդ լրագրի համարները 70-ական թուականներին, որպէս զի իմանանք թէ որքան զարմանալի բնդմնաւոր զրիչ ունէր Երիցեանը և որպիսի բազմակողմանի, հետաքրքրական նիւթ՝ էր նա ընտրում իր ուսումնասիրութիւնների համար։

1876 թուին Թիֆլիսում սկսում է հրատարակուել «Փորձ» եռամսնեայ հանդէսը (յետոյ ամսագիր), Երիցեանը գառնում է նրա ամենաեռանդուն աշխատակիցներից մէկը և տպագրում է այստեղ բազմաթիւ հետաքրքրական գրուածքներ։

1877—1878 թուականների ոռւս-թիւրքական պատերազմի ժամանակ Երիցեանը նշանակուեց առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ զօրքերի զլխաւոր հրամանատարի մօտ։ Այդ պաշտօնափարութիւնն էլ նրան հետաքրքրական աշխատութիւնների նիւթեր տուեց։ 1878-ին, էրզրումը գրաւելուց յետոյ, ոռւսները իրանց վարչութիւնը մացրին էրզրումի նահանգի մի նշանաւոր մասի մէջ։ Գաւառապետներին յանձնարարուած էր ազգաբնակութեան յուցակը կազմել։ Այդ յուցակները յանձնուեցան Երիցեանին մշակելու և կարգի բերելու համար։ Երիցեանը դիմեց ձեռքի տակ եղած բալոր գրաւոր աղբիւրներին, և այդ բոլորից կազմեց մի վերին աստիճանի հետաքրքրական մանրամասն ուսումնասիրութիւն ոռւսներէն լեզուով, որ տպուած է Աշխարհագրական Ընկերութեան «Յանուար» անունով պարբերականի մէջ (1883, թ. VIII, № 1)։ Բերելով գաւառական վարչութիւնների կազմած ցուցակները, նա աւելացրել է իրանից բազմաթիւ ծանոթութիւններ։ Բացի գրանից, առանձին յաւերուածի մէջ նա դրել է էրզրումի վիլայէթի այն մասերի նկարագրութիւնը, որոնք ոռւսաց տիրապետութեան տակ չէին գտնուում, ինչպէս նաև այն մասերի, որոնք մինչև 1872 թ. այդ վիլայէթին էին պատկանում, բայց յետոյ անցան միւս, նոր կազմած վիլայէթներին։ Այդպիսով ստացւում է համարեա ամբողջ թիւրքաց Հայաստանի նկարագրութիւնը։ Առհասարակ, Երիցեանը շատ բան է արել՝ թիւրքահայերի պատմութիւնը մեզ ծանօթացնելու համար։ Առաջին անգամ նա էր, որ լոյս սփռեց XVIII դարի հայոց պատմութեան մի քանի մութ կէտերի վրայ։

Ութսունական թուականներին Երիցեանը շարունակեց իր բեղմնաւոր գործունէութիւնը, աշխատակցելով տեղական ոռւս լրագիրներին Խսկ հայերէն գրում էր «Արձագանք» չարաթաթիւնը (յետոյ լրագիր): Այդ ժամանակ նա գրեց «Վենետիկի Մխիթարեանք» հետազօտութիւնը, որ լոյս տեսաւ և առանձին դրբով՝ 1886-ին նա թողնում է պետական ծառայութիւնը և նուիրուում է գրական աշխատութիւնների: Այդ աշխատութիւնները ցրուած են զանազան պարբերական հրատարակութիւնների մէջ: Իննանական թուականներին նա հրատարակեց երկու մեծ հատոր՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում» վերնագրով, ինչպէս նաև «Պատմութիւն Ներսիսեան Դպրոցի», առաջին հատորը՝ Վերջին տարինները նա պատրաստում էր տպագրութեան համար Յովսէփի արքեպիսկոպոս Սրբութեանի Յիշատակարանը, պատմական թանկագին դօկումենտների մի մեծ ժողովածու, բաղկացած երեք ահագին հատորներից: Սակայն մահը թոյլ չը տուեց նրան վերջացնել այդ գործը:

Ինչպէս քանի անդամ կրկնեցինք, Երիցեանի աշխատութիւնները շատ բազմաթիւ են: Գնահատել դրանց նշանակութիւնը շատ գետար է այն պատճառով, որ այդ աշխատութիւնները ցիր ու ցան են զանազան հրատարակութիւնների մէջ, որոնց մի մասը հազուագիւտ է: Սակայն մեղանչած չենք լինի ձշմարտութեան դէմ, եթէ ասենք որ Երիցեանը իր անխոնջ աշխատութիւններով աւելի նիւթեր է պատրաստել պատմութեան համար, քան պատմութիւն է տուել: Խակական պատմագրութեան համար այնքան անհրաժեշտ լայն հայեացքները, քննադատական կարողութիւնը շատ չենք տեսնում այդ աշխատութիւնների մէջ: Երիցեանը կարողացել է մեղուի պէս նիւթեր ժողովներում բազմաթիւ ազբիւրներից, դասաւորել գրանց, նա շատ դէպքերում հեշտացրել է ապագայ պատմաբանի գործը: Մանրամամութիւնները մշակելու, փաստերով լուսաբանելու մէջ նա շատ ճարտար է, բայց մի մեծ չենք կառուցանելու համար, մի ներդաշնակ ամբողջութիւն ստեղծելու համար չունէր պատրաստութիւն: Թէ ինչքան վատ էր ըմբռնում նա պատմական երեւոյթները, այդ ցոյց տուեց նրա գրուածքը Ստեփանոս Նազարեանի մասին: Այստեղ, ուր հարկաւոր էր մասնաւոր պակասութիւնները ցոյց տալ, Երիցեանը ցոյց տուեց և՛ հմտութիւն: և՛ լաւատեղեակութիւն: Բայց ցաւը հէնց այն է, որ այդ մասնաւոր պակասութիւններով էլ նա դատեց ամբողջ երեսոյթի մասին, ուստի և ոռւսահայերի մտաւոր վերածնութեան գործին այնքան մեծ ծառայութիւն մատուցած նաղարեանցի նշանակութիւնը նա

հաւասարացրեց զերօի: Աւելացրէք զրա վրայ և հեղինակի պահապանողական իդէալները, և գուք կը տեսնէք, թէ ինչ պակասութիւններ կային Երիցեանի զարմանալի աշխատասիրութեան մէջ: Նրա զրած պատմութիւնները (իսուքը ընդարձակների մասին է) ներկացնում են կցկտուր ժամանակագրութիւններ. պակասում էր ընդհանուր զեկավարող սկզբունք, լուսաբանութիւն, ամբողջացում: Առանձին-առանձին մասերը մշակուած են. բայց դրանցից չէ կազմում ամբողջութիւն:

Զը նայած այս պակասութիւններին, Ալէքսանդր Երիցեանի երկարատև գործունէութիւնը մի շատ պատկառելի ծառայութիւն է մատուցած մեր աղքատիկ պատմագրական զրականութեան: Իր ընտրած մամնածիւղի մէջ Երիցեանը ուղղակի անփոխարինելի էր: Միայն անհուն սէրը, որ ունէր նա գէպի զործը, կարողութիւն տուեց նրան ամենը, ինչ արել է: Իսկ այդ արածի արժէքը հասկանալու համար պէտք է երևակայէք մեր երկրի պէս մի տեղ, ուր չը կան հարուստ զրադարաններ և թանգարաններ, ուր պատմական նշանակութիւն ունեցող թղթերը և ձեռագրերը գրուած են մասնաւոր մարդկանց տներում կամ այս և այն հիմնարկութեան արխիվներում: Երիցեանի ամենամեծ երախտիքն այն է, որ երկար տարիների ընթացքում նա հաւաքել է պատմական նիւթեր: Իրանից յետոյ նա թողնում է մի մեծ ժառանգութիւն, բաղկացած զրքերից և թղթերից: Ի՞նչ պէտք է դառնայ այդ հարուստ ժողովածուն — չը զիտենք: Գիտենք միայն որ այդ ժողովածուն գեռ շատ ու շատ հետաքրքրական զործեր և հանգամանքներ կարող է լուսաբանել մեր մօտիկ անցեալից:

Եւ շատ ցանկալի կը լինէր, որ Երիցեանի դառն աշխատութիւններով հաւաքած այդ նշանարները ցեցի կերակուր չը դառնային կամ կողպէքների տակ չը փակուէին: Լսում ենք որ տեղական հարուստներից մէկը կամենում է գնել Երիցեանի ամբողջ զրադարանը և պահել այնպէս, որ նրանից օգտուէին ցանկացողները: Տեսնենք որքան ճիշտ կը լինի այդ լուրը: Ցանկալի կը լինէր նոյնպէս որ կազմուէր Երիցեանի տպածթէ անտիպ մնացած աշխատութիւնների լիակատար ցուցակը, իսկ կարեորները հրատարակուէին առանձին զրքերով:

Այսպէս կարելի էր յարգել երախտաւոր ծերունու յիշատակը:

## ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Մտաւոր առաջադիմութեան զործը մեր գաւառներում. — Համակրելի երեսիթներ. — Ժողովրդի անօգնականութիւնը. — Ընթերցասիրութեան պահանջ. — Խնչպէս լրացնել այդ պահանջը. — Խնքնողնութիւն. — Վերադարձ դէպի գաւառները. — Հոգաբարձական ընտրութիւններ Երեւանում. — Խնքնավարութիւնը՝ անտանելի բեռ Շուշի քաղաքի համար. — Աշխատանքի տուն Բագրում:

Ով փոքր ինչ ուշազրութեամբ հետեւել է մեր պարբերական մամուլի ներկայ տարուայ բաժանորդագրութեան, նա նկատած կը լինի հետեւեալ հանգամանքը: Անցեաներում բաւական աչքի ընկնող թիւ էին կազմում այս կամ այն լրագիրը, ամսագիրը զանազան, աղքատ հիմնարկութիւններին, մանաւանդ գիւղական հասարակութիւններին նուիրողները. իսկ այս տարի այդպիսի նուէրներ համարեա չեղան: Երեւոյթի պատճառը բացատրում են նրանով, որ այս տարի կրիզիս է: Շատ հաւանական է որ այդպէս էլ լինի: Մեզանում գրականութիւնը, մամուլը այնքան երկրորդական, աւելորդ բան է համարւում, որ նրա վրայ ուշազրութիւն դարձնել կարելի է միայն այն ժամանակ, երբ մեծ շահ կայ, երբ կարելի է աւելորդից տալ: Թէև այդ տուածը նոյն իսկ ամենաառատ տարիներում էլ մի շատ ինեղճ գումար է կազմում, բայց և այդպէս, պարզ է այն հանգամանքը, որ կրիզիսի տարում հայ վաճառականը, հայ հարուստ ինտելիզենտը արդէն զրկողութիւն է համարում իր տարեկան բիւջէտը վրայ մի կամ երկու տասնեակ ոուրլի աւելացնել այդպիսի նուիրատուութիւնների համար: Մեր ցեղական յատկութիւնների տեսակէտից շատ բնորոշ է այս երեւոյթը: Բայց մենք այստեղ այդ երեւոյթով չը պիտի զբաղուենք:

Փաստն այն է, որ մի քանի հատիկ գիւղական հասարակութիւնները, որոնք մինչև այժմ լրագիր կամ ամսագիր էին ստանում այս կամ այն նուիրատուի չնորհիւ, այժմ զրկուած են այդ բարիքից: Գուցէ հարկաւոր էլ չը լինէր շեշտել այդ բանը,

ևթէ այդ զրկանքը ինքն ըստ ինքեան մի աննշան բան լինէր։ Ցաւն էլ հէնց այս է, որ զրկանքը աննշան չէ, որովհետեւ մեր գիւղական աշխարհի համար մամուլը զնալով անհրաժեշտութիւն է դառնում։ Միանգամայն աւելորդ է բացատրել թէ որքան ուրախալի պիտի լինի այս երեւոյթը։ Այն, միայն ուրախանալ կարելի է, որ ապագրական խօսքը մտնում է մեր գիւղական աշխարհը, ուր կատարելու այնքան մեծ դեր ունի։ Մտնում է, բայց ինչպէս Դեռ միայն ճանապարհ է հարթուած գեռ միայն պատրաստութիւն և ստեղծուած։ Սպասում են նըրան, բայց նա չէ զնում կամ շատ դժուար է զնում։ Պահանջվ կայ, բայց ոչ ն բայ արարութիւն տալու միջոցը գեռ չէ գըտնուել։—Մենք զեռ զործի սկզբում ենք. մենք տեսնում ենք որ մեր երկրի նոյն իսկ ամենախուլ անկիւններում, այնտեղ, ուր գեռ վայրենութիւն է տիրուած, հասկացել են մամուլի նշանակութիւնը։ Բայց մամուլը, գժբախտաբար, այդ տեղերը մուտք գործել կարող է միայն բարեգործութեան միջոցով։ Գիտակցութիւն կայ, բայց նա զեռ այնքան թոյլ է զարգացած, որ զիւղացին նրա համար զոհողութիւն անել չէ կարող։

Մեղադրենք մեր գիւղայուն, և ինչ իրաւունքով։ Միթէ նրա քաղաքացի եղբայրը, որ նրանից շատ վաղուց է հասկացել մամուլի նշանակութիւնը, մինչև այսօր էլ սիրում է կարդալ, բայց ձրի կարդալ Ո՛չ, մեղադրել չենք կարող, երեսյթը բնական է։ Ընթերցանութեան գործը գիւղերում—այսպէս է բոլոր քիչ քաղաքակրթուած երկրներում—պէտք է պատրաստուի բարեգործական միջոցներով։ Այս պատճառով է որ զանազան տեղերում գոյութիւն ունեն ընկերութիւններ գիւղական դպրոցներ, զրագարաններ, կիրակնօրեայ գասընթացքներ կազմակերպելու համար։ Մեղանում ուրիշ կերպ չէ կարող լինել։ Եւ եթէ մեղանում շատ հազուադիւտ են նոյն իսկ այնպիսի անհատներ, որոնք յօժար են լինում տարին մի 10 ոուրլի տալ որ և է գիւղի ընթերցասիրական պահանջը զոհացնելու համար, այդ միայն ցոյց է տալիս որ մենք պարտաճանաչ չենք, հասկանալ չենք կարողանում, ունենք մի անբարեկից ինտելիգենցիա։

Ի՞նչ պիտի լինէր մեր ներկայ ժամանակներում։—Գիւղական էժան կամ ձրի Գրադարանների մի ցանց։ Բայց ինչ չը կայ։—Զը կայ նոյն իսկ այն, որ մի քանի անհատներ ճարուէին, որոնք տարեկան 10 ոուրլու գիրք կամ թերթ տային մի գիւղի։

Տխուր զրութիւն։ Գիւղը իր պահանջներով մեր պատրաստականութիւնից շատ առաջ է անցել։ Այն, ինչ այնքան հեշտ պիտի լինէր կատարել, դարձել է մի այնպիսի կնճոռտ հանգոյց,

որ լուծելու այսօր վեր է մեր ոյժերից, Ո՞րպիսի վկայութիւն  
մեր անկարողութեան մասին:

Բայց ինչ պէտք է անել: Գաւառը զարթնում է, գաւա-  
ռը ասլրել է սկսում: Զմնանային ամիսների ընթացքում հետե-  
ւեցէք մեր լրագրութեան: Քանի քանի տեղ թատրոնական ներ-  
կայացումներ, տօնածառեր, երեկոյթներ են սարքում: Այդ տօ-  
նախմբութիւնների մէջ դուք կը տեսնէք թէ գաւառական փոքր  
ի շատէ աչքի ընկնող քաղաքը, թէ խեղճ ու մոռացուած գիւղա-  
քաղաքը, թէ նոյն իսկ մնձ գիւղը: Դա մի շատ զօրաւոր փաստ  
է որ մեր գաւառական աշխարհը հասկանում է իր մտաւոր շա-  
հերը: Բայց ի՞նչպէս է նա բաւարարութիւն տալիս իր այդ պա-  
հանջներին:—Ինքնազործութեամբ, աեղային նախաձեռնարկու-  
թեամբ, տեղային միջոցներով: Ամեն մէկը պիտի մտածէ իր  
մասին, ամեն մէկը պիտի ինքն իրան օգնէ: Ահա ինչ է ասում  
կեանքը: Գեղեցիկ սկզբունք: Եւ պէտք է յուսալ ու սպասել որ  
այդ սկզբունքը լայն զործադրութիւն գտնէ և ընթերցասիրու-  
թեան պահանջին բաւարարութիւն տալու համար:

Բարեգործներից և բարերարներից մանանայ սպասելու  
փոխարէն ամենալաւ միջոցը այն կը լինէր, որ զիւղերում կաղ-  
մուէին ընթերցասէրների շրջաններ և գտնէին միջոցներ լրագիր-  
ներ և գիրք ձեռք բերելու համար: Այդ միջոցները կարող են կաղ-  
մուել զանազան աղբիւրներից, ամենից լաւն է անդամակցա-  
կան փոքրիկ վճարներով զլուխ բերել բանը: Դա գժուար չէ,  
մի քանի տեղերում նոյն իսկ սկսել են այդպէս գործել: Զենք  
կարող չը լիշել այսանդ Կողը զիւղի գեղեցիկ սկզբնաւորու-  
թիւնը: Այդտեղ ապրածուած արբեցողութեան գէմ գտնուել է  
մի սիրուն միջոց: Փոխանակ զինետներում իրանց աշխատանքի  
միծ մասը կորցնելու, մի շրջան վճռել է թեթև վճարներ տալ՝  
գրքեր և ալարերական հրատարակութիւններ ձեռք բերելու հա-  
մար, այնպէս որ շատերի ազատ ժամանակը այլ ես չէ սպաս-  
ում գինեաններում, այլ քաղցրացնուում է ընթերցանութեամբ:

Տեսնում էք, ինչ աղբիւրներ կարմիր է ստեղծել: Կան,  
ի հարկէ և ուրիշ շատ այդ տեսակ միջոցներ, պէտք է միայն  
մտածել, դանել: Հարկաւոր է նախաձեռնութիւն, հարկաւոր են  
ոյժեր, որոնք կարողանային տեղային հանգամանքները խելա-  
ցի կերպով շահագործել՝ մտաւոր կարիքները լրացնելու համար:

Դժբախտաբար շատ չը կան տեղական նախաձեռնողներ,  
շատ չը կան ինտելիգէնտ ու հասկացող ոյժեր:

\*  
\*\*

Այդ պակասութեան մի մնձ պատճառը Բագուն էր: Իր

արդիւնաբերական աջողակութիւնների առասպելանման ժամանակներում այդ քաղաքը տարաւ ամենքի խելքը. մեր գաւառները սկսեցին դատարկուել և թափուել Բագու, հարստութիւն դիզելու համար. Ոչինչ կամ համարեա ոչինչ չէր մնում հայրենի հողի վրայ, մոռացուել է ամեն ինչ, զաւառը կատարելապէս արնաքամբ էր դառնում: Այս դրութիւնը մի մեծ չարկի էր գարձել մանաւանդ Գանձակի և Բագուի նահանգների համար: Սակայն անբնական դրութիւնը Բագուում երկար չը շարունակուեց: Տենդային իրարանցման հետեւց հիասթափումն, լազ և ատամների կրծտոց: Գործերը վատացան, արդիւնաբերութեան չափերը պակասեցին, մեծ քանակութեամբ մարդիկ մնացին գրսում, պարապ, անգործ: Հակըսուեց վերադարձ գէպի տուն, գէպի գաւառները: Եւ վերադարձողները միայն բանուո՞ներ ու մշակներ չեն. քիչ չեն և այնպիսիները, որոնք գրագէտ են, տեսել ու լսել են շատ բան: Այդպիսիները հարկագրուած են այժմ հողի վրայ գործ գտնել, հնարել՝ ապրելու համար: Նշանակում է որ զաւառում շատանում են կուլտուրական սկզբնաւորութիւնների համար պիտանի տարրեր:

— Բարի ժամի, ասում էինք մենք, անցեալներում կարդալով «Մշակի» մէջ, որ նագուից յուսախար վերադարձողներից շատերը բերել են իրանց հետ զանազան տնտեսական ձեռնարկութիւնների ծրագիրներ: Մէկը ուզում է մեղուարուծութիւն սկսել, միւսը տեղային մի այլ արդիւնագործութիւն զարգացնել գիտութեան պահանջներով: «Հող և գիրք», ասում էր յօդուածագիրը:

Այն, մենք էլ ամբողջ մեր հոգու կարողութեամբ կրկնում ենք այդ բառերը — հող և գիրք: Այդ երկու բանի վրայ միայն մենք կարող ենք հիմնել մեր բարեբախտութիւնը, մեր ամբողջ ապագան:

Նաւթային վակիսանալիան մոռացնել էին տուել այդ մեծ սկզբունքները: Մեր ինտելիգենցիան ամբողջ ժամանակ պտտում էր այդ խելակորոյս պարի մէջ և ոչինչ չը տուեց ժողովրդին իր մասնագիտութիւնից: Մնում է որ ցածրից սկսուի բնական, արդարացի ընթացքը: Մնում է որ արհամարհուի չաղ ոտքիներ և հարուստ հարսնացուներ միայն որոնողների զասակարգը և մեր մոռացուած, խոպանացած երկրի զանազան անկիւններում վառուեն կուլտուրական համեստ ձեռնարկութիւնների ճրագներ: Մի, ամբողջ ցանց, խիտ, լայնատարած, փայլուն...

Երեւանում դարձեալ հոգաբարձական ընտրութիւններ են կատարւում: Անցեալ տարի մենք մանրամասն պատմել ենք Երեւանի հոգաբարձական ճգնաժամի բոլոր հանդամանքները: Երկու խօսքով կարելի է այժմ վերանորոգել այդ պատմութիւնը: Ընտրում է հոգաբարձութիւն: Նա չէ կարողանում զործել. փաշայական կամայականութիւնների համդիակելով, ստիպուած է լինում հրաժարուել:

Հրաժարուածների տեղ այժմ նոր հոգաբարձուներ պէտք է ընտրել: Ի՞նչպէս ընտրել:—Յայտնի է թէ ինչպէս: Հայ ժողովրդի մէջ արդէն 40—50 տարի է, ինչ գործադրուում է ընտրողական սկզբունքը. հետեւաբար նոր չը պէտք է սովորեցնել թէ ինչպէս է կատարուում մի արդարացի, կանոնաւոր ընտրութիւն: Ընտրական սկզբունքի հոգին, էութիւնը այն է, որ ընտրող ժողովուրդը ազատ լինի իր քուէնները սրան կամ նրան տալու: Իշխանութեան միայն մնում է հսկել որ ընտրութիւնների ժամանակ ասլորինութիւններ չը լինեն: Սա պարզ է ամեն մէկի համար, բայց պարզ չէ այն մարդկանց համար, որոնք ընտրողական վեճ և նուիրական սկզբունքը դարձնում են անարժան խաղի առարկայ:

Ահա այսպիսի կերպարանք են ընդունել ընտրութիւնները Երեւանում: Եւ մենք ականատես ենք մի ցաւալի տեսարանի: Ժողովուրդը երեխայ է համարուում. նրա հետ կարելի է խաղալ, նրան կարելի է այս կամ այն կողմ ծաել, ինչպէս կը կամնայ մի եպիսկոպոս: Այդպէս են ուզում անել, բայց այդպէս չէ դուրս գալիս: Ժողովուրդը չէ ուզում խաղալիք զառնալ, նա ուզում է ազատ և ինքնազգուի լինել իր ընտրողական իրաւունքի մէջ: Նշանակուած է ընտրողական ժողով: Նախագահող եպիսկոպոսը այն տեղին է հասցնում իր ինքավստահութիւնը, որ ուզում է թելազրել ժողովին իր կամքը, նա ուզում է որ չընտրուեն այս կամ այն մարդիկ: Եւ երբ, այնուամենայնիւ, այդ մարդիկ ընտրուում են, նա բորբոքուում է, խանգարում է ժողովի պարապմունքները և հեռանում: Այնուհետեւ կամենալով, երեւի, «պատճել» իր կամքին չենթարկուող հասարակութիւնը, նա առաջ է քաշում քահանայ-հոգաբարձուների հարցը և հրաւիրելով քաղաքի 17 քահանաներին, հրամայում է նրանց ընտրել իրանց միջից երկու հոգաբարձու: Բայց նոր անաջողութիւն, քահանաները հրաժարուում են այդպիսի բան անելուց. նրանք յայտնում են որ չեն կամենում բաժանուել իրանց ժողովրդից և հոգաբարձական պաշտօն կ'ընդունեն այն ժամանակ երբ կ'ընտրուեն այդ ժողովրդի քուէով:

Կրկնում ենք, մեղ համար շատ ծանր է նայել Երեւանում

կատարուող գէպքերին: Ինչու այդքան անհանգստացնել ժողովուրդը, յուզել նր ու խաղալիք դարձնել: Աւելի լաւ չէ միանդամից վարացնել ընտրողական սկզբունքը, որ այսօր այնքան արհամարհուած է մեր նկեղեցականների կողմից: Աւելի լաւ է չը լինի նա, քան թէ գոյութիւն ունենայ այդպիսի դրութեան մէջ: Ի պառի ժողովրդի պիտի ասենք, որ նրան այլ ևս չէ կարելի վերադարձնել այն հին ժամանակներին, երբ հասարակաց կարծիք չը կար, երբ երկու երեք մարդիկ կարողանում էին խօսել ամբողջ համայնքի կողմից: Այս իրողութիւնը պէտք է միանդամից ընդունել, եւ ընդունելուց յետոյ կարելի է արդէն վճռել թէ ինչ եք գուք կամենում: Եթէ կամենում էք, որ գարոցն ունենայ ժողովրդական կառավարութիւն, պէտք է, ուրեմն, թոյլ տաք որ այդ կառավարութիւնը լինի այնպէս, ինչպէս կարող է լինել, այսինքն ազատ քուէով ընտրուած: Իսկ եթէ ուզում էք որ գուք լինէք կառավարողը, այն ժամանակ թոյլ տուէք խնդրել ձեզ, որ խաղալիք չը դարձնէք ժողովրդական ընտրութիւնը, որ առանց այդ էլ շատ է վաստուել զանազան սահմանափակումներով, կամայական տնօրինութիւններով: Եթէ այսպէս դատելու և գործելու միաք լինէք, Երեւանի ժողովուրդը զուր տեղից չէր յուզուի, զուր ժամանակ չէր վատնի պայքարների մէջ:

Ողբալի զրութիւն: Ողբալի է նամանաւանդ այն պատճառով, որ այդ բոլորը անւում է նկեղեցու անունով, այն եկեղեցու, որ ժողովրդականութեան, լայն համբերողութեան նուիրական սկզբունքների վրայ է հիմնուած: Մենք կը կամենայինք տեսնել այդ ազգային հիմնարկութիւնը լուսաւոր, առաջադէմ, ժողովրդի հետ շաղկապուած և նրա հետ ձեռքի տուած առաջ գնալիս: Բայց ինչ ենք տեսնում: Պաշտօնեաների չնորհիւնա այսօր երևում է յետաննաց. զուրս է գալիս թէ նա վախենում է ժողովրդի հետ լինելուց, թէ նա չէ յարդում ընտրողական սկզբունքը, ժամանակիս վարչական այդ ամենալաւ և արդար տեսակը: Ակամայ յիշում ենք Ստեփանոս Նազարեանի խօսքերը. հոգեորականները յետ ևն մնում, ժողովուրդը առաջ է գնում. և զրանց մէջ ձեղքուածք պիտի գոյանայ:

Երեխ, հէնց այդպէս էլ կամենում են մեր այժմեան հոգեորհայրերը:

\* \*

Եթէ ինքնավարութիւնը բարիք է, պէտք է որ նրանց վայելողն էլ պատրաստուած, հասկացող լինի: Ահա Շուշի քաղաքը: Արան չնորհուած է ինքնավարութիւն, որ, սակայն, աղէտի նման մի բան է համարւում աիրապահ քաղաքի նոյն իսկ

ջոջ բնակիչների համար։ Գաղափարները մոռայցւում են մեր ժամանակներում, մարզիկ այրութենական ծմարտութիւններն անդամ չեն կարողանում իրանց մտքում պահել։ Եւ ահա Շուշու քաղաքային գումայի նիստերից մէկում վեր է կենում ձայնաւոր Վէզիրօվ և առաջարկում է իր հայրենի քաղաքի փրկութեան համար գտած իր մի միջոցը։ «Ինքնավարութիւնը շատ թանգ է նստում մեզ, ասում է հոետորը։—խնդրենք իշխանութիւնից, որ վերացնեն լիակատար ինքնավարութիւնը և մեզ տան կը ճատուած ինքնավարութիւն»։ Դուման չի համաձայնուում ձայնաւորի հետ և առաջարկութիւնը չէ ընդունելում։

Ամեն բան լաւ է, ինչ լաւ էլ վերջանում է։ Շուշին սաստիկ նեղուում է ինքնավարութիւնից և ուզում է ազատուել այդ տևելորդ բերից։ Զայնաւոր Վէզիրօվի առաջարկութիւնը նոր բան չէ։ Շուշու թուրքերը քաղուց են աշխատում այդպէս անել տալ։ Պատճառը։ Քաղաքային վարչութիւնը, ասում են, դարձել է մի անկելանոց, ուր գործ են գտնում այն բոլոր մարդիկ, որոնք արձակուած են ծառայութիւնից կամ պաշտօն զբանելու չեն կարողանուի։ Եւ որովհետև այդպիսիների թիւը չափազաց մեծ է, ուստի քաղաքը բեռնաւորուում է ահազին տուրքիրով։ Տեսնո՞ւմ էք ինչ հիմնաւոր պատճառաբանութիւն է։ Չեն կարողանում քաղաքային սնդուկը պահպանել մորեխների տևերանքից և ուզում են ջնջել ինքնավարութիւնը։ Կարծես այդ ինքնավարութիւնը պահանջում է որ քաղաքային վարչութիւնը անկելանոց գաբանուի։ Այդպիսի յատկութիւն ինքնավարութիւնը, ի հարկէ, չունի. ընդհակառակն, նա բոլորովին հակառակն է պահանջում։ Բայց ինչ արած։ Աւելի լաւ է չունենալ ինքնավարութիւն, քան դուրս քշել աւելորդ բերանները, աւելորդ ուստովներին։

Այսպէս է խօսում իմաստութիւնը Շուշու մէջ։ Եւ, երեխ, վերջ ի վերջոյ նա կը լինի յաղթողը։ Միները ոչնչացնելու համար պէտք է կրակ տալ ամբողջ տունը։ Ի՞նչ անեն, երբ ուրիշ միջոց չը գիտեն...

\* \*

Բագւում Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը բաց արեց աշխատանքի տուն։ Հանդէսը կատարուեց, որ շատ զեղեցիկ տպաւորութիւն զործեց հաւաքուած մեծ բազմութեան վրայ։

Անցեալ տարի մեր տեսութիւնների մէջ մենք երկար խօսել ենք թէ Բագուի Մարդասիրական Ընկերութեան և թէ յատ-

կապէս նրա այս գեղեցիկ դիտաւորութեան մասին։ Այժմ, երբ բացուած է աշխատանքի տունը, մեզ կը մնայ միայն յարատեռութիւն և բարգաւաճում մաղթել այդ հիմնարկութեան, որ բարեգործական ամենալաւ ձեն է ներկայացնում, տալով տնանկին, թշուառին սեփական աշխատանքով մի կտոր հաց աշխատելու միջոցը։ Մենք ցանկանում ենք որ աշխատանքի տունը Բագուի հայ հասարակութեան ամենաջերմ հոգացողութիւնների առարկայ դառնայ։ Այդպէս միայն նա կը կարողանայ այնքան զարգանալ և առաջադիմել, որ կեանքի դժբախտութիւններից անպէտքացած մարդկանց նորից կը վերադարձնէ կեանքին, զրահաւորելով նրանց այս կամ այն արհեստով և այդպիսով անխոցելի դարձնելով նրանց թոյլ ու ճնշուած մարմինները։

Ա.

## ԱՐՏԱՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

— Ախօնիստների ծրագիր համաժողովը, — Անզլօքութիւն հաշտութեան հարցը, — Շնուալական իրրիդենտիզմը, Ցրիեստում, — Ցուրի համաժողովի որո-

շումները:

Առնասարեսն վարժարանն

Այս տարուայ սկզբում Շվեյցարիայի Բազէլ քաղաքում սիօնիստների արդէն հինգերորդ բազմամարդ համաժողովն էր անզի ունենում և աշխարք դարմացնում իր առասպելական աճումով...

Հրէական ազգի այդ շարժման համակրում են չափ քրիստոնեան, բայց ամենից շատ համակրանք են յայտնում Անզլիայում, ամեն տեսակ ազատագրութիւնների այդ որրանում, ուժեղ և յաճախ հակասական հոսանքների այդ հայրենիքում...

Ժամանակակից պետական-հասարակական կեանքի երեք շարժումներից՝ ազգայնական, բանուորական և կանանց, ներկայումս Անզլիայում ամենաուժեղը ազգայնականն է. յայտնի է թէ ինչ սուր կերպարանք ստացաւ իրանդական հարցը այն օրից, երբ հօմրուլը դադարեց ազատական կուսակցութեան առաջնակարդ ինդիր լինելուց իրանդական հարցին միացան թօէրականը և նրանց ցեղակից Կապշտատի հօլլանդական ազգարնակութեան հականողիական շարժումը Հաղին թէ այսուհետև նոյն իսկ խաղաղութիւնը կարողանայ վերականգնել այդ թշնամացած հօլլանդական և անզլիական ցեղերի մէջ փոխադարձ սէր և վստահութիւն. Այսուհետու մի այնպիսի վարչութիւնից, արիւնհեղութիւնից յետոյ Անզլիան ստեղծեց հեռաւոր իր կօլօնիայում մի այնպիսի վտանգ, որ ունի իր կողքին, իրլանդիայում...

Երկու տարի առաջ իր մեծութեամբ և ոյժով յոխորդացող Անզլիան այժմ, նեղը ընկած, ուղում է մի պատուաւոր նվազական և հաշտութիւն կնքել փոքրիկ, բայց իր պաշտպանած

դատի արդարութեամբ անընկճելի բօէրների հետ, որոնք գեռ շարունակում են ոչ միայն քաջութեան դասեր տալ իրանց թշնամիներին, այլ և՝ ազնւութեան, մեծահոգութեան դասեր. այդպէս, օրինակ, վերջերում Դէլարէյը գերելով անզիւական գեներալ Մետուէնին, չուզեց օրինակ վերցնել անզիւացիներից և մահուան պատժի հնթարկել, այլ բայց թողեց նրան:

Հաշտութիւնը արագացնելու տենչը այժմ այնքան ընդհանրացած է Անզիւացում, որ նոյն իսկ անզիւական եկեղեցու եպիսկոպոսները կօնդօնում և այլ քաղաքներում յորդորում են ժողովրդին՝ աղօթել խաղաղութիւն հաստատելու համար... մինչդեռ երկու տարի առաջ Քրիստոսի նոյն այդ հետեւողները քէն ու որ էին սերմանում և փառաբանում պատերազմը...

Բոլոր նշաններից երեսում է, որ տրդէն մօտալուտ է խաղաղութիւնը. զիջանելով անզիւացիների ինքնասիրութեան Տրանսվալի նախագահ Շալկ-Բուրդէրը առաջինն է սկսում բանակցութիւն: Հեռաղիրներից յայտնի է, որ Շալկ-Բուրդէրը թոյլուութիւն ստացաւ զնալ Պրետօրիա և աեսակցուել գեներալ Կիտչենէրի հետ: Յայտնի է նաև որ նոյն Շալկ-Բուրդէրը, անզիւական բանակի հրամանատարի գիտութեամբ, զնաց Օրանժենան հանրապետութեան նախագահ Շտէյնի հետ խորհրդակցելու: Նշանակելի իրազութիւն է և այն, որ անզիւական զօրքի նախկին գլխաւոր հրամանատար լորդ Վոլսէյը ուղեւորուեց Հարաւային Աքրիկա: Եպաստաւոր հանգամանք է հաշտութիւն կապելու հարցում նաև՝ բօրսային նիշչէականութեան հզօր ներկայացուցիչ Սեսիլ Ռոդսի մահը կապշտառում. խաղաղութեան խանգարիչ մի չար հոգի վերացաւ միջից:

Ինքն ըստ ինքեան հասկանական այս տաք պայքարի ժամանակ համարեա աննկատելի են անցնում անզիւական կեանքում միւս երկու հոսանքների արտայայտութիւնները. ովք է, օրինակ, առոնձին ուշադրութիւն դարձնում Վիֆէղի քարտաչների մեծածաւալ զործադուլի վրայ կամ պարւամենտին՝ 38 հազար կանանց ստորագրաւթեամբ նորկայացրած խնդիրքի վրայ, որով պահանջում են պարլամենտական ընտրուական իրաւունք կանանց հումար:

Իսկ տեղ-տեղ, Եւրոպայում, աղդայնական հարցը խառնուելով աշխատանքի արդար պահանջների հետ աւելի սուր կերպարանք է տալիս ընդհարումներին, ինչպէս, օրինակ, այդ տեղի ունեցաւ Տրիեստում, որ նաւերի բնունակիրների զործադուլին աւստրիական կառավարութիւնը «իտալական իրրիզենտիզմ» (անջատում Աւստրիայից և միացում իտալիայի հետ) լնաւու-

րութիւն տալով, խաղաղութիւնը վերականգնելու համար, դիմեց զէնքի՝ մարդկային գոհեր բերելով իր սխալ կասկածամութեան...

Այլ է ֆրանսիական կեանքը. ազգայնական հարցը գերչի կատարում այդտեղ, ուստի բոլոր ներքին էներգիան գնում է միւս հոսանքների վրայ; Մրանսիայում այժմ հերթական է միջնակարգ գարուցի բեֆօրմների հարցը: Ի հարկէ, ներկայ մինիստրութիւնը այնքան արմատական չէ, որ համաձայնուի Վիվիանիի առաջարկութեան և թէ միջին, թէ բարձր կրթութիւնը գարձնի ձրի, ինչպէս արգէն ձրի է ստորին կրթութիւնը: Բայց և այնպէս այն լ օրմ. Հ. որ մշակում են այժմ աւելի գերօկրատիական են, քան մինչև այժմ եղածները: Գաղափար տալու համար առհասարակ ֆրանսիական աւելի արմատական ներքին պահանջների հետ, աւելորդ չէ ծանօթայնել ընթերցողին վերջերում Տուրում կայացած մի համաժողովի մշակած պրօգրամմի հետ:

Ահա այդ պրօգրամմը, համառօտած.—Ծնդհանուր և ուղղակի ձայնտութիւն երկու սեռի բոլոր ֆրանսիական քաղաքացիների համար. ծերակոյտի և հանրապետութեան նախագահի պաշտօնի վերացում. այժմ առաջին մինիստրին պատկանող իշխանութիւնը յանձնել պարլամենտից ընտըրուած առանձին գործադիր մի կօմիտետի. եկեղեցու բաժանումը պետութիւնից. պաշտամունքների և կրօնական միաբանութիւնների յատկացրած բիւղժէտի ոչնչացումը. դատաստանական հիմնարկութիւնների վերակազմութիւն նոր սկզբունքներով՝ ժողովրդից ընտրուած դատաւորներով և երգուեաններով. ուսուցանելու կատարեալ ազատութիւն, մինոյն ժամանակ արգելելով հոգնորականութեան՝ պարապել դասաւանդութեամբ. առաջնակարգ անհրաժեշտութիւն ունեցող առարկանների վրայ դրած բոլոր հարկերի վերացում և պրօգրեսսիւ եկամտային հարկերի ներմուծում. ութժամեայ բանուորական օր և պարտադիր տօնական հանդսատութիւն շաբաթը մի տնգամբ. ժոյլ չը տալ անչափահանաններին (մինչև 14 տարեկան) բանեցնել և արգելել կանանց զիշերային աշխատութիւնը. աշխատաւորների կազմակերպութիւններին և մունիցիպալիտեններին իրաւունք տալ նշանակել օրավարձի նուազական չափերը. հասարակական ապահովագրութեան ազգային սիստեմ. երկաթուղիները, հանգերը, ֆրանսիական բանկը և խոշոր շաքարային գործարանները աղգային սեփականութիւն գարձնել. բոլորի համար արժան բնակարաններ. մշտական գորքի տեղ

միլիցիա պահել։ Ահա Ֆրանսիայի ամենաարժատական կուսակցութեան տեսչանքները, desiderata-ն։

I. U.

### Սանասարեան վարժարան.

Այս պահուս, երբ Սանասարեան վարժարանի կ. Պոլսոյ խնամակալութեան սեղանի վրայ կը գտնուի էրզրումի տեղական Հոդաբարձութեան մատուցած քսանամեայ տեղեկագիրը, որուն ուսումնակրութեամբ կը զբաղի խնամակալութիւնը և միեւնոյն ժամանակ խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան այդ հաստատութիւնը՝ Խարբերդ Սորսորի վանքը տեղափոխելու, կ'արժէ որ լուրջ և անկողմնակալ ոգւով պարզուի Սանասարեանի արդի վիճակը և կտրուկ անօրինութիւններ ըլլան միանգամ ընդ միշտ բառնալու տրտունջի առիթներն ու վարժարանը իր անունին և նպատակին համապատասխանող դիրքի մը վերածելու, ինչ որ ամէնուս բազմանքն ու փափաքն է միակ։

Ազգային թերթերու մէջ, Սանասարեանի շուրջ՝ բաւական թեր ու դէմ հըատարակութիւններ և կարծեաց փոխանակութիւններ եղած են ասկէ առաջ. մասնաւորապէս «Բիւզանդիոն», «Արեւելք» և «Սուրհանդակ» զբաղեցան այդ խնդրով. «Բիւզանդիոն»-ի գիրքը յարձակողական և «Արեւելքին»-ը պաշտպանողական գտած եմ ընդհանուր գիծերու մէջ, և որչափ կրցած եմ ըմբռնել, այդ երկու թերթերն ալ չափազանցութեան զիմեցին. մէկը ջանաց վարժարանը կատարելութեան զէնիթը բարձրացնել և միւսը գուն զործեց անկերպարանութեան նատիրը իջեցնել. փոխանակ ուղղակի վէրքերն ու անոնց դարմանները շօշափելու, անձնական հաշիւններով և կիրքի երանդներով խճողեցին ու որակեցին իրենց բոլոր տեսաւթիւնները և ըստ այնմ հիւրընկալեցին թղթակիցներու յօդուածները և քննադատութիւնները. պէտք է խոստովանիլ սակայն որ «Սուրհանդակ»-ի յօդուածները գոհունակութեամբ կարդացուեցան, որովհետեւ վարժարանին բարւոքումը միայն կը նշմարուէր անոնց մէջ՝ կէտնպատակի։

Մտադրութիւն չունինք այդ անցեալ հրատարակութիւններով զբաղելու, որոնք, վերջապէս ինչ ձեւի տակ ալ ընդունելու ըլլանք, սա ճշմարիտ է թէ՝ Սանասարեան վարժարանին թերի և բարեփոխելի կողմեր ունենալը ծանօթացու-

յին ազգին։ Մեր նպատակն է պարզապէս, որչափ կարելի է ամփոփ ձեւի մը տակ, վարժարանին արդի վիճակը նկարազրել սոյց և իրական պատկերացումով մը, որպէզի կեդրոնի խնամակալութիւնը՝ իր յառաջիկային ընելիք անօրինութիւնները որոշէ՝ դպրոցին ՃՇՄԱՌԻՑ վիճակը նկատի ունենալով, և ոչ թէ միայն հաւատքը ընծայելով մատուցուած տեղեկազրին պարունակութեանը, որ բնականօրէն խմբագրուած պիտի ըլլայ միշտ ի նպաստ պատասխանատու մարմնոյն և որուն մէջ պերճախօս թիւերը, ցայտուն նկարուն բացատրութիւնները, վարդագոյն պատկերները չեն որ կը պակսին արդիւնք ըլլալով քարտուզարհաշուակալին վեցամսեայ քրտնաթոր աշխատութեան և տքնութեանց։

Վարժարանին արդի վիճակը պարզելէ առաջ, կարեւոր կը դանեւմ յետագարձ ակնարկ մը։

Սանասարեան հաստատութիւնը այսօր 20 տարուան գոյութիւն մը ունի և տարիներու այս ընթացքին մէջ ունեցած է 110 ընթացաւարտ, 95-ը ուսումնական բաժնէն և 15-ը արհեստագիտական։ Խնդիրը՝ ոչ այնչափ քանակին վրայ է (թէեւ այդ ալ պէտք է որ ունենայ իր կարեւորութիւնը), որչափ որակին։ Կը փափակինք և կը պահանջենք իսկ գիտնալ թէ՝ այդ 110 շրջանաւարտները ուր են, ինչով կը պարապին և ինչ գիրք գրաւած են հայ հասարակութեան մէջ։ բարերար հիմնադրին նպատակը իրագործուած է արդեօք յանձին այդ ընթացաւարտներուն։ սպասելով որ մատուցուած Տեղեկագիրը գոհացում տայ մեր այս հետաքրքրութեան, փութանք ըսել թէ՝ տարուէ տարի Հիւանդանոցի Ընդարձակ Օրացուցներուն հաղորդած տեղեկութիւնները այս առթիւ շատ անգոհացուցիչ են։ մենք կ'ուզենք իմանալ թէ՝ ի բաց առեալ 2—3 ընթացաւարտ, որոնք այսօր իրենց մայր վարժարանին մէջ կը պաշտօնավարեն և հակառակ լրագրական քննադատութեանց՝ իրեւ ուսուցիչ, ունին ըստ բաւականին արժանիք, (բայց չմոռանանք թէ՝ ասոնք իրենց ուսման ընթացքը կատարելագործած են արտասահմանի մէջ և օժտուած բնածիր ընդունակաթեամբ) մնացեալները ուր կը գտնուին։ Իզմիրէն և Վանէն առնուած տեղեկութիւնները նպաստաւոր հանգամանքով չեր որ փայլեցան։ Երզնկան, Քդի, Տրապիզոն՝ դեռ Սանասարեանց մը չունեցան իրենց թոշակաւոր և ծրիագարժ զրկած սաներուն մէջ, և մանաւանդ այս 20 տարուան մէջ կը սպահանջենք հասկանալ թէ՝ հանգուցեալ բարերարին ծրիագարժ զիշերօթիկները՝ հարազատ որդեգիրները, որոնք պարտաւոր պէտք էր որ ըլլային իրենց ծննդավայրին մէջ մէյմէկ ուսման ջահ հանդիսանալ, ուր է իրենց արձակած

լոյսը և որն է այն ձիավարժը որ կրցած է իր գաւառին կը թական զեկավարը ըլլալ:

Կրնանք մատնանիշ ընել համաստիճան ծրագրով ազգ. ու օտար ուրիշ հաստատութիւններ, որոնք Սանասարեան վարժարանէն թերեւս պակաս իսկ տարեծախսով և աւելի քիչ տարիներու մէջ, ընթացաւարաններ տուած ևն աղջին՝ որոնք այսօր հրապարակի վրայ անուն ունին ու կը փայլեն իրեւ վարդապետ, քարոզիչ, հրապարագիր, ուսուցիչ, լեզուագէտ և վերջապէս գործի, մոքի ու զրչի տէր մարդ. ինչու նոյն արդիւնքը ցոյց չպիտի տար նաեւ Սանասարեան վարժարանը՝ իր 20 տարուան գոյութեամբ, իր 4000 լիրա տարեծախսով, իր մասնագէտ, կարող և համալսարանական մանկավարժ ուսուցիչներով. կարի ուշագրաւ է այս պարագան, որ թէնւ տիտոր բայց անհակառակի ծշմարտութիւն մըն է. և իբր արդիւնք՝ ունի իր պատճառները, որոնց բարձումը անհրաժեշտ է այլնեւս:

Անշուշտ Սանասարեան դպրոցը տուած է աղջին գրել կարդալ և հաշուել դիտոյող ընթացաւարաններ, ինչ որ ամէն վարժարան ալ կու տայ քիչ թէ աւել չափով մը և այդքան արդիւնք էրզրումի դպրոցները եւս ունին, որոնց 2000-է աւելի ուսանողներուն համար սակայն՝ տարին հազիւ 900 ոսկի կը ծախսուի. ոչ ոք կը մեղադրէ զիս ևթէ ն լիրայի համար տարեկան կէս լիրա շահով մը բաւականամամ, բայց նոյն շահը 500 լիրայի վրայ, ապչեցնող տիմարութիւն մը չը՞ պիտի համարուի:

Այս պարզ տեսութիւնները կը հաստատեն թէ՝ Աղջին շնատ սիրելի եղող կրթական այդ հաստատութիւնը մինչեւ հիմա օգտակար եղած չէ այնքան՝ որքան կրնար ըլլալ իր բացայաց գիւրութիւններուն չնորհիւ. և միթէ սիսալած կ'լլամ, եթէ ըսեմ թէ Միացեալ նախակրթարանները իրապէս աւելի արդիւնաւոր հանդիսացան, քան Սանասարեան վարժարանը՝ որ գերմանական միջնակարգ վարժարանաց համապատասխան ծրագիր մը ունենալով հանդերձ, կարող դասատուներ չկրցաւ հասցնել գաւառներուն:

Գանք արդի վիճակին: Ինչպէս յայտնի է, վարժարանը կը գտնուի ընդարձակ պարտէզի մը մէջ. չէնքը՝ իբրեւ գիշերօթիկ վարժարան, առողջապահական տեսակէտով ունի իր թերի կողմերը. ննջարանը համեմատական չէ իր պարունակած թուոյն ընդարձակութեամբ և օգաւէտութեամբ. մահճակալները խիստ իրերամիրձ են, և անկողիներուն մաքրութիւնը քննադատելի. նոյն անպատեհութիւնը կը նշմարուի նաեւ սեղանատան մէջ՝ ուր տախտակները կը կարօտին միշտ օճառաջրով լուացման:

Դասարաններէն մէկ քանին զուրկ են բաւարար հանգամանքէ և կը տեսնեն աշակերտները խճողուած ու օդը ապականած։ Խսկ ամնանամն ամսպատեհութիւնը, զոր հարկ է չեշտել, միեւնոյն շրջափակին մէջ տեսուչներէն մէկուն բնակութիւնն է։ Պիշերօթիկներուն մէկ մասը այդ յարկին մէջ կը գտնուի և ականատես կ'ըլլայ ուսանողական կեանքին հակասող երեսյթներու, հնա խրախճանութիւններ կը սարքուին, հացկերոյթներ կը տրուին, բազգախաղի, պարի՝ մասնակցութեամբ տիկիններու և օրիորդներու, տեսարաններ կը պարզուին. այս ամէնը՝ եւրոպական ճաշակ և կենցաղավարութիւն ունեցող ընտանիքի մը համար թերեւ վայելուչ կրնան համարուի ըստ դաւառացի ուսանող պատանիններու մաքերուն վրայ թէ ինչ կարգի տպաւորութեանց ծնունդ կու տան և որբան կր ջլատն ուսանելու եռանդը, գժուարին չէ զուշտկել։ Զենք ուզեր ծանրանալ այս կէտին վրայ, խորհելով թէ՝ վարժարանը տեղափոխելու խորհուրդը պիտի իրագործուի և ինքնին վերջ գտնեն յիշուած անպատեհութիւնները։

Այդ անդագիտութեան օգուանները ակներե են և բազմագիմի նախ որ Կարնոյ ազգ. մանկաբն պիտի աղատի այն գմնդակ կացութենէն, որուն ննթարկուած է գարոյններու անբաւականութեան պատճառաւ, մանաւանդ երկրաշամէն ի վեր։ Երկրորդ՝ Կարնոյ մէջ յարանուանութիւնք աննշան գեր մը ունին և ազգ. գպրոցները լաւ կազմակերպութեամբ մը կրնան թումբ կանգնի անոնց հոսանքին դէմ, մինչդեռ Խարբերդ՝ Բողոքականութիւնը հսկայագայլ յառաջդիմած ըլլալով, իր գոլէններով և կրթական ու կրօնական զանազան հաստատութիւններով կը սպառնայ ամբողջապէս կուլ տալ մեր եկնզեցին ու տոհմային դաստիարակութիւնը։ Սանասարեան վարժարանը կրնայ այդ օտար տարրերը չէզպացնել ու մրցիլ անոնց դէմ, պայմանաւ սակայն որ Խարբերդի մէջ ալ չունենայ հիմակուան ուղղութիւնը, զի այդ պարագային՝ ապահովարար գոլէճին ստորագաս ըլլալէ զատ ուրիշ առաւելութիւն մը չպիտի ներկայացնէ։ Երրորդ՝ հաստատութիւնը Խարբերդի փոխադրուելով, այլ և այլ դաւառներէ մեծ թուով թոշակաւոր աշակերտ պիտի կրնայ ունենալ, որովհետեւ ծնողք թէ նիւթապէս և թէ պարոյական տեսակէտով՝ զիւրութիւն և յօժարութիւն պիտի ունենան իրենց զաւակները Խարբերդ զրկելու։ Չորրորդ՝ տնտեսապէս ալ Խարբերդ առաւելութիւններ պիտի ընծայէ և թերեւս վարժարանը իր ներկայ տարեծտխսով կարողանայ հոն իր ձրիավարժներուն թիւը կրկնապատկել և թոշակաւորներուն տարեվճարը 20 լիրային 10—15-ի իջեցնել։ Հինգերորդ՝ թէ ուսանողները, վանա-

կան մթնոլորտի մը տակ, ի հարկէ սիփեալ, շատ աւելի միջոց պիտի զտնեն նուիրուելու իրենց գործին, մինչ էրզրումի մէջ պաշտօնեաները կեանքի յարաբերական պէսպիսութիւններով առլցեալ և աշակերտները նոյն շփումներով մտազբաղ կ'ըլլան և յաճախ կը խանգարուի ուսանողական կեանքին ներդաշնակութիւնը, մերթ կամայական և մերթ ակամայ արգելվներ կը բաղխին պարտաճանաչութեան. վերջապէս մենք կը խորհինք թէ՝ Խարբերդի մէջ քիչ անգամ պաշտօնեաները հարկ լուծանե զօրեն ըսելով իրենք զիրենք չքմնացնելու պէտքը պիտի զգան:

Սանասարեան վարժարանի աշակերտներուն ընդհանուր թիւը այս տարի 170 է. 105 զիշերօթիկ և 65 ցերեկեայ. ձրիավարժներու թիւն է 15 զիշերօթիկ և 22 ցերեկեայ. արդ՝ ինչպէս կարելի է համաձայնեցնել հիմնադիր բարեկարին կանոնագիրը այս ցուրտ իրականութեան հետ, երբ կը տրամատրէ որ զիշերօթիկ ձրիավարժներու թիւը առնուազն 30 ըլլայ. ասիկա նոր բան մը չէ սակայն. վարժարանը 1900-ին 11 Սանասարեան գիշերօթիկ սաներ ունեցած է (տես Ընդարձակի, Օրացոյց ազգ. Հիւանդանոցի 1901 էջ 420). հաւանականաբար այս կանոնագուական զեղծուամը ուրիշ տարիներ ալ աեղի ունեցած է և մենք չենք զիտեր թէ ինչ արդարացուամ կրնայ ունենալ սպասելով որ տեղեկագիրը իր հրատարակութեամբ ծանօթայնէ ու պարզէ մեզ այս զաղանիքը, պէտք է ըսենք թէ ցերեկեայ ձրիավարժի կարգադրութենէն ՄիԱՅՆ կարինցին է որ կ'օգտուի, Կարինցին՝ որ 22 այս կարգի ձրիավարժ ունենալէ զատ՝ զիշերօթիկ ձրիավարժներ ալ ունի. արդարութիւնը չէր պահանջներ արդեօք որ Կարին ալ նկատուէր ի շարս միւս գաւառներուն և ըստ այնմ համեմատական ձրիավարժ սաներ առնուէր. և փոխանակ այդ 22 ցերեկեայ ձրիավարժներուն աւելի ուղիղ չէր ըլլար և համաձայն բարերարին կամաց որ այլ և այլ տեղերէ 6-7 ձրիավարժ զիշերօթիկ ընդունուէր և տեղացող խնդրագրերուն՝ «ձրիավարժից թիւը լրացած է» սովորական դարձած պաղ բանաձեւը քիչ մը պակաս գործածուէր: Եւ եթէ անգաղտնապահնութիւնը ունենանք յայտնելու թէ՝ այդ 22 ցերեկեայ ձրիավարժներուն մէջ կը գտնուին այնպիսիներ ալ, որոնք կարող էին 6 լիրայի տարեթոշակը վճարել, ինչ պիտի պատասխանուի մեզ. թերեւս առարկուի և կ'առարկուի ալ, թէ ազգապատկան կալուածները Սանասարեանի յանձնուած են չնչին վարձքի մը փոխարէն. մենք չենք զիտեր թէ արուած վարձքը չնչին է թէ ոչ, բայց այդ պարագան չարդարացներ բնաւ որ ի նպաստ Կարնեցւոյն ուրիշ տեղերու մանկը առաջանայ զրկանքներ ըլլան, թող թէ Սանասարեանի ծախքով

հսկայ շնչք մըն ալ կառուցուած է վարձու արուած կալուածին մէջ որ կը վերաբերի Կարնեցոյն:

Տեսնենք քսան տարուան մէջ այլ և այլ գաւառներէն ինչ համեմատութեամբ և որչափ ձրիավարժ ըեղունուած է Սանասարեան վարժարանը և գործադրուած է արդեօք բարերարին կամքը. հարկաւ Խնամակալութեան մատուցուած տեղեկազիրը կը պարունակէ այս տեղեկութիւնները:

Սանասարեանի կրթական պաշտօնեաններուն ներկայ թիւն է 17. Պ. Գ. Արուլեան, կը գասախօսէ՝ Պատմ. աշխրհգ. Գերմ. ամսաթոշակ 18 Օսմ. լիրա. Պ. Յ. Մատաթեան՝ գերմ. բնապատմ. 18 լ. Պ. Ա. Սողիկեան՝ Կրօն. Ֆրանս. գաշնակ, 18 լ. (այս երկը հաւաքական պատասխանատութեամբ կը վարեն Տեսչութեան պաշտօնը և իրմանց զաւակներ ձրիավարժից կորպս են) Պ. Ժ. Գրէսթէ՝ Փրանս. գծգր. 12 լ. Պ. Ա. Խաչատուրեան՝ պատմ. և եկեղեց. պատմ. հայերէն. 10 լ. Պ. Դ. Ռոմիկեան՝ ուսողութիւն 9 լ. Պ. Ն. Թոթվայեան՝ օսմաններէն և Փրանս. 10 լ. Պ. Գ. Գառնակերեան՝ կոսղարարութիւն, 5 լ. Պ. Տ. Բրուտեան՝ մատակարար, 6 լ. Պ. Ա. Աւետիքեան՝ քարտուզար, 4 լ. Պ. Գ. Ղոյինեան՝ ջութակ, երգ, կրօն. աշխրհգր. 5 լ. Պ. Գ. Ճիյէրճեան՝ բնագիտ. տիեզերգը. և արհեստապետ քիմիսկան բաժնին՝ 6 լ. Պ. Ա. Աղապալեան գերմ. թուար. և արհեստապետ կահգրծ. կոսղը. 6 լ. Պ. Ա. Վահանեան՝ կահագործ, 5 լ. Պ. Վ. Գույցումհան՝ օգն. պտմ. 1ուկէս լ. Պ. Յ. Պէզրճեան՝ օգն. թուրք. գեղգր. ջթկ. 1ուկէս լ. Պ. Վ. Քէպապճեան՝ օգն, հայ. բնապատմ. 1. (վերջին 7 պաշտօնեանները գպրոցին ընթացաւարտներն են): Ասոնցմէ զամա՝ վարժարանը ունի այցելու բյիշկ մը, որոն կը վճարէ ամսական 3 լ. կրթական պաշտօնէութիւնը ամբողջութեամբ մնայուն դասախօսի հանգամանքը ունի:

Խնչպէս կը տեսնուի, ուսումնական բաժնի ուսուցիչներն են թուով 13. ասոնց աւանդած շաբաթական դասաժամներուն համագումարն է 209 (այս հաշուէն գուրս կը մնան երգ, մարմնամարզ, դաշնակ կամ ջութակ և կամաւոր Փրանս. կամ գերմ. շաբաթական 36 ժամ) ըսել է միջին հաշուով իւրաքանչիւր մնայուն ուսուցչի շաբաթական աշխատութեանց բաժինն է 16 ժամ: Մոյն 17 պաշտօնէից կը վճարուի տարեկան 1682 լիրա. վարձքի, բժշկին, ծառաներուն և ուրիշ մանր ծախքերուն ալ յատկացուր 368 լիրա մերձաւորաբար, կ'ունենաս 2000 լիրա, ուրկէ կը հասկցուի թէ գիշերօթիկ և ցերեկեայ աշակերտաց համար կը ծախսուի գրեթէ 2000 լիրա: Ամբողջ տարեծախոսը արդէն յայտնեցինք թէ կը յանգի 4000 լիրայի, որուն 1200 լի-

րան կը դոյանայ հիմնադրին հասոյթէն, 22 լիրա Ալիանս Ֆրանս-սեղէն, աւելի քան 2000 լիրա թոշակներէ, իսկ տարեկան բացը կը գոցուի հիմնադրին ձգած զրամագլխով։ Պաշտօնէից ամսականներն ու աշխատութեանց ժամանակը և որակը, դպրոցին ծախքի քանակն ու բնութիւնը համառօտապէս ցոյց տալով կը բաւականանամ. ընթերցողին կը թողում քննել և դատել թէ՝ գործք և վարձք, պէտք և ծախք ինչ չափով և աստիճանով զիւրար կը հաւասարակշռեն։ Երբ հրատարակուի Տեղակագիրը՝ բնակմանաբար մնջի պիտի պարզէ մանրամասնութիւններ վարժանակին ելևմտից։

(«Ծաղիկ» №№ 289 և 290).  
—

## ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Որքան դեռ ջահէլ է Գերմանիան գաղութային քաղաքականութեան ասպարէցում—բայց հրքան դափնիներ է արդէն վաստակել: Դեռ երէկ էր, որ նա ազատուեց գոյութեան կոռու ծանր մտահոգութիւց և կազմուկերսուեց իբրև ուրոյն ազգ և քաղաքական մարմնու: Այսուհետև գեր բաւական ժամանակ Գերմանիան, Բիսմարկի չորհիւ, հեռու էր պահուում աշխարհակալական տենդենցիաներից. և միմիայն երբ տարիների խելացի և զգուշաւոր քաղաքականութեամբ ամրապնդուեց ներսում, այն ժամանակ նա ևս որոշեց մզել իր յատուկ գաղութային քաղաքականութիւնը, որը Վիլհելմ կայսրի տերմինօօցիայի մէջ նոյնանում է համաշխարհային քաղաքականութեան: Եւ ահա մի շարք բախտաւոր նուածումներից յետոյ Աֆրիկայում ու Ասիայում՝ Գերմանիան հանդէս է գալիս այսօր, որպէս պատկառելի մի գաղութային պետութիւն. նրա հմայքն աճում է օրէցօր հեռու և մօտիկ արենլքում. նրա ձայնը բարձր և աղդու հաշւում է համաշխարհային մրցման կրկէսում. նա դրիթէ հզօրագոյնն է եւրոպական ցամաքի վրայ, նա ուզում է դառնալ հզօրագոյնը նաև ովկիանի վրայ:

Այդ սրարշաւ ու անակնիալ յառաջխաղացութիւնն է, որ զարմանք և նախանձ է շարժում ամրող եւրոպայում և որ գողացնող անհանգստութիւն է պատճառում մասնաւորապէս Անգլիայի քաղաքական սերին:

Գերմանական կայսրը անձնաւորումն է «համաշխարհային քաղաքականութեան» այդ տենչանքների: Այնքան սիրում է նա հոչակել մեծագոյն Գերմանիայի (das grösste Deutschland) և ուժեղ նաւատորմի հրաշալիքները. այնքան սիրում է նա հանդիսաւոր, փքուն ճառերի մէջ շեշտել, որ «Գերմանիայի ապագան ջրերի վրայ է»... Ոխալ կը լինէր որակին նրան «արկածախընդդիր» կամ մէգալօման (մեծամոլ) ածակամներով, ինչպէս անում են ոմանք: Վիլհելմ II իր մեծաշունդ ճառերի ու արկածալի

ճանապարհորդութիւնների մէջ հաւատարիմ թարգման է հանգիսանում գերման-բուրժուազական շահերի, այն պաղ, անսիրտ «ոչալական» քաղաքականութեան, որի խարիսխը դրել էր Բիսմարկ:

Ի՞չալական քաղաքականութիւն... Բայց դա համատարած մի երեսյթ է այսօր... Սակայն Գերմանիան որոշ տեսակէտից իրաւ որ կազմում է մի տխուր բացառութիւն: Զը կայ ժամանակակից մեծ պետութիւնների շարքում և ոչ մէկը, որ այնքան քիչ բան արած լինի ժողովուրդների սէրը գրաւելու համար, որքան Գերմանիան Երբէք նա չի փորձել լինել փոքր ինչ վեհանձն, նպաստել այս կամ այն ստրուկ ժողովրդի ազատագրութեան: Համարեա ամեն տեղ նա եղել է բռնաւորի, հարստահարողի կողմը:

Քննենք Weltpolitik-ի դրդիչ գործօնները և անգլօ-գերմանական չական պատճառները:

Գերմանիան պէտք ունի ծաւալուելու, դրսի աշխարհներ նուանելու, դա նրա համար հրամայական մի պահանջ է: Մի 10—15 տարի սրանից առաջ նա կարող էր մնալ կղզիացած իր սահմաններում,—այժմ արդիւնաբերութեան արագաքայլ զարգացումը հարկադրում է նրան նորանոր շուկաներ գրաւել՝ արտահանելու գերմանական ապրանքներն ու կապիտալները:

Տնտեսական առաջադիմութիւնը կատարուեց Գերմանիայում անսովոր թափշքներով: Կապիտալիզմը, խոշոր մեքենայական արդիւնագործութիւնը ոչ մի ուրիշ երկրում չէր արտաքերել այսպիսի հարստութիւններ ամքան, համեմատաբար, կարձժամանակում ջոցում: Կանգ առնենք այդ հանգամանքի վրայ. Նրան է պարտական Գերմանիան իր այսօրուան մեծութեամբ:

1870-ի յաղթական պատերազմից յետոյ էր, որ Գերմանիայում սկսուեց ինդուստրիական զարգացման փայլուն շրջանը: Եւ արդէն 80-ական թուերից դանդաներ են լսւում «գերմանական վտանգի» մասին Թրանսիայում ու Ռուսաստանում: Իսկ 90-ական թուականներին այդ վտանգը սկսում է ալէկոնել և Միծ-Բրիտանիան... Մին-միւսի ետեւից այդտեղ լոյս են տեսնում գրուածքներ, որոնք գերմանական արդիւնաբերութեան հրաշքները արձանագրելով, դամբանական են կարդում Մեծ-Բրիտանիայի «վնդուատրիական գերազանցութեան»: «Մինչն այժմ այդ գերազանցութիւնը հանրածանօթ մի աքսիօմ էր, շուտով նա կը լինի մի առասպել»—այսպէս էր գրում 1897-ին Էդուարդ Շեփթեամ իր «Madi in Germany» փոքրիկ աշխատութեան մէջ, որը մի ճշմարիտ ահակոչնակ էր:

Այն օրից «գերմանական վտանգը» դարձաւ անսպառ նիւթ

անգլիական լրադրութեան համար։ Հրապարակախօսութեան աւելի սանդղինիկ ներկայացուցիչները պատերազմ էին քարոզում Գերմանիայի գէմ, վատահ լինելով բրիտանական նաւատորմի գերազանցութեան վրայ...

Ցաւ էր պատճառում անգլիացիներին տեսնել, թէ ինչպէս գերմանական ապրանքները յարածուն քանակութեամբ հեղեղում են Մեծ-Բրիտանիայի ներքին շուկաները և հետզհետէ դուրս են մղում այնտեղից ազգային «հզօր ու բեղմնաւոր» ինդուստրիայի արդիւնքները։

Արդիւնագործութեան բոլոր ճիւղերը զրեթէ յանկարծակի սկսնցին ծաղկել Գերմանիայի մէջ, այնտեղ՝ ուր դարերի ընթացքում հաղարաւոր խոչընդունել խափանել էին տնտեսական կեանքի նօրմալ զարգացումը 1870-ից սկսած միացեալ Գերմանիան ծածկուեց երկաթուղիների և ամեն տնտեսական ների մի կատարեալ ցանցով։ Ինդուստրիական այդ հսկայ թշուիչը կազմում է համաշխարհային տնտեսական էվոլյուցիայի ամենաշայտուն գծերից մինը։

Արդիւնաբերող աշխատանքի հետ միասին բարգաւաճեց ու անսպասելի չափեր առաւ գերմանական առեւտուրը։ Մօտ 20 տարուայ ընթացքում արտաքին առեստուրն աճեց ամբողջ 60 տոկոսով։ Ովկիանոսային նաւարկութիւնը առաջին տեղն է բոնում այդտեղ։ Միմիայն ծովային առեստուրը կազմում է բուվանդակ արտաքին առեւտրի 66% -ը<sup>1)</sup>։ Նաւարկութեան հրամայական պահանջը մնած զարկ տուեց նաւային ինդուստրիային և այսօր Գերմանիան իրաւամբ հաղարտանում է, որ իր նաւահանգիստները մտնող նաւերի աւելի քան կէսը իր սեփականներն են։ Վիլհելմ կայսրի հայրենակիցներին հանգիստ չի տալիս անգլիացիների սիրած մաքսիմը. «Բրիտանիան կառավարում է ալիքները, իսկ ով որ ալիքներն է կառավարում, նա զեկավարում է և աշխարհի ճակատագիրը»։ Միրում են գերմանացիք կրկնել իրանց նշանաւոր անտեսագէտ կիստի խօսքերը. «Ծովը աշխարհի միծ չնչերակն է և ազգերի մրցարանը. ուզգը առանց նաւորդների—միենոյն է թէ թռչունը առանց թերի, ձուկը առանց լողակների, առիւծը առանց ատամների»։

Այդ չարատանջ մաքսիմներն են, որ զիշեր ու ցերեկ հալածում են վիլհելմ կայսրին և նրանք են, որ պարբերաբար հրապարակ են նետում նաւատառորմի հսկայական նախադիմներ։

Զը կայ մի կէտ երկրագնդի վրայ, ուր հաստատում չը

<sup>1)</sup> G. Blo andel, L'Essor industriel et commercial du peuple allemand.

լինի այսօր գերմանացի վաճառականը. ամեն տեղ թափանցում ու բեղմաւորւում է գերմանական կապիտալը, ամեն տեղ և բնան է գալիս ցնդի յամառ տոկոնութիւնը:

Համաշխարհային առևտուրը ընդլայնելու միտումով էր, որ Գերմանիան տեսդային եռանգով սկսեց մղել զաղութային քաղաքականութիւն։ Կային, անշուշտ, ուրիշ մղումներ ևս Որդան հրապուրիչ է ինքն ըստ ինքնան տիեզերածաւալ գաղութային մի կայսրութեան հեռապատկերը... Այդտեղ է հէնց բրիտանական մեծութեան ու «վեհապան» մեկուսացման գաղտնիքը, Այդ էին երազում և «մեծագոյն Գերմանիայի» շամպիօնները։ Յիշեցէք այն գոռ ու պաթեթիկ ճառերը, որ Վիլհելմ II և իր եղբայր Հանրի արտասանեցին 1897-ին կիլում՝ գերմանական նաւատորմը կիառչառ դրկելու առթիւ։ Դրանք ներբողներ էին ուղղուած անզրովկիանուսնան քաղաքականութեան, որը դառնում էր մի տեսակ գօգմ գերմանական կայսրութեան համար։ Կիառչառն ձեռք բերելով, Գերմանիան ամուր հաստատուեց Ծայրագոյն Արևելքում և Մեծ-Բրիտանիան այնտեղ ևս զգաց շուտով գերմանական մրցակցութեան վտանգը։ Կարելի է այժմից ասել, որ Գերմանիան այդ կողմնում հարուած տուեց անգլիական դիկտատուրին։ Զուր չէր ասում ազատամիտ կուսակցութեան պարագան Օյգէն Ռիխտէր, որ կիառչառ (Զինատան) ծովախորչի նուածումը աւելի շահաւէտ է, քան հողերի զբառումը Աֆրիկայում։

Խիստ զգալ՛ են գերմանական առևտրի աջողութիւնները նաև ցամաքային աշխարհում Եւրոպայի հիւսիսային երկիրները հեղեղուած են գերմանական ապրանքներով։ Մուսաստանում գերմանացիների ներմուծումը հասնում էր 1893-ին 101 միլիոն սուբլու, իսկ 1895-ին նա հասնում էր 175 միլիոնի։ Մեքենաների շուկան այդտեղ ամբողջապէս գերմանացիների ձեռքումն է, որոնք կամաց-կամաց դուրս են մղում անգլիացիներին։ Շվեյցիային գերմանացիք վաճառում են ամեն տարի մօտ 120 մըլիոնի ապրանք, այն ինչ Փրանսիացիք՝ ընդամենը 5 միլիոնի։ Նորվեգիային Փրանսիացիք վաճառում են տարեկան  $3\frac{1}{2}$  միլիոնի, այն ինչ Գերմանիայի ներմուծումը հասնում է 60 միլիոնի։ Նոյնպիսի հիւրընկալ շուկաներ են գերմանական ապրանքների համար՝ Դանիան, Հոլլանդիան, Բևլգիան։ Անգլիայում գերմանական ներմուծումը աւելացել է վերջին 20 տարում ամբողջ 30 տոկոսով<sup>1)</sup>։

Միւնիյն աջողութիւններն ենք տեսառում նաև կննտրոնա-

\* ) G. Blondel, L'Essor industriel...

կան ու հարաւային ներոպայում։ Շվեյցարիայի, Աւստրիայի, Ռևնգարիայի, Սպանիայի, Խտալիայի շուկաները միշտ աւելի և աւելի գրաւելում են գերմանական ապրանքներով։ Ամեն կողմից լսում է մինոյն ձայնը. գերմանացին հմուտ է ապրանքների արդիւնագործութեան մէջ և նա գիտէ յարմարուել գնողների պահանջներին։

Յունաստանում, Ռումանիայում, Սերբիայում, Բօլգարիայում՝ Գերմանիան առաջնակարգ տեղն ունի այսօր ներմուծող պետութիւնների մէջ։ շատ տեղերում գերմաներէնը դառնում է արդէն առևտրական գործածական լնզու։

Տաճկաստանը հակումն ունի ամբողջապէս նետուելու գերմանական ազգեցութեան շրջանը։ Գերմանիայի բռնած դիրքը յոյն-տաճկական պատերազմի ընթացքում, յայտնի է որ շատ նպաստեց այդ հանգամանքին։ Վիլհելմ<sup>9</sup> կայսրի Realpolitik-ի ամենամեծ նուածումն է այդտեղ Բաղդադի երկաթուղային հրսկայ նախագիծը, որ վերջերս ստորագրուեց Ելգըզում։ Գերմանական կապիտալիզմի յարածուն բարիքները կը տարածուն այսուհետեւ Եփրատի հովիտներում և Տաւրոսի բարձունքների վրայ...

Այո՞ւ, նախանձելի առաջադիմութիւն... Մի ազգ, որ դեռ երէկ միայն ստացաւ ազգայնութեան իրաւունքներ, մի երկիր, որ 35 տարի սրանից առաջ ներկայացնում էր աղքատ ու անջատ նահանգների մի ողորմելի զանգուած—այսօր նա վտանգաւոր մրցակից է հանդիսանում ամենահզօր, տիեզերական կայսրութեան, որի զլուխը կանգնում է, իսկ սաները ամեն տեղ, այսօր նա իրեն մարմնացած էներգիա՝ գրոհ է տալիս դէպի աշխարհի բոլոր անկիւնները, և իրան դաւանանք ընդունելով «շահի» անարդ փիլիսոփայութիւնը, ծաղրելով «մարդասիրութեան», ալտրուիզմի բանդագուշանքները, զրկախառնուելով ամենազգագելի ոճրագործների հետ՝ հպարտ և անայլայլ ձրդում է դէպի համաշխարհային տիրապետութիւն։

Բացառիկ այդ առաջադիմութիւնը ունի անշուշտ և իր բացառիկ պատճառները։ Դրանց մէջ առաջինը և կարևորագոյնը՝ ցեղական տեմպերամենեն է, որը ազգակից լինելով անգլո-սաքսոնական, ոգուն, ունի այսուամենայնիւ. և իր առանձնայատկութիւնները։ Անգլո-սաքսոնների պէս գերմանացիք ևս գաղթող տարածուող են։ Եւ ուր որ հաստատում են նրանք՝ կեանք ու եռանդ են տարածում իրանց շուրջը, չնչին դրամապատիւններով կարողանում են շահագործել բնական հարստութիւնների

րը։ Յամառ աշխատաւորներ են նրանք, չափազանց զիմացկուն, կորովի և համբերող. վաճառական ու գաղթարար ժողովրդի էական յատկանիշներն են դրանք։

Բացի դրանց, գերմանական ժողովրդի մէջ աչքի է ընկերում բաւականաչափ զարգացած՝ ընկերակցութեան ոգին, որի չորսիւ արդիւնագործութեան բոլոր ճիւղերում կազմակերպւում են վիթխարի սինդիկատներ երկրի մէջ և երկրից դուրս—ուրեմն գարձեալ մի խոշոր գրաւական Գերմանիայի տնտեսական առաջադիմութեան։ Զը կայ այսօրուան Գերմանիայում ոչ մի շատ թէ քիչ նշանաւոր կենտրոն, ուր հիմնուած չը լինի որեէ ընկերութիւն ազգային արդիւնագործութիւնը խրախուսելու համար։

Ընկերակցութեան ոգին գերմանական կապիտալիստների մէջ անհամեմատ աւելի է զարգացած, քան որևէ ուրիշ երկրում, քան նոյն իսկ Անդլիայում, ուր գերակշռում է ինդիվիդուալիզմը, անհատական ոգին։ Դրա պատճառներից մէկն է, անշուշտ, այն հանգամանքը՝ որ գերմանական աշխարհում պրօլետարիատի լայն մասսաները կազմակերպում են այսօր ահաւոր դաշնակցութիւններ՝ արմատական տենդենցիաներով,—մի քան, որ հարկադրում է նրանց թշնամի, կապիտալիստ տարրերին ևս ձեռք ձեռքի տալ, ընկերակցել։

Ցեղական տեմպերամէնտի պակասը լրացնում են դասիարակութիւնն ու կրութիւնը, որոնք ներշնչուած են գերազանցապէս գործնական ոգով։ Գերմանացին պէտք ունի միշտ զեկավարի, նա ի բնէ ծանրաշարժ է, վերին աստիճանի հնազանդուող, դիսցիպլինի ենթարկուող։ Նա չունի անգլիացու աշխարհասասան յատկութիւնները, նրա հզօր նախաձեռնող ոգին, նրա ըմբռուտ անհատականութիւնը, Բայց նա դպրոցի մէջ իւրացնում է չարքաշ կեանքի բոլոր կանոնները, պատրաստում է կենսական պայքարի համար, վարժուում է յամառ ու յարատեաշխատանքին։ Նա ունի մի ճնշող առաւելութիւն անգլիացու և ֆրանսիացու զիմաց—նա ուսումնասիրում է ամենայն ինսամբով օտար երկների լնդունները, աշխարհագրութիւնը, նիստու կացը, քաղաքական-հասարակական հաստատութիւնները և նայն։ Նա ըստ ամենայնի պատրաստուած մի ճանապարհորդառնութեական—կօմմիլիոյաժեօր է։

Վաճառականական կրութեան մէջ ևս մենք տեսնում ենք միենոյն մերօդը, որը գերմանական մտքի պարծանքն է կազմում և որը քայլում է նրա զինուորական արուեստի, նրա զիտութեան ու փիլիսոփայութեան մէջ։ Սյսօր Գերմանիան ունի 25 բարձրագոյն առետրական դպրոցներ, չը հաշուելով բազմաթիւ

ստորին և միջնակարգ առևտրական գպրանոցները։ Ծաղկում է ամբողջ Գերմանիայում արհեստագիտական ուսումը ևս, որը թէ մեծապէս նպաստում է ազգային խնդուստրիային և թէ մեղմում է գասակարգային անտազօնիզմը, պահպանելով մանր արդինագործողների գասակարգը։

Եւ այդպէս, չնորհիւ իր ցեղական տեմպերամէնտին և բուն գործնական գաստիարակութեան, չնորհիւ իր առանձնայատուկ գիտական մեթօդին և պրօֆէսիօնալ գպրոցների անսովոր զարգացման, չնորհիւ վերջապէս կառավարութեան անընդհատ ու խրախուսիչ միջամտութիւններին, —զերմանական ազգրայնապէս առաջադիմել է տնտեսական աշխարհում, որ նա այժմ ոչ միայն գերազանցում է լատին ցեղերից, այլ և սպառնում է արդէն Մեծ-Բրիտանիային...

Վիլհելմ II և իր կառավարութիւնը, չը նայած Ռայստագի ընդգիմադիր կուսակցութեան, շարունակում են գեռ փայտայել զօրքի և նաւատորմի հոյակապ ծրագիրները։

Հազիւ երկու տարի է, ինչ նաւատորմի մի հսկայ նախադիմ, որ ներկայացրուել էր Ռայխստագի քննութեան, անցաւ մի կերպ, նշանաւոր կրծատութիւներով, —և ահա արդէն մի ուրիշ նախադիմ, որ մինչև օրս գաղտնի էր պահելում կառավարչական շրջաններում, բայց որ «Նօրվարետ»-ը իր սովորական հոտառութեամբ երկան հանեց և մատնեց հասարակական ուշադրութեան։ Թէ որքան աջողութիւն կ'ունենայ նաւային մեծութեան այդ նոր ծրագիրը—ապագան ցոյց կը տայ։ Օպազողիցիան այժմից իսկ փոթորիկ բարձրացրեց և իրաւամբ շեշտեց այն միտքը՝ որ անհնարին է մի պետութեան համար—որքան էլ լինի նա հարուստ ու բարգաւաճ—պահել միաժամանակ մեծ ցամաքային զօրք և մեծ նաւատորմ, որոնք ծանրանալով մասսաների վրայ՝ դառնում են վտանգաւոր՝ ներքին, սօցիալական խաղաղութեան համար։

Բայց Վիլհելմ կայսրին ոչինչ չի կանգնեցնում.. Պէտք է օօնեց զու ունեց զերազանցել կամ գէթ հաւասարուել բրիտանական ծովային զօրութեան։ Բանկէտների, ազգային կամ զինաստիական տօների ու հանդիսաւոր ընդունելութիւնների միջոցին նա բոցաշունչ Փիլիպպիիներով յարգորներ է ուզզում շարունակ երկրի բոլոր գասակարգերին՝ ներշնչուել «հայրենասիրութեան» այն մեծ զաղափարով, որով տողորուած է Հօհէնցօլիբրների արքայատոհմը սկսած «զինուոր-թագաւորի»։ Վիլհելմ I-ի օրերից։

Եւ կայսերական այդ մեծադղորդ ու սպառնալից ճառերը, այդ ըստ երեւոյթին տնհաստական, բայց իրաք ամբողջ բուր-

ժուազական Գերմանիայի սրտի խորքերից բղխող իղձերը ոչ մի տեղ չեն ունենում այնքան մեծ չառաջում, ոչ մի երկրում այն աստիճան չեն յուզում կրքերը, ինչպէս Անգլիայում:

Անգլօ-գերմանական անտազօնիզմը կառավարութիւննի-  
րով ու իշխող դասակարգերով չի սահմանափակում: Նա օր-  
ըստօրէ բռնում է ժողովրդային բոլոր խաւերը երկու երկրնե-  
րում: Մի շարք «միջնադէպեր», որոնք առաջ եկան վերջին  
տարիների ընթացքում այդ երկու պետութիւնների միջև, ա-  
մենեւին պատահական երեւոյթներ չեն: Երբ 1896-ին Զէմսօնի  
արշաւանքի առիթով Վիլհելմ II համակրական հեռագիր էր  
ուղղում Տրանսվալի նախագահ Կրիտգէրին, կամ երբ սրանից  
քիչ առաջ Զեմերլէն մինհստրակուն ամբիոնից անուղղակի  
պահարակում էր գերմանական զօրքի վայրագութիւնները  
1870-ի պատերազմի միջոցին, —սոսկ քմահաճոյք չէր այդ եր-  
կու պետութիւնների ներկայացուցիչների կողմից, այլ ազատ  
ու անկեղծ արտայայտութիւն այն կատաղի հակամարտութեան,  
որը սկիզբ առնելով տնտեսական մրցման աղբիւրից, ճակա-  
տագրապէս անդրադառնում է երկու երկրների քաղաքական և  
սօցիալական կացութեան վրայ:

Զինգոյիզմը իր շահամոլ ու գիշատիչ ինսախնկոններով  
այնքան տարածուել, այն աստիճան վարակել է ամբողջ բրի-  
տանական աշխարհը, որ կարելի է պնդել Մաքս Շիպպէլի հետ-  
թէ այսօր իւրաքանչիւր մի անգլիացի իր ծոցի մէջ կրում է  
«Ծովային աւազակին (Jeder Engländer hat heute seinen See-  
räuber im Busen):

Մաղմասէր իմպերիալիզմի կամ պանբրիտանիզմի տեսդը  
բռնել է բոլոր կուսակցութիւններին: Երբեմն արմատական և  
նոյն իսկ ծայրայեղ ազատամիտ Զեմերլէնը, աստիճանարար  
կերպարանափոխուելով, այսօր ոչ միայն զեկավար է հանդի-  
սանում պահպանողական հզօր կուսակցութեան, այլ և քար-  
շում է իր ետեւից ամբողջ ազգը, նոյն իսկ բանուոր ընդհան-  
րութեան մի նշանաւոր մասը, որը չովինիզմի արբեցողութեան  
մէջ «God save the King» որոտալով, խրախուսում է շարու-  
նակ քատմնելի պատերազմը երկու թզուկ հանրապետութիւն-  
ների դէմ...

Ո՞ւր են Գլազուտօնի ժամանակները... Ո՞ւր է ազատա-  
միտ մեծ կուսակցութիւնը, որ երբեմն կուռ ու կազմ՝ առաջ  
էր տանում յաղթականորէն խաղաղութեան ու մարդկութեան  
դրօշը: Այսօր նրա կարիկատուրը միայն գոյութիւն ունի: Իմ-  
պերիալիզմի համաճարակը անդամալուծել է նրա ոյժերը: Նա  
բաժանուել է երեք կուսակցութիւնների, երեք թերիք: Նա ու-

նի իր աջակողմը, իր կենտրոնը և իր ձախ թերը: Աջակողմը իրապարագուխ ունի լորդ Ռօգբէրի, որը համակրութիւն է յայտնում իմպերիալիզմի կամ նուաճողական քաղաքականութեանը: Կենտրոնի զեկավալն է Սիր Հանրի Կէմպել Բեններման, որը իրաւէ, երբեմն խիստ ոճով քննադառնում է չեմբերլինական քաղաքականութիւնը, բայց և չի համարձակում վիրաւորել ջինգօնիզմի և աշխարհակալութեան տենդով բռնուած բրիտանական ժողովրդի զգացմոնքները: Ծախսկողմը բռնում է ազատամիտ կուսակցութեան մի ողորմելի փոքրամասնութիւն, որը իրան առաջնորդ ունենալով Զօն Մօրլէին՝ սիստեմաբար ու անկեղծ ցասումով դատափետում՝ ներկայ պատերազմի հեղինակներին, փաստաբանում է ազգերի անխափելի իրաւունքները, պահանջում է Տրանսվալի անկախութիւնը և ազգարարում է վտանգաւոր հետեանքները չեմբերլինական ներկայ սիստեմը:

Այդպէս է զրութիւնը ժամանակակից Անգլիայում: Եւ այդ զրութիւնը երեկուանից չէ, որ գոյութիւն ունի, նա չի սկսում Անգլօ-րոյշբական պատերազմով, ինչպէս կարծում են ոմանք, նրա պատճառները աւելի հեռու են և աւելի խոր: Ինքը լորդ Ռօգբերի խոստովանեց այդ. քիչ առաջ նա ասում էր հրապարակական մի ճառում, որ «բաժանումը ազատամիտ կուսակցութեան մէջ իր արմատներն ունի աւելի հին անցքերի հոսանքում, քան հարաւաֆրիկական պատերազմն է»: Նոյնը պնդում է պ. Մակդոնալդ Contemprary Review-ի մէջ զետեղուած մի ուշագրաւ յօդուածում, «Իմպերիալիստական պրօբլեմը» խորագրով (Հոկտ. 1901):

Մինչև 80-ական թուականները—ասում է յօդուածագիրը, ազատամիտ կուսակցութեան զործունէութիւնը Անգլիայում կապուած էր զլիսառորապէս ներքին քաղաքականութեան հետ: Այս ասպարէզում է, որ նա մատուցել է երկրին հսկայական ծառայութիւններ՝ այդտեղ է, որ նա տարել է իր գլխաւոր յաղթութիւնները, կազմակերպել է իր սկզբունքներն ու պանծալի տրադիցիաները: Անգլիան ապահով էր արտաքին վտանգից, նա ամրապնդել էր համաշխարհային զիրքը և չունենալով խոշոր մրցակից՝ կենտրոնացրել էր իր ուշադրութիւնը գլխաւորապէս ներքին քաղաքականութեան վրայ, որի նշանաբանն էր՝ խաղաղութիւն, անտեսութիւն և առաջադիմութիւն: Կուսակցութիւնների յարաբերութիւնը և մինհստրութիւնների բախտը որոշում էին բացառապէս ներքին քաղաքականութեան խնդիրներով:

Այդ զրութիւնը յեղաշրջուեց Փրանկ-պրուսական պատերազմից յետոյ, երբ Սեղանի գոռող յաղթողը դարձաւ մի տե-

սակ իրաւարար՝ ամբողջ Եւրոպայի համար, երբ նա ծաւալեց իր ուժը ներսում և դրսում, երբ նա հանդիսացաւ ահարկու մրցակից «Ովկիանների միահեծան պետին»։ Այդ ժամանակ էր ահա, որ արթնացաւ և ուժգին գրոհ տուեց ուազմատենչ իմակերիալզմը, այդ ժամանակից էր, որ կազմալուծման սաղմը մտաւ անզիական լիրերալիզմի մէջ և ազատամիտ կուսակցութեան մի կարևոր թեր կամաց-կամաց բաժանուելով՝ ի վերջոյ միացաւ տօրիններին՝ յանուն պանրիտանիզմի կամ բրիտանական աշխարհածաւալ տիրապետութեան։

«Գերմանական վտանգը» այնքան ահաւոր է թւում և նրան զիմադրելու պահանջը այնքան ստիպողական՝ որ վերջին ժամանակներս անզիական մամուլի մէջ մինչև իսկ լսում են ձայներ, օպտիմիստ մարգարէութիւններ անգլօ-ռուսական մի համաձայնութեան մասին։ «National Review»-ը մի շարք յօդուածներ նուիրեց այդ խնդրին։ «Եթէ անդամ մի օր—ասում է այդ հանդէսը—բրիտանական նաւատօրմը ջախջախուի ովկիանի տիրապետութեան համար մղուելիք յուսահատ կոուի մէջ,—ուրիշ ազգերը և Ռուսաստունը մասնաւորապէս կը հասկանան, որ ոչինչ չահ չունին՝ թոյլ տալով գերմանական արծուին դուրս մղել բրիտանական դրօշը ովկիանի թագաւորութիւնից»...

Այդ հիմնական մտքի վրայ է կառուցանում National Review-ը անգլօ-գերմանական մերձեցումի օրիգինալ ծրագիրը։ Նա ուրուագծում է այդ ծրագրի առանձին կէտերը, երկու պետութիւնների համաձայնութեան համար անհրաժեշտ փոխադարձ զիջումները Բալկաններում, Եգիպտոսում, հեռաւոր և մերձաւոր Արեելքում Բաւականանում ենք գաղափարը միայն յիշատակելով, առանց մտնելու մանրամասների մէջ, որոնք դուրս են ներկայ յօդուածի շրջանակներից։

ՄԻՔ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑԻՑ

Գրողների տարօրինակութիւններից.—Ենչի՛ են սպիտակում մեր մազերը.  
—Կարմիր տենդ յարուցանող մոծակները.—Տիֆի շիճուկալին բժշկութիւ-  
նը. —Բժշկութիւնը մրջիւնների մէջ:

Գրողների տարօրինակութիւններից.—«Revue Universelle»  
փրանսիական թերթերում առաջ են բերուած յայտնի գրողների  
տարօրինակ սովորութիւնները, առանց որոնց նրանք անկարող  
են գրել:

Համնձարն ու տաղանդը որոշ դրդիչի ազդեցութեան տակ  
է արտայայտում և գուցէ ամեն մեծ գործ կատարելու համար  
նրանք կարիք են զգում այդպիսի դրդիչի:

Այդ դրդիչները շատ տարբեր են լինում:

Մի քանի հեղինակներ միայն որոշ հագուստով կարող էին  
զրել. Բալզակը հոգևորականի հագուստով, Դիւմա-որդին ֆլանելի  
շապիկով ու կարմիր վարտիկով, Կոպակէն կարմիր վերնազգեստ.  
Միլտոնը իր «Կորուսած դրախտը» զրելիս գցում էր վրան հին  
բրդէ քղամիտ, Բիւֆֆօն հագնում էր պաշտօնական զգեստ և  
կողքին կապում էր սուրբ:

Շատերը շարժմուազների մէջ էին ոգենորութիւն գտնում:  
Վիկաօր Հիւգօն համարեա վազում էր սենեակում, յանկարծ  
կանգնում էր իր բարձր սեղանի առաջ, ու զրում և լցրած  
թերթերը շաղ տալիս յատակի վրայ: Նոյնը անում են և մի քա-  
նի ժամանակակից հեղինակներ (Մենտես, Լոմբար): Ուրիշները  
ինչպէս Թիշպէնը, Գոնկուրը և ուրիշները—մարմնամարզութիւն  
են անում ոգենորուելու համար: Սրանք շարժուողներն են: Կան  
և այնպիսիները, որոնց երեակայութիւնը վառւում է միմիայն  
անշարժ զրութեան մէջ: Լէյբնիցը միայն պառկած էր յդանում  
իր մտք երը, երաժիշտ Տօման և Ռոսաինին նոյնպէս պառկած,  
անկողնու մէջ էին հնարում իրանց օպերաները: Մի քանիսնե-  
րը սառցնում էին ոտները, որպէս զի գլուխները տաքանան:  
Շիլէրը և Գրիտրին ստեղծագործութեան միջոցին, իրանց ոտնե-

րը սառուցի վրայ էին դնում: Շատօքրիանը բոքիկ ոտերով քայլում էր սառը յատակի վրայ և այնպէս թելազրում: Ռուսածն և Բօսսիւն—նոյն նպատակով տաքացնում էին գլուխները: Առաջինը բաց գլխով նստում էր արեւի տակ, իսկ երկրորդը տաք չորեր էր փաթաթում:

**Զանազան զգայարանքների գրգռումն նոյնպէս ոգեսրում է հեղինակներին:**

Լօրդ Դերբին աշխատանքի միջոցին անդադար օղիի միջի մոգերն էր ծծում, Բայրոնը, Թէօֆիլ Գօտիէն, Բօգրէրը որ և է որոշ հոտերով գրգռում էին իրանց հոտոտելիքը: Բալզակը, Միւսսէն մեծ քանակութեամբ մոմեր էին դնում առաջները (տեսողութեան գրգռումն): Զօլան ցերեկն էլ լապտեր է վառում:

Մի քանիներին ոգեսրում է լսողութեան գրգռումը: Սրանք որոնում են աղմկալից տեղեր, սիրում են բարձր ծիծաղ, խուլ ձայներ: Վերլէն, Պօնչօն և առաջուայ գեկաղենաների մի խումբ իրանց լաւագոյն երկերը գրել են Պարիզի սրճարաններում:

Աւելորդ է այստեղ յիշել այնպիսի գրգռիչներ, ինչպէս են խմբչք, ծխախոտ, օպիում, որոնց դրդիչ աղդեցութիւնը ի հարկէ, ժամանակաւոր է, և մնասաբեր:

Ի Եշի<sup>o</sup> են սպիտակում մեր մազերը.—Մազերի սպիտակելը ծերութեան, այսինքն կազմուածքի ծիւրման առաջին նշանն է: Սակայն լինում են և վաղաժամ սպիտակման դէստքեր, երբ վախից կամ մի մեծ կսկծից յանկարծ մի օրուայ մէջ մազերը ճերմականում են: Երբեմն էլ վաղաժամանակ սպիտակելը ժառանգական երեւոյթ է:

Պարիզի պրօֆեսօր Մեծիկօվ, որը վերջին տարիներս միշտ սրամիտ և հետաքրքրական թէօրիա է ստեղծել ծերութեան մասին, այժմ բայցատրում է մեղ և ծերութեան այս «առողջնթաց երեսյթը»—մազերի սպիտակելը:

Մազը անկենդան բան չէ: Նա էլ մնունդ է առնում, նա էլ աճում է իր արմատով, նա խրւում է մաշկի մէջ և ծլում, ծըծելով իր անհրաժեշտ հիւթերը: Որչափ էլ բարակ լինի մազը, դարձեալ նա մի քանի շերտերից է կազմուած, ինչպէս բոյսերը, օրինակ հէնց սոխը: Այսպիսի շերտեր երեք են՝ ներքին, միջին և արտաքին. անպէս որ մազը կարելի է բաղկացած համարել երեք իրար մէջ հագցրած ցիլինդրներից:

Այս բոլոր շերտերը կազմուած են մանր բջիջներից, որոնք կրամիտի նման իրար վրայ հազզրած են: (Այս մանրամասնութիւններն ի հարկէ միայն խոշորացոյցի միջով կարելի է տեսնել):

Դրսի շերտերի բջիջները իրանց մէջ պարունակում են մազերին գոյն տուող ներկը. այս ներկը լինում է սեւ, շագանակադրյն, չէկ և այն:

Մազերը սպիտակելու համար պէտք է, որ այս ներկը կամ ինչպէս զիտնականներն են ասում՝ այս պիգմենտը մի կերպ ոչնչանայ: Մինչև հիմա չէին հասկանում թէ ինչպէս է չքանում այդ պիգմենտը և զանազան ենթադրութիւններ էին անում:

Պրօֆ. Մեջնիկովը մօտից հետազոտելով այս երեսյթը, գտել է հետեւեալը.

Որոշ հասակում մազերի արտաքին շերտի կենսունակութիւնը և դիմացկունութիւնը նուազում է, և այն եռմանակ ներքին շերտի բջիջները աւելի զօրեղանում են, մանում ևն զրսի շերտերի մէջ ու կլանում այստեղի պիգմենտը, ու ետ գնում-անհետանում, երեւի, արեան մէջ: Մեջնիկովը սպիտակող մազերի զրսի շերտերում գտել է ահազին քանակութեամբ այս ներկակեր բջիջներից, որնք վրայ են տուել ամեն կողմից, ինչպէս ազուանները վրայ են տալիս զիակի վրայ, և ներկահատիկներով բեռնաւորուած յետ են զառնում:

Ամենքը զիտեն, որ մի մեծ կոկծից երբեմն մի զիշերուայ մէջ մազերը սպիտակում են: Այս երեսյթը Մեջնիկովը բացատրում է նրանով, որ ներվային զրգուման ազդեցութեան ներքոյ այս ներկակեր բջիջները ահազին քանակութեամբ կլանում են ներկը:

Կարմիր տենդ յարուցանող մոծակները.—«Մուրճի» անցեալ տարուայ № 6-ի մէջ մենք խօսել ենք հասարակ դոզէրոյքի (մալարիա) մասին և բացատրել ենք «մոծակային» կոչուած թէօրիսն: Այժմ դուքս է դալիս որ դեղին տենդը ես յարուցանուում է մի տեսակ մոծակի խայթոցից: Մոծակները խածում են ու ծծում հիւանդների արիւնը և յետոյ առողջներին խածելով վարակում նրանց. ինչպէս այդ անում է մալարիայի մոծակը: Այս զիտելիքի հիման վրայ այժմ պահպանողական միջոցներ են ձեռք առնուած: Այս սարսափելի հիւանդութիւնը մեծ մասամբ մահացու է:—հիւանդացողներից 75% մեռնում է: Նա շատ տարածուած է Անտիկեան կղզիներում և Ամերիկայի արևմտեան ծովեղբում:

Տիֆի տինուկային բժեկութիւնը.—Շիճուկով բժշկելու մեթօդը, որը ծնուել է Ֆրանսիայում, Ֆրանսիայումն էլ զարգացել, արդէն միանգամայն զարմանալի արդիւնքներ է տուել մի քանի սուր վարակիչ հիւանդութիւնների մէջ: Ամենքը զի-

տեն, թէ ինչ հրաշքներ է գործում դիֆտերիտի շիճուկը: «Մուրճի» վերջի համարում մնաք խօսեցինք և օձի խայթոցի դէմ գըտած շիճուկի մասին: Այժմ մի քանի խօսք ասենք տիֆի բժշշկութեան մասին:

Տիֆի շիճուկը գտել է Փրանսիացի Շահտմէսը: Նա այս իճուկով բժշկել է շատ հիւանդներ:

Նրա ստատիստիկային նայելով, 100 հիւանդից 94-ը առողջանում են, այն ինչ միւս բուժական միջոցներով բժշկուելիս միայն 75-ը, նոյն իսկ 70-ը:

Բժշկութիւնը մրջիւնների մեջ: Իբրև կուրեօզ առաջ բերենք «Պր. և Պլօմ»-ի մէջ տպուած մի լուր: Մի անգլիացի գիտնական պատմում է հետեւեալը. մրջնատնից դուրս եկան մի քանի նիւհար մրջիւններ, որոնք հազիւ ոտի վրայ էին կանգնում, և զիմեցին մօտակայ բլրակը, որի վրայ բազմած էր մի մեծ ու չաղ մրջիւն: Մի քանի առողջ մրջիւններ օգնում էին հիւանդներին բարձրանալ այդ բլրակը: Հաստ մրջիւնը, որը երեխ բժիշկն էր, հերթով ընդունում էր հիւանդներին: Բժշկութիւնը կայանում էր նրանում, որ բժիշկը իր թաթիկները շարժում էր հիւանդի վրայ, և դրանով, նրեւի, հիպնոտում էր: Լսել էինք, որ մրջիւնների մէջ կայ թագուհի, լաւ կազմակերպուած զօրք, բանուորներ, ճարտարապետներ, բայց բժշկի մասին չէինք լսել:

Վ. Ա.

## ՊՈՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Ասիեն“ ամսագիր. — Դեռ շատ հին ժամանակներից սկսած եւրոպացիներին հետաքրքրել է Ասիան՝ իր ազգաբնակութեամբ և բազմազան հարստութիւններով. Բայց այդ հետաքրքրութիւնը երբէք այնպիսի մեծ ծաւալ չէ ստացել, ինչպէս այժմ: Մի կողմից վերջին տարիների քաղաքական անցքերը՝ հայկական կոտորածներից սկսած մինչև չինական պատերազմը, իսկ միւս կողմից կապիտալիզմի արագենթաց զարգացումը ստիպեցին եւրոպացիներին աւելի մօտիկից ծանօթանալ ալդ լայնարձակ աշխարհամասի հետ, աւելի մանրամասնօրէն ուսումնասիրել նրաներքին կեանքն ու բնութիւնը:

Յատկապէս այդ նպատակի համար միայն անցեալ տայտայ ընթացքում կազմակերպուեցին երկու խոշոր ընկերութիւններ — մէկը Ֆրանսիայում „Comité de l'Asie Française“, իսկ միաը այսուղ— Գերմանիայում՝ „Deutsch-Asiatische Gesellschaft“.

Գերմանական ընկերութեան նախագահն է յայնուի Դոլց փաշան, իսկ անդամներն են բազմաթիւ գիտնականներ, գիտուրականներ, գանառականներ և ալլն: Ընկերութիւնն ունի և իր յատուկ օրգանը — մի ամսագիր „Asien“ խորագրով: Մինչև օրս լույս են տեսել այդ ամսագրի հինգ համարները (ամենավերջինը — գիւտրուարի № է), որոնք ընդհանուր առմամբ իրանց մէջ պարունակում են մի շարք հետաքրքրա-

շարժ ու բազմակողմանի լողուածներ: Դրանցից առանձին ուշադրութեան արժանի է պրօֆեսոր Ցիմմերի լողուածը՝ „Armenien“ վերնագրով:

Ինչպէս յայտնի է, գերմաներէն լեզուով էլ շատ բան է գրուել հայերի մասին, բայց այդ գրուածքներից գրեթէ ոչ մէկը այնքան բազմակողմանի չէ, ինչպէս պ. Ցիմմերէրի այս աշխատութիւնը: Սա մի պատմական-կուլտուրական համառոտ տեսութիւն է, որ պատկերացնում է հայի ամբողջ անցեալը, նրա քաղաքական, կրօնական ու մտաւոր կեանքի զարգացումը, գրականութեան բարգաւաճումը և այլն: Մեծ չէ լողուածը — („Asien“ № № 1, 2 և 6), ուստի և այդքան բազմաթիւ հարցերը միայն թուուցիկ կերպով են շօշափուած: Հեղինակը ուղեցել է գիրմանացիներին ցույց տալ թէ ո՞վքեր են հայերը և ի՞նչ կեանք են ունեցել և նրան միանգամայն աջողուել է ալդ բանը:

— Շնորհէս զի հասկանանք վերջին տասնամեակում Փռքր-Ասիայում և ՔօսՓօրի ափերին տեղի ունեցած դէպքերը, այդպէս է սկսում պ. Ցիմմերէրի իր լողուածը, մենք պարտաւոր ենք մի հայեացք զցել հայկական երկրի և ազգութեան վրայ: Ամենից առաջ այդ հռչակաւոր և թշուառ ժողովրդի պատմութիւնն ինքն է տալիս մեզ մի բանալի, որով կարելի է լուծել հանելուկ զարձած և խճճուած „հայկական հարցը“, Մենք կաշխատենք տալ

Հալաստանի պատմական պատկերը, աչքի առաջ ունենալով երկու նշանաւոր գիտնականների Գեղցերի և Հիւրշմանի ուսումնասիրութիւնները և մեր անմիջական դիտողութիւնները: Վերջին տարիների Գեղցերը Նկարագրելիս մենք օգտուցել ենք նորագոյն հանապարհորդների՝ Լեպուսի, Բելկի, Ահմանի, Ռօբրախի, Ֆրիդրիխսէնի, Գրոթի աշխատոթիւններից, Գրանսիական Դեղին և անդիական Կապոյտ զրքերից և մեր անձնական փորձից ու տեղեկութիւններից...

Մենք կարծում ենք, որ հայերի նման մի ճին, անընկճելի և կուլտուրական ժողովորդ, որը ունի ազգային հպարտութիւն և միշտ հաւատարիմ է մասցել իր կրօնին, իրաւունք ունի օգնութիւն սպասելու դիտութեան ու քաղաքակիրթ աշխարհի կողմից, մանաւանդ որ նա իրեւ հնդոգերմանական ցեղի մի ճիզվը մօտ է մեղ թէ ծագումով և թէ կրօնով:

Մենք դարմանքով տեսնում ենք թէ ինչպէս մի շարք իրական կամ երեակալական փառքի ու իրաւունքի հիմքերից հետզհետէ աճում-զարգանում է ազգային գիտակցութիւնը՝ նախ զարգացածների և ապա աւելի ու աւելի մեծ քազմութեան մէջ: Եկա զիտակցութիւնը առաջ է բերում մի այնպիսի ազատութեան և ինքնավարութեան պահանջ, որ վայելում են եւլուսական ազգերը և որը կարծ ժամանակ առաջ բաժին ընկաւ օսմաննեան մի քանի զաւառներին: Տայց եթէ իշենք հայերի իրաւացի կամ ապօբնի պահանջները, այս ժամանակ կը հանդիպենք մի այնպիսի դժուարութեան, որպիտին չէ ունեցել ազատութեան համար կառուղ ոչ մի ազգ: Հայերը զորկ են եղել բռն հայրենիքից: Նրանք չեն ունեցել իրանց պատմութեան սահմանափակ վայրը, չեն ունեցել ամբողջութիւն

կազմող բնակութեան աշխարհագրական հիմք: Նրանց թափառականութեան ու գաղթականութեան, թշուառութեան ու փառքի պատմութիւնը տեղի է ունենում թէ Ասիայում և թէ Երոպայում: Նրանց զըլխաւոր բնակավայրերը ընկած են թէ Երարատի ու Տարոսի շուրջը և թէ Թրակիայի լեռներում...

Եկա մի քանի ընդհանուր նկատողութիւններից լետոյ յարգելի հեղինակը անցնում է բռն խնդրին և հակիրճ ձեռվ պատմում է հակերի ծագումը, անկախ թագաւորութիւն կազմելը, հզօրանալը և ապա քաղաքական ինքնուրոյնութիւնից զըլիկուելը: Այսուղ նա համեմառարար երկար կանգ է առնում Զէլթունի վրայ, յիշելով որ նա մինչն վերջն էլ de facto պահպանել է իր անկախութիւնը:

Դրա հետ միասին պ. Ցիմմերէր շօշափում է և հայերի կուլտուրական կնանքը, յայտնում է, որ նըրանք էլ ունեցել են պատմական շատ առասպելներ, ժողովրդական առաջորդիւններ ու երզեր, որնք դժախտարար զեռ հաւաքած և ուսումնասիրուած չեն: Նա խօսում է հայ աշուղների մասին, շեշտելով նրանց կատարած դերը: Հասնելով մինչև նորագոյն ժամանակները պ. Ցիմմերէր երկար խօսում է հայ կաթոլիկների ու բողոքականների մասին և ապա թեթև կերպով ընդդընում է Միթթարեանների նշանակութիւնը հայերի համար նրա կարծիքով դրանք մեծ ծառայութիւն են արել իրանց մայրենի զրականութեանը, մի կողմից թարգմանելով երոպական կլասովիկ զրոածքները—(Հովհերոս, Վերգիլ, Միլոս, Բայրըն, Եիլլէր, Դանտէ և ալլն)՝ իսկ միւս կողմից զիտական հողի վրայ զնելով հայկական լեզուի ու պատմութեան ուսումնասիրութիւնը:

Նա անուշադիր չի թողնում նաև

սուսահայտերի ու տաճկահայերի թէ մտար և թէ զբականական շարժումը նւայտող միշտակում է ծերենցին, Դուկւանին, Պեշիթաշլեանին, Թերդեանին, Արովեանին, Պատկանեանին, Նալպանդեանին, Գրիգոր Արծրունուն, Ռաֆֆուն, Պարոնեանին, Մամուրեանին, Զերագին և ալլին:

Նա բաւական երկար կանգ է առնում Յովս եպ. Արդութեանի և Ներսէս Խշտարակեցու գործունէութեան վրայ և ալդ բոլորից յետոյ զառնում է հայկական հարցին, աշխատելով քննել նրան ազգային, վարչական և քաղաքական տեսակէտներից Այդ նպատակով պ. Ցիմմերէր առաջ է բերում հայկական հարցի ամբողջ պատութիւնը, նրա զարգացման զանազան ֆազիսները և զալիս է հետևեալ եղրակացութեան.

— «Հայկական հարցը արևելեան հարցի միայն մի մասն է կազմում, իսկ այս վերջինը—մեծ քաղաքականութեան ընդարձակ ցանցի միայն մի հանգուցը» Հայաստանը մի ինքնավար պետութիւն չի կարող դառնալ, զրահամար բաւական է հայեացք գցել թիւրքիայի քարտէզի վրայ որտեղ հայերը ներկայացնում են մօտ 3 միլիոն մի ժողովուրդ, որ ցրուած է այս ու այն կողմը... Ճիշտ է, հայերը քաղական և տնտեսական մեծ դեր են խաղացել Թիւրքիայում, Պարսկաստանում, Լեհաստանում, Հունգարիայում, Եղիսլոտում և Ռուսաստանում, բայց նրանք եղել են և մնացել ինչպէս հրէաները—իրեն մի ցեղ, իրեն մի գաւանութեան պատկանողները Նրանք չեն դարձել մի ազգութիւն, որ կարող է սեփական պետութիւն ունենալ»...

Սակայն յարգելի հեղինակը մոռանում է, որ հայերը չեն էլ ցանկանում անպատճառ պետութիւն ունենալ, նրանք ուղար են մար-

դարվագել կեանք վարել և հէնց դրա համար էլ պահանջում են կեանքի և գոլքի ապահովութիւն, որից զըրկուած են ննչ վերաբերում է աղքայնութեան հարցին, պէտք է նըկատել, որ այնքան էլ ճիշտ չէ հայերին հրէաների հետ համեմատելը, որովհետեւ հայերը ունեն աղքային ընդհանուր լեզու, գրականութիւն ու զաւանութիւն, իսկ որ զիսաւորն է ունեն մի հայրենիք, որը սրբազործուած է պատմական բազմաթիւ անցքերով, որը շաղախուած է հարիւր հազարաւոր զոհերի արինուով...

Հայկական հարցը պարզելու համար անպալման հարկաւոր էր խօսել այն անհրաժեշտ ջբարենորոշումների մասին, որոնք ալդ հարցի հիմքն են կազմում: Իսկ պ. Ցիմմերէր անուշաղիր է թողնում ալդ բանը և եղրակակումը է յօդուածը, բացականչելով.

— Թէ ապագան ի՞նչ պիտի բերէ հայերի համար—ալդ միայն նստուած զիտէ...

Ե. Թ.

Մասիս, № 1—4, Կ. Պօլսի այս գրական շարաթաթերթը տալիս է մի շատ բնորոշ փաստ, որ լուս պատկերացնում է թէ ինչ դրութեան մէջ է գտնուած թիւրքահայերի գրականութիւնը: Հետևելով եւրոպական օրինակներին, շարաթաթերթը անցեալ տարի յայտարարեց մրցանակ փոքրիկ գեղարտեստական պատկերների, կամ, ինչպէս պօլսեցիներն են անուանում, նորավէսերի համար: Մրցանակը մեծ բան չէր—ուսկէ ժամացոլց, բայց և ալդպէս, պէտք էր սպասել որ նա ասպարէլ կը հանէ փոքր ի շատէ լաւ գրական երկ. նշանակուած մի ամսուալ ընթացքում շարաթաթերթին ուղարկուեցին եղեսուն երկու գրուածքներ, մեծ մասամբ գաւառներից. գրանցից քասան հատը բոլորու

վին անպէտք համարուեցան, իսկ մնացած տասներկուսի մէջ մրցանակի արժանացաւ Շներուկին խըղճահարութիւնը՝ անունով փոքրիկ պատկերը:

Հետաքրքրական են այդ դրական մրցանակի հանգամանքները: Նախ և առաջ աչքի է ընկնում ուղարկուած գրուածքների թիւը՝ 32 հատ մի ամսուալ ընթացքում Կարելի է հաստատապէս ասել, որ եթէ մեզանում, Կովկասում, յալուարարուէր մի այդպիսի մրցանակ, հազիւ թէ մի այդպիսի թիւ ստացուէր. զըմուար է նոյն իսկ դրա կէսի վրայ էլ լոյտ դնելու նեշտում ենք այս հանգամանքը իրին ուշադրութեան արժանի մի երեսյթ: Առհասարակ նկատելի է, որ թիւրքահայերը աւելի վաս ձաւում ունեն զէպի գեղարուեստական դրականութիւնը, քան ուստահայերը: Մենք այսպէս դասում ենք և այն ֆաստերով, որոնք անցիալ տարուանից հասաքում են ԵՄուրծիւ խմբագրութեան մէջ: Այսպէս, մենք ստանում ենք շատ զնդարուեստական զլուածքներ թիւրքահայ բարրառով. զրում են և կանոյց: Մինչդեռ մեղանում տարիներ են անցնում, բայց նոր ոյժեր երևան չեն դալիս, իսկ հայ կինը մեղանում, ինչպէս երեսում է, միանգամայն օտարացնել է մայրենի դրականութիւնից:

Եւ այսպէս—նշանակութիւն ունի թիւրքահայերի տուած թիւը: Տարաբախստարար, մենք պիտի ասենք որ աչքի ընկնողը հէնց միմիայն քանակութիւնն է: Խակայն քանակութիւնը գեռ միսիթարութիւն չէ: Այդպէս է վկայում 32 գրուածքների մէջ մրցանակի արժանացած պատկերու Կարդում ենք այդ Շներուկին Խղճահարութիւնը: Գիսղացոյ կեանքից միցրած մի խեղճ, անպաճոյն պատկեր է դա, որի մէջ գեղարուեստը բայցուկայում է: Թիւղացին կիրակնամուտին դաշտում

լոռմ է եկեղեցու զանզակի ձալնը, բայց չէ դադարեցնում իր աշխատանքը, ուղում է վերջացնել պակաս թողածը: Երբ նա երեկոյիան էշը հեծած տուն է վերազառնում, զիսպում մի երեխալ և անհեթեթ ձայն մը հանելով կ'անցնի առջեւէնս: Եշը խրանում է, Ստեփան աղբարը, կորցնելով հաւասարակցութիւնը, ընկնում է և կատագոծ էշը երկար քարշ է տալիս խեղճին: Կինը բարկանում է էշի վրայ, բայց Ստեփան աղբարը առում է թէ էշը մեղանոր չէ, մեղանորը ինքն է որ կիրակնամուտին դաշտում աշխատեց և նստուած դրա համար էլ պատժեց:

Սա է ուիի ժամացուցով ոյսակուած գրական աշխատութիւնը: Էնցինակը բացի զրանից արժանացաւ մեծամեծ զովեսոների և Վասիլը, շը քաշուեց յալտարաբելու, որ այդ հեղինակը ուշադրութեան առարկալ է դառնում թէ Կ. Պոլում և թէ գտառներում: Նթէ նըկատի ունենանք թիւրքահայ դրականութիւնը նարակած այն զղուելի սովորութիւնը, որով խմբագիրները բոլորովին անամօթ կերպով զովում, փառաբանում են իրանց աշխատակցիցներին, մենք պիտի լոնդուննք որ մրցանակով պսակուած զործի առիթով շայլած զովասանքների մեծագուն մասը պօլսական ալդ ախտին պէտք է վերագրել Բայց և այդպէս, թէ մրցանակը, թէ քննողների վկայութիւնը ցոյց են տալիս որ վէպիկը, ճիշտ որ, Կ. Պոլում շատ ոգնորիչ տպաւորութիւն է թողել:

Ան ալտահերց կարող ենք եղակացնել թէ ինչ խղճալի դրութեան մէջ է թիւրքահայերի գրականութիւնը: Բայց ոչտք է այսքանն էլ ասինք, որ եթէ մենք էլ լինէինք Կ. Պոլսում, մասնակցէինք մրցանակի ներկալացրած զործերի քննութեան, նոյնպէս առաւելու-

թիւնը „Ներուկին Խղճահարութիւնը“ վէպիկին կը տալինք: Որքան էլ միամիտ լինի նա, որքան էլ աղքատ՝ մշակութեան, նիւթի պատկերացման կողմից, կոյ այն հանգամանքը, որ զա իրական կեանքից վերդրած մի պատկեր է, որ տեսնում ենք զիւզ, արտ, զիւզացի, աւանդութիւն: Խոկ սա պօլսական զրականութեան համար ճիշտ որ մի նռութիւն է, այն գրականութեան, որ մի արհեստական, անհուածադիկ է, առանց բովանդակութեան, բէալիզմի, առանց գաղափարի: Մրցանակի արժանացած գրուածքի հետ համահամատար արժանաւորութիւն ունեցող է յարտարաբուել մի ուրիշ պատկեր, „Մերժումը“ վերնազրով: Դրա հեղինուկը աւելի փորձուած է, աւելի յալտնի է գրականութեան մէջ, եթէ հաւատանք „Մասիսի“ րէկամամոլ խմբագրին: „Մերժումը“ արդյէն պօլսական ալլուադրութիւն է, զօռով կարկատած, ջրալի, ոչինչ տպաւորութիւն չը զործոց: „Մասիսի“, գրական մրցանակը հետաքրանքն էր. նա պիտի խրախուսէր զրոյներին, բայց մեզ համար մի շատ լաւ միջոց էր ճանաչելու պօլսական գրականութեան դրութիւնը...

Բազմավէպ, մարտու Թիւրքահայ անթիւ որբերի զատը նորից և նորից պաշտպանուած է ՓՈ՞ՆՀ պէտք է ընելք խմբագրական յօդուածի մէջ: Պաշտպանուած է Կորովով, այնպիսի պահանջներով, որոնք շատ համակելի են: Բաֆփիի և Գամառ-Քաթիզպայի մահարձանները պատրաստուեցան, ասում է խմբագիրը—այժմ ուղում ենք Գրիգոր Արքունու համար էլ մահարձան կանգնեցնել: Բայց որբերու ներկայ անսանելի թշուա ճգնաժամին, գրական գործիչներու ուղիները անխօս կոթողով հոգալն ու պատուելն առաջինակ մտածութիւն

մ' է: Մենք պէտք ենք յարգել ազգին մտքի անկեղծ մշակներու և արգիւնաւոր գործիչներու լիշտաւելը, մենք պէտք ենք ցոյց տալ յափտենական համակրանք անոնց խնկերի աճինին. մենք պէտք ենք ներկայ սերունդը հասարակութեան օգտակար ըլալու գործին մղերու համար, յարգել տմին նշանաւոր հանճարներու անմոռանալի լիշտաւակը բայց ո՛չ անխօս կոթողով մը: Եւ լիշեցնելով որ Թարիզի հայերը Մխիթարի անունով մի որբ են խնամում Կիպրոսում, աւելացնում է. «Ազգին թշուառութեան վրայ լացող ու կոծող Սլիշանը, Արծունին, և ալլք ի պատիւ իրենց կընտրեն պատուա մը հացով դադրեցնել որբիկներու մշտահոս արտասուքն, քան թէ ընկճիլ ցորտ մարմարինի ձնշող ուժին տակ... Անոնց հողաբլուրին վրաց կանգնենք որբախնամ խօսուն կոթողը, և երբ մեր հողին զէպի ամսերէն և աստղերէն վեր պիտի առնու իր թռիչը, մեր ալ աննշան գերեզմանը պիտի ծծէ որբիկն աչուըներէն կաթկըթած երախտագիտութեան մարզարիտ կալակները: Առաջ գնալով արդ ուղղութեամբ, «Բազմավէպի խմբագիրը իրաւացի կերպով նկատում է որ Պարիզում մի սուսահայ միլիոնատէրի վիթխարի գումարով կառուցող հալոց եկեղեցին կարող էր մի քիչ աւելի համեստ կերպարանք ունենալ ի սէր զարձեալ մեր անտէր որբերի: Վուղենք ցոյց տալ որ եթէ տաճարներու կառուցումը փառք է Բարձրելուն, որբերու խնամակալութեան ստիպողական զործն ալ ողորմութիւն մ'է առ նոյն Բարձրեալն: Դժբախտաբար, այս ճըշմարտութիւնը միանգամայն մասցուած է մեզանում. ոչ միայն Պարիզում, ալլ և ուրիշ շատ տեղերում մենք քարեր իրար վրայ շարում ենք մի ալնպիտի ժամանակ, երբ մի 50 սուրլով կարող ենք մի դը-

բախտ որբի կեցութիւնն ապահովել մի տարի յամանակով, երբ Կ. Պօլսի հայոց պատրիարքարանը ստիպուած է փակել որբանոցները՝ և զուր չէր Բաֆֆին ասում որ մենք զորց և բերդ կառուցանելու տեղ դարերի ընթացքում զբաղուած էինք վանքեր շինելով...

«Բազմավիճի» այս համարում տպուած է Գրիգոր Արծրունու կենսագրութիւնը, «Քառորդ դար մը—ասում է կենսագրովը—իր հզօր ազգեցութեան տաղ (Արծրունին) կառավարեց, լուսաւորեց, ցնցեց ժողովորդը. ցանեց իր մաքին սերմերը համարեա, յանդուզն ազատամտութեամբ, և ինքզինքը իրասամբ ցոյց տուա մշակ՝ ազգային կրթութեան խոպան դաշտին մէջ», Կայ և մի գեղեցիկ թարգմանական յօդուած Վիկտօր Հիւգօֆ մասին, Դիտական բաժնի մէջ ուշագրութիւն է գրաւում «Դարվինականութիւն» լուրջ յօդուածը, որ շարունակելի է Ուշագրութիւն գրաւում է յօդուածը այն սպատճառով, որ այստեղ չենք նկատում այն կերական անաթեմաները, որոնք թափում են անգլիսկան հոչականոր գիտնականի վրայ, ինչպէս այդ անում է, օրինակ, Վիկեննապի «Հանդէս Ասմօրեան»։ Հ. Սարեան, դիտական այդ յօդուածների հեղինակը միանդամայն վայելուչ կերպով պատմում է դարվինականութեան էութիւնը, մատուցանում է պատշաճաւոր յարգանք Դարվինի գիտնականութեան և այս վերաբերունքը, անկասկած, մեծ պատիւ է նրա համար Կարելի է լինել Դարվինի հակառակորդը, չընդունել նրա հիպօթէզները, բայց այդ չէ նշանակում թէ պէտք է անպատճառ հայհոյել այդ մեծ խելքը, որի հանճարի շնորհիւ, ինչպէս խոստովանում է և Հ. Սարեան, բազմաթիւ նշանաւոր զիստեր են արուել մարդկութեան մէջ, Դատելով մինչև այժմ

տպուած կոտորներից, հայ ընթերցողը կարող է սիրուն օգուտներ ստանալ այդ զիտական լողուածի ընթերցանութիւնից։

Արարատ, սեպտեմբեր-դեկտեմբեր, 1091: «Բազմավիճից» «Արարատին» անցնելը, ըստ երեսութիւն չը պիտի նշանակէր տափից ցուրտ, լուսից խաւար ընկնել. — Երկուսն էլ հրատարակուում են հոգետրականների ձեռքով, վանքերում: Բայց այդպէս չէ: Փոխուել են զերերը: Մի ժամանակ կար, կաթոլիկ վանքն էր կրօնական նեղարառութեան ներկայացուցիչը: Խոկ այժմ... Արարատի «չորս համարները նոր լոյս տեսան, անցեալ տարի չը հրատարակուեցան: Խոնչ են ներկայացնում նրանք: Խոյնը, ինչ առաջ աստուածաբանական վերացականութիւն, անհաշտութիւն գիտութեան դէմ, խոկ և անմարսելի յօդուածներ: Խին ժամանակ, երբ «Բազմավիճը» Դարվինականութիւն է տալիս, Վիկտօր Հիւգօֆ փառքն մեծարում, փառաւոր տաճարներ կառուցանելու դէմ է յանուն հայ երբերի, Եջմիածնի պաշտօնական օրգանը շարունակում է բորբոքուել «Սուրճ» անցեալ տարուայ այն մատենախօսութեան դէմ, որի մէջ ասուած էր թէ «Ձարլարի» քարոզները անօդուտ են: Խոնչ ասենք այսպիսի հակադրութեան առջև: Մնում է արձանագրել որ «Արարատ» խմբագրութիւնը փոխուած է և նրա նոր վարիչները, եթէ միայն կարողանան լաղթել ծագած ինստիգները և գործ սկսել, աւելի լաւ կ'ըմբռնեն ընթերցող ժողովրդի կարիքները և ցոյց կը տան որ քրիստոնէական եկեղեցին զիտութեան, առաջազիմութեան այնպիսի անհաշտ թշնամի չէ, ինչպէս ճըդնում էր ցոյց տալ «Արարատի» նախկին խմբագրութիւնը մի շարք տարիների ընթացքում...».

**Ճանշէս** և մաօհեայ, մարտու Վիեննական ամսագիրը ծանօթացնում է մեզ գետրուարին վախճանուած Անտոն Մոլնարեանի կեանքին: Մոլնարեան Տրանսիլվանիայի հայրի մէջ նշանաւոր գործիչ էր նա ծնուած է Կերլա քաղաքում, որ կոչում է նաև Հայռաքաղաք, 1847-Ն: Նշանաւոր էր ոչ միան իրոր հրապարականու (գրում էր հունդարելէն), հունդարական լրագիրներում), այլ և իրեւ քաղաքական գործիչ: Նա պատգամաւոր էր հունդարական պարլամենտում և այդտեղ իսխառ աշքի լնկնող դեր էր կոտարում: Խրոպակում կորած հայ զալթականութեան կեանքի ալս երեոյթը տիտուր մոածողութիւններ է պատճառում լնթերցովին Հայեր կան Հունդարիայում, որոնք Մոլնարեանի պէս անուն են հանում իրանց տաղանդով և մեծ բնդունակութիւններ է պատճառում լնթերցովին: Հայեր կան Հունդարիայում, որոնք Մոլնարեանի պէս անուն են հանում իրանց տաղանդով և մեծ բնդունակութիւններ է պատճառում լնթերցովին: Հայեր կան Հունդարիայում, որոնք Մոլնարեանի պէս անուն են հանում իրանց տաղանդով և մեծ բնդունակութիւններ է պատճառում լնթերցովին:

Գրական լողուածները, որոնք գրուած են Կ. Պոլսից, պատում են օրուայ նորութեան շուրջը, որ „Մասիսի“ գրական մրցանակն է. Մենք արդէն խօսեցինք այդ մասին վերեւում Յատուածադիրներից մէկը շատ ճիշտ զատողութիւններ է տալիս մրցանակի արժանացած գրուածքի մասին, համարելով նրան մի խեղճ ու հասարակ պատկերի Բայց զարմանալին այն է, որ նա մեծ արժանաւորութիւններ գտնում է երկրորդ պատկերի, „Մերժումի“ մէջ: Մրգեօք պօլսական նախապաշարամունքը չէ խօսում այսուհետ Կը կոմենտինք որ Թաթուլ Վանանդեցին իր, լնդհանրապէս հետաքրասկան, թղթակցութիւնների մէջ շնորհել անէր պարզ ու կտրուկ

Մարտ, 1902.

խօսելու: „Մուլճի“ ընթերցողներին յախտի է որ անցեալ տարի Պարփակմ հրատարակուեց “Քննական Պատմութիւն հայ գրականութեան“ մեծաղջորդ անունը կրող մի վայրի վերոյ գրաւածք, որ իր արժանի գնահատութիւնը գտնու մեր ամսագրի մատնախօսութեան բաժնում: Կ. Պոլսի մէջ այս „Քննական Պատմութիւնը“, լնդհակառակն, մեծ գովեստների արժանացաւ: Աւրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ Պօլսում քննադատութիւն չը կայ, այլ միայն զովասանք ու փառաբանութիւն, մանաւանդ երր հարցը վերաբերում է պօլսեցի գրողին ոչ անդէսի թղթակիցը խօսում է այդ զովասանքը մասին, բայց այնպիսի քրմական պայմանաւոր և այլարանական լիգուով, որ միայն երկար ուշադրութեամբ զննելուց յետոյ կարելի է լսրանել, որ նա այնքան էլ չէ հաւանաւմ „Քննական Պատմութիւնը“:

„Հանգէսի“ մէջ տալում է գօկոոր հահատիս Խոսինեանի կենսակրութիւնը: Այս քժիշկը թիւրքահայերի աղքալին սահմանադրութիւնը և մոքից զործ գարձրից այդ բնդարձակ ինքնավարութիւնը: Դեկտոր Խոսինեան լալտնի է իրեւ գրական գործիչ: Ամենալով կանոնաւոր ձեմքի մէջ դնել մեր աշխարհուրար ինքուն, նա 1850-ական թուականներին հրատարակեց „Աւզգախօսութիւն“ անունով մի գիրք: Նոր կանոններ էր նա սահմանել, որոնք, սակայն, չընդունուեցան: Մեզ համար հետաքրասկանն այն է որ այդ ուղղախօսութեան մի քանի ձեմքը, որոնց հետքերը մինք գտնում ենք դրանից առաջ Միթարեանների հին աշխարհաբարի մէջ էլ, անցան

ռուսահայերի մէջ էլ. մի երկու բան ընդունեց „Հիւսիսափալլը“, ասդա Խորէն Ստեփանէն իր „Հայկական Աշխարհի“ մէջ Ռուսինեանից աւելի շատ բան փոխ առաւ: „Մշակի“ ուղղագրութիւնը այսօր էլ նոյնն է, ինչ մշակել են Ռուսինեան և նրա ընկեր Գրիգոր Օտեան:

**Լուսնայ,** երկամսեալ հանդէս,  
№ 1—2: Խօսելով անցեալներում  
այս գրական ժողակածուի մասին,  
մէնք անուանել էինք նրան կղերուկան“, „տէրուէրական“: Գիտ  
քան. Նզոնեան պատառիանում է  
մեզ թէ այդ բառերը անմիտ են և  
չը գիտէ թէ ինչ կապ ունի նրա կո-  
չումը գրական այս կամ այն խրն-  
դիրների հետ: Թէ անմիտ են մեր  
խօսքերը, այդ Գիտ քահանայի  
գիտնարու բանն է: Միայն մի բան  
պարտք ենք համարում բացատրել  
Խմբագրի կոչումը նկատի առնելով  
չէ որ այդ անունները տուինք „Լու-  
սմային“. այլպէս ասել առողջ  
ժողովածուի բովանդակութիւնն է,  
կերպարանքն էր նև այդ հանդա-  
մանքը „Լուսմայի“ իրաքանչիւր  
զրքում այնպիսի առատութեամբ  
է հանդէս գալիս որ երկու կար-  
ծիք իինել նրա ոգու մասին չէ կա-  
րող: Հինց վերցնենք վերջին, մարտ-  
ապրիլ №-ը. այդտեղ զետեղուած  
„Մայր Մաշտոցի տաղագրութեան  
անհրաժեշտութիւնը“ խմբագրու-  
թեան թողուածը կամ իբրև առանձին  
հաւելուած դրուած „Կանոնք ժողո-  
վոց“-ը ի՞նչ են ցոյց տալիս, եթէ  
ոչ կղերական և տէրտէրական ողի:  
Ուրիշ բաղմաթիւ փաստեր՝ „Լու-  
սմայի“ նախկին զրքերից զանց  
ենք անում բերել: Գանք ալժմ  
մի ազ հանգամանքի: Մեր նկա-  
տողութեան մէջ մենք ասել էինք  
որ Գիտ քահանան պատկիլներ  
էլ է տպաւմ: Նև այդ քահանան  
հարցնում է մեզ. ուր են փառ-  
տերը: Որպէս զի ցոյց տանք,

ու մենք առանց հիմքի չենք խօ-  
սել, կը լիշեցնենք Գիտ քահանայ  
Աղանեանցին մի քանի տարի ա-  
ռաջ „Լումայում“ տպագրած մի  
պատկեր: վերնագիրը չենք լիշում),  
որի մէջ խօսում են մի հրապարա-  
խօսի գագաղի վրայ զրած պակնե-  
րը: Պատկիլը ուրիշ տեսակ չէ էլ  
լինում:

Բաւական համարենք արտանը:  
Ներկայ տարրուանից „Լուման“ գար-  
ձել երկու ամիսը մի անգամ հրա-  
տարակուող հանդէս: Եթզ փոփոխու-  
թիւնը չէ ազգել նրա կերպարանքի  
վրայ, դա նոյն պատահական յօդ-  
ուածների ծովովածուն է: Թողնելով  
երկու զրքերի բովանդակութիւնը,  
մենք փոքր ինչ կանգ կ'առնենք  
մի յօդուածի վրայ, որ կոչում է  
„Փարզմանութեան ծաղիներ“: Գրա-  
տուածին մասը մէնք զանց ենք ա-  
նում, որովհետեւ, ճիշտը խոստո-  
վանած, չը հասկացանք թէ ինչ է  
ուզում ասել այդտեղ յօդուածագիր  
ու. Ս. Մ-ն Երկրորդ մասում պա-  
րոնը օրինակներով ցոյց է տալիս  
թէ որքան վաս թորգմանութիւն.  
Ներ են տալիս „Մշակը“ և „Մուր-  
ճը“: Խօսքը, գոնէ պ. Ս. Մ-ի հա-  
մար, միայն այս երկուսի մասին  
է կարող լինել, մենք այդ լաւ ենք  
հասկանում: Ցեսնենք ինչպէս է նա  
ուղղում „Մուրճի“ թարգմանու-  
թիւնը:

Պարոնը վերցրել է անցեալ տա-  
րի „Մուրճում“ տպուած „Մենակ  
մարդիկը“: Եւ ահա ինչ սոսկալի  
թարգմանական մեղքեր է գտել:  
Թարգմանիչը զրել է „Մայր“, պ.  
Ս. Մ. ուղղում է „Մայրիկ“: Երկում  
է, որ պարոնը մեր ժողովուական  
լեզուից տեղեկութիւն չունի, թէ չէ  
կ'իմանար որ „մայրիկ“ բառի անդ  
„մայր“ դնելլը յանցունք չէ: Մե-  
զանում ժողովուալը ասում է. „ա՛յ  
մայր, ա՛յ քուր, ա՛յ տղայ“: Բայց  
ինքը, պ. Ս. Մ-ն էլ, „մայր“ զործ-  
ածելլ երկու տեղ սիսալ համարե-

լով, երրորդ ակղում արդէն ինքն էլ գործ է ածում նոյն բառը, աւելացնելով „իմ“—„մայր իմ“: Դա արդէն գրաբար է և մեր խօսակցական լեզուի մէջ „մայր իմ“ զիմում չէք տեսնիր: „Տղամ“ պ. Ս. Մ. ուղղում է „որդիս“: Զլ զիտենք թէ ինչ տարբերութիւն կաց արդ բառ-աերի մէջ: „Խակի“ բառը Ս. Մ. չէ ընդունում ննջո՞ւ ժողովրդի լեզուի մէջ կայ այդ բառը, որ յալտնի նիւանս տնի: Պէտք գցելով նրան, տեղը ի՞նչ էք զնում: — Աչինչ: Բայց ահա պ. Ս. Մ.-ի ամենափայլուն ՝ ծաղկելու: Թարգմանի՛ը զրել է: „Նա քեզ ասաց, որ ես նրան տանից մերժեցի“: Պ. Ս. Մ. ուղղում է: „Նա է քեզ ասել թէ ես գորս արեցի նրան տնից“: „Մերժել“ և „զուրս անել“ մի և նոյն է. Եթէ այս, նշանակում է որ կարելի էր աւելի և լու հայացնելու համար, զրել՝ „ես վզակոթին տալով դորս արեցի“: „Եւ դու թով ես տալիս քեզ այդ ասել մօրդ երեսին“, զրել է թարգմանիչը: Պ. Ս. Մ. ուղղում է: «Եւ դու համարձակում ես մօրդ արդպէս ցաւացնել»: Արանք ճշտութիւն, մանաւանդ ո՞րպիսի նրբութիւն, երեսին ասել“ և „ցաւացնել“, թով տալ իրան և „համարձակուել“... Սրանք նոյնանիշ բանիր են, սրանց կարելի է միմեանց տեղ զնել... Ելու օրինակներն էլ բաւական են որ ցոյց տան թէ ի՞նչ հայագէտ է պ. Ս. Մ.-ի զուն փայտացնել, զրել ճկուն ու նուրբ տարձուածքներից, երուացու ոճը փոխել մեր ասիական ոճով և կարծել թէ այսպիսով հայ քրիստոնէի“ լեզու կը ստացուի — ահա ինչ է ուզում: Պ. Ս.: Շնորհակալ ենք, մենք հասկացանք թէ ինչ էք ուզում զուք, բայց այն, ինչ զուք էք հասկանում, զեռ չէ նշանակում թէ ճիշտ է և արդարացի: Ինքներդ թարգմանեցէք այդպէս,

բայց ուրիշներին ուզգելը ձեր գործը չէ...

„Ռուսական մասունք“, վետրուար: Պրօֆէսօր Լ. Կամարօվսկի մի համակրական լողուած է նույրել նորերս վահճանուած Ռոլէն-Ժէկմէնին: Հանգուցեալը բէլգիացի է, ծնուել է 1835 թուսկանին և երկար տարիների ընթացքում աշխատելով, իր զիանական հեղինակութիւններով պատկանելի անուն է ձեռք բերել միջազգային իրաւունքի ճիշդում Բազմաթիւ լուրջ և հեղինակաւոր գրուածքներ ունի Ռոլէն-Ժէկմէն: Դրանց մէջ, ինչպէս յայտնի է, կայ և մի բառական ընդարձակ աշխատութիւն, նույրուած հայոց հարցին: Դրա վերնագիրն է: „Հայաստան, հայեր և զաշնագիրներ“: Ո՞գ առիթ է ունեցել կարդալու արդ զեղեցիկ գործը (թարգմանութիւնը տպաւած է „Պոլոյքուս Արման“ Եւ Տյրցի“ ժողովածով մէջ, Մոսկուա, 1896), նա նկատուած կը լինի թէ նշանաւոր բէլգիացի զիանականը ո՞րպիսի բարեխզնութեամբ ուսումնակիրն է այզ չարաբախան հարցը, որքան հարուստ փաստերով է լուսարանել իր անաշառ, մարգասիրական մեսութիւնները Աշխատութիւնը զրուած է 1887-ին և, դըժրախտաբար, չէ վերջացրած: Դէպքերի պատմութիւնը հասցրած է մինչև 1881 թաւականը, շատ հետաքրական են մանաւանդ այն զլուխները, ուր հեղինակը մանրամասն պատմում է հարատահարութիւնները, երբազական պետութիւնների բռնած դիրքը: Ամենազիստուրը չը կարողացաւ ասել Ռոլէն-Ժէկմէն: 1881 թուականը մի յամանակ է, որից յետոյ հայկուկան հարցը ընդունեց բոլորովին նոր կերպարանք, սպասողութիւններից, ակնկալութիւններից նա անցաւ պայքարի, մըցութեան, կռուի Ռո-

լէն-ծէկմէն նախատեսում էր արիւ-  
նալի ընդհարումները և եթէ նա-  
կարողանար հասցնել իր աշխատու-  
թինը մինչև 1887 թուականը, շատ  
և շատ տիսուր իրողութիւններ կը  
հանէր այն հարցից, որ ձնունդ էր  
առել Նւրովաչի համերաշխ և միա-  
րան խոստումներից, բայց որ այն-  
քան աղէտալի հետեւանքներ պիտի  
ըերէր։ Մենք էլ երախտաղիտու-  
թեամբ յիշատակենք այժմ հանգու-

ցեալ Բօլէն-ծէկմէնին և յափտե-  
նական հանդիստ մաղթենք զիտ-

նական հայտաէրի ոսկորներին։

Ամսագրի մէջ ուշազրութիւն է  
զրաւում և պ. Աւմանսկու լողուածը  
սուս յալտնի գրող Գլէր Ռևալէնսկու  
զրական գործունէութեան մասին։  
Հեռազերը լոր բերեց որ Աւալէնսկի  
վախճանուել է։ Նրա հետ կը ծանօ-  
թացնենք „Մուրճ“ ընթերցողնե-  
րին միւս համարում։

Պ Ա Տ Ա Ս Ա Խ Ա Ն Ե Բ Ի

**Աւուախան.** Գ. Ք. Մ կ ր տ ու մ ե ա ն.—Շնորհակալութեամբ ստացանք հանգույցեալ Աղ. Երիցեանի մահուան առիթով նրա յիշատակը յարդողների կողմից փոխադրած 40 ռուրլին և, համաձայն նրանց յայտնած ցանկութեան, որոշեցինք «Մուրճ» ամսագիրը այս տարուայ ընթացքում ուղարկել հետեւալ դիւղերը. Սանահին, Տեղ, Զահը և Դաւալու

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Բ Ի

«Մուրճի» փետրուարի համարում, մտել են, ի միջի այլոց, հետեւեալ վրիպակները.

Երես Տող	Տպուած է	Վեսէ է լինի
100	7	անքուն
110	12	կրթութիւն
117	22	զրում էր
120	13	«Կոլի տիկնոջ»
126	42	«Ծիչ մենք..»
192	19	Շվեյցարիակում
”	21	”

«Բուրդի վաճառականութիւնս» գրուածքի մէջ «Մուրճի»

№ 1 (յունուար).

31	10	ի՞նչպէս կ'ուզէի	ի՞նչպէս կ'ուզէիք
”	25	կ'արտադրէի	կ'արտադրէիք
”	”	Այդ արտադրութիւններս	Այդ արտադրութիւններս
35	27	թանաքամանը ալ բռունց- քին մէջ	թանաքամանը ալ բռունց- քին մէջ
37	13	դէտերու խումբ մի	դէտերու խումբ մը
41	2	նստարան մը կար	նստարան մը միայն կար
”	6	Քիչ առաջուան տպաւո- րութիւնս	Քիչ առաջուան հարցաքննու- թիւնս
43	1	Եւ ալոօր իմացալ	Ես ալօօր իմացալ
”	10	հօրս ծանօթ բարեկամը	հօրս անծանօթ բարեկամը
”	26	խնդրեմ լնէք	խնդրեմ լսէք
44	19	զլոխս ձեռքերուս առած	զլոխս ձեռքերուս մէջ առած
46	28	Քեաթիպ էֆէնդին	քեաթիպ էֆէնդին
”	23	Հառաչեց Պայրամ աղան լուզմունքէն՝	Հառաչեց Պայրամ աղան և լուզմունքէն՝

Խմբագիր-հրատարակիչ՝ Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵՍՆ

«Գուստենբէրգ» եւ «Կենտրոնական» գրավաճառանցներում ծախւում են «Մուրճ» ամսագրի հետեւալ հրատարակութիւնները.

	Թ.	Կ.
1. Ա. Տօլստոյ, «Յարութիւն», վէպ, թարգմ. Տ. Յ. .	1	50
2. Ա. Դոդէ, «Ֆրօմօն», վէպ, թարգմ. Տ. Յ. .	1	—
3. Լէօ, «Հայկական Տպագրութիւն», II հատոր .	1	50
4. Բժող. Վ. Սրծրունի, «Ամուսնութիւն» .	—	75
5. Վ. Միրաքեան, «Լալուարի որսը», պօէմա .	—	40
6. Պուշկին, «Յաւերժահարսը», թարգմ. Կ. Կրասիլնիկեանի —	15	

## «Ա. Ն. Ա. Հ. Ի. Տ. Ի.»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Անահինը» կը հրատարակուի ամիսը անդամ մը:

Բաժանորդագինն է տարեկան՝ 10 ֆրանկ (Ֆրանսիա), 12

ֆրանկ (օտար երկիրներ), 2 դոլար (Ամերիկա), 5 ռուբ-

լի (Ռուսիա):

Վեցամսեայ՝ 10 ֆր. (Ֆրանսիա), 6 ֆր. (օտար երկիրներ),

1 դոլ. (Ամերիկա), 3 ռուբ. (Ռուսիա):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ է:

Զեռագիրները եւ չեն գարձուիր:

Կ'ըն գուն ու ին ազ գ եր:

Նամակ, յօդուած եւ բաժանորդագինն զրկել հետեւեալ հասցէին.

A. TCHOBANIAN

17. RUE LA BRAYERE

PARIS

## Պ Ա Յ Մ Ա Ն Փ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ «ԲԱՆԱՍՔԻՐԻ»

«ԲԱՆԱՍՔԻՐ»-ի տարեկան գինն է 15 ֆրանկ=6 ռուբլի, ԿԱՆԽԻԿ:

«Բանասէր»-ի Ա. եւ Բ տարիներէն 25-ական օրինակ մի-

այն ունինք մեր քովը. այդ անոնք որ կ'ուզեն ստանալ նոյն

հատորները՝ պարտին վճարել 40) ֆրանկ իւրաքանչիւր հատորի

համար:

Ո՞վ որ «Բանասէր»-ի Ա տարի Բ պրակը զրկէ մեզ՝ վեց-

ամսեայ «Բանասէր» կ'ընդունի. նոյնպէս՝ հվ որ Բ տարի Ա պրա-

կը զրկէ մեզ՝ դարձեալ վեցամսեայ «Բանասէր» կընդունի, իսկ

այն որ մեր խնդրած երկու պրակներն ալ կը զրկէ՝ իրաւունք

ունի տարւան մը «Բանասէր» ընդունելու:

Մեր հասցէն է՝

BASMADJIAN

112, Bd. Rochechouart. բԱՅ 1.

ԲԱՑՈՒԱԾ Է ԱԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# Ա Ր Տ Ե Մ Ւ Ւ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱՀԱՆԴԵՍ

Օրդան ԽՀ-րդ գարու հայ կանանց

Պիտի հրատարակուի իր սեփական տպարանին մէջ: Բաղկացած  
32 մհճագիր երկսիւնեալ էջերէ:

Տէր և անօրէն-խմբագիր՝

Օր. Մառի Պէլերէան

Եզիպտոսի համար

Տարեկան բաժանորդակինն է. զրշ. ողջ . . . . . 40

Վեցամուեայ . . . . . 25

Արտասահմանի համար

Տարեկան . . . . . ֆրանկ 12

Հասցէն՝ Rédaction de la Revue des Femmes Arméniennes  
„Արտէմիս“, le Caire, Egypte. 3—3

«ՄՈՒՐՃ» ամսագրի հետեւեալ թուականների ամփոփ համարները կարելի է ձեռք բնել, վճարելով՝

1899	թուի համար	1	ռ.	50	կու.	Դիմել՝ Տիֆլիս, Վելյամիոս
1890	»	»	»	50	»	սկալ, № 24, Փ. Ա. Վարթ.
1891	»	»	5	»	—	զարանց.
1892	»	»	5	»	—	Ճանապարհածախուը գնողի վրայ է:
1893	»	»	5	»	—	4—4

# ՄԱՅՐԵՆԻ ԻՌԱՐ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՐՆԱՐԿ

կրտսեր դասարանների համար

համառօտ բառդրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՄԻԿԵԱՆ եւ Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

Գիւն է 70 ԿՈՂԵԿ

Դիմել՝ Թիֆլիս, «Կենարոնական» և «Գուտտենբէրգ»  
գրավաճառոցները:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՄՇԱԿ

ՔՅԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՀՐԱՄՔԻ

(ՅՈՒՐ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ 1902 ԹՈՒԱԿԱՆԻ

«Մշակը» հրատարակուելու է նոյն պրօգրամով և նոյն ուղղութեամբ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեւեկ և տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., զեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը՝ 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւն. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն), իսկ Բագլում—ն. Դաւթեանի մօտ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գըրուելու համար, և առհասարակ նստակիներ և ծրագներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ՏԻՓԼԻՍТЬ, Ռեդակցիա «ՄՇԱԿԵ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունում են բոլոր էւզուներով:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունում:

Պաշտօնական հաղորդագրութիւններ.	Պաւլովի գիտի աղանդաւորների զործը. — Ցուցեր Ֆինլանդիայում. — Համագործածը. — Կիբելի պոլիտեխնիկումի փակումը. — Ռասանողական անկարգութիւններ և ոսկուալում. — Թիւրքահայ փախստականների մասին կարգադրութիւնն	170 185
14. † Ա. Երիթեան.		
15. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵՍՆՔ. Մտաւոր առաջապիմութեան զործը մեր զաւառներում. — Համակրելի երկոյթներ. — Ժողովրդի անօդնականութիւնը. — Ընթերցասիրութեան պահանջ. — Խոնչպէս լրացնել այդ պահանջը. — Խնքնօգնութիւն. — Վերադարձ դէպի դատաները. — Հոգաբարձական ընտրութիւններ երեւանում. — Խնքնավարութիւնը՝ անտանելի բեռ նոշի քաղաքի համար. — Աշխատանքի տուն Բագրում. Ա.	191	
16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սիօնիստների ծրագր համաժողովը. — Անզլո-բօէրական հաշտութեան հարցը. — Խոտական իրրիդենտիզմ՝ Տրիեստում. — Ցուրի համաժողովի որոշումները. Ա. Ս.	199 202	
17. ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹԻՒՆԸ Ա. Ցովինաստարեան վարժարան		209
18. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱԲՃԻՑ. Վ. Ա.		219
18. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ		223
19. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ		234
20. ՑԱԿՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ՕՐԱՄՐՈՒՏԻՒՆ», վէպ հ. Սուրբենիլի. 49—64		

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է 1902 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## Ա.Մ.Ս.Ս.Գ.Ր.Ե

(Եսր շրջան, Արդ տարի)

Խմբագրութեան անդամներն են՝ պ.պ. Լեհոն ՍԱՐԳՍԵԱՆ և ԿՅՕ

Բ.Ա.Ժ.Ա.Ռ.Դ.Ա.Գ.Ի.Ն.Ը.

Թուաստանում տարեկան 10 ռուբ. Աշրամանմանում՝ 12 ռուբ.

կէս տարին 6 " 7 "

" 1 ամսուան 1 " 1 " 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է զրուել Թիֆլիսում—Խմբագրաստանը  
(Գանօվկաբա փողոց, № 21, ու. Զանջուղարօվիի):

Կայունութեան այլ տեղերից պէտք է դիմել Տիֆլու, ու րեգալ յարկած աշխատավորութեան ժողով:

Աշրամանմանից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtch“.

Ե ա ն օ թ ո ւ թ ի ւ ն. Ով զ ժ ո ւ ա ր ա ն ո ւ մ է Թ ո ւ ա ս տ ա ն ո ւ մ տ ա ր ե կ ա ն ր ա ս տ ա ր ո ւ թ ի ւ ն ը (10 ռ., վճարել միանուազ, կարու է տալ մաս-մաս (մկրտի 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և լուլսի 1-ին 2 ռ.);

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ. (մորկաներով):

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ զետեղելու համար պէտք է վիճակել,

Մի երես բանող յարարաբութեան համար . 10 ռ.

1/2 " " " " " 5 "

1/4 " " " " " 2 "

Ա.Պ.Ա.Ջ.Ի. կամ ԶԲԻ ոչ ո՞ի «Մուրճ» չէ ուղարկուած:

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը լատուկ խնդրում է յօդուածագիրներից՝ դրել պարզ, մանաւանդ թուերը, լատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միան մի երեսի վրա:

2. Զընդունուած մէծ յօդուածները պահում են Խմբագրաստանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն միարադարձնուուն: Զեսագիրը լետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածուաց:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը 4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու համ կրամանելու իրաւունքը:

5. «Մուրճ» համարը ըլ ստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչեւ յաջարդ համարի լուս տեսնելը: Եզդ տեղեկութեան անհրաժեշտ է կցի տեղական պաստաժին դրասննեալի հաւաստագիրը (ՎՃՈՉՈՒՔՔԵՐԵՈՒ), որ ամսագրի համարը չի յանձնուած գանգառուորին: